

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

24 IX 68 թվ.

Երևան

ՆՈՐ

Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Տ Ե Ա Ռ Ն Մ Ե Ր Ո Յ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1888

11-21848 ար

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ Տեառն գրեաց զաւետարանս զայս: Եւ պատմէ մեզ 'ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին 'ի զաւակէ Դաւթի. զայն որոյ և զազգահամարն ծագմէ մինչև 'ի Քրիստոս՝ ազգս քառասուն և երկու: Բերէ ըստ կարգի և զմկրտութիւնն Յովհաննու, և 'ի լերինն 'ի դեւոյ զփորձութիւն, և նշանս և արուեստս մեծամեծս 'ի Փրկչէն եղեալ. և զընտրութիւն աշակերտացն. և զայն խորհրդոյ մատնութեանն. և զխաչարածն, զի մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով, և մարմինն եդաւ 'ի գերեզմանի. և զինուորսն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն և զերրորդ աւուր յարութիւնն. և զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս և մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի:

Մատթէոս գրեաց զԱւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի 'ի լեզու եբրայեցի. զկնի ութ ամ համբառնալոյ Փրկչին, 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմ:

ԳԼՈՒԽՔ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համր
Վասն մոգուցն.	Բ.	1
Վասն կոտորածի մանկանցն.	Բ.	16
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին.	Գ.	1
Վասն վարդապետութեան Փրկչին.	Դ.	23
Վասն երանութեանն.	Ե.	2
Վասն բորոտին.	Ը.	1
Վասն հարիւրապետին.	Ը.	5
Վասն զոքանչին Պետրոսի.	Ը.	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց.	Ը.	16
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զհետ.	Ը.	19
Վասն սաստելոյն ՚ի վերայ ջրոցն.	Ը.	23
Վասն դիւահարացն.	Ը.	28
Վասն անդամալուծին.	Թ.	1
Վասն Մատթէի.	Թ.	9
Վասն դստեր ժողովրդապետին.	Թ.	18
Վասն արեանտեսին.	Թ.	20
Վասն երկուց կուրացն.	Թ.	27
Վասն խլին և համր դիւահարին.	Թ.	32
Վասն Առաքելոցն իշխանութեան.	Ժ.	1
Վասն առաքելոցն ՚ի Յովհաննէ.	ԺԱ.	2
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր.	ԺԲ.	10
Վասն կոյր և խուլ դիւահարին.	ԺԲ.	22
Վասն՝ որ խնդրէին նշանս.	ԺԲ.	38
Վասն առակացն.	ԺԳ.	1
Վասն Յովհաննու, և Հերովդէի.	ԺԴ.	1
Վասն հինգ հացիցն.	ԺԴ.	15
Վասն երթալոյն ՚ի վերայ ծովուն.	ԺԴ.	22
Վասն անցելոյն զպատուիրանաւն Աստուծոյ.	ԺԵ.	1
Վասն կնոջն քանանացւոյ.	ԺԵ.	21
Վասն բժշկելոյ զժողովուրդն.	ԺԵ.	29
Վասն եօթն հացիցն.	ԺԵ.	32
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԶ.	6
Վասն՝ որ ՚ի Կեսարիա հարցմանն.	ԺԶ.	13
Վասն այլակերպութեանն Տեառն.	ԺԷ.	1
Վասն լուսնոտին.	ԺԷ.	14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն.	ԺԷ.	23
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ է ՚ի մէնջ մեծ.	ԺԸ.	1
Վասն առակի հարիւր ոչխարին.	ԺԸ.	12
Վասն թողլոյն զբեւր տաղանդն.	ԺԸ.	23
Վասն հարցանելոյն թէ արժա՞ն է արձակել առն զկին.	ԺԹ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	ԺԹ.	16
Վասն վարձկանութեան մշակացն.	Ի.	1
Վասն որդւոցն Զեբեդեայ.	Ի.	20
Վասն երկուց կուրացն.	Ի.	29
Վասն իշոյն և յաւանակին.	ԻԱ.	1
Վասն կուրացն և կաղացն.	ԻԱ.	14
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԻԱ.	18
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետացն և ծերոց.	ԻԱ.	23
Վասն երկուց որդւոցն առակաց.	ԻԱ.	28
Վասն այգւոյն առակին.	ԻԱ.	33
Վասն կոչեցելոց ՚ի հարսանիսն.	ԻԲ.	1
Վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն.	ԻԲ.	15
Վասն սադուկեցւոցն.	ԻԲ.	23
Վասն օրէնականացն.	ԻԲ.	34
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.	ԻԲ.	41
Վասն վայ տալոյ դպրացն, և փարիսեցւոցն.	ԻԳ.	13
Վասն կատարածի.	ԻԴ.	3
Վասն աւուրն և ժամուն.	ԻԴ.	36
Վասն տասն կուսանացն.	ԻԵ.	1
Վասն զտաղանդին տալոյ.	ԻԵ.	14
Վասն գալստեանն Տեառն.	ԻԵ.	31

Վասն օծանելոյ զՏէրն իւղով.	ԻԶ.	6
Վասն պատրաստելոյ զպասեքն.	ԻԶ.	17
Վասն օրինաւոր խորհրդոյն.	ԻԶ.	26
Վասն մատնութեանն Տեառն.	ԻԶ.	47
Վասն ուրացութեանն Պետրոսի.	ԻԶ.	69
Վասն Յուդայի զղջմանն.	ԻԷ.	3
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԻԷ.	57
Վասն իւղաբեր կանանց.	ԻԸ.	1

ԱւԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւ-
2 թի որդւոյ Աբրահամու։ Աբրահամ ծնաւ զիսահակ,
իսահակ ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ զՅուդա և
3 զեղբարս նորա, Յուդա ծնաւ զփարէս և զԶարա 'ի
Թամարայ, Փարէս ծնաւ զԵզրոմ, Եզրոմ ծնաւ
4 զԱրամ, Արամ ծնաւ զԱմինադաբ, Ամինադաբ ծնաւ
5 զՆաասոն, Նաասոն ծնաւ զՍաղմոն, Սաղմոն
ծնաւ զԲոոս 'ի Հռաքաբայ, Բոոս ծնաւ զՈվբէթ 'ի
Հռութայ, Ովբէթ ծնաւ զՅեսսէ, Յեսսէ ծնաւ ըզԴա-
6 ւիթ արքայ։ Դաւիթ ծնաւ զՍողոմոն 'ի կնոջէն Ուրիայ,
7 Սողոմոն ծնաւ զՌոբովամ, Ռոբովամ ծնաւ զԱբիա,
8 Աբիա ծնաւ զԱսափ, Ասափ ծնաւ զՅովսափաթ Յով-
9 սափաթ ծնաւ զՅովրամ, Յովրամ ծնաւ զՈզիա, Ոզիա
ծնաւ զՅովաթամ, Յովաթամ ծնաւ զԱքազ, Աքազ
10 ծնաւ զԵզեկիա, Եզեկիա ծնաւ զՄանասէ, Մանասէ
11 ծնաւ զԱմովս, Ամովս ծնաւ զՅովսիա, Յովսիա ծնաւ
զՅեքոնիա և զեղբարս նորա առ գերութեամբն Բա-
12 բելացւոց։ Յետ գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յե-
քոնիա զՍաղաթիէլ, Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ,
13 Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵղիակիմ,

Եղիակիմ ծնաւ զԱզովր, Ազովր ծնաւ զՍադովկ, Սա- 14
դովկ ծնաւ զԱքին, Աքին ծնաւ զԵղիուդ, Եղիուդ 15
ծնաւ զԵղէազար, Եղէազար ծնաւ զՄատթան, Մատ-
թան ծնաւ զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅովսէփ զայրն 16
Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս, յորմէ
ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս։ Արդ ամե- 17
նայն ազգքն յԱբրահամէ մինչև 'ի Դաւիթ՝ ազգք
չորեքտասանք, և 'ի Դաւթէ մինչև 'ի գերութիւնն
Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք, և 'ի գերութենէն
Բաբելացւոց մինչև 'ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք։
Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ Խօ- 18
սեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչչև ե-
կեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ 'ի Հոգւոյն սըր-
բոյ։ Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր և ոչ 19
կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել
զնա։ Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա Հրեշ- 20
տակ Տեառն 'ի տեսլեան երևեցաւ նմա՝ և ասէ. Յով-
սէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ
զՄարիամ կին քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է՝ 'ի
Հոգւոյն սրբոյ է. Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նո- 21
րա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մե-
ղաց իւրեանց։ Այլ այս ամենայն եղև, զի լցցի որ 22
ասացաւն 'ի Տեառնէ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի. 23
Ահա կոյս յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զա-
նուն նորա Եմմանուէլ որ թարգմանի՝ ընդ մեզ Աս- 24
տուած։ Եւ զարթուցեալ Յովսէփ 'ի քնոյ անտի, ա-
րար որպէս հրամայեաց նմա Հրեշտակն Տեառն, և
առ յինքն զկինն իւր. և ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ 25
զորդին իւր զանդրանիկ, և կոչեաց զանուն նորա
Յիսուս։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհէմ Հրէաստանի
յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարևելից ե-
2 կին յԵրուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն
Հրէից. զի տեսաք զաստղ նորա յարևելս, և եկաք
3 երկիր պագանել նմա։ Եւ իբրև լուաւ արքայ Հերով-
դէս՝ խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։
4 Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զդպ-
պիրս ժողովրդեանն, հարցանէր 'ի նոցանէ թէ ուր
5 ծնանիցի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա. 'ի Բեթղե-
հէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մար-
6 գարէին. Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչ ինչ
կրտսեր ես յիշխանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան,
7 որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ։ Յայնժամ
Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց 'ի նո-
8 ցանէ զժամանակ աստեղն երևելոյ։ Եւ արձակեալ
զնոսա 'ի Բեթղեհէմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն
մանկանն, և յորժամ գտանիցէք ազդ արասջիք ինձ
9 զի և ես եկեալ երկիր պագից նմա։ Եւ նոքա իբրև
լուան 'ի թագաւորէն՝ գնացին, և ահա աստղն զոր
տեսին յարևելս առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ
10 եկաց 'ի վերայ ուր էր մանուկն։ իբրև տեսին զաստ-
11 ղըն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։ Եւ իբրև
մտին 'ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարե-
մաւ մարբն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա.
և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պա-
12 տարագս, ոսկի և կնդրուկ և զմուռս։ Եւ հրաման
առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս,
ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։
13 Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա Հրեշտակ տեառն
երևէր 'ի տեսլեան Յովսեփու, և ասէր. արի առ զմա-
նուկդ և զմայր իւր՝ և փախիր յԵգիպտոս, և անդ
լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ. քանզի 'ի խնդիր է

Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարուցեալ 14
առ զմանուկն և զմայր իւր գիշերի՝ և գնաց յԵգիպ-
տոս, և անդ էր մինչև ցվախճան Հերովդի։ Զի լցցի 15
ասացեալն 'ի Տեառնէ 'ի ձեռն մարգարէին, որ ասէ.
Յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ։
Յայնժամ իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի 16
մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտո-
րեաց զամենայն մանկունսն որ էին 'ի Բեթղեհէմ
և յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից և 'ի խո-
նարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուց։
Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայ 17
մարգարէի որ ասէ. Ձայն գուժեաց 'ի Հռամայ, ող- 18
բումն և լալումն և աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր
զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին։ Եւ 19
'ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ տեառն 'ի
տեսլեան երևէր Յովսեփայ յԵգիպտոս և ասէր. 20
Արի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն
Իսրայելի. զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ։
Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր նորա, և 21
եկն յերկիրն Իսրայելի։ Եւ իբրև լուաւ եթէ Արքեղա- 22
յոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի
հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ
'ի տեսլեան, գնաց 'ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ ե- 23
կեալ բնակեցաւ 'ի քաղաքին որ կոչէր Նազարեթ.
զի լցցի բան մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի։

ԳԼՈՒԽ Գ.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քա- 1
րոզել յանապատին Հրէաստանի և ասել. ապաշ- 2
խարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից։
Զի սա է՝ վասն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մար- 3
գարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատ-
րաստ արարէք զճանապարհ տեառն, և ուղիղ արա-

4 րէք զշաւիղս նորա։ Եւ ինքն Յովհաննէս ունէր հան-
դերձ 'ի ստևոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ
իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի։
5 Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղեմա-
ցիք և ամենայն Հրէաստան և ամենայն կողմն Յոր-
6 դանանու, մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան գետ, և
7 խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Եւ տեսեալ զբա-
զումս 'ի սադուկեցւոցն և 'ի փարիսեցւոց եկեալս
'ի մկրտութիւն նորա՝ ասէ ցնոսա. Ծնունդք իժից, ո՞
ցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ գալոց է։
8 Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարու-
9 թեան, և մի համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք
մեք հայր զԱբրահամ։ ասեմ ձեզ, զի կարող է Աստուած
'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրա-
10 համու։ Զի աւասիկ տապար առ արմին ծառոց դնի.
ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի
11 և 'ի հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխա-
րութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան
զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. Նա
12 մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին սուրբ և 'ի հուր։ Որոյ հե-
ծանոցն 'ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և
ժողովեսցէ զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն
13 այրեսցէ անշէջ հրով։ Յայնժամ գայ Յիսուս 'ի Գալիլեէ
'ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմանէ։
14 Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ. ինձ պիտոյ է 'ի
15 քէն մկրտել՝ և դու առ իս գաս։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս
վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն։ Եւ ապա
16 թոյլ ետ նմա։ Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվա-
ղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և ե-
տես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և
17 գայր 'ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից որ
ասէր. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

ԳԼՈՒԽ Դ

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հոգւոյն՝ 1
փորձել 'ի սատանայէ։ Եւ պահեալ զքառասուն տիւ 2
և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։ Եւ մատու- 3
ցեալ փորձիչն ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ՝ ասա
զի քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Նա պատասխանի 4
ետ և ասէ. Գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,
այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։
Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 'ի քաղաքն 5
սուրբ, և կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճա-
րին, և ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ ըզ- 6
քեզ աստի 'ի վայր. զի գրեալ է՝ թէ Հրեշտակաց
իւրոց պատուիրեալ է վասն քո՝ և 'ի վերայ ձեռաց
բարձցեն զքեզ, զի մի երբեք հարցես զքարի զոտն
քո։ Ասէ ցնա դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ ոչ փոր- 7
ձեսցես զտէր Աստուած քո։ Դարձեալ առնու ածէ 8
զնա սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ
նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և ըզ-
փառս նոցա, և ասէ ցնա. Զայս ամենայն քեզ տաց՝ 9
եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ։ Յայնժամ ասէ 10
ցնա Յիսուս. Երթ յետս իմ, սատանայ. զի գրեալ է,
տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա
միայն պաշտեսցես։ Ապա եթող զնա սատանայ, և 11
ահա Հրեշտակք մատեան և պաշտէին զնա։
ԲԲ. Եւ իբրև լուաւ Յիսուս՝ եթէ Յովհաննէս մատ- 12
նեցաւ, մեկնեցաւ գնաց 'ի Գալիլեա, և թողեալ 13
զՆազարեթ, եկն բնակեցաւ 'ի Կափառնաում՝ 'ի ծով-
եզերին, 'ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ.
զի լցցի բանն, որ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մար- 14
գարէի. Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ՝ 15
ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա
հեթանոսաց. ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ե- 16
տես լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և 'ի

17 ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա։ Յայնմհետէ ըս-
կսաւ քարոզել Յիսուս և ասել. Ապաշխարեցէք՝ զի
18 մերձեալ է արքայութիւն երկնից։ Մինչ դեռ զգնայր
Յիսուս ընդ եզր ծովուն գալիլեացւոց, ետես երկուս
եղբարս զՍիմոն զկոչեցեալն Պետրոս և զԱնդրէաս
եղբայր նորա՝ արկեալ ուռկան 'ի ծով. քանզի ձըկ-
19 նորսք էին։ Եւ ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ, և արա-
20 րից զձեզ որսորդս մարդկան։ Եւ նոքա թողեալ վաղ-
21 վաղակի զգործիսն՝ գնացին զհետ նորա։ Եւ մատու-
ցեալ անտի յառաջ ետես այլ երկուս եղբարս, զՅա-
կոբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա 'ի
նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ դեռ
կազմէին զուռկանս իւրեանց. և կոչեաց զնոսա։
22 Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայր իւ-
րեանց, գնացին զհետ նորա։
23 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլեա-
ցւոց, ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա և քարոզէր
զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հի-
ւանդութիւնս և զամենայն ախտս 'ի ժողովրդեանն։
24 Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց,
և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ
էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս, և զդիւահարս
25 և զլուսնոտս և զանդամալոյծս. և բժշկեաց զնոսա։ Եւ
երթային զհետ նորա ժողովուրդք բազումք 'ի Գալի-
լեէ և 'ի Դեկապոլեայ և յԵրուսաղեմէ և 'ի Հրէաս-
տանէ և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

ԳԼՈՒԽ Ե

1 ԲԳ. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել 'ի լեառն. և իբրև
նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա.
2 և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր.
3 Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն
4 երկնից։ Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: 5
Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, 6
զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց, զի նոքա 7
ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սըր- 8
տիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի խաղաղա- 9
րարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի
որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է 10
արքայութիւն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նա- 11
խատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամե-
նայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ: Ցնծացէք և ու- 12
րախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան
զձեզ էին: Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն ան- 13
համի՝ իւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետև,
բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել 'ի
մարդկանէ: Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քա- 14
ղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցա- 15
նեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ
աշտանակի. և լոյս տայ ամենեցուն՝ որ 'ի տանն ի-
ցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդ- 16
կան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և
փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է:

ԲԴ. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ 17
զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: Ամէն ասեմ 18
ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի՝ որ
նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և 'ի մարգա-
րէից՝ մինչև ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ
'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, և ուսու- 19
ցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան
երկնից: Իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչես-
ցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ, զի եթէ 20
ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան
զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայու-
թիւն երկնից: Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ 21
մի՛ սպանանէր. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի

22 դատաստանի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ
բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտա-
ւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յի-
մար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր
23 իւր մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհենն հրոյն: Եթէ
մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ,
և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ
24 զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն և երթ
նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մա-
25 տուսջիր զպատարագն քո: Լեր իրաւախոհ ընդ ոսո-
խի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճա-
նապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի,
26 և դատաւորն դահճի. և արկանիցիս 'ի բանտ: Ամէն
ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանի-
27 ցես զյետին նաքարակիտն: Լուարուք զի ասացաւ՝
28 մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի 'ի
կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ
29 ընդ նմա 'ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայթա-
գղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա 'ի քէն. զի
լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ա-
30 մենայն մարմինդ քո անկանիցի 'ի գեհենն: Եւ եթէ
աջ ձեռն քո գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա և
ընկեա 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց
քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո արկանիցի
31 'ի գեհենն: Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ
32 զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն: Բայց ես ասեմ
ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց
բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ, և որ զար-
33 ձակեալն առնէ՝ շնայ: Դարձեալ լուարուք զի ասացաւ
առաջնոցն, մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես
34 Տեառն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին
35 մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի՛
յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրու-
36 սաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. և մի՛ 'ի գլուխ քո
երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել

կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. 37
զի աւելի քան զայն 'ի չարէն է: Լուարուք զի ասացաւ, 38
ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման: Այլ ես 39
ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարի: Այլ եթէ ոք ա-
ծիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն:
Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, 40
թող 'ի նա և զբաճկոն քո: Եւ որ տարապարհակ վա- 41
րիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս. որում 42
խնդրէ 'ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ 'ի
քէն՝ մի դարձուցաներ զերեսս: Լուարուք ապաքէն 43
զի ասացաւ, սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթըշ-
նամին քո: Այլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս 44
ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք
ատելեաց ձերոց, և աղօթս 'ի վերայ այնոցիկ՝ որ
լլկենն զձեզ և հալածեն, զի եղիջիք որդիք հօր 45
ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի
վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ
արդարոց և մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ 46
որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և
մաքսաւորք զնոյն գործեն, և եթէ տայցէք միայն 47
ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ
ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն:
Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և հայրն ձեր 48
երկնաւոր կատարեալ է:

ԳԼՈՒԽ Զ

Բե. Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի առնել 1
առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա. գու-
ցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն ձերմէ՝ որ յեր-
կինսն է: Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի 2
հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առ-
նեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի
փառաւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝

3 այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ ողոր-
մութիւն առնիցես, մի գիտասցէ ձախն քո զինչ գործէ
4 աջ քո. որպէս զի եղիցի ողորմութիւն քո 'ի ծածուկ,
և հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ
5 յայտնապէս: Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինի-
ցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն 'ի ժողովուրդս և
յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի
երևեսցին մարդկան: Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են
6 վարձք նոցա: Այլ դու յորժամ կայցես յաղօթս,
մուտ 'ի սենեակ քո՝ և փակեա զդուրս քո, և կաց
յաղօթս առ հայր քո 'ի ծածուկ. և հայրն քո որ տե-
7 սանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս: Եւ
յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօսք լինիք իբրև
զհեթանոսսն. զի համարին թէ 'ի բազում խօսից
8 իւրեանց լսելի լինիցին. արդ մի նմանիցէք նոցա. զի
գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչև ձեր
9 խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ: Եւ արդ՝ այսպէս կացէք
դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի
10 անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք
11 քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապա-
12 զորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր,
13 որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի
տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ 'ի
չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք
14 յաւիտեանս. ամէն: Զի եթէ թողուցուք մարդկան
զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնա-
15 ւոր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս
նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր:
16 Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն
տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց,
որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն: Ամէն
17 ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յոր-
ժամ պահիցես, օծ զգլուխ քո և լուա զերեսս քո,
18 զի մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ, այլ հօրն
քում 'ի ծածուկ. և հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ,

հատուսցէ քեզ։ Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկ- 19
րի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք
ական հատանեն և գողանան։ Այլ գանձեցէք ձեզ 20
գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն,
և ոչ գողք ական հատանեն և գողանան. զի ուր 21
գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։
ԲԶ. Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, 22
ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. ապա թէ ակն քո 23
չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի։ Իսկ արդ՝
եթէ լոյսդ որ 'ի քեզ է՝ խաւար է, խաւարն ո՛րչափ
ևս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, կամ զմին 24
ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և
զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծա-
ռայել և Մամոնայի։ Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ 25
հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ
ըմպիցէք, և մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զի՛նչ ա-
գանիցիք. ո՛չ ապաքէն ոգի առաւել է քան զկերա-
կուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք 'ի 26
թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն, և ոչ ժո-
ղովեն 'ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կե-
րակրէ զնոսա. ո՛չ ապաքէն դուք առաւել էք քան
զնոսա։ Իսկ արդ ո՞ 'ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յա- 27
ւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն 28
հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք 'ի շուշանն վայ-
րենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝ 29
զի և ոչ Սողոմոն յամենայն 'ի փառս իւրում զգե-
ցաւ իբրև զմի 'ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն 'ի վայրի, 30
որ այսօր է և վաղիւն 'ի հնոց արկանի, Աստուած
այնպէս զգեցուցանէ, ո՛րչափ ևս առաւել զձեզ, թե-
րահաւատք։ Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք. 31
զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգե-
ցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի 32
գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ
ամենայն։ Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ 33
և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ։ 34

Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի. զի վաղիւն
վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր։

ԳԼՈՒԽ Է

1 ԲԷ. Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք. զի որով դատաս-
2 տանաւ դատիք՝ դատելոց էք, և որով չափով չափէք՝
3 չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քոյ,
4 և 'ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կամ
զիա՞րդ ասես ցեղբայր քո, թող հանից զշիւղդ յա-
կանէ քումմէ. և ահաւասիկ 'ի քում ականդ գերան
5 կայ։ Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քում-
մէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր
6 քոյ։ Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց, և մի՛ արկանէք ըզ-
մարգարիտ ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կո-
խիցեն զնոսա և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։
7 Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախե-
8 ցէք և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և
9 որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Ո՞ իցէ 'ի
ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր
10 տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայ-
11 ցէ նմա։ Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պար-
գևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՛րչափ ևս առաւել
հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ
12 խնդրեն զնա։ Զամենայն զոր միանգամ կամիջիք՝
թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք
13 նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք։ Մտէք
ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռնն և հա-
մարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բա-
14 զումք են որ մտանեն ընդ նա. քանզի անձուկ է
դուռնն և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, և
15 սակաւք են որ գտանեն զնա։ Զգոյշ լերուք 'ի սուտ
մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-
16 րաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք. ի պտղոյ

նոցա ծանիջիք զնոսա։ Միթէ քաղիցեն 'ի փշոց խա-
ղող կամ 'ի տատասկէ թուզ։ Այնպէս ամենայն 17
ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ
չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, 18
և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։ Ամենայն ծառ՝ 19
որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր ար-
կանի։ Ապա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։ Ոչ ա- 20
մենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն 21
երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս
է։ Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր 22
Տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո
դևս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս
արարաք. և յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ եր- 23
բէք գիտէի զձեզ. 'իբաց կացէք յինէն ամենեքեան՝ որք
գործէիք զանօրէնութիւն։ Ամենայն որ լսէ զբանս 24
իմ զայսոսիկ և առնէ զնոսա, նմանեսցէ առն իմաստ-
նոյ՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի. իջին ան- 25
ձրևք, և խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին
զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի 'ի վերայ վիմի
հաստատեալ էր։ Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայ- 26
սոսիկ՝ և ոչ առնէ զնոսա, նմանեսցէ առն յիմարի, որ
շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ. իջին անձրևք, 27
յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն և ան-
կաւ, և էր կործանումն նորա մեծ յոյժ։ Եւ եղև իբրև 28
կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ,
զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն
նորա. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ 29
որպէս դպիրքն։

ԳԼՈՒԽ Ը

Այլ իբրև էջ 'ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա 1
ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ 2
մի, երկիր պագանէր նմա և ասէր. Տէր, եթէ կամիս

3 կարող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր և հասոյց
'ի նա Յիսուս և ասէ. կամիմ՝ սրբեաց, և վաղվաղա-
4 կի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա
Յիսուս. Զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց
զանձն քո քահանային, և մատո զպատարագն զոր
հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա։
5 Եւ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հա-
6 րիւրապետ մի, աղաչէր զնա և ասէր. Տէր, մանուկ
իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝ չարաչար
7 տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս. Ես եկից և բժշկեցից
8 զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ. Տէր,
չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ
9 ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ. քանզի և ես
այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զի-
նուորս. ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝
և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ։
10 Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ
զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ և ոչ յիսրայէլի այս-
11 պիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ, զի բա-
զումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմես-
ցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակով-
12 բու յարքայութեան երկնից, և որդիքն արքայու-
թեան ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ
13 և կրճել ատամանց, և ասէ Յիսուս ցհարիւրա-
պետն. Երթ՝ և որպէս հաւատացերդ եղիցի քեզ։ Եւ
ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։
14 Եւ եկեալ Յիսուս 'ի տուն Պետրոսի, ետես զի
15 զոքանչն նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ ըզ-
ձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յառն եկաց և
պաշտէր զնոսա։
16 Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս
բազումս, և եհան զայսսն բանիւ, և զամենայն հի-
17 ւանդս բժշկեաց։ Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն
Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վե-
րացոյց, և զցաւս մեր եբարձ։

ԳԿ. Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրեւ, 18
հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մատուցեալ դպ- 19
րի մի՝ ասէ ցնա. Վարդապետ, եկից և ես զկնի քո
յոր վայր և երթիցես։ Ասէ ցնա Յիսուս. Աղուե- 20
սուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք. այլ որդւոյ
մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։ Եւ մի ոմն յա- 21
շակերտացն նորա ասէ ցնա. Տէր, տուր ինձ հրաման՝
զի երթայց նախ թաղեցից զհայր իմ։ Ասէ ցնա Յի- 22
սուս. Եկ զկնի իմ, և թոյլ տուր մեռելոցդ թաղել
զմեռեալս իւրեանց։

Եւ իբրեւ եմուտ ՚ի նաւն, գնացին զկնի նորա ա- 23
շակերտքն նորա. և ահա շարժումն մեծ եղեւ ՚ի ծո- 24
վուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն
ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա 25
և ասեն. Տէր, փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։ Եւ ասէ 26
ցնոսա. ընդէ՞ր վատասիրտք էք, սակաւահաւատք։
Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն,
և եղեւ խաղաղութիւն մեծ։ Եւ մարդիկն զարմացան 27
և ասէին. Որպիսի՞ ոք իցէ սա, զի և հողմք և ծով
հնազանդին սմա։

Եւ իբրեւ անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, 28
պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գե-
րեզմանացն՝ չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար
անցանել ումեք ընդ այն ճանապարհ. և ահա աղա- 29
ղակեցին և ասեն. Զի՞ կայ մեր և քո, Յիսուս որդի
Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Եւ էր 30
հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։
Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես զմեզ 31
աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։
Եւ ասէ ցնոսա, երթայք։ Եւ նոքա ելեալ գնացին յե- 32
րամակն խոզից, և դիմեաց ամենայն երամակն ՚ի
դարէ անտի ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրսն։ Եւ խոզա- 33
րածքն փախեան, և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին
զամենայն, և զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն 34
քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝
աղաչեցին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա։

ԳԼՈՒԽ Թ

1 Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, և եկն ՚ի քաղաք իւր։
2 Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի որ դնէր
՚ի մահիճս։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ
3 ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ
ահա ոմանք ՚ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ
4 դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ
ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր.
5 զի՞նչ դիւրին է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո,
6 թէ ասել արի և շրջեաց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշ-
խանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ ըզ-
մեղս.- յայնժամ ասէ ցանդամալոյծն.- արի՛ առ զմա-
7 հիճս քո՝ և երթ ՚ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ՚ի
8 տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. և
փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշ-
խանութեան՝ մարդկան։
9 ԳԲ. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես զայր մի
զի նստէր ՚ի մաքսաւորութեան, Մատթէոս անուն.
և ասէ ցնա. Եկ զկնի իմ։ Եւ յարուցեալ գնաց զկնի
10 նորա։ Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ՚ի տան, և ահա
բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ
11 էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա։ Իբրեւ տե-
սին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէ՞ր
ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդա-
12 պետն ձեր։ Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա.
13 ոչ է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ Երթայք
ուսարուք՝ զի՞նչ է՝ զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ.
14 զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Յայնժամ
մատեան առ նա աշակերտքն Յովհաննու և ասեն.
ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո
15 աշակերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ
մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ

մինչ փեսայն ընդ նոսա իցէ . այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պա_
հեսցեն ։ Ոչ ոք արկանէ կապերտ անթափ 'ի վերայ 16
հնացեալ ձորձոյ, զի առնու ելանէ զլրումն նո_
րա 'ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի ։
Եւ ոչ արկանեն գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ 17
ոչ՝ տիկքն պատառին, և գինին հեղու և տիկքն կորն_
չին . այլ արկանեն գինի նոր 'ի տիկս նորս, և երկո_
քին պահին ։
Գ.Գ. Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա 18
իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ա_
սէր. Դուստր իմ արդ ևս վախճանեցաւ . այլ եկեալ
դիցես զձեռն քո 'ի վերայ նորա և կեցցէ ։ Յարեաւ 19
Յիսուս և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ ։
Եւ ահա կին մի տեւատես երկոտասանամեայ՝ 20
մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի գրօշակ հանդերձի
նորա . քանզի ասէր 'ի միտ իւրում, թէ միայն մեր_ 21
ձենամ 'ի հանդերձս նորա՝ փրկիմ ։ Իսկ Յիսուս իբրև 22
դարձաւ և ետես զնա, ասէ . Քաջալերեաց դուստր,
հաւատք քո կեցուցին զքեզ ։ Եւ փրկեցաւ կինն 'ի
ժամէն յայնմանէ ։ Իբրև եկն Յիսուս 'ի տուն իշխա_ 23
նին, և ետես զփողարսն և ամբոխ յոյժ, ասէ ցնո_
սա . Ի բաց գնացէք . զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ 24
այլ ննջէ ։ Եւ ծաղր առնէին զնա ։ Եւ իբրև ել ամբոխն 25
'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ
աղջիկն ։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն 26
ընդ այն ։
Գ.Դ. Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն Յիսուս, 27
զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ա_
սէին . ողորմեաց, մեզ որդի Դաւթի ։ Եւ իբրև եկն 'ի 28
տուն, մատեան առ նա կոյրքն ։ Եւ ասէ ցնոսա Յի_
սուս . Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ ։
Ասեն ցնա . այո Տէր ։ Յայնժամ մերձեցաւ յաչս նո_ 29
ցա և ասէ . ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ ։ Եւ 30
բացան աչք նոցա . և սաստեաց նոցա Յիսուս և ասէ.

31 Զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ ։ Եւ նոքա ելեալ համ_
բաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն ։
32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ
33 նա այր մի համր դիւահար, և յելանել դիւին՝ խօ_
սեցաւ համրն ։ Եւ զարմացան ժողովուրդքն և ասեն.
թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի ։
34 Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հա_
նէ դա զդևս ։
35 Գ.Ե. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ
գեօղս, ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարո_
զէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամե_
նայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովր-
36 դեանն ։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նո_
սա, զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս՝
37 որոց ոչ իցէ հովիւ ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր.
38 Հունձք բազում են՝ և մշակք սակաւ . արդ աղաչեցէք
զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր ։

ԳԼՈՒԽ Ժ

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշա_
կերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամե_
2 նայն հիւանդութիւնս ։ Եւ առաքելոցն երկոտասա_
նից էին անուանք այսոքիկ . առաջին, Սիմովն՝ ա_
նուանեալն Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա,
3 Յակովբոս Զեբեթեայ և Յովհաննէս եղբայր նորա .
Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս
մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ և Ղեբէոս՝ որ անուա_
4 նեցաւն Թադէոս, Սիմովն կանանացի, և Յուդա Իսկա_
5 րիովտացի՝ որ և մատնեացն զնա ։ Զնոսա երկոտա_
սանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և
ասէ. 'ի ճանապարհ հեթանոսաց մի երթայցէք, և 'ի
6 քաղաք Սամարացւոց մի մտանիցէք ։ Այլ երթայք

առաւել առ ոչխարսն կորուսեալս տան Իսրայելի։
Եւ իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ մեր- 7
ձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէք, 8
զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք. ձրի առէք եւ ձրի
տուք։ Մի՛ ստանայք ոսկի եւ մի՛ արծաթ եւ մի՛ պղինձ 9
'ի գօտիս ձեր. մի՛ պարկ 'ի ճանապարհ, եւ մի՛ եր- 10
կուս հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛ ցուպ. զի արժանի
է մշակն կերակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք 11
կամ 'ի գեօղ, հարցանիցէք թէ ո՛ է 'ի նմա արժանի.
եւ անդ լինիջիք մինչեւ ելանիցէք անտի։ Եւ իբրեւ 12
մտանիցէք 'ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ եւ ասասջիք.
ողջոյն տանս այսմիկ։ Եթէ իցէ տունն արժանի, ե- 13
կեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ
արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ 14
ընկալցի զձեզ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելա-
նիցէք քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին
յոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկ- 15
րին Սոդոմացւոց եւ Գոմորացւոց յաւուրն դատաս-
տանի, քան քաղաքին այնմիկ։

ԳԶ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս 16
'ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ
զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք 17
'ի մարդկանէ. զի մատնիցեն զձեզ յատեանս, եւ
'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ, եւ առա- 18
ջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ
վասն իմ 'ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց, այլ 19
յորժամ մատնիցեն զձեզ՝ մի՛ հոգայցէք թէ որպէս
կամ զինչ խօսիցիք, զի տացի ձեզ 'ի ժամուն յայն-
միկ զինչ խօսիցիք, զի ոչ եթէ դուք իցէք որ խօսի- 20
ցիքն, այլ հոգին հօր ձերոյ որ խօսիցի 'ի ձեզ։
Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, եւ հայր՝ զորդի. 21
եւ յարիցեն որդիք 'ի վերայ հարց եւ սպանանիցեն
զնոսա, եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն 22
անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ 'ի սպառ՝ նա
կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ 'ի քաղաքիս 23

յայսմիկ՝ փախիջիք յայլ, եւ եթէ յայնմանէ հալա-
ծիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս. ամէն ասեմ ձեզ, ոչ
սպառեսջիք զքաղաքս Իսրայելի՝ մինչեւ եկեսցէ որդի
24 մարդոյ։ Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ,
25 եւ ոչ ծառայ քան զտէր իւր։ Շատ իցէ աշակերտին՝
եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբ-
րեւ զտէր իւր։ Եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ կո-
26 չեցին, որչափ եւս առաւել զընտանիս նորա։ Մի՛
այսուհետեւ երկնչիցիք 'ի նոցանէ. զի ոչ ինչ է 'ի
ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։
27 Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս, եւ զոր
28 լսէք յունկանէ՝ քարոզեցէք 'ի վերայ տանեաց։ Եւ
մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ
զոգի ոչ կարեն սպանանել։ Այլ երկերուք դուք ա-
ռաւել յայնմանէ՝ որ կարողն է զոգի եւ զմարմին
29 կորուսանել 'ի գեհենի։ Ո՛չ ապաքէն երկու ճնճ-
ղուկք դանգի միոջ վաճառին, եւ մի 'ի նոցանէ յեր-
30 կիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր եւ ամե-
31 նայն իսկ հեր գլխոյ թուեալ է. եւ արդ մի՛ երկնչի-
32 ցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Ամենայն
որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստո-
վանեցից եւ ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինս
33 է։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց
34 եւ ես զնա առաջի հօր իմոյ որ յերկինսն է։ Մի՛ հա-
մարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր.
35 ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր. քանզի
եկի քակել զայր 'ի հօրէ իւրմէ, եւ զդուստր 'ի մօրէ
36 իւրմէ եւ զհարսն 'ի սկեսրէ իւրմէ, եւ թշնամիք
37 առն. ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր ա-
ռաւել քան զիս, ոչ է ինձ արժանի։ Եւ որ սիրէ զուս-
տրր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժա-
38 նի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ
39 ինձ արժանի։ Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա,
40 եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։ Որ
ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ըն-

զունի զառաքիչն իմ: Որ ընդունի զմարգարէ յանուն 41
մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. և որ ընդու-
նի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ
առցէ: Եւ որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս յայս- 42
ցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշա-
կերտի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Գէ. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զպատուէր 1
երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քա-
րոզել և ուսուցանել 'ի քաղաքս նոցա:
Իսկ Յովհաննէս իբրև լուաւ 'ի բանտին զգործսն 2
Քրիստոսի, առաքեաց 'ի ձեռն աշակերտացն իւրոց,
և ասէ ցնա. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում 3
ակնկալցուք: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո- 4
սա. Գնացէք պատմեցէք Յովհաննու՝ զոր լուայք և
տեսէք. կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին 5
և խուլք լսեն և մեռեալք յառնեն, և աղքատք աւե-
տարանին, և երանեալ է որ ոչ գայթակղեսցի յիս: 6
Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ժողո- 7
վրդեանն զՅովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել յանապա-
տին, եղէգն շարժուն 'ի հողմոյ. այլ զի՞նչ ելէք տե- 8
սանել, մա՞րդ 'ի հանդերձս փափկութեան զարդա-
րեալ: Ահաւանիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ 'ի
տունս թագաւորաց են: Այլ զի՞նչ ելէք տեսանել. 9
մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ, և առաւել ևս քան զմար-
գարէ: Զի նա է վասն որոյ գրեալն է. ահա ես ա- 10
ռաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ
պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ամէն 11
ասեմ ձեզ, չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ
քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքա-
յութեան երկնից մեծ է քան զնա: Բայց յաւուրցն 12
Յովհաննու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւնն

երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա:
13 Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅով-
14 հաննէս մարգարէացան: Եւ եթէ կամիք ընդունել՝
15 նա է Եղիա՝ որ գալոցն է: Որ ունիցի ականջս լսելոյ,
16 լուիցէ: Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է
մանկտւոյ՝ որ նստիցին 'ի հրապարակս, կարդայցեն
17 զընկերս իւրեանց, և ասիցեն. փողս հարաք ձեզ
և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ և ոչ կոծեցարուք:
18 Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասեն՝ դև
19 գոյ 'ի նմա: Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ա-
սեն, ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաք-
սաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստու-
20 թիւն յորդւոց իւրոց: Յայնժամ սկսաւ նախատել
զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա,
21 և ոչ ապաշխարեցին: Վա՜յ քեզ՝ Քորազին, վա՜յ քեզ՝
Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ
էին զօրութիւնքն որ 'ի ձեզ եղեն, վաղու ևս ար-
22 դեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր: Բայց
ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սի-
23 դոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ: Եւ դու, կա-
փառնաում, մի մինչև յերկինս բարձրասցիս, այլ
մինչև 'ի դժոխս իջցես: Զի եթէ 'ի Սոդոմ եղեալ էին
զօրութիւնքն՝ որ եղեն 'ի քեզ, ապաքէն կային ևս
24 մինչև ցայսօր: Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին Սոդո-
մացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝
քան քեզ:
25 Գկ. Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս
և ասէ. գոհանամ զքէն հայր տէր երկնի և երկրի.
զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց և
26 յայտնեցեր տղայոց. այո, հայր, զի այսպէս հաճոյ
27 եղև առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ
իմմէ: Եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր, և ոչ
զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի և ում որդին կա-
28 միցի յայտնել: Եկայք առ իս ամենայն վաստակեալք
29 և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Առէք զլուծ

իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ
սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ 30
իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԴԲ. Յայնժամ գնայր Յիսուս ընդ արտորայսն նո- 1
ցա 'ի շաբաթու. և աշակերտքն նորա քաղցեան,
և սկսան հասկ կորզել և ուտել։ Փարիսեցիքն իբրև 2
տեսին՝ ասեն ցնա. ահաւասիկ աշակերտքն քո գոր-
ծեն, զոր ոչ է արժան գործել 'ի շաբաթու։ Եւ նա 3
ասէ ցնոսա. ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դա-
ւիթ, յորժամ քաղցեաւն, և որ ընդ նմայն էին.
զիա՞րդ եմուտ 'ի տունն Աստուծոյ՝ և եկեր զհացն 4
զառաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա ուտել,
և ո՛չ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։
Կամ թէ չիցէ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի շաբաթս 5
քահանայքն 'ի տաճարին պղծեն զշաբաթն և ան-
մեղք են. բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն 6
է աստ։ Եւ եթէ գիտէիք զինչ է ողորմութիւն կա- 7
միմ՝ և ոչ զոհ, ապա ոչ դատապարտէիք դուք զան-
պարտսն։ Զի տէր է շաբաթու որդին մարդոյ։ Եւ 8
գնացեալ անտի Յիսուս՝ եկն 'ի ժողովուրդն նոցա։ 9
Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. 10
հարցին ցնա և ասեն, եթէ պա՞րտ իցէ 'ի շաբաթու
բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ 11
ցնոսա. Ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և
անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու, միթէ ո՞չ
ունիցի և յարուցանիցէ զնա. իսկ արդ ո՞րչափ ևս 12
առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ
է 'ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն. 13
ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև
զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ 14
առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա։ Եւ Յիսուս

15 իբրև գիտաց, մեկնեցաւ անտի։ Եւ գնացին զհետ
նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենե-
16 սեան։ Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայտնեսցեն զնմանէ
17 ումեք. զի լցցի որ ասացաւն 'ի ձեռն Եսայեայ մար-
18 գարէի. Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի
իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ 'ի
վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ.
19 ոչ հակառակեսցի և ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուի-
20 ցէ 'ի հրապարակս զբարբառ նորա։ Զեղէգն ջախ-
ջախեալ ոչ փշրեսցէ, և զպատրոյկն առկայծեալ ոչ
շիջուսցէ, մինչև հանցէ 'ի յաղթութիւն զդատաս-
21 տան, և յանուն նորա հեթանոսք յուսասցին։
22 ԴԳ. Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի
կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և
23 կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն
ժողովուրդքն և ասէին. միթէ սա՞ իցէ Քրիստոսն որ-
24 դի Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն.
ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշ-
25 խանաւն դիւաց։ Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս
նոցա՝ ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն իւր՝ աւերի, և ամենայն քաղաք կամ
26 տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կայցէ. և եթէ սա-
տանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ.
27 արդ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա։ Եւ եթէ
ես Բէեղզեբուղաւ հանեմ զդևս՝ որդիքն ձեր իւ՞ հա-
նիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։
28 Ապա եթէ հոգւով Աստուծոյ հանեմ ես զդևս, ուրեմն
հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել 'ի տուն հզօրի՝ և զգոր-
ծիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհը-
30 զօրն, և ապա զտունն նորա յափշտակիցէ։ Որ ոչ
ընդ իս է՝ հակառակ մի է. որ ոչ ժողովէ ընդ իս՝
31 ցրուէ։ Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք և
հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն
32 հայհոյութիւն մի թողցի։ Եւ որ ոք ասիցէ բան զորդ-

ւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգւոյն սրբոյ
ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի և մի ՚ի
հանդերձելումն։ Կամ արարէք զծառն բարի՝ և զպը- 33
տուղ նորա բարի, կամ արարէք զծառն չար՝ և զպը-
տուղ նորա չար. քանզի ՚ի պտղոյ անտի ծառն ճանա-
չի։ Ծնունդք իժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ 34
որ չարքդ էք. քանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի բե-
րան։ Մարդ բարի ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հա- 35
նէ զբարիս. և մարդ չար ՚ի չար գանձուց սրտի իւ-
րոյ հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամե- 36
նայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ՝ տացեն
համար յաւուրն դատաստանի։ Զի ՚ի բանից քոց ար- 37
դարասցիս, և ՚ի բանից քոց պարտաւորեսցիս։

ԴԴ. Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք 38
՚ի դպրացն և ՚ի փարիսեցւոց՝ և ասեն. Վարդապետ,
կամիմք նշան ինչ տեսանել ՚ի քէն։ Նա պատասխա- 39
նի ետ և ասէ ցնոսա. Ազգ չար և շնացող՝ նշան խընդ-
րէ, և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու
մարգարէի։ Զի որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին 40
զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի և որ-
դի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գի-
շերս։ Արք Նինուէացիք յարիցեն ՚ի դատաստանի 41
ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա,
զի զղջացան ՚ի քարոզութեան Յովնանու. և արդ ա-
ւասիկ մեծ քան զՅովնան է աստ։ Դշխոյն հարաւոյ 42
յարիցէ ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և
դատապարտեսցէ զսա. զի եկն ՚ի ծագաց երկրի՝
լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և ահա մեծ քան
զՍողոմոն է աստ։ Այլ յորժամ այսն պիղծ ելանէ ՚ի 43
մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ՝
և ոչ գտանէ։ Յայնժամ ասէ. դարձայց ՚ի տուն իմ՝ 44
ուստի ելի. և եկեալ գտանէ զնա պարապորդ, մաք-
րեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ և առնու ընդ
իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ
բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար

քան զառաջինն։ Այնպէս եղիցի և ազգիս այսմիկ
46 չարի։ Մինչ դեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա
մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ՝ և խընդ-
47 րէին խօսել ընդ նմա։ Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր
քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօսել
48 ընդ քեզ։ Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն
ցնա, և ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղ-
49 բարք։ Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ. Ա-
50 հաւասիկ մայր իմ և եղբարք իմ. զի որ առնիցէ
զկամս հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր
և քոյր և մայր։

ԳԼՈՒԽ ԺԳ

1 ԴԵ. Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ՚ի տանէն՝
2 նստէր առ ծովեզերն. և ժողովեցան առ նա ժողո-
վուրդք բազումք, մինչև մտանել նմա ՚ի նաւն և նըս-
տել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն։
3 Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք և ասէր.
4 Ահա ել սերմանահան սերմանել, և ՚ի սերմանելն
իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն
5 թռչունն երկնից և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յա-
պառաժի, ուր ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի
6 բուսաւ. առ ՚ի չգոյէ հիւթոյ երկրին՝ ՚ի ծագել ա-
րեւուն տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։
7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղ-
8 ձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր
պտուղ. էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր,
9 և էր որ երեսնաւոր։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուի
10 ցէ։ Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. Ընդէ՞ր
11 առակօք խօսիս ընդ նոսա։ Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա. Քանզի ձեզ տուեալ է գիտել զխոր-
հուրդս արքայութեանն երկնից, և նոցա չէ տուեալ։
12 Զի ոյր գուցէ՝ տացի նմա և յաւելցի. և ոյր ոչն

գուցէ՝ և զոր ունիցին բարձցի 'ի նմանէ։ Վասն այ- 13
նորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ և ոչ
տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի միտ։
Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայայ՝ 14
որ ասէ. Լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսա-
նելով տեսջիք՝ և մի տեսջիք. զի թանձրացաւ սիրտ 15
ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծա-
նունս լուան. և զաչս իւրեանց կափուցին, զի մի եր-
բէք տեսցեն աչօք՝ և ականջօք լուիցեն՝ և սրտիւք ի-
մասցին, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա։ Բայց ձեր 16
երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝
զի լսեն։ Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք 17
և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և
ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան։ Եւ արդ 18
լուարուք դուք զառակ սերմանացանին. յամենայնէ՝ 19
որ լսէ զբանն արքայութեան և ոչ առնու 'ի միտ,
գայ չարն և յափշտակէ զսերմանեալն 'ի սիրտ նորա.
այն է որ առ ճանապարհաւն սերմանեցաւ։ Եւ որ 20
յապառաժին սերմանեցաւ այն է, որ իբրև լսէ զբ-
անն, և վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա.
բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժա- 21
մանակ մի է, 'ի լինել նեղութեան և հալածանաց
վասն բանին՝ վաղվաղակի գայթագղի։ Իսկ որ 'ի 22
մէջ փշոցն սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն,
և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղ-
ձուցանեն զբանն, և լինի անպտուղ։ Իսկ որ յեր- 23
կիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն
և 'ի միտ առնու, և տայ զպտուղ. է որ հարիւր, և
է որ վաթսուն, և է որ երեսուն։

ԴՁ. Այլ առակ արկ առ նոսա և ասէ. Նմանե- 24
ցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ
սերմն բարի յագարակի իւրում. և 'ի քուն լինել 25
մարդկան՝ եկն թշնամի նորա, և ցանեաց 'ի վերայ
որոմն 'ի մէջ ցորենոյն՝ և գնաց. և իբրև բուսաւ 26
խոտն՝ եւ արար պտուղ, ապա երևեցաւ և որոմնն։

27 Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. Տէր,
ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում,
28 արդ ուստի՞ ունիցի զորոմն։ Եւ նա ասէ ցնոսա.
Այր թշնամի արար զայն։ Ասեն ցնա ծառայքն.
29 կամիս զի երթիցուք քաղեսցուք զայն 'ի բաց։ Եւ նա
ասէ ցնոսա. Մի. գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և
30 զցորեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք. թոյլ տուք եր-
կոցունց աճել 'ի միասին մինչև 'ի հունձս, և 'ի ժա-
մանակի հնձոց ասացից ցհնձօղսն. քաղեցէք նախ
զորոմնդ, և կապեցէք զայդ խրձունս առ 'ի այրել,
31 և զցորեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ։ Այլ
առակ արկ առ նոսա, և ասէ. Նման է արքայութիւն
երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ սեր-
32 մանեաց յագարակի իւրում, որ փոքր է քան զամե-
նայն սերմանիս. և յորժամ աճիցէ, մեծ է քան զա-
մենայն բանջարս, և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց
33 երկնից և հանգչել յոստս նորա։ Այլ առակ խօ-
սեցաւ ընդ նոսա, և ասէ. Նման է արքայութիւն երկ-
նից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց 'ի գրիւս երիս
34 ալեր՝ մինչև ամենայնն խմորեցաւ։ Զայս ամենայն
խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, և ա-
35 ռանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա. զի լցցի ասա-
ցեալն 'ի մարգարէէն. Բացից առակօք զբերան իմ,
բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի։
36 ԴԷ. Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝
եկն 'ի տուն. մատեան առ նա աշակերտքն և ասեն.
37 Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։ Նա պա-
տասխանի ետ և ասէ ցնոսա. Որ սերմանէ սերմն բա-
38 րի՝ է որդի մարդոյ, և ագարակն աշխարհս է. սերմն
բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ
39 որոմնն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն՝
սատանայ է, և հունձքն կատարած աշխարհիս է, և
40 հնձօղքն՝ հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմնն և
'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարածի աշխար-
41 հիս. առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և

ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայ-
թագղութիւնս՝ և զայնոսիկ որք գործեն զանօրէնու-
թիւն, և արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ. անդ եղիցի 42
լալ և կրճել ատամանց: Յայնժամ արդարքն ծա- 43
գեսցեն իբրև զարեգակն, յարքայութեան երկնից. որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ՝ նման է 44
արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի,
զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց. և 'ի խնդութենէ ան-
տի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ
զագարակն զայն: Դարձեալ՝ նման է արքայութիւն 45
երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս
գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ 46
երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և
գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ՝ նման է արքայու- 47
թիւն երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով՝ և յամենայն
ազգաց ժողովելոյ. զոր՝ իբրև լցաւ՝ հանեալ 'ի ցա- 48
մաք, և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս,
և զխոտանն 'ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի 'ի կա- 49
տարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք, և մեկնես-
ցեն զչարս 'ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա 'ի 50
հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Ասէ 51
ցնոսա Յիսուս. իմացարո՞ւք զայս ամենայն: Ասեն
ցնա. Այո, Տէր: Եւ նա ասէ ցնոսա. վասն այսո- 52
րիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան
երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ 'ի
գանձէ իւրմէ զնոր և զհին:

ԵԿ. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զառակս 53
զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: Եւ եկեալ 'ի գաւառ իւր՝ 54
ուսուցանէր զնոսա 'ի ժողովրդեանն նոցա, մինչև
զարմանալ նոցա և ասել. Սմա ուստի՞ իցէ այս իմաս-
տութիւն և զօրութիւնք: Ո՞չ սա է հիւսանն որդի. 55
ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, և եղբարք սորա Յա-
կովբոս և Յովհաննէս և Սիմովն և Յուդա. և քորք սո- 56
րա ո՞չ ամենեքեան առ մեզ են. և արդ ուստի՞ է սմա
այս ամենայն: Եւ գայթագղէին 'ի նա: Եւ Յիսուս 57

ասէ ցնոսա. Ոչ է մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում
58 գաւառի և յիւրում տան: Եւ ոչ արար անդ զօրու-
թիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա:

ԳԼՈՒԽ ԺԴ

1 ԵԲ. Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չոր-
2 րորդապետ զլուր Յիսուսի, և ասէ ցծառայս իւր.
Նա է Յովհաննէս Մկրտիչ, նա յարեաւ 'ի մեռե-
3 լոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: Քան-
զի Հերովդէս կալաւ զՅովհաննէս՝ կապեաց զնա և
եդ 'ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղ-
4 բօր նորա. զի ասէր ցնա Յովհաննէս. չէ արժան
5 քեզ ունել զդա: Եւ կամէր զնա սպանանել, բայց
երկնչէր 'ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմար-
6 գարէ ունէին զնա: Եւ իբրև եղեն ծնունդք Հե-
րովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ բազ-
7 մականին. և հաճոյ թուեցաւ Հերովդի, ուստի և
երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ:
8 Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւրմէ, Տուր
ինձ, ասէ, այսր 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհան-
9 նու Մկրտչի: Եւ տրտմեցաւ թագաւորն, բայց
վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց տալ
10 նմա: Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս 'ի
11 բանտի, և բերաւ գլուխ նորա սկտեղբ և տուաւ
12 աղջկանն, և տարաւ առ մայր իւր: Եւ մատուցեալ
աշակերտքն նորա բարձին զմարմինն և թաղեցին,
և եկեալ պատմեցին Յիսուսի:
13 ԵԳ. Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց անտի նա-
ւու յանապատ տեղի առանձինն: Իբրև լուան ժողո-
վուրդքն՝ գնացին զհետ նորա հետի 'ի քաղաքաց ան-
14 տի: Եւ իբրև ել՝ ետես ժողովուրդ բազում, գթա-
15 ցաւ 'ի նոսա, և բժշկեաց զհիւանդս նոցա: Իբրև
ընդ երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն՝ և ա-

սեն. Տեղիս անապատ է, և օրս՝ տարաժամեալ, ար-
ձակեա զժողովուրդդ՝ զի երթիցեն շուրջ 'ի շէնս,
գնեսցեն իւրեանց կերակուրս: Եւ ասէ Յիսուս. Ոչ 16
ինչ պիտոյ է դոցա երթալ. դուք տուք դոցա ու-
տել: Եւ նոքա ասեն ցնա. Ոչ ինչ ունիմք աստ, բայց 17
հինգ նկանակ և երկու ձկունս: Եւ ասէ ցնոսա. 18
Բերէք այսր զայն: Եւ հրամայեաց բազմեցուցանել 19
զժողովուրդն 'ի վերայ խոտոյ. և առեալ զհինգ նկա-
նակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհ-
նեաց. և եբեկ և ետ ցաշակերտսն զնկանակսն, և ա-
շակերտքն ժողովրդոցն: Կերան ամենեքեան և յա- 20
գեցան, և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան
սակառի լի: Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ 21
հազար, թող զկանայս և զմանկտի:

ԵԴ. Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մը- 22
տանել 'ի նաւ և յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժո-
ղովուրդսն արձակիցէ: Եւ իբրև արձակեաց զժողո- 23
վուրդսն՝ ել 'ի լեառն առանձինն կալ յաղօթս: Եւ
իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն: Եւ նաւն 24
մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ
յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն: Եւ 'ի չորրոր- 25
դում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով
'ի վերայ ծովուն: Իբրև տեսին զնա աշակերտքն զի 26
գնայր 'ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն՝ թէ առ-
աչօք ինչ իցէ. և առ ահին աղաղակեցին: Եւ վաղ- 27
վաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. Քա-
ջալերեցարուք, ես եմ մի՛ երկնչիք: Պատասխանի ետ 28
նմա Պետրոս և ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա
ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոցս: Եւ նա ասէ. Եկ: 29
Եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջուրցն,
և եկն առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ 30
երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց և ա-
սէ. Տէր, փրկեա՛ զիս: Եւ վաղվաղակի Յիսուս 31
ձգեաց զձեռն իւր կալաւ զնա և ասէ. Թերահաւատ,
ընդէր երկմտեցեր: Եւ իբրև ելին 'ի նաւն՝ հանդար- 32

33 տեաց հողմն: Եւ որ 'ի նաւին էին՝ մատեան երկիր
պագին նմա և ասեն. Արդարև որդի Աստուծոյ ես
34 դու: Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարեթ.
35 և իբրև ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առա-
քեցին ընդ ամենայն գաւառն՝ և ածին առ նա զա-
36 մենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն
'ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին. և որ միան-
գամ մերձեցանն՝ փրկեցան:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 ԵԵ. Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յԵրուսաղե-
2 մէ փարիսեցիքն և դպիրք և ասեն. Ընդէր աշակերտքն
քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուա-
3 նան զձեռս յորժամ հաց ուտեն: Նա պատասխանի
ետ և ասէ ցնոսա. Իսկ դուք ընդէր անցանէք զպա-
տուիրանաւն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն:
4 Զի Աստուած ասաց. պատուեա զհայր քո և զմայր,
5 և որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանես-
6 ցի. և դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր
իւր, թէ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս, և ոչ
պատուիցէ զհայր իւր և զմայր իւր. և խոտէք ըզ-
7 բանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն: Կեղ-
ծաւորք, բարւոք մարգարէացաւ 'ի վերայ ձեր Եսայի
8 և ասէ. Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և
9 սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն, զուր
պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ ըզ-
10 մարդկան պատուիրեալս: Եւ կոչեցեալ առ ինքն
զժողովուրդսն ասէ ցնոսա. Լուարուք և 'ի միտ ա-
11 ռէք. ոչ որ ինչ մտանէ ընդ բերան պղծէ զմարդ, այլ
12 որ ինչ ելանէ 'ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: Յայն-
ժամ մատուցեալ աշակերտացն նորա ասեն ցնա. Գի-
տես՝ զի փարիսեցիքն իբրև լուան զբանն՝ գայթակ-
13 ղեցին: Նա պատասխանի ետ նոցա և ասէ. Ամենայն

տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի։
Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք. 14
կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին
'ի խորխորատ անկանին։ Պատասխանի ետ Նմա Պետ- 15
րոս և ասէ. Մեկնեա մեզ զառակս զայս։ Ասէ Յի- 16
սուս. Տակաւին և դուք անմիտք էք, և ոչ իմանայք՝ 17
եթէ ամենայն որ մտանէ 'ի բերան, յորովայն երթայ
և արտաքս ելանէ. իսկ որ ելանէ 'ի բերանոյ՝ 'ի սըր- 18
տէ անտի գայ, և այն պղծէ զմարդ։ Զի 'ի սրտէ 19
ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնու-
թիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայու-
թիւնք, հայհոյութիւնք. այս ամենայն է՝ որ պղծէ 20
զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել ոչ պղծէ զմարդ։
ԵԶ. Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս 21
Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի 'ի 22
սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր և ասէր.
Ողորմեաց ինձ, Տէր, որդի Դաւթի, դուստր իմ չա-
րաչար դիւահարի. Եւ Նա ոչ ետ նմա պատասխանի։
Եւ մատուցեալ աշակերտքն Նորա՝ աղաչէին զնա և ա- 23
սէին. Արձակեա զնա՝ զի աղաղակէ զհետ մեր։ Նա 24
պատասխանի ետ և ասէ. Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ
ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ Նա 25
մատուցեալ երկիր պագանէր Նմա և ասէր. Տէր, օգ-
նեա ինձ։ Պատասխանի ետ Նմա և ասէ. Ոչ է բարւոք 26
առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ Նա ասէ. 27
Այո, Տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց
անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ 28
պատասխանի ետ Նմա Յիսուս, և ասէ. Ո՛վ կին դու,
մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս։
Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։
ԵԷ. Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն 'ի ծով- 29
եզրն Գալիլեացւոց, և ելեալ 'ի լեառն նստէր անդ։
Մատեան առ Նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին 30
ընդ իւրեանս կաղս, կոյրս, համերս, միակողմանիս,
և այլս բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս Նորա՝

31 և բժշկեաց զնոսա։ Մինչև զարմանալ ժողովրդոցն՝
որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային՝
միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փա-
32 ռաւոր առնէին զԱստուած Իսրայէլի։ Եւ կոչեցեալ
առ ինքն Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. Գթամ 'ի ժո-
ղովուրդդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս, և
ոչ ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսա նօթիս
33 չկամիմ, գուցէ նքթիցեն զճանապարհայն։ Ասեն ցնա
աշակերտքն. Իսկ արդ մեզ յանապատի աստ ուստի՞
իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ ժո-
34 ղովուրդ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ
35 ունիք։ Եւ նոքա ասեն. Եօթն, և սակաւ ձկունս։
Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի վերայ գետ-
36 նոյ. և առեալ զեօթն նկանակս և զձկունսն՝ գոհա-
ցաւ և եբեկ, և ետ ցաշակերտսն, և նոքա ժողովր-
37 դեանն։ Կերան ամենեքեան. և յագեցան. և բարձին
38 զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիղ լի։ Եւ որք կե-
րանն՝ էին իբրև արք չորք հազարք, թող զկանայս
39 և զմանկտի։ Իբրև արձակեաց զժողովուրդսն՝ ել 'ի
նաւ և եկն 'ի սահմանս Մագդաղեայ։

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք փոր-
ձելով խնդրէին 'ի Նմանէ՝ նշան յերկնից ցուցա-
նել նոցա. Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա.
2 (յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինիցի զի կար-
3 մրացեալ է երկին։ Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի
չարագունի տրտմութեամբ երկին. արդ զերեսս
երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ո՞չ
4 կարէք գիտել)։ Ազգ չար և շնացող՝ նշան խնդրէ, և
նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգա-
րէի։ Եւ եթող զնոսա և գնաց։ Գնացին և աշա-
5 կերտքն յայնկոյս, և մոռացան առնուլ հաց։ Ասէ

ցնոսա Յիսուս։ Տեսէք և զգոյշ լերուք 'ի խմորոյ 6
սադուկեցւոցն և փարիսեցւոց։ Նոքա խորհէին ընդ 7
միմեանս և ասէին՝ թէ հաց ոչ բարձաք։ Գիտաց 8
Յիսուս և ասէ. Զի՞ խորհիք 'ի միտս ձեր, թերահա-
ւատք, եթէ հաց ոչ ունիք. տակաւին չիմանայք և 9
ոչ յիշէք զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և
քանի սակառի բարձէք. և ոչ զեօթն նկանակն 'ի 10
չորս հազարսն, և քանի զամբիղս բարձէք, արդ
զիա՞րդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի 11
ձեզ զգոյշ լինել 'ի խմորոյ փարիսեցւոցն և սա-
դուկեցւոց։ Յայնժամ 'ի միտ առին, եթէ ոչ ա- 12
սաց զգուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսե-
ցւոցն և սադուկեցւոց։

ԶԿ. Եւ եկեալ Յիսուս 'ի կողմանս Փիլիպպեայ 13
Կեսարեայն՝ հարցանէր ցաշակերտսն և ասէր. Զո՞
ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ 14
նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, և այլք զԵ-
ղիա, և կէսք զԵրեմիա, կամ զմի ոք 'ի մարգա-
րէիցն։ Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ դուք զո՞ ոք ասէք 15
զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմոն Պետրոս 16
և ասէ. Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կեն-
դանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 17
Երանի քեզ Սիմոն՝ որդի Յովնանու, զի մարմին և
արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս
է։ Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և 'ի վերայ 18
այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց
զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ զփականս 19
արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես
յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակե-
ցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։ Յայնժամ 20
սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասասցեն՝ թէ
նա է Քրիստոսն։ Յայնմ հետէ սկսաւ Յիսուս 21
ցուցանել աշակերտացն, թէ պարտ է նմա երթալ
յԵրուսաղէմ, և բազում չարչարանս չարչարել և ա-
նարգել 'ի քահանայապետից և 'ի դպրաց և 'ի ծերոց

ժողովրդեանն, և սպանանել, և յերիր աւուր յառ-
22 նել։ Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ
կագել ընդ նմա և ասել. Քաւ լիցի քեզ Տէր, մի՛ ե-
23 ղիցի քեզ այդ։ Եւ նա դարձեալ 'ի Պետրոս ասէ.
Երթ յետս իմ, սատանայ, գայթագղութիւն իմ
ես. զի ոչ խորհիս զաստուծոյսն, այլ զմարդկան։
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր. Եթէ ոք
կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն և առցէ զխաչ
25 իւր և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձն իւր
կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն
26 իւր վասն իմ՝ գտցէ զնա։ Զի՞նչ օգտիցի մարդ՝ ե-
թէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր
տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ ան-
27 ձին իւրում։ Զի գալոց է որդի մարդոյ փառօք Հօր
իւրոյ՝ հանդերձ Հրեշտակօք իւրովք. և յայնժամ
28 հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։ Ամէն ա-
սեմ ձեզ, զի իցեն ոմանք 'ի սոցանէ որ աստ կան,
որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսանիցեն զորդի
մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

ԳԼՈՒԽ ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս և
զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հա-
2 նէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. և այլա-
կերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նո-
րա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն լու-
3 սպիտակ իբրև զլոյս։ Եւ ահա երևեցան նոցա Մով-
4 սէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա։ Պատասխանի
ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ
աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս.
5 մի քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի։ Եւ մինչ
դեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև 'ի
վերայ նոցա. ձայն եղև յամպոյն և ասէ. Դա է որ-

դի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։ Իբ֊ 6
րեւ լուան աշակերտքն, անկան 'ի վերայ երեսաց ի֊
րեանց եւ երկեան յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս 7
բուռն եհար զնոցանէ եւ ասէ. Յոտն կացէք եւ մի
երկնչիք։ Ամբարձին զաչս իւրեանց, եւ ոչ զոք տեսին՝ 8
բայց միայն զՅիսուս։ Եւ մինչ դեռ իջանէին 'ի լեռ֊ 9
նէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ. մի
ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ որդի մարդոյ 'ի մե֊
ռելոց յարիցէ։ Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն. 10
Զիա՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ է
գալ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Եղիա 11
գայ, եւ հաստատեսցէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի 12
Եղիա եկեալ իսկ է. եւ ոչ ծանեան զնա, այլ արա֊
րին ընդ նա զոր ինչ կամեցան. Նոյնպէս եւ որդի մար֊
դոյ չարչարելոց է 'ի նոցանէ։ Յայնժամ 'ի միտ ա֊ 13
ռին աշակերտքն, թէ վասն Յովհաննու Մկրտչի ա֊
սաց ցնոսա։
ՁԲ. Եւ իբրեւ եկին 'ի ժողովուրդն, մատեաւ այր 14
մի 'ի ծունր իջանէր եւ ասէր. Տէր, ողորմեաց որդւոյ
իմում, զի լուսնոտի եւ չարաչար հիւանդանայ. բա֊
զում անգամ անկանի 'ի հուր, եւ երբեք 'ի ջուր.
եւ մատուցի զնա աշակերտացն քոց, եւ ոչ կարացին 15
բժշկել։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՛վ ազգ 16
անհաւատ եւ թիւր, մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ ձեզ,
մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առ իս։ Եւ սաս֊ 17
տեաց 'ի նա Յիսուս, եւ ել 'ի նմանէ դեւն, եւ բժըշ֊
կեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ։ Յայնժամ մա֊ 18
տեան աշակերտքն առանձինն եւ ասեն ցՅիսուս. Մեք
ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ նա ասէ ցնոսա.
վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ
ձեզ եթէ ունիցիք հաւատս քանզահատ մանանխոյ,
ասասջիք լերինս այնմիկ փոխեաց աստի անդր, եւ փո֊
խեսցի. եւ ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց այս 20
ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահովք։
ՁԳ. Եւ մինչ դեռ շրջէին նոքա 'ի Գալիլեա, ա֊ 21

ռէ ցնոսա Յիսուս. Մատնելոց է որդի մարդոյ 'ի
22 ձեռս մարդկան, եւ սպանցեն զնա, եւ յերիր աւուր
23 յարիցէ։ Եւ տրտմեցան յոյժ։ Իբրեւ եկին նոքա 'ի
կափառնաում, մատեան որք զերկդրամեանն պա֊
հանջէին առ Պետրոս, եւ ասեն. Վարդապետն
24 ձեր ո՞չ տայ զերկդրամեանն։ Եւ ասէ. Այո։ Եւ
իբրեւ եմուտ 'ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս
եւ ասէ. Զիա՞րդ թուի քեզ, Սիմովն. թագաւորք
ազգաց յումմէ առնուն զհարկս կամ զհաս, յոր֊
25 դւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց։ Եւ իբրեւ ասաց թէ
յօտարաց, ասէ ցնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ
26 են որդիքն։ Բայց զի մի գայթագղեցուսցուք զնոսա,
երթ 'ի ծով եւ ընկեա կարթ, եւ զառաջին ձուկն
որ ելանիցէ՝ առ, եւ բաց զբերան նորա, եւ գտանի֊
ցես սատեր. եւ զայն առեալ տացես նոցա ընդ իմ եւ
ընդ քո։

ԳԼՈՒԽ ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս եւ
ասեն. Ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկ֊
2 նից։ Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կա֊
3 ցոյց զնա 'ի մէջ նոցա, եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ,
եթէ ոչ դարձջիք եւ լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտա֊
4 նիցէք յարքայութիւն երկնից։ Արդ որ խոնարհե֊
ցուցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա է մեծ
5 յարքայութեան երկնից։ Եւ որ ոք ընկալցի մանուկ
6 մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի։ Եւ որ ոք
գայթագղեցուսցէ զմի 'ի փոքրկանցս յայսցանէ յիս
հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան
իշոյ ընդ պարանոց նորա՝ եւ ընկղմիցի 'ի խորս ծո֊
7 վու։ Վա՜յ աշխարհի 'ի գայթագղութեանց. հարկ
է գալ գայթագղութեանց, բայց վա՜յ մարդոյն այն֊
8 միկ՝ յոյր ձեռն գայցէ գայթագղութիւն։ Եթէ ձեռն

քո կամ ոտն գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա
և ընկեա՛ 'ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ
մտանել 'ի կեանս, քան երկուս ձեռս և երկուս ոտս
ունել, անկանել 'ի հուրն յաւիտենական: Եւ ե- 9
թէ ակն քո գայթագղեցուցանէ զքեզ, խլեա զնա և
ընկեա 'ի քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել 'ի
կեանս, քան երկուս աչս ունել և անկանել 'ի գեհեն
հրոյն:

ԶԳ. Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի 'ի 10
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի Հրեշտակք
նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ
որ յերկինս է: Զի եկն որդի մարդոյ կեցուցանել 11
զկորուսեալն: Զինչ թուի ձեզ, եթէ լինիցի մար- 12
դոյ հարիւր ոչխար, և մոլորիցի մի 'ի նոցանէ, ո՞չ թո-
ղուցու զիննսուն և զինն ոչխարն 'ի լերինս, և երթեա-
ցէ խնդրիցէ զմոլորեալն. և եթէ լինիցի գտանել զնա, 13
ամէն ասեմ ձեզ՝ զի ուրախ լինի 'ի վերայ նորա, ա-
ռաւել քան 'ի վերայ իննսուն և յիննիցն որ չիցեն
մոլորեալ: Այսպէս ոչ են կամք առաջի Հօր իմոյ 14
որ յերկինս է, եթէ կորիցէ մի 'ի փոքրկանցս յայս-
ցանէ: Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդի- 15
մանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ
լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո: Ապա թէ ոչ 16
լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի ևս կամ երկուս. զի 'ի
բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամե-
նայն բան: Իսկ եթէ և նոցա ոչ լուիցէ, ասասջիր 17
յեկեղեցւոջ: Ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, ե-
ղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր: Ամէն 18
ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ
յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձա-
կեալ յերկինս. Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու 19
'ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց,
զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա 'ի Հօրէ իմմէ որ յեր-
կինսն է: Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ 20
յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա: Յայնժամ մա- 21

տեաւ առ նա Պետրոս և ասէ. Տէր, քանիցս անգամ
թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև
22 յեօթն անգամ: Ասէ ցնա Յիսուս. Ոչ ասեմ քեզ՝ թէ
մինչև յեօթն անգամ, այլ մինչև յեօթանասնեկին
23 եօթն: Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն
երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել
24 'ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրև սկսաւ առնուլ,
մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ:
25 իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վա-
ճառել տէրն նորա՝ և զկին նորա և զորդիս և զա-
26 մենայն որ ինչ և ունիցի: և հատուցանել: Եւ ան-
կեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր. եր-
կայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ:
27 Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա,
28 և զփոխն եթող նմա: Եւ ելեալ ծառայն այն՝ եգիտ
զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան, և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր.
29 հատո ինձ զոր պարտիս: Արդ անկեալ ծառայակցին
առ ոտս նորա՝ աղաչէր զնա և ասէր երկայնամիտ
30 լեր առ իս՝ և հատուցից քեզ: Եւ նա ոչ կամէր, այլ
չոգաւ արկ զնա 'ի բանտ, մինչև հատուսցէ զպարտսն.
31 իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեն՝
տրտմեցան յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւ-
32 րեանց զամենայն որ ինչ եղեն: Յայնժամ կոչեաց
զնա տէրն իւր և ասէ, ծառայ չար: զամենայն ըզ-
33 պարտսն թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս. իսկ
արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում,
34 որպէս և ես քեզ ողորմեցայ: Եւ բարկացեալ տէրն
նորա մատնեաց զնա դահճաց՝ մինչև հատուսցէ զա-
35 մենայն զպարտսն: Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս
է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր
եղբօր իւրում՝ 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա:

ԳԼՈՒԽ ԺԹ

ՁԵ. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս 1
զայսոսիկ, փոխեցաւ 'ի Գալիլեէ՝ և եկն 'ի սահմանս
Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։ Եւ գնացին ըզ- 2
հետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնոսա
անդ։ Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին 3
զնա և ասէին. Եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել
զկին իւր, ըստ ամենայն պատճառս։ Պատասխանի ետ 4
նոցա և ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաս-
տատեացն 'ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա և
ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր՝ 5
և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան
'ի մարմին մի։ Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի 6
մարմին։ Արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛
մեկնեսցէ։ Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պա- 7
տուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձա-
կել։ Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան 9
ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ
ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի ա- 9
մենայն որ արձակէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկու-
թեան, և առնիցէ այլ՝ շնայ և որ զարձակեալն առ-
նէ՝ շնայ։ Ասեն ցնա աշակերտքն իւր. Եթէ այդ- 10
պէս ինչ պատճառս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չա-
մուսնանալ։ Եւ նա ասէ ցնոսա. Ոչ ամենեքեան բա- 11
ւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է։ Զի են 12
ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այսպէս,
և են ներքինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն ներքինիք, և
են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքի-
նիս վասն արքայութեան երկնից. որ կարօղն է տա-
նել՝ տարցի։ Յայնժամ մատուցան առ նա մանկտի, 13
զի ձեռն դիցէ 'ի վերայ նոցա և աղօթս արասցէ. և ա-
շակերտքն նորա սաստէին նոցա։ Ասէ Յիսուս. Թո՛յլ 14

տուք մանկտւոյդ՝ և մի՛ արգելուք զդոսա գալ առ իս,
15 զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Եւ ե-
դեալ ձեռս 'ի վերայ նոցա՝ գնաց անտի։
16 ՁԶ. Եւ ահա մատուցեալ ոմն առ նա ասէ. Վար-
դապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունի-
17 ցիմ զկեանսն յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա.
Զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է բարի. Եթէ կա-
միս 'ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա
18 զպատուիրանսն։ Ասէ ցնա. Զո՞րս։ Ասէ ցնա Յի-
19 սուս. Զմի՛ սպանաներն, և մի՛ շնար, և մի՛ գողա-
նար, և մի՛ սուտ վկայեր, պատուեա զհայր քո և
զմայր. և սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։
20 Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի 'ի
մանկութենէ իմմէ. արդ զի՞ եւս իւիք պակաս իցեմ։
21 Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել,
երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց. և ու-
22 նիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ Իբրեւ լուաւ
պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստա-
23 ցուածս բազումս։ Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն
ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն յար-
24 քայութիւն երկնից։ Դարձեալ ասեմ ձեզ, դիւրին
է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան
25 յարքայութիւն Աստուծոյ մտանել։ Իբրեւ լուան ա-
շակերտքն՝ զարմացան յոյժ, և ասեն. Իսկ ո՞ կարի-
26 ցէ ապրել։ Հայեցաւ 'ի նոսա Յիսուս և ասէ. Ա-
'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ա-
27 մենայն ինչ զօրաւոր։ Յայնժամ պատասխանի ետ
Պետրոս և ասէ ցնա. Ահաւասիկ մեք թողաք զամե-
28 նայն և եկաք զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ
ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք
զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի
որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք
յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն
29 իսրայելի։ Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ
զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ

զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան ի-
մոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենա-
կանս ժառանգեսցէ։ Բազումք եղիցին առաջինք յե- 30
տինք, և յետինք առաջինք։

ԳԼՈՒԽ Ի

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տա- 1
նուտեառն, որ ել ընդ առաւօտս ՚ի վարձու ունել
մշակս յայգի իւր. և արկ վարձս մշակացն աւուրն 2
դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր։ Եւ ե- 3
լեալ զերրորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկք
՚ի հրապարակս, ասէ և ցնոսա. երթայք և դուք յայ- 4
գի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ. գնացին և 5
նոքա։ Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու, և զինն ժա-
մու՝ արար նոյնպէս։ Եւ զմետասաներորդ ժամու 6
ելեալ, եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ ցնոսա.
ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք։ Ասեն ցնա. 7
զի ոչ ոք կալաւ զմեզ ՚ի վարձու. ասէ ցնոսա. եր-
թայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնու-
ցուք։ Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցգա- 8
ւառապետ իւր. կոչեա զմշակսն՝ և տուր նոցա վարձս,
սկսեալ ՚ի յետնոցն մինչև ցառաջինսն։ Իբրև եկին 9
ոյք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահե-
կան. եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի 10
առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբ- 11
րև առին՝ տրտնջէին զտանուտեառնէն և ասէին, թէ 12
դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարակորդս
մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բար-
ձաք և զտօթ։ Նա պատասխանի ետ միում ՚ի նոցա- 13
նէ և ասէ. ընկեր, չզրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միոջ
սակ արկեր ընդ իս. ա՛ռ զքոյդ և երթ, եթէ կա- 14
միմ յետնոյս տալ որպէս և քեզ, եթէ չիցէ՞ ինձ իշ- 15
խանութիւն յիմս առնել զինչ և կամիմ, կամ թէ

16 ակն քո չա՞ր է՝ զի ես առատ եմ։ Այնպէս եղիցին
յետինք առաջինք, և առաջինք յետինք. զի բազումք
են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք։
17 ԶԷ. Իբրև ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, ա՛ռ
զերկոտասանսն առանձինն, և ՚ի ճանապարհի ա-
18 սէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և
որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և դպ-
19 րաց, և դատապարտեսցեն զնա ՚ի մահ. և մատ-
նեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և
20 ՚ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ։ Յայն-
ժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ
որդւովք իւրովք հանդերձ, երկիր պագանէր և
21 խնդրէր ինչ ՚ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա. Զի՞նչ
կամիս։ Ասէ ցնա. Ասա՝ զի նստցին սոքա երկու որ-
դիքս իմ՝ մի ընդ աջմէ քումմէ և մի ընդ ահեկէ
22 յարքայութեան քում։ Պատասխանի ետ Յիսուս և
ասէ. Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել ըզ-
բաժակն զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւնն
զոր ես մկրտելոցն եմ մկրտել։ Ասեն ցնա. Կարող
23 եմք. Ասէ ցնոսա Յիսուս. Զբաժակն իմ ըմպի-
ջէք, և զմկրտութիւն զոր ես մկրտիմ՝ մկրտիջիք.
բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ
24 է իմ տալ, այլ որոց տուեալ է ՚ի Հօրէ իմմէ։ Եւ
լուեալ տասանցն, բարկացան ՚ի վերայ երկուցն եղ-
25 բարց։ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ.
Գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծա-
26 մեծքն իշխեն նոցա։ Ոչ այնպէս իցէ և ՚ի ձերում
միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր
27 պաշտօնեայ, և որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ ե-
28 ղիցի ձեր ծառայ։ Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշ-
տօն առնուլ, այլ պաշտել. և տալ զանձն իւր փըր-
կանս փոխանակ բազմաց։
29 ԷԿ. Եւ յելանելն նոցա յԵրիքովէ՝ գնացին ըզ-
30 հետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա կուրք
երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան

թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. Ողոր-
մեաց մեզ, Յիսուս որդի Դաւթի։ Եւ ամբոխն 31
սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել
աղաղակէին և ասէին. Տէր, ողորմեաց մեզ, որդի
Դաւթի։ Զտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և 32
ասէ. Զի՞նչ կամիք զի արարից ձեզ։ Ասեն ցնա. 33
Տէր, զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս 34
մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին և գնա-
ցին զհետ նորա։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ, և եկին 'ի Բեթ- 1
փագէ մերձ 'ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յիսուս
արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց, և ասէ ցնո- 2
սա. Երթայք 'ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, և անդէն
գտանիցէք էշ կապեալ և յաւանակ ընդ նմին, լու-
ծէք ածէք ինձ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասաս- 3
ջիք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են. և վաղվաղա-
կի առաքեսցէ զնոսա։ Բայց այս ամենայն եղև, զի 4
լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէք դստեր 5
Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ և հեծեալ
յէշ և 'ի յաւանակի իշոյ։ Գնացին աշակերտքն, և 6
արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս. և ածին 7
զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս, և նըս-
տաւ 'ի վերայ նոցա։ Եւ բազում ժողովուրդք տա- 8
րածեցին զհանդերձս իւրեանց 'ի ճանապարհին, և
այլք հատանէին ոստս 'ի ծառոց և տարածանէին 'ի
ճանապարհին։ Եւ ժողովուրդքն որ առաջին և զկնի 9
երթային՝ աղաղակէին և ասէին. Օրհնութիւն որ-
դւոյ Դաւթի, օրհնեալ, որ գայ յանուն Տեառն, օրհ-
նութիւն 'ի բարձունս։ Եւ 'ի մտանելն նորա յԵ- 10
րուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէ՝ ո՞վ
իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասեն. Սա է մարգարէն 11

12 Յիսուս՝ որ 'ի Նազարեթէ Գալիլեացւոց։ Եւ եմուտ
Յիսուս 'ի տաճարն, և եհան արտաքս զամենեսին,
որ վաճառէինն և գնէին 'ի տաճարի անդ. և զսեղանս
հատավաճառացն կործանեաց և զաթոռս աղաւնե-
13 վաճառացն։ Եւ ասէ ցնոսա. Գրեալ է, տուն իմ
տուն աղօթից կոչեսցի. և դուք արարէք զդա այրս
14 աւազակաց։ Եւ մատեան առ նա կոյրք և կաղք 'ի
15 տաճարին, և բժշկեաց զնոսա։ Իբրև տեսին քահա-
նայապետքն և դպիրք զսքանչելիսն զոր արար, և
զմանկտին որ աղաղակէին 'ի տաճարին և ասէին՝
օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան և ասեն
16 ցնա. Լսե՞ս զինչ ասեն դոքա։ Ասէ ցնոսա Յիսուս.
Այո. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ եթէ 'ի բերանոյ տը-
ղայոց և ստնդիեցաց կատարեցեր զօրհնութիւն։
17 Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին 'ի Բե-
թանիա, և անդ ագաւ։
18 ԷԲ. Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի քա-
19 ղաքն՝ քաղցեաւ, և տեսեալ թզենի մի 'ի վերայ ճա-
նապարհին, եկն 'ի նա, և ոչ ինչ եգիտ 'ի նմա՝ բայց
միայն տերև։ Եւ ասէ ցնա. Մի այսուհետև 'ի քէն
պտուղ եղիցի յաւիտեան։ Եւ առժամայն չորացաւ
20 թզենին։ Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և
ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թզե-
21 նին։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ամէն
ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտի-
ցէք, ոչ միայն զթզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ և
լերինդ ասիցէք՝ բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի։
22 Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հա-
23 ւատովք՝ առնուցուք։ Եւ իբրև եկն 'ի տաճարն,
մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր՝ քահանայա-
պետք և ծերք ժողովրդեանն և ասեն. Որո՞վ իշ-
խանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխա-
24 նութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասի-
ցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ

առնեմ զայս։ Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ 25
էր, յերկնից թէ 'ի մարդկանէ։ Եւ նոքա խորհէին
ընդ միմեանս և ասէին. եթէ ասեմք՝ յերկնից, ասէ 26
ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ա-
սեմք 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի
ամենեքին զՅովհաննէս իբրև զմարգարէ ունէին։
Պատասխանի ետուն Յիսուսի և ասեն. Ոչ գիտեմք։ 27
Ասէ ցնոսա և նա. Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխա-
նութեամբ առնեմ զայս։ Բայց զիա՞րդ թուի ձեզ. 28
առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առա-
ջինն՝ ասէ. որդեակ, երթ այսօր գործեա յայգւոջ։
Նա պատասխանի ետ և ասէ. Երթամ, տէր, և ոչ 29
չոգաւ։ Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս։ Նա 30
պատասխանի ետ և ասէ. ոչ կամիմ. բայց յետոյ զղ-
ջացաւ և չոգաւ յայգին։ Արդ ո՞ յերկոցունց արար 31
զկամս հօրն։ Ասեն. Յետինն։ Ասէ ցնոսա Յիսուս.
Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառա-
ջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից։ Զի եկն 32
Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, և ոչ
հաւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւա-
տացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ զղջացարուք յե-
տոյ հաւատալ նմա։

ԷԳ. Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր՝ 33
որ տնկեաց այգի, և ցանգով պատեաց զնա, և փո-
րեաց 'ի նմա հնձան, և շինեաց աշտարակ. և ետ
զնա մշակս, և գնաց 'ի տար աշխարհ։ Իբրև մեր- 34
ձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ
մշակսն՝ առնուլ զպտուղս նորա. և կալեալ մշակացն 35
զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն
քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բա- 36
զումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։
Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ. Թե- 37
րես ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն 38
իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. սա է ժա-
ռանգն. եկայք սպանցուք զսա, և կալցուք զժա-

39 ռանգութիւն սորա։ Եւ առեալ հանին զնա ար-
40 տաքոյ քան զայգին, և սպանին։ Արդ յորժամ
եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնո-
41 ցիկ։ Ասեն ցնա. Զչարսն չարաւ կորուսցէ, և զայ-
գին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս
42 'ի ժամու իւրեանց։ Ասէ ցնոսա Յիսուս. Չիցէ՞ եր-
բեք ընթերցեալ ձեր 'ի գիրս. Զվէ՛մն՝ զոր անար-
գեցին շինողք, նա եղև գլուխ անկեան. 'ի Տեառնէ
43 եղև այս, և է սքանչելի յաչս մեր։ Վասն այսորիկ
ասեմ ձեզ, զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւն Աս-
տուծոյ, և տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա։
44 Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի,
45 և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։ Իբրև լուան
քահանայապետքն և փարիսեցիք զառակս
46 նորա, գիտացին թէ վասն նոցա ասաց։ Եւ խնդրէին
զնա ունել, բայց երկեան 'ի ժողովրդոցն. քանզի իբ-
րև զմարգարէ ունէին զնա։

ԳԼՈՒԽ ԻԲ

1 ԷԴ. Դարձեալ պատասխանի ետ Յիսուս, և ա-
2 սէ ցնոսա առակօք. Նմանեցաւ արքայութիւն երկ-
նից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւ-
3 րում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւի-
4 րեալսն 'ի հարսանիս, և ոչ կամեցան գալ։ Դար-
ձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. ասացէք հրա-
ւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուա-
րակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն ինչ
5 պատրաստ է. եկայք 'ի հարսանիս։ Եւ նոքա յու-
լացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր, և ոմն 'ի վաճառ
6 իւր, և այլք կալան զծառայս նորա՝ թշնամանեցին և
7 սպանին։ Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ,
և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն
8 զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց։ Յայնժամ

ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստ են և
հրաւիրեալքն չէին արժանի։ Արդ երթայք յանցս 9
ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կոչե-
ցէք 'ի հարսանիսս։ Եւ ելեալ ծառայքն 'ի ճանա- 10
պարհս ժողովեցին զամենեսեան զոր և գտին՝ զչարս
և զբարիս, և լցան հարսանիքն բազմականօք։ Եւ 11
մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ
այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց. և 12
ասէ ցնա. ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր
հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ Յայն- 13
ժամ ասէ թագաւորն ցպաշտաւորսն. կապեցէք ըզ-
դորա զոտս և զձեռս՝ և հանէք զդա 'ի խաւարն ար-
տաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Զի բա- 14
զումք են կոչեցեալք՝ և սակաւք ընտրեալք։

Եւ Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝ առին խոր- 15
հուրդ զնմանէ, թէ որպէս գնիցեն նմա որոգայթ
բանիւք։ Եւ առաքեն առ նա զաշակերտս իւ- 16
րեանց հերովդիանոսօքն հանդերձ՝ և ասեն. վար-
դապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն
Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ
փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ. արդ ա- 17
սա մեզ, զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայ-
սեր՝ թէ ոչ։ Գիտաց Յիսուս զխորամանկութիւնն 18
նոցա, և ասէ։ Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք. ցու- 19
ցէք ինձ զդահեկան հարկին. Եւ նոքա մատուցին
նմա դահեկան մի. և ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս 20
այս կամ գիր։ Ասեն. կայսեր։ Յայնժամ ասէ ցնո- 21
սա. Երթայք տուք զկայսեր՝ կայսեր, և զԱստուծոյ՝
Աստուծոյ։ Իբրև լուան՝ զարմացան, և թողին զնա 22
և գնացին։ Յայնմ աւուր մատեան առ նա սադուկե- 23
ցիքն, որ ասէին՝ թէ չիք յարութիւն. հարցին ցնա
և ասեն. Վարդապետ, Մովսէս ասաց. եթէ ոք 24
մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր, և
յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Էին առ մեզ եղ- 25
բարք եօթն. առաջինն արար կին՝ և մեռաւ. և զի

ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում։
26 Նոյնպէս և երկրորդն, և երրորդն, մինչև ցեօթնե-
27 րորդն. յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ 'ի յա-
28 րութեանն ո՞յր յեօթանցն եղիցի նա կին, զի ամե-
29 նեքին կալան զնա կին։ Պատասխանի ետ նոցա Յի-
սուս և ասէ. Մոլորեալք, ոչ գիտէք զգիրս և ոչ
30 զզօրութիւն Աստուծոյ. զի 'ի յարութեանն ոչ կա-
նայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշ-
31 տակս յերկինս։ Բայց վասն յարութեանն մեռելոց
32 չիցէ՞ ընթերցեալ զասացեալն ձեզ յԱստուծոյ. Ես
եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ
և Աստուած Յակովբայ. և չէ Աստուած մեռելոց,
33 այլ կենդանեաց։ Իբրև լուան ժողովուրդքն, զար-
34 մանային ընդ վարդապետութիւն նորա։ Իսկ փարի-
սեցիքն իբրև լուան՝ եթէ պապանձեցոյց զսադու-
35 կեցիսն, ժողովեցան 'ի միասին։ Եւ եհարց մի ոմն
36 'ի նոցանէ զնա փորձելով, և ասէ. Վարդապետ,
37 ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս։ Եւ Յիսուս ասէ
ցնա. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սըր-
38 տէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամե-
39 նայն մտաց քոց. այս է մեծն և առաջին պատուի-
40 րան. և երկրորդն՝ նման սմին, սիրեսցես զընկեր քո
41 իբրև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս ամե-
նայն օրէնք և մարգարէք կախեալ կան։ Եւ 'ի ժո-
42 ղովել փարիսեցւոյն, եհարց ցնոսա Յիսուս և ասէ.
43 Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞յր որդի է։
Ասեն ցնա. Դաւթի։ Ասէ ցնոսա Յիսուս. իսկ
44 զիա՞րդ Դաւիթ հոգւովն կոչէ զնա Տէր, և ասէ.
45 ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև
եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց. իսկ ե-
թէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։
46 Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, և
ոչ իշխէր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչ ինչ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԷՁ. Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողո- 1
վուրդսն և ընդ աշակերտսն իւր և ասէ. Յաթոռն 2
Մովսիսի նստան դպիրքն և փարիսեցիք. զամենայն 3
ինչ որ ասիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք, բայց ըստ
գործոց նոցա մի առնէք, զի ասեն և ոչ առնեն:
Կապեն բեռինս ծանունս և դժուարակիրս, և դնեն 4
'ի վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ կա-
մին շարժել զնոսա: Եւ զամենայն գործս իւրեանց 5
առնեն 'ի ցոյց մարդկան. լայնեն զգրապանակս իւ-
րեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց.
սիրեն զյառաջագահս յընթրիս և զնախաթոռս 'ի 6
ժողովուրդս և զողջոյնս 'ի հրապարակս, և կոչել 'ի 7
մարդկանէ՝ ռաբբի ռաբբի: Բայց դուք մի զոք կոչէք 8
վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, և ամենեքին
դուք եղբարք էք: Եւ հայր՝ մի կոչէք ձեզ յերկրի, 9
զի ձեր մի է հայր՝ որ յերկինս է: Եւ մի կոչիցիք 10
ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է: Եւ մեծն 11
'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր: Որ բարձրացուցանէ 12
զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի: Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ- 13
ծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առա-
ջի մարդկան, դուք ոչ մտանէք, և որոց մտանեն՝ չը-
տայք թոյլ մտանել: (Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց 14
կեղծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց. պատճա-
ռանօք երկարէք զաղօթս, վասն զի աւելի դատաս-
տան ընդունիցիք): Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց 15
կեղծաւորաց. զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք՝ առ-
նել եկամուտ մի, և յորժամ լինիցի՝ առնէք զնա որ-
դի գեհենի կրկին ևս քան զձեզ: Վայ ձեզ, առաջ- 16
նորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու 'ի տաճարն՝ չէ
ինչ, բայց որ երդնու յոսկին որ 'ի տաճարին է՝ ար-

17 ժան է: Մորոսք և կոյրք, զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ ե-
18 թէ տաճարն որ սրբէ զոսկին: Եւ որ երդնու 'ի
սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու 'ի պատարագն որ
19 'ի վերայ նորա է՝ արժան է: Յիմարք և կոյրք,
զի՞նչ մեծ է. պատարա՞գն, եթէ սեղանն՝ որ սրբէ
20 զպատարագն: Իսկ արդ որ երդուաւ 'ի սեղանն, երդ-
21 նու 'ի նա և յամենայն որ 'ի վերայ նորա է. և որ
երդուաւ 'ի տաճարն, երդնու 'ի նա և 'ի բնակիչն
22 նորա. և որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն
23 Աստուծոյ և յայն որ նստին 'ի վերայ նորա: Վայ
ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասա-
նորդէք զանանուխ և զսամիթ և զչաման. և թողէք
զծանր ծանրօրինացն՝ զդատաստան և զողորմութիւն
և զհաւատս. զայս արժան էր առնել՝ և զայն չթո-
24 ղուլ: Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք և
25 զուղտս կլանէք: Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց
կեղծաւորաց. զի սրբէք զարտաքին զբաժակին և
զսկաւառակին, և 'ի ներքոյ լի են յափշտակութեամբ
26 և անխառնութեամբ: Փարիսեցի կոյր, սրբեա նախ
զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի և
27 արտաքին նոցա սուրբ: Վայ ձեզ դպրաց և փարի-
սեցւոց կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բը-
ռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք և 'ի ներքոյ
լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ:
28 Նոյնպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան ար-
դարք, և 'ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և ա-
29 նօրէնութեամբ: Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց
կեղծաւորաց. զի շինէք զշիրիմս մարգարէից, և զար-
30 դարէք զգերեզմանս արդարոց, և ասէք, եթէ էաք
յաւուրս հարցն մերոց՝ ոչ հաղորդէաք արեան մար-
31 գարէիցն. ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որ-
32 դիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն. և դուք
33 լցէք զչափ հարցն ձերոց: Օձք՝ ծնունդք իժից,
զիա՞րդ փախնուցուք 'ի դատաստանէ գեհենին:
34 Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ

մարգարէս և իմաստունս և դպիրս, և 'ի նոցանէ
սպանանիցէք և 'ի խաչ հանիցէք, և 'ի նոցանէ տան-
ջիցէք 'ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ի քաղաքէ
'ի քաղաք: Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն 35
արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի ար-
դարոյ մինչև յարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ
զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ. ամէն ա- 36
սեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն 'ի վերայ ազգիս այսո-
րիկ: Երուսաղէմ, Երուսաղէմ. որ կոտորէր զմար- 37
գարէս և քարկոծ առնէր զառաքեալսն առ նա: Քա-
նիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր
օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ
կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր ա- 38
ւերակ: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս տեսանիցէք զիս 39
յայսմ հետէ, մինչև ասիցէք՝ օրհնեալ եկեալն յա-
նուն Տեառն:

ԳԼՈՒԽ ԻԴ

էէ· Եւ ելեալ արտաքս Յիսուս 'ի տաճարէն՝ գը- 1
նայր, և մատեան աշակերտք ցուցանել նմա զշի-
նուածս տաճարին: Եւ նա պատասխանի ետ և ասէ 2
ցնոսա. Տեսանէք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ,
ոչ մնասցէ այդր քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի:
Եւ մինչ դեռ նստէր 'ի լերինն ձիթենեաց, մատեան 3
առ նա աշակերտքն առանձինն և ասեն. Ասա մեզ՝
Երբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալըս-
տեանն և վախճանի աշխարհիս: Պատասխանի ետ 4
Յիսուս և ասէ ցնոսա. Զգոյշ լերուք՝ գուցէ ոք 5
զձեզ խաբիցէ. զի բազումք գայցեն յանուն իմ, և
ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոսն, և զբազումս մոլո-
րեցուցանիցեն: Լսելոց էք պատերազմունս և համ- 6
բաւս պատերազմաց. զգոյշ լերուք՝ մի խռովեսջիք,
զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չև է կատա-

7 րած: Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորու-
թիւն 'ի թագաւորութեան. և եղիցին սովք և սրա-
8 ծութիւնք և սասանութիւնք 'ի տեղիս տեղիս. սա-
9 կայն և այն ամենայն՝ սկիզբն է երկանց: Յայնժամ
մատնեսցեն զձեզ 'ի նեղութիւնս, և սպանանիցեն
զձեզ. և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն
10 անուան իմոյ: Եւ յայնժամ գայթագղեսցին բա-
զումք, և զմիմեանս մատնեսցեն և ատեսցեն զմի-
11 մեանս. և բազում սուտ մարգարէք յարիցեն, և
12 զբազումս մոլորեցուսցեն: Եւ վասն բազմանալոյ ա-
13 նօրէնութեանն՝ ցամաքեսցի սէր բազմաց. բայց որ
14 համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ: Եւ քարոզեսցի
աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝
'ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա ե-
15 կեսցէ կատարած: Արդ յորժամ տեսանիցէք ըզ-
պղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է 'ի ձեռն
Դանիէլի մարգարէի, զի կայցէ 'ի տեղւոջն սրբու-
16 թեան, որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ: Յայնժամ որ
17 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս, և որ 'ի
տանիս կայցէ՝ մի իջցէ առնուլ ինչ 'ի տանէ իւրմէ.
18 և որ յանդի իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս
19 իւր: Բայց վայ իցէ յղեաց և ստընտուաց յաւուրսն
20 յայնոսիկ: Յաղօթս կացէք՝ զի մի լինիցի փախուստն
21 ձեր ձմերանի, և մի 'ի շաբաթու: Զի եղիցի յայն-
ժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև իսկզբանէ
արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի:
22 Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր
ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին
23 աւուրքն այնոքիկ: Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝
ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի հաւա-
24 տայցէք: Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մար-
գարէք, և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս,
մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ՝ և զըն-
25 տրեալսն. ահա յառաջագոյն ասացի ձեզ: Ապա թէ
26 ասիցեն ձեզ ահաւանիկ յանապատի է, մի ելանի-

ցեք. և թէ աստ յշտեմարանս է, մի՛ հաւատայցէք:
Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից և երևի մին- 27
չև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մար-
դոյ: Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք: 28
Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ ա- 29
րեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր,
և աստեղք անկցին յերկնից և զօրութիւնք երկնից
շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մար- 30
դոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք
երկրի, և տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վերայ
ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: Եւ 31
առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժո-
ղովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծա-
գաց երկնից մինչև 'ի ծագս նոցա: Ի թզենւոյ ան- 32
տի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակ-
ղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ա-
մառն: Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս 33
ամենայն, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս: Ամէն ա- 34
սեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամե-
նայն եղիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ 35
մի անցցեն: Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու՝ 36
ոչ ոք գիտէ, ոչ Հրեշտակք երկնից, և ոչ Որդի, բայց
միայն Հայր: Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս ե- 37
ղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի որպէս էին յա- 38
ւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն. ուտէին և ըմ-
պէին, կանայս առնէին և արանց լինէին մինչև յօրն՝
յորում եմուտ Նոյ 'ի տապանն, և ոչ գիտացին՝ մինչև 39
եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի
և գալուստն որդւոյ մարդոյ: Յայնժամ թէ իցեն 40
երկու յագարակի, մին առնուցու և միւսն թողու-
ցու. և եթէ երկու աղայցեն 'ի մի երկանս, մին առ- 41
նուցու և միւսն թողուցու: Արթուն կացէք՝ զի ոչ 42
գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ: Զայն գիտաս- 43
ջիք, եթէ գիտէր տանուտէր՝ յորում պահու գող
գայ, սկէր՝ և ոչ տայր ական հատանել զտանն իւրոյ:

44 վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստք, զի յո-
45 րում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ: Իսկ
ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն, զոր կա-
ցոյց տէր իւր 'ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կե-
46 րակուր 'ի ժամու: Երանի է ծառային այնմիկ՝ զոր
47 եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս. ամէն ա-
սեմ ձեզ, զի 'ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուս-
48 ցէ զնա: Ապա թէ ասիցէ ծառայն չար 'ի սրտի իւ-
49 րում, տէր իմ յամէ գալ, և սկսանիցի հարկանել
զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբե-
50 ցօղս. գայցէ տէր ծառային այնորիկ, յաւուր յո-
51 րում ոչ ակն ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտի-
ցէ, և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ
կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել ատա-
մանց:

ԳԼՈՒԽ ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն
կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին
2 ընդ առաջ փեսային և հարսին. հինգն 'ի նոցանէ
3 յիմարք էին և հինգն իմաստունք: Յիմարքն առին
4 զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ
իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւ-
5 րեանց: Եւ 'ի յամել փեսային, նիրհեցին ամենե-
6 քեան և 'ի քուն մտին: Եւ 'ի մէջ գիշերի եղև
բարբառ. Ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ նորա:
7 Յայնժամ յարեան ամենայն կուսանքն, և կազմեցին
8 զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն.
տուք մեզ յիւղոյ ձերմէ, զի ահա շիջանին լապ-
9 տերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն և
ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ
10 երթայք 'ի վաճառականս և գնեսջիք ձեզ: Իբրև
նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մը-

մին ընդ նմա 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։
Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. տէր, տէր, 11
բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ա- 12
սեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթուն կացէք՝ զի 13
ոչ գիտէք զօրն և ոչ զժամ։ Որպէս այր մի գնա- 14
ցեալ 'ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ
նոցա զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն 15
երկուս, և ումեմն մի. իւրաքանչիւր ըստ իւրում
կարի, և գնաց։ Չոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն, 16
գործեաց նոքօք և շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյնպէս 18
և որ զերկուսն՝ շահեցաւ այլ ևս երկուս։ Եւ որ զմին 18
առ, գնաց փորեաց զերկիր և թաքոյց զարծաթ
տեառն իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տէր 19
ծառայիցն այնոցիկ, և առնէ համարս 'ի մէջ նոցա։
Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ, մատոյց 20
այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. Տէր, հինգ քան-
քան ետուր ցիս, արդ ահաւասիկ հինգ այլ ևս քան-
քար 'ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր. ող- 21
նիւ, ծառայ բարի և հաւատարիմ. որովհետև 'ի
սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կա-
ցուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քոյ։
Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր, 22
և ասէ. Տէր, երկուս քանքարս ետուր ցիս, ահա-
ւասիկ երկուս ևս այլ քանքարս՝ զոր 'ի վերայ շահե-
ցայ։ Ասէ ցնա տէրն իւր. ողնիւ. ծառայ բարի և 23
հաւատարիմ. որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ
ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրա-
խութիւն տեառն քոյ։ Մատուցեալ և որոյ զմի քան- 24
քարն առեալ էր, և ասէ. Տէր, գիտէի զի այր մի
խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝
ուստի ոչ սփռեցեր. երկեայ՝ գնացի և թաքուցի ըզ- 25
քանքարն քո յերկրի. արդ ահաւասիկ քոյդ ցքեզ։ Պա- 26
տասխանի ետ տէրն և ասէ ցնա. Ծառայ չար և վատ,
գիտէիր թէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողո-
վեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել 27
զարծաթդ իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկո-

28 սեօք պահանջէի զիմն։ Արդ առէք 'ի դմանէ զքան-
29 քարդ՝ և տուք այնմ որ ունիցի զտասն քանքարն։ Զի
ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ոչն ու-
30 նիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։ Եւ զծա-
ռայդ անպիտան հանէք 'ի խաւարն արտաքին. անդ
31 եղիցի լալ և կրճել ատամանց։ Եւ յորժամ եկեսցէ
որդի մարդոյ փառօք իւրովք՝ և ամենայն հրեշտակք
ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց.
32 և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկ-
նեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զո-
33 զիս յայծեաց. և կացուսցէ զոզիսն ընդ աջմէ իւր-
34 մէ և զայծիսն 'ի ձախմէ։ Յայնժամ ասասցէ թա-
գաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհ-
նեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ
35 արքայութիւնն իսկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ՝
և ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ և արբուցէք ինձ,
36 օտար էի՝ և ժողովեցէք զիս, մերկ՝ և զգեցուցէք
զիս, հիւանդ էի և տեսէք զիս, 'ի բանտի էի՝ և
37 եկիք առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա
արդարքն և ասասցեն. Տէր, երբ տեսաք զքեզ
քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծարաւի՝ և ար-
38 բուցաք, երբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք,
39 կամ մերկ՝ և զգեցուցաք, երբ տեսաք զքեզ հի-
40 ւանդ կամ 'ի բանտի, և եկաք առ քեզ։ Պատաս-
խանի տացէ թագաւորն՝ և ասասցէ ցնոսա. ամէն
ասեմ ձեզ, որովհետև արարէք միում յեղբարցս
41 այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ ասաս-
ցէ և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. երթայք յի-
նէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենական, որ
պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։
42 Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝
43 և ոչ արբուցէք զիս, օտար էի՝ և ոչ ժողովեցէք զիս,
մերկ էի՝ և ոչ զգեցուցէք զիս, հիւանդ և 'ի բանտի՝
44 և ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխանի տացեն
և նոքա՝ և ասասցեն. Տէր, երբ տեսաք զքեզ քաղ-

ցեալ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հի֊
ւանդ կամ 'ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ: Յայն֊ 45
ժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ. ամէն
ասեմ ձեզ, որովհետև ոչ արարէք միում 'ի փոքր֊
կանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք: Եւ երթիցեն 46
նոքա 'ի տանջանս յաւիտենականս, և արդարքն 'ի
կեանս յաւիտենականս:

ԳԼՈՒԽ ԻԶ

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն ըղ֊ 1
բանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր. Գիտէք, 2
զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, և որդի մար֊
դոյ մատնի 'ի խաչ ելանել: (ՎԵՐՋ
Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դը֊ 3
պիրք և ծերք ժողովրդեանն 'ի սրահ քահանայապե֊
տին՝ որում անուն էր Կայիափա. և արարին խոր֊ 4
հուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս և սպան֊
ցեն: Բայց ասէին, թէ մի 'ի տօնի աստ՝ զի մի խռո֊ 5
վութիւն լինիցի 'ի ժողովրդեանն: Իբրև եկն Յի֊ 6
սուս 'ի Բեթանիա 'ի տուն Սիմոնի բորոտի, մա֊ 7
տեաւ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրա֊
գնի, և թափեաց 'ի գլուխ նորա 'ի բազմականին: Իբ֊ 8
րև տեսին աշակերտքն՝ բարկացան և ասեն. Ընդէր
է կորուստ այդ՝ իւղոյդ. զի մարթ էր վաճառել զդա 9
մեծագնի՝ և տալ աղքատաց: Գիտաց Յիսուս և ա֊ 10
սէ ցնոսա. Զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բա֊
րի գործեաց դա յիս. յամենայն ժամ զաղքատս 11
ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ու֊
նիք: Արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ՝ առ 'ի 12
թաղելոյ զիս նշանակեաց: Բայց ամէն ասեմ ձեզ, 13
զի ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն
աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա 'ի յիշատակ դո֊
րա: Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուա֊ 14
նեալն Յուդա սկարիովտացի առ քահանայապետսն,

15 և ասէ. Զի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից
զնա ձեզ: Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծա֊
16 թի. և յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատնես֊
17 ցէ զնա նոցա: Եւ յառաջնում աւուր բաղարջակե֊
րացն մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. Ո՞ւր
կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն:
18 Եւ նա ասէ ցնոսա. Երթայք 'ի քաղաքն առ այս ա֊
նուն, և ասացէք ցնա. վարդապետ ասէ, ժամանակ
իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկ աշակեր֊
19 տօքս հանդերձ: Եւ արարին աշակերտքն որպէս հրա֊
մայեաց նոցա Յիսուս, և պատրաստեցին զզատիկն:
20 Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երկոտա֊
21 սան աշակերտսն: Եւ մինչ դեռ ուտէին նոքա, ասէ.
Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս:
22 Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր
23 ոք 'ի նոցանէ. Միթէ Ես իցեմ, Տէր: Նա պատաս֊
խանի ետ և ասէ. Որ մխեաց ընդ իս զձեռն իւր 'ի
24 սկաւառակն՝ նա մատնելոց է զիս: Որդի մարդոյ եր֊
թայ՝ որպէս գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն
այնմիկ՝ յոյր ձեռն որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր
25 նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն: Պատասխանի ետ
Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝ և ասէ. Միթէ Ես
26 իցեմ, վարդապետ: Ասէ ցնա. Դու ասացեր: Եւ մինչ
դեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց՝ օրհնեաց և եբեկ,
և ետ աշակերտացն՝ և ասէ. Առէք կերայք, այս է
27 մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նո֊
28 ցա և ասէ. Արբէք 'ի դմանէ ամենեքին. զի այդ է
արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղու
29 'ի թողութիւն մեղաց: Բայց ասեմ ձեզ, ոչ ևս ար֊
բից յայսմ հետէ 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝
յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան
30 հօր իմոյ: Եւ օրհնեցին, և ելին 'ի լեառն ձիթե֊
31 նեաց: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին
դուք գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի
գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցին ոչխարք

հօտին։ Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից քան 32
զձեզ ՚ի Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս և 33
ասէ ցնա. Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին
՚ի քէն, սակայն ես ոչ գայթագղեցայց։ Ասէ ցնա 34
Յիսուս. Ամէն ասեմ քեզ, զի յայսմ գիշերի՝ մինչ
չև հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։ Ասէ 35
ցնա Պետրոս. Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ,
զքեզ ոչ ուրացայց։ Նոյնպէս և ամենայն աշակերտքն
ասէին։ Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ՚ի դեօղ 36
մի՝ որում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցնոսա.
Նստարուք այդր՝ մինչև երթայց կացից յաղօթս։
Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն 37
Զեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ։ Յայնժամ 38
ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ մինչև ՚ի մահ, կա֊
ցէք աստ՝ և սկեցէք ընդ իս։ Եւ մատուցեալ յա֊ 39
ռաջ սակաւիկ մի՝ անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց,
կայ յաղօթս՝ և ասէ. Հայր իմ, եթէ հնար է՝ անց֊
ցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ,
այլ որպէս դու։ Գայ առ աշակերտսն, և գտանէ 40
զնոսա ՚ի քուն, և ասէ ցՊետրոս. Այդպէս ո՞չ կա֊
րացէք մի ժամ՝ արթուն կալ ընդ իս. արթուն կա֊ 41
ցէք և աղօթս արարէք՝ զի մի՛ անկանիցիք ՚ի փոր֊
ձութիւն. հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։
Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկաց յաղօթս 42
Յիսուս՝ և ասէ. Հայր իմ, եթէ հնար իցէ անցա֊
նել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից
զսա, եղիցին կամք քո։ Եւ եկեալ միւսանգամ ե֊ 43
գիտ զնոսա ՚ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրա֊
ցեալք։ Եթող զնոսա՝ և գնաց կայ յաղօթս երրորդ 44
անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց։ Յայնժամ 45
գայ առ աշակերտսն և ասէ ցնոսա. Ննջեցէք այ֊
սուհետև և հանգերուք. զի ահա հասեալ է ժամ,
և որդի մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց. արիք 46
երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս որ մատնելոց
է զիս։ Եւ մինչ դեռ նա զայն խօսէր, ահա Յուդա՝ 47

մի յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բա֊
զում՝ սրովք և բրօք՝ ՚ի քահանայապետիցն և ՚ի ծե֊
48 րոց ժողովրդեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ
նոցա նշան և ասէ. Ընդ որում ես համբուրեցից՝ նա
49 է, զնա ունիցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ
Յիսուս ասէ. Ողջ եր, վարդապետ. և համբուրեաց
50 ընդ նմա։ Եւ Յիսուս ասէ ցնա. Ընկեր, վասն որո՞յ
եկիր։ Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յի֊
51 սուս և կալան զնա։ Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ
էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝
և եհար զծառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան
52 զունկն նորա։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Դար֊
ձո զսուր քո ՚ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր
53 առնուցուն՝ սրով անկանիցին։ Թէ համարիցիս՝ թէ
ո՞չ կարիցեմ աղաչել զհայր իմ, և հասուցանիցէ ինձ
այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշ֊
54 տակաց։ Այլ զիա՞րդ լնուցուն գիրք՝ եթէ այսպէս
55 պարտ է լինել։ Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն.
Իբրև ՚ի վերայ աւազակի ելէք սուսերօք և բրօք՝ ու֊
նել զիս. հանապազ առ ձեզ ՚ի տաճարին նստէի և
56 ուսուցանէի, և ոչ կալայք զիս։ Այլ այս ամենայն
եղև զի լցցին գիրք մարգարէիցն։ Յայնժամ ա֊
շակերտքն ամենեքին թողին զնա և փախեան։
57 իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա
քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ
58 էին։ Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն
մինչև ՚ի սրահ քահանայապետին. և մտեալ ՚ի ներքս
նստէր ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն։
59 իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդ֊
րէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպանանի֊
60 ցեն զնա. և ոչ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն
մատուցելոց։ Յետոյ մատուցեալ երկու սուտ վկ֊
61 կայք՝ ասէին, թէ սա ասէր՝ կարող եմ քակել զտա֊
62 ճարն Աստուծոյ, և զերիս աւուրս շինել։ Եւ յա֊
րուցեալ քահանայապետն ասէ ցնա. Ոչ տա՞ս ինչ

պատասխանի, զինչ դոքա ամբաստանեն զքէն։ Եւ 63
Յիսուս լուռ կայր։ Պատասխանի ետ քահանայա-
պետն և ասէ ցնա. Երդմնեցուցանեմ զքեզ յԱս-
տուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու ես
Քրիստոսն որդի Աստուծոյ։ Ասէ ցնա Յիսուս. 64
Դու ասացեր. բայց ասեմ ձեզ, յայսմ հետէ տե-
սանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրու-
թեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից։ Յայնժամ 65
քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և
ասէ. Հայհոյեաց. զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք, ա-
հա արդ լուայք զհայհոյութիւն դորա. զի՞նչ հաճոյ
է ձեզ։ Նոքա պատասխանի ետուն և ասեն. Մա- 66
հապարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և 67
կուփեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն.
Մարգարեաց մեզ, Քրիստոս, ո՞վ է՝ որ եհարն 68
զքեզ։ Իսկ Պետրոս նստէր արտաքոյ 'ի գաւթին. 69
մատեաւ առ նա աղախին մի և ասէ. Եւ դու ընդ
Յիսուսի գալիլեացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի 70
ամենեցուն և ասէ, թէ ոչ գիտեմ զինչ խօսիդ։
Եւ իբրև ել նա արտաքս քան զդուռնն՝ ետես 71
զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ որ անդն կային.
Եւ սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։ Եւ դար- 72
ձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն։
Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կայինն անդ՝ 73
ասեն ցՊետրոս. Արդարև և դու 'ի նոցանէ ես,
քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ։ Յայնժամ 74
սկսաւ նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն. և
իսկոյն հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն 75
Յիսուսի զոր ասաց, թէ մինչ չև հաւու խօսեալ ի-
ցէ՝ երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝ ելաց
դառնապէս։

ԳԼՈՒԽ ԻԷ

1 Իբրև այգ եղև, խորհուրդ արարին ամենայն քա-
հանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսու-
2 սի՝ սպանանել զնա։ կապեցին զնա, և առին գնա-
ցին, և ետուն 'ի ձեռս պոնտացւոյ Պիղատոսի դա-
3 տաւորի։ Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատ-
նեաց զնա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ. և դար-
ձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժո-
4 ղովրդեանն՝ և ասէ. Մեղայ զի մատնեցի զարիւն
արդար։ Եւ նոքա ասեն. Մեզ չէ փոյթ, դու գի-
5 տես։ Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարին՝ և գնաց,
6 և չոգաւ խեղդեցաւ։ Իսկ քահանայապետիցն առեալ
զարծաթն՝ ասեն. Ոչ է արժան ընդունել զայդ 'ի
7 կորբանն, քանզի գինք արեան են։ Խորհուրդ արա-
րեալ՝ գնեցին այնու զագարակն բրուտի 'ի գերեզման
8 օտարաց։ Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն՝ ա-
9 գարակ արեան՝ մինչև ցայսօր։ Յայնժամ լցաւ՝ որ
ասացաւն 'ի ձեռն Երեմիայի մարգարէի. Եւ առին
զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին
10 յորդւոցն Իսրայելի, և ետուն զնա յագարակն բրր-
11 տի, որպէս հրամայեաց ինձ Տէր։ Եւ Յիսուս եկաց
առաջի դատաւորին. եհարց ցնա դատաւորն և ասէ.
12 Դո՞ւ ես թագաւորն Հրէից։ Եւ Յիսուս ասէ.
Դու ասես։ Եւ 'ի չարախօսելն նորա 'ի քահանայա-
պետիցն և 'ի ծերոց, ոչ ինչ ետ պատասխանի։
13 Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. Ո՞չ լսես՝ որչափ
14 դոքա հակառակ քո վկայեն։ Եւ ոչ ետ նմա պա-
տասխանի՝ և ոչ բան մի, մինչև զարմանալ դատա-
15 ւորին յոյժ։ Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն
արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին։
16 Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում ա-
17 նուն էր Յեսու Բարաբբա։ Իբրև ժողովեցան,

ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք յերկուց աստի՝
զի արձակեցից ձեզ, զՅեսո՞ւ Բարաբբա՝ եթէ ըզ-
Յիսուս զանուանեալն Քրիստոս: Քանզի գիտէր՝ 18
թէ առ նախանձու մատնեցին զնա: Եւ մինչ նստէր 19
յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ.
Զկայ ինչ քո և արդարոյն այնորիկ, զի բազում
անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա:
Իսկ քահանայապետքն և ծերքն հաւանեցուցին զժո- 20
ղովուրդն, զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅի-
սուս կորուսցեն: Պատասխանի ետ դատաւորն և ա- 21
սէ ցնոսա. Զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց
աստի: Եւ նոքա ասեն. զԲարաբբա: Ասէ ցնոսա 22
Պիղատոս. Իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն
Քրիստոս: Ասեն ամենեքեան. Խաչեսցի: Եւ նա 23
ասէ. Զի՞նչ չար արար: Եւ նոքա առաւել ևս ա-
ղաղակէին և ասէին. Խաչեսցի: Եւ տեսեալ Պի- 24
ղատոսի՝ թէ ոչ ինչ օգնէ, այլ առաւել խռովու-
թիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժո-
ղովրդեանն՝ և ասէ. Քաւեալ եմ ես յարենէ ար-
դարոյդ այդորիկ, դուք գիտասջիք: Պատասխանի ետ 25
ամենայն ժողովուրդն և ասէ. Արիւն դորա 'ի վերայ
մեր և 'ի վերայ որդւոց մերոց: Յայնժամ արձակեաց 26
նոցա զԲարաբբայն, և զՅիսուս գան հարեալ ետ 'ի
ձեռս՝ զի խաչեսցի: Յայնժամ զինուորք դատաւորին 27
առին զՅիսուս յապարանս, և ժողովեցին 'ի վերայ նո-
րա զամենայն զգունդն. մերկացին զնա, և արկին 28
զնովաւ քղամիդ կարմիր. և բոլորեալ պսակ 'ի փշոց՝ 29
եդին 'ի գլուխ նորա, և եղէգն յաջու ձեռին նորա.
'ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին.
Ողջ եր, թագաւոր Հրէից: Եւ թքեալ՝ 'ի նա՝ առ- 30
նուին զեղէգնն և ծեծէին զգլուխ նորա: Եւ յոր- 31
ժամ ձաղեցին զնա, մերկացուցին 'ի նմանէ զքղա-
միդն՝ և ագուցին նմա զիւր հանդերձն, և տարան
զնա 'ի խաչ հանել: Եւ ելեալ արտաքս գտին այր մի 32
կիւրենացի՝ անուն Սիմովն, զնա կալան պահակ՝ զի

33 բարձցէ զխաչն նորա: Եւ եկեալ 'ի տեղին անուա-
34 նեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ, ետուն
նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և իբրև ճաշա-
35 կեաց, ոչ կամէր ըմպել: Եւ հանեալ զնա 'ի խաչ,
բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի
բանն՝ որ ասացաւ 'ի մարգարէէն. Բաժանեցին ըզ-
հանդերձս իմ յիւրեանս, և 'ի վերայ պատմուճանի
36 իմոյ վիճակս արկանէին: Եւ նստեալ պահէին զնա:
37 Եւ եդին 'ի վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս նորա,
38 թէ այս է Յիսուս թագաւորն Հրէից: Յայնժամ
հանին ընդ նմա 'ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ
39 նորա և մի յահեկէ: Եւ որ անցանէինն՝ հայհոյէին
40 զնա. շարժէին զգլուխս իւրեանց, և ասէին. Վա՜հ,
որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա.
41 ապրեցո զքեզ, թէ որդի ես Աստուծոյ՝ էջ 'ի խա-
չէդ: Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ
42 դպրօքն և ծերովքն և ասէին. Զայլս ապրեցոյց, զինքն
ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայե-
43 լի՝ իջցէ այժմ 'ի խաչէդ և հաւատասցուք դմա. եթէ
յուսացաւ յԱստուած, փրկեսցէ. այժմ զդա՝ եթէ
կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ որդի եմ:
44 Զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նա-
45 խատէին զնա: Եւ 'ի վեց ժամէ աւուրն խաւար ե-
46 ղև 'ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ: Եւ
զիննն ժամաւն գոչեաց Յիսուս 'ի ձայն մեծ և ասէ.
Էլի, էլի, լա՛մա սաբաքթանի. այս ինքն է, Աստուած
47 իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս: Ոմանք յայն-
ցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա
48 կարդայ դա: Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն 'ի
նոցանէ, ա՛ռ սպունգ լի քացախով, հարեալ յեղե-
49 գան՝ ետ ըմպել նմա: Եւ կէսքն ասէին. Թող տես-
50 ցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա: Եւ Յիսուս
դարձեալ աղաղակեաց 'ի ձայն մեծ, և արձակեաց
51 զոգին: Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յեր-
կուս 'ի վերուստ մինչև 'ի վայր, և երկիր շարժե-

ցաւ, և վէմք պատառեցան, և գերեզմանք բացան, 52
և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան, և ե- 53
լեալ 'ի գերեզմանաց յետ յարութեանն նորա՝ մտին
'ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց: Իսկ հա- 54
րիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս՝ իբրև
տեսին զշարժումն և զեղեալսն, երկեան յոյժ և
ասեն. Արդարև Աստուծոյ որդի էր սա: Էին անդ 55
կանայք բազումք, կային 'ի հեռաստանէ և հայէին,
որք եկին զկնի Յիսուսի 'ի Գալիլեէ պաշտել զնա.
յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ 56
Յակովբայ և Յովսեայ մայր, և մայր որդւոցն Զե-
բեդեայ: Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծա- 57
տուն յԱրիմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ
աշակերտեցաւ իսկ Յիսուսի. սա մատուցեալ առ 58
Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի յայնժամ
Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ
զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, և եդ 59
'ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց 'ի վիմի. և թաւա- 60
լեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի
մեծ՝ գնաց: Անդ էր Մարիամ Մագդաղենացի, և միւս 61
Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին: Եւ 'ի 62
վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քա-
հանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ա-
սեն. Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ 63
կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ 64
հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև յերիս ա-
ւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայ-
ցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ 'ի
մեռելոց, և լինիցի յետին մոլորութիւնն չար քան
զառաջինն: Ասէ ցնոսա Պիղատոս. Ունիք զզօրա- 65
կանն, երթայք զգուշացարուք որպէս և գիտէք: Եւ
նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին
զվէմն հանդերձ զօրականօք:

ԳԼՈՒԽ ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միա-
շաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի և միւս
2 Մարիամն տեսանել զգերեզմանն: Եւ ահա շար-
ժումն մեծ եղև, զի Հրեշտակ Տեառն իջեալ յերկ-
նից՝ մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրաց
3 անտի, և նստէր 'ի վերայ նորա. և էր տեսիլ նորա
իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև
4 զձիւն: Եւ յահէ անտի նորա խռովեցան պահա-
5 պանքն, և եղեն իբրև զմեռեալս: Պատասխանի ետ
Հրեշտակն և ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք, գի-
6 տեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. չէ աստ, քան-
զի յարեաւ՝ որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր
7 կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակեր-
տացն նորա թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան
զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ա-
8 սացի ձեզ: Եւ ելեալ վաղվաղակի 'ի գերեզմանէ ան-
տի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատ-
9 մել աշակերտացն: Եւ ահա պատահեաց նոցա Յի-
սուս և ասէ. Ողջ էք: Եւ նոքա մատուցեալ կալան
10 զոտս նորա, և երկիր պագին նմա: Յայնժամ ասէ
ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթայք ասացէք եղ-
բարցն իմոց՝ զի երթիցեն 'ի Գալիլեա և անդ տես-
11 ցեն զիս: Իբրև նոքա գնացին, ահա ոմանք 'ի զօրա-
կանացն եկին 'ի քաղաքն, և պատմեցին քահանայա-
12 պետիցն զամենայն որ ինչ եղեն: Եւ նոքա ժողո-
վեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ ար-
13 ծաթ յոյժ ետուն զօրականացն և ասեն. Ասասջիք՝
եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան
14 զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք. և եթէ լուր լինիցի այդ
առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա, և զձեզ ան-
15 հոգս արասցուք: Եւ նոցա առեալ զարծաթն, ա-

րարին որպէս ուսանն. և ել համբաւս այս 'ի Հրէից
մինչև ցայսօր: Իսկ մետասան աշակերտքն գնացին 16
'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա
Յիսուս. իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա. և 17
ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսե֊ 18
ցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխա֊
նութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս
Հայր, և ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետև՝ 19
աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք
զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ: Ու֊ 20
սուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուի֊
րեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամե֊
նայն աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի:

—о о—

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի. գրեալ է այն Մարկոս աշակերտ Պետրոսի և ընկերակից Պաւղոսի։ Գրեաց զաւետարանս զայս, և դնէ սկիզբն և ասէ. Սկիզբն աւետարանի, 'ի Յովհաննու քարոզութենէն. և զմկրտութիւնն Յովհաննու. և առնու վկայութիւն յԵսայայ մարգարէէ. նշանակէ և զփորձութիւնն 'ի լերինն, և ոչ ասէ զփորձանսն. պատմէ և կոչն ընտրութեան աշակերտացն. և նշանս և արուեստս զոր արար. և զխորհուրդ մատնութեանն, և զչարչարանսն. և որ մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով, և զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և զի մարմինն եդաւ 'ի գերեզմանի և յարեաւ երեքօրեայ, և զիջանել Հրեշտակին և երեւել կանանցն, և զնոյնն պատմել աշակերտացն։

Մարկոս հրամանաւ Պետրոսի Վիմի գրեաց զԱւետարանս իւր՝ յԱղեքսանդր քաղաքի 'ի լեզու եգիպտացի. զկնի հնգետասան ամ համբառնալոյ Փրկչին։

ԳԼՈՒԽՔ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համր
Վասն դիւահարին.	Ա.	23
Վասն Պետրոսի զոքանչին.	Ա.	29
Վասն բժշկութեան զանազան հիւանդութեանց.	Ա.	32
Վասն բորոտին.	Ա.	40
Վասն անդամալուծին.	Բ.	3
Վասն Ղեւեայ մաքսաւորի.	Բ.	14
Վասն գօսացեալ ձեռինն.	Գ.	1
Վասն Առաքելոցն ընտրութեան.	Գ.	13
Վասն սերմանեացն առակի.	Դ.	2
Վասն սաստելոյ ծովուն.	Դ.	35
Վասն լեգէոնացն.	Ե.	1
Վասն դստեր ժողովրդապետին.	Ե.	21
Վասն տեռատեսին.	Ե.	25
Վասն համարոյ Առաքելոցն.	Զ.	7
Վասն Յովհաննու, և Հերովդէի.	Զ.	14
Վասն հինգ հացին և երկուց ձկանցն.	Զ.	35
Վասն 'ի վերայ ծովուն գնալոյ.	Զ.	47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն.	Է.	5
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ.	Է.	24
Վասն համրին և խլին.	Է.	31
Վասն եօթն հացին.	Ը.	1
Վասն խմորոյ փարիսեցւոյն.	Ը.	16
Վասն կուրին.	Ը.	22
Վասն հարցանելոյն 'ի Կեսարիա.	Ը.	27
Վասն այլակերպութեանն Տեառն.	Թ.	1
Վասն լուսնահարին.	Թ.	16
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ.	Թ.	32
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին.	Ժ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	Ժ.	17
Վասն որդւոյն Զեբեդեայ.	Ժ.	35
Վասն Բարտիմէոսի.	Ժ.	46
Վասն յաւանակին.	ԺԱ.	1
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԺԱ.	12
Վասն անյիշաչարութեան.	ԺԱ.	25
Վասն հարցանելոյ քահանայապետացն զՏէրն.	ԺԱ.	27
Վասն այգւոյն.	ԺԲ.	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն.	ԺԲ.	13
Վասն սադուկեցւոյն.	ԺԲ.	18
Վասն դպրացն.	ԺԲ.	28
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.	ԺԲ.	35
Վասն երկու լումայիցն.	ԺԲ.	41
Վասն կատարածին.	ԺԳ.	3
Վասն աւուրն և ժամուն.	ԺԳ.	32
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով.	ԺԴ.	3
Վասն զատկին.	ԺԴ.	12
Վասն մատնութեանն մարգարէանալոյ.	ԺԴ.	18
Վասն Պետրոսի ուրացութեանն.	ԺԴ.	66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԺԵ.	42
Վասն իւղաբեր կանանցն.	ԺԶ.	1



ՍԲ. ՄԱՐԿՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի որ-
2 դւոյ Աստուծոյ: Որպէս և գրեալ է 'ի մարգարէս.
Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո,
3 որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ձայն
բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանա-
պարհ Տեառն, և ուղիղս արարէք զշաւիղս Նորա:
4 Եւ եղև՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, և
քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան 'ի թողու-
5 թիւն մեղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն
հրէաստանի, և երուսաղեմացիք ամենեքեան. և
մկրտէին 'ի Նմանէ 'ի Յորդանան գետ՝ խոստովանեալ
6 զմեղս իւրեանց: Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստև
ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր
7 Նորա մարախ և մեղր վայրենի: Քարոզէր և ասէր.
Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում չեմ բա-
ւական խոնարհել լուծանել զխրացս կօշկաց Նորա.
8 ես մկրտեցի զձեզ ջրով, և Նա մկրտեսցէ զձեզ Հո-
9 գւով սրբով: Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն Յի-
սուս 'ի Նազարեթէ գալիլեացւոց, և մկրտեցաւ 'ի
10 Յովհաննէ 'ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ վե-

րանալ 'ի ջրոյն, ետես ցելեալ զերկինս, և զՀոգին
Աստուծոյ իբրև զաղաւնի՝ զի իջանէր 'ի վերայ նորա։
Ձայն եղև յերկնից և ասէ, դու ես որդի իմ՝ սիրե- 11
լի, ընդ քեզ հաճեցայ։ Եւ նոյնժամայն Հոգին հա- 12
նէ զնա յանապատ։ Եւ էր նա անդ զաւուրս քա- 13
ռասուն փորձեալ 'ի սատանայէ. և էր ընդ գազանս,
և հրեշտակք պաշտէին զնա։

ԲԲ. Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յի- 14
սուս 'ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝
և ասէր, թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ 15
է արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք՝ և հա-
ւատացէք յաւետարանն։ Իբրև անցանէր առ ծովե- 16
զերբն գալիլեացւոց, ետես զՍիմովն և զԱնդրէաս
եղբայր Սիմովնի, զի արկեալ էր նոցա ուռկանս 'ի
ծով. քանզի ձկնորսք էին։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. 17
Եկայք զկնի իմ, և արարից զձեզ լինել որսորդս
մարդկան։ Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, 18
գնացին զհետ նորա։ Եւ մատուցեալ անտի սակաւիկ 19
մի յառաջ, ետես զՅակովբոս Զեբեդեայ և զՅովհան-
նէս եղբայր նորա, և զնոսա 'ի նաւին մինչ կազմէին
զուռկանս, և կոչեաց զնոսա։ Եւ վաղվաղակի թո- 20
ղեալ զհայրն իւրեանց Զեբեդէոս 'ի նաւին վարձ-
կանօքն հանդերձ, գնացին զհետ նորա։

ԲԳ. Եւ մտանեն 'ի Կափառնաում, և իսկ և իսկ 21
'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն ուսուցանէր զնո-
սա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, 22
զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութեամբ՝ և ոչ
որպէս դպիրքն։ Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր 23
մի, յորում այս պիղծ դայր 'ի նմա. որ աղաղակեաց
և ասէ. Թոյլ տուր, զի կայ մեր և քո, Յիսուս Նա- 24
զովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ով
ես, սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և 25
ասէ. Կարկեաց՝ և ել 'ի դմանէ։ Եւ զարկոյց զնա 26
այսն պիղծ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի
նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել 27

ընդ միմեանս և ասել. Զի՞նչ է այս նոր վարդապե-
տութիւնս, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաս-
28 տէ, և հնազանդին նմա։ Եւ ել լուր նորա ընդ ա-
29 մենայն կողմն գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ելեալ
'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն Սիմովնի և Անդրեայ՝
30 Յակովբաւ և Յովհաննու հանդերձ։ Եւ զզոքանչ
Սիմովնի գտնէր ջերմացեալ. և վաղվաղակի ասեն
31 ցնա վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կա-
լեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն, և
32 պաշտէր զնոսա։ Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել
արեգականն բերէին առ նա զամենայն հիւանդս
33 և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողո-
34 վեալ առ դուրսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս
'ի պէսպէս ախտից, և դևս բազումս եհան. և ոչ
տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա՝ թէ Քրիս-
տոսն է։

35 ԲԴ. Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ
ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս.
36 և գնաց զհետ նորա Սիմովն և որ ընդ նմայն էին.
37 և իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդ-
38 րեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք և
յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզե-
39 ցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր 'ի ժողո-
վուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս, և դևս հա-
40 նէր։ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր ի-
ջանէր և ասէր. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս
41 սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ՝ ձգեաց զձեռն, մեր-
42 ձեցաւ 'ի նա և ասէ ցնա. կամիմ՝ սրբեաց։ Եւ
իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բո-
43 րոտութիւնն, և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան
44 զնա արտաքս վաղվաղակի, և ասէ ցնա. Զգոյշ լեր,
մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քա-
հանային, և մատո վասն սրբութեան քո պատարագ
45 զոր հրամայեաց Մովսէս՝ 'ի վկայութիւն նոցա։ Եւ
նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ և հռչակ հարկա-

նել զբանն. մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնա-
պէս 'ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տե-
ղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց:

ԳԼՈՒԽ Բ

ԲԵ. Եւ մտեալ դարձեալ 'ի կափառնաում՝ յետ 1
աւուրց լուր եղև եթէ 'ի տան է, և ժողովեցան բա- 2
զումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել և ոչ առ դրանն. և
խօսէր նոցա զբանն: Եւ գային առ նա՝ բերէին ան- 3
դամալոյծ մի բարձեալ 'ի չորից: Եւ իբրև ոչ կա- 4
րէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին
զյարկն ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն՝ ի-
ջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն: Եւ 5
տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամա-
լոյծն. Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ 6
էին ոմանք 'ի դպրաց անտի՝ որ անդ նստէին, և խոր-
հէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա 7
զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ
մի Աստուած: Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այն- 8
պէս խորհին 'ի սիրտս իւրեանց, և ասէ. Զի՞ խոր-
հիք զայդ 'ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրին է, ասել 9
ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ արի առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո: Այլ 10
զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ
'ի վերայ երկրի՝ թողուլ զմեղս, — ասէ ցանդամա-
լոյծն —, Քեզ ասեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ 11
'ի տուն քո: Եւ յարեաւ, և վաղվաղակի առեալ 12
զմահիճսն՝ ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ
ամենեցուն և փառաւոր առնել զԱստուած և ասել,
թէ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք:
ԲԶ. Եւ ել դարձեալ 'ի ծովեզրն, և ամենայն 13
ժողովուրդն գայր առ նա, և ուսուցանէր զնոսա: Եւ 14
մինչ դեռ անցանէր, ետես զՂևի Ալփեայ՝ զի նըս-

տէր 'ի մաքսաւորութեան, և ասէ ցնա. Եկ զկնի
15 իմ: Եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղև 'ի
բազմելն նորա 'ի տան նորա, և բազում մաքսաւորք
և մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ ա-
շակերտսն նորա. քանզի էին բազումք՝ որ երթային
16 զհետ նորա: Իսկ դպիրքն և փարիսեցիք իբրև տե-
սին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս,
ասեն ցաշակերտսն նորա. Զի՞ է՝ զի ընդ մեղաւորս
17 և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք: Իբրև լուաւ Յի-
սուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց
այլ հիւանդաց, և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմե-
18 ղաւորս: Եւ էին աշակերտքն Յովհաննու և փարի-
սեցիքն 'ի պահս, գան. և ասեն ցնա. Ընդէ՞ր աշա-
կերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն, և քո
19 աշակերտքդ ոչ պահեն: Եւ ասէ ցնոսա Յիսուս.
Մի եթէ մարթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ
ընդ նոսա իցէ փեսայն պահել. զորքան ընդ իւրեանս
20 ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել. այլ եկեսցեն
աւուրք՝ յորժամ վերասցի 'ի նոցանէ փեսայն, և ա-
21 պա պահեսցեն յաւուրն յայնմիկ: Ոչ ոք կապերտ
նոր անթափ արկանէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. ա-
պա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն 'ի հնոյ
22 անտի, և չար ևս պատառումն լինի: Եւ ոչ ոք ար-
կանէ գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայ-
թուցանէ գինին զտիկսն, գինին հեղու և տիկքն
կորնչին. այլ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է:
23 ԲԷ. Եւ եղև նմա 'ի շաբաթու անցանել ընդ
արտորայս. և աշակերտքն 'ի գնալն իւրեանց սկը-
24 սան հասկ կորզել և ուտել: Եւ փարիսեցիքն ասեն
ցնա. Տես զի՞նչ գործեն աշակերտքն քո 'ի շաբա-
25 թու զոր չէ արժան: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ
երբեք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ,
յորժամ պիտոյն եղև, և քաղցեաւ նա՝ և որ ընդ
26 նմայն էին. զիա՞րդ եմուտ 'ի տունն Աստուծոյ առ
Աբիաթարաւ քահանայապետիւ, և զհացսն զառա-

ջաւորութեան եկեր՝ և ետ և այնոցիկ որ ընդ նմայն
էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն։
Եւ ասէ ցնոսա. Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ 27
եթէ մարդ վասն շաբաթու, ապա ուրեմն տէր է որ- 28
դի մարդոյ՝ և շաբաթու։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ եմուտ միւսանգամ՝ ՚ի ժողովուրդն. և էր անդ 1
այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպասէին 2
նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ՚ի շաբաթուն, զի չարա-
խօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօ- 3
սացեալ էր. Արի անց ՚ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. 4
Զի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝
եթէ չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կո-
րուսանել։ Եւ նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յի- 5
սուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրու-
թեան սրտից նոցա, ասէ ցայրն. Ձգեա զձեռն քո։
Եւ նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։

ԳԿ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն 6
հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն
նորա՝ թէ զիարդ կորուսցեն զնա։ Իսկ Յիսուս աշա- 7
կերտօքն իւրովք գնաց ՚ի ծովեզրն։ Եւ բազում ժո-
ղովուրդ ՚ի գալիլեացւոց երթային զհետ նորա, և ՚ի
հրէաստանէ և յԵրուսաղեմէ, և յայնկոյս Յորդա- 8
նանու, և որք ՚ի Տիւրոսէ և ՚ի Սիդոնէ. բազում
ժողովուրդ իբրև լսէին որչափ ինչ առնէր, գային առ
նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատ- 9
րաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղես-
ցեն զնա. քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ խռո- 10
նել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա որք ունէին ախտս
ինչ։ Եւ այսք պղծք յորժամ տեսանէին զնա, ան- 11
կանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին, թէ 12

դու ես որդի Աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա, զի
մի՛ յայտնի առնիցեն զնա։
13 ԳԲ. Ելանէ ՚ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն
14 կամեցաւ, և չոգան առ նա։ Եւ արար երկոտասանս՝
զի իցեն զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարոզել
15 և ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս և հանելոյ
16 զդևս։ Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս. և Յա-
17 կովբու Զեբեդեայ և Յովհաննու եղբօրն Յակով-
բայ՝ եդ նոցա անուանս Բաներեգէս, որ է՝ որդիք
18 որոտման, և զԱնդրէաս և զՓիլիպպոս և զԲարթո-
ղոմէոս և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս և
զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս և զՍիմոն կա-
19 նանացի, և զՅուդա սկարիովտացի, որ և մատ-
նեաց զնա։
20 ԳԳ. Գան ՚ի տուն, և գայ միւսանգամ ընդ նո-
սա ժողովուրդն, մինչ զի և հաց ևս ոչ ժամանել
21 ուտել նոցա։ Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին ու-
22 նել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ։ Եւ
դպիրքն՝ որ յԵրուսաղեմէ իջեալ էին, ասէին թէ
Բէեղզեբուղ գոյ ՚ի դմա, և իշխանաւ դիւացն հա-
23 նէ դա զդևս։ Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առա-
կօք խօսէր ընդ նոսա. Զիա՞րդ կարէ սատանայ ըզ-
24 սատանայ հանել. և արդ եթէ թագաւորութիւն
յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորու-
25 թիւնն այն. և եթէ տուն յանձն իւր բաժանեսցի,
26 ոչ կարէ կալ տունն. և եթէ սատանայ ՚ի վերայ ան-
ձին իւրոյ յարեաւ՝ և բաժանեալ իցէ, ոչ կարէ
27 կալ, այլ վախճանեալ է։ Այլ ոչ ոք կարէ զկարասի
հզօրի մտեալ ՚ի տուն նորա աւար հարկանել, եթէ
ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա զտուն նորա աւար
28 հարկանիցէ։ Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի
որդւոց մարդկան մեղք և հայհոյութիւնք՝ որչափ
29 և հայհոյեսցեն, բայց որ հայհոյեսցէ զհոգին սուրբ,
ոչ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան

լիցի յաւիտենից մեղաց: Զի ասէին՝ թէ այս պիղծ 30
գոյ 'ի նմա:
ԳԴ. Գան եղբարքն և մայր նորա, և արտաքոյ 31
կացեալ յղեցին և կոչէին զնա: Եւ անդ ժողովուրդն 32
շուրջ զնովաւ նստէր. և իբրև ասացին ցնա. Ահա֊
ւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդ֊
րեն զքեզ, պատասխանի ետ նոցա և ասէ: Ո՞վ է 33
իմ մայր կամ եղբարք: Հայեցաւ շուրջ զիւրև յա֊ 34
շակերտսն զի նստէին, և ասէ. Ահաւասիկ մայր իմ 35
և եղբարք իմ. զի որ առնէ զկամս Աստուծոյ, նա է
իմ եղբայր և քոյր և մայր:

ԳԼՈՒԽ Դ

ԳԵ. Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն. 1
և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև 'ի
նաւ մտանել նմա և նստել 'ի ծովուն. և ամենայն
ժողովուրդն զծովեզերբն՝ զցամաքն ունէին. և ու֊ 2
սուցանէր զնոսա առակօք բազում ինչ: Եւ ասէր նո֊
ցա 'ի վարդապետութեան իւրում. Լուք, ահաւա֊ 3
սիկ ել սերմանօղ սերմանել. և եղև 'ի սերմանելն, 4
ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և ե֊
կեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ոչ գոյր 5
հող բազում. և վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր
հիւթ երկրին, և յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և 6
զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ 7
'ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտ֊
ուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ե֊ 8
լեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երե֊
սուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր:
Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: 9
ԳԶ. Եւ իբրև եղև առանձինն, հարցին ցնա որ 10
զնովաւն էին աշակերտօքն հանդերձ զառակսն: Եւ 11
ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս

արքայութեան Աստուծոյ. բայց նոցա որ արտաքինքն
12 են՝ ամենայն ինչ առակօք լինի. զի տեսանելով տեսա֊
ցեն՝ և մի տեսցեն, և լսելով լուիցեն՝ և մի իմաս֊
13 ցին; զի մի երբեք դարձցին՝ և թողցի նոցա: Եւ ա֊
սէ ցնոսա. Ո՞չ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ զա֊
14 մենայն առակսն գիտիցէք: Որ սերմանէն՝ զբանն
15 սերմանէ: Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր
բանն սերմանի, և յորժամ լսեն զնա, գայ սատա֊
նայ՝ և հանէ զբանն սերմանեալ 'ի սիրտս նոցա:
16 Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան, որք
յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ
17 ընդունին. և զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ
ժամանակ մի են, ապա 'ի հասանել նեղութեան
կամ հալածման վասն բանին՝ վաղվաղակի գայթագ֊
18 ղին: Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցան, նոքա են՝
19 որ իբրև զբանն լսեն, և հոգք աշխարհիս և պատ֊
րանք մեծութեան մտանեն և հեղձուցանեն զբանն՝
20 և անպտուղ լինի: Եւ նոքա են որ յերկիրն բարւոք
սերմանեցան, որք լսեն զբանն և ընդունին, և տան
պտուղ, ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն,
և ընդ միոյ հարիւր:
21 ԳԷ. Եւ ասէ ցնոսա. մի եթէ գա՞յ ճրագ զի ընդ
գրուանաւ դնիցի, կամ ընդ մահճօք. ո՞չ ապաքէն 'ի
22 վերայ աշտանակի դնիցի: Զի չէ ինչ 'ի ծածուկ,
որ թէ ոչ յայտնեսցի. և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ
23 ոչ 'ի յայտ գայցէ. եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝
24 լուիցէ: Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ լսէք, և
յաւելցի ձեզ որոց լսէքդ. որով չափով չափէք՝ նո֊
25 վին չափեսցի ձեզ: Որ ոք ունիցի տացի նմա. և որ
ոչն ունիցի, և զոր ունին՝ բարձցի 'ի նմանէ:
26 ԳԿ. Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աս֊
տուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յեր֊
27 կիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սեր֊
մանիքն բուսանիցին և աճիցեն, և նա ոչ գիտէ՝ թէ
28 երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա

զհասկն, և ապա ցորեան ատոք 'ի հասկին. այլ 29
յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ ման-
գաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. Ո՞ւմ ն- 30
մանեցուսցուք զարքայութիւն Աստուծոյ կամ
որով առակաւ առակեսցուք զնա, Որպէս հատն մա- 31
նանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրա-
գոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի,
և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան 32
զամենայն բանջար և արձակէ ոստս մեծամեծս,
մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց
երկնից բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ 33
նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. և առանց 34
առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն
աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն:

ԴԲ. Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իբրև ընդ 35
երեկս լինէր. Եկայք անցցուք յայն կոյս: Թողուն 36
զժողովուրդն, և առնուն զնա նաւաւն հանդերձ, և
զայլ ևս նաւս որ էին ընդ նմա: Եւ լինէր մրրիկ մեծ 37
հողմոյ, և զալիսն 'ի նաւն զեղոյր մինչ գրեթէ լի իսկ
լինել. և ինքն ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ բարձի: 38
Զարթուցանէին զնա և ասէին. Վարդապետ, ո՞չ ինչ
է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ: Եւ զարթու- 39
ցեալ սաստեաց հողմոյն. և ծովուն ասէ, դադարեա
կարկեաց. և դադարեաց հողմն, և եղև խաղաղու-
թիւն մեծ: Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր այդպէս վատա- 40
սիրտք էք, չև ևս ունիք հաւատս: Եւ երկեան եր-
կիւղ մեծ. և ասէին ցմիմեանս. Ո՞ ոք արդեօք իցէ
սա, զի և հողմ և ծով հնազանդին սմա:

ԳԼՈՒԽ Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն գերգեսա-
2 ցւոց: Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատա-
հեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս
3 պիղծ, որոյ և բնակութիւնն իւր իսկ 'ի գերեզմանս
4 էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա, վասն
բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ,
և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն և զոտնակապսն խոր-
5 տակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա, քանզի հա-
նապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս
6 աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք: Իբրև
ետես զՅիսուս 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր
7 եպագ նմա. աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Զի՞
կայ իմ և քո, Յիսուս որդի Աստուծոյ բարձրելոյ.
երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած, մի՛ տանջեր զիս:
8 Քանզի ասէր ցնա. Ե՛լ, այսդ պիղծ, 'ի մարդոյ այ-
9 տի: Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո: Եւ
ասէր ցնա. Լեգէոն անուն է իմ, քանզի բազումք
10 եմք: Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զն-
11 նոսա արտաքս քան զաշխարհն: Եւ անդ էր առ լե-
12 րամբն երամակ մի խոզաց՝ արօտական մեծ: Աղաչե-
ցին զնա ամենայն դեքն և ասեն. Առաքեա զմեզ 'ի
խոզսն, զի մտցուք 'ի նոսա: Եւ հրամայեաց նոցա:
13 Եւ իբրև ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դի-
մեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրև
14 երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն: Եւ խո-
զարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և
յագարակս, և ելին տեսանել զի՞նչ իցէ որ գործե-
15 ցաւն: Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն
զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլե-
16 գէոնն. և զահի հարան: Եւ պատմեցին նոցա որոց
տեսեալն էր, թէ զի՞նչ եղև այսահարին, և զի՞նչ

վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա՝ գնալ 'ի սահ- 17
մանաց նոցա։ Եւ իբրև եմուտ նա 'ի նաւն, աղաչէր 18
զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ և Յիսուս ոչ ետ 19
նմա թոյլ, այլ ասէ ցնա. Երթ 'ի տուն քո առ
ընտանիս քո, և պատմեա նոցա որ ինչ միանգամ
Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ Եւ չոգաւ և 20
սկսաւ քարոզել 'ի Դեկապոլին, զոր ինչ արար նմա
Յիսուս. և ամենեքին զարմանային։
ԴԳ. Եւ իբրև անց Յիսուս միւսանգամ յայն 21
կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր
առ ծովեզերբն։ Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն 22
գայր. որում անուն էր Յայրոս. իբրև ետես զնա՝
անկաւ առ ոտս նորա, աղաչէր զնա յոյժ և ասէր, 23
թէ դուստր նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ դնիցէ
նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։ Եւ գնաց 24
ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նո-
րա, և նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսու- 25
թեան արեան զերկոտասան ամ, և յոյժ վշտացեալ 26
'ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամե-
նայն, և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրա-
ցեալ։ Իբրև լուաւ զՅիսուսէ, եկն 'ի մէջ ամբոխին 27
յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա. քանզի 28
խորհէր 'ի միտ, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս
նորա՝ փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղ- 29
բիւր արեան նորա, և գիտաց 'ի մարմին իւր՝ թէ
բժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղա- 30
կի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ
ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. Ո՞վ մեր-
ձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. 31
Տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ
ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր 32
տեսանել՝ թէ ո՛ զայն արար։ Եւ կինն զարհու- 33
րեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար, քան-
զի գիտէր զինչ եղև նմա, եկն անկաւ առաջի նորա,
և ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։ Եւ Յի- 34

սուս ասէ ցնա. Դուստր, հաւատք քո կեցուցին ըզ-
քեզ. Երթ 'ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ 'ի տան-
ջանաց քոց։
35 ԴԴ. Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք 'ի
տանէ ժողովրդապետին և ասեն, թէ դուստրն քո
36 մեռաւ, զի՞ ևս աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ
Յիսուս իբրև լուաւ զբանն զոր ասացին, ասէ ցժողովր-
37 դապետն. Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա։ Եւ
ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս
և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայրն Յակով-
38 բայ։ Գայ 'ի տուն ժողովրդապետին, և տեսանէ
39 ամբոխ յոյժ և լալականս և աղաղակ յոյժ. և մտեալ
'ի ներքս՝ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ էք և լայք, մա-
40 նուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին
զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առ-
նու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ
41 ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն. և կա-
լեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա. Տալիթա՝ կու-
մի. որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ արի։
42 Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն, և գնայր. քանզի
էր ամաց իբրև երկոտասանից. և զարմացան մեծա-
43 զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի
մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց՝ տալ նմա ուտել։

ԳԼՈՒԽ Զ

1 ԴԵ. Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր, և եր-
2 թային զհետ նորա աշակերտքն իւր։ Եւ եղև 'ի շա-
բաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն. և
բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապե-
տութիւն նորա, և ասէին. Ուստի՞ է սմա այս, կամ
զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա, զի զօրու-
3 թիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինիցին. ո՞չ սա է
մանուկ հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յա-
կովբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմովնի. և չի-

ցե՞ն քորքն դորա աստ առ մեզ։ Եւ գայթագղէին 4
'ի նա։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ոչ է մարգարէ ա֊
նարգ, բայց եթէ 'ի գաւառի իւրում, և յազգա֊
տոհմի և 'ի տան իւրում։ Եւ ոչ կարէր անդ և ոչ 5
մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց
ձեռն եդեալ բժշկէր զնոսա։ Եւ զարմանայր վասն 6
անհաւատութեան նոցա։

ԳԶ. Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, և ուսուցա֊
նէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, և սկսաւ 7
առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխա֊
նութիւն 'ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց 8
նոցա՝ զի մի ինչ բարձցեն 'ի ճանապարհ, բայց միայն
գաւազան, մի պարկ, մի հաց, մի պղինձ 'ի գօտիս.
այլ ագանել հողաթափս, և մի զգենուցուք, ասէ, 9
երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. Յոր տուն 10
մտանիցէք, անդէն օթեվանս կալջիք՝ մինչև ելանի֊
ցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն 11
ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփո֊
շի ոտից ձերոց 'ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ քա֊ 12
րոզէին՝ զի ապաշխարեսցեն. և դևս բազումս հա֊ 13
նէին, և օծանէին իւղով զբազում հիւանդս, և
բժշկէին զնոսա։

ԳԷ. Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտնի 14
եղև անուն նորա. և ասէր, թէ Յովհաննէս Մկըր֊
տիչ յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրու֊
թիւնք լինին նովաւ։ Այլք ասէին՝ թէ Եղիա է, 15
իսկ այլքն՝ թէ մարգարէ է, կամ թէ իբրև զմի 'ի
մարգարէից։ Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. Զորոյ 16
ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է, նա յարեաւ
'ի մեռելոց։ Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ 17
զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ 'ի բանտի, վասն
Հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա, քանզի
նա՝ կին արար զնա։ Քանզի ասէր Յովհաննէս ցՀե֊ 18
րովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո։
Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա՝ և կամէր ըս֊ 19

20 սպանանել զնա, և ոչ կարէր։ Զի Հերովդէս երկըն֊
չէր 'ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար
և սուրբ, և սպասէր նմա. և լուեալ 'ի նմանէ բա֊
զում ինչ՝ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա։
21 Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր
Հերովդէս՝ յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց
22 և հազարապետաց և մեծամեծաց գալիլեացւոց և 'ի
մտանել դստերն Հերովդիայ և 'ի կաքաւել, հաճոյ
եղև Հերովդի և բազմականացն։ Ասէ թագաւորն
ցաղջիկն. Խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տաց
23 քեզ։ Եւ երդուաւ նմա բազում՝ անգամ, թէ՛ զոր
ինչ և խնդրեսցես դու յինէն, տաց քեզ՝ մինչև ցկէս
24 թագաւորութեան իմոյ։ Նա ելեալ ասէ ցմայր իւր.
Զի՞նչ խնդրեցից։ Եւ նա ասէ. Զգլուխն Յով֊
25 հաննու Մկրտչի։ Եւ մտեալ անդրէն փութանակի
առ թագաւորն՝ ասէ. կամիմ՛ զի այժմ տացես ինձ
վաղվաղակի 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու
26 Մկրտչի։ Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ
վասն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ ա֊
27 նարգել զնա. և առաքեաց վաղվաղակի թագա֊
ւորն՝ դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա։
28 Եւ չոգաւ գլխատեաց զնա 'ի բանտին, և եբեր ըզ֊
գլուխն նորա սկտեղբ՝ և ետ ցաղջիկն, և աղջիկն տա֊
29 րաւ ետ մօր իւրում։ Իբրև լուան աշակերտքն նորա,
եկին բարձին զմարմինն և եդին 'ի գերեզմանի։
30 ԳԿ. Ժողովեցան Առաքեալքն առ Յիսուս, և
պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր
31 ուսուցին։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք դուք
առանձինն յանապատ տեղի, և հանգիջիք սակաւ
մի. զի էին բազումք որ երթային և գային, և հաց
32 անգամ՛ չժամանէին ուտել։ Եւ գնացին նաւու
33 յանապատ տեղի առանձինն։ Եւ տեսին զնոսա
զի երթային, և զգացին բազումք. և հետի յա֊
մենայն քաղաքաց խուռն ընթանային անդր, և
34 մերձենային առ նոսա։ Եւ ելեալ ետես ամբոխ բա֊

զում, և գթացաւ 'ի նոսա, զի էին իբրև ոչխարք' ո-
րոց ոչ իցէ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա
յոյժ: Եւ իբրև բազում ժամ եղև, մատուցեալ 35
աշակերտքն ասէին. Տեղիս անապատ է, մինչ դեռ
աւուր կայ, արձակեա զժողովուրդդ, զի երթեալ 36
շուրջ յագարակս և 'ի գեօղս' գնեսցեն իւրեանց
զինչ ուտիցեն, զի աստ ինչ ուտել ոչ ունին: Նա պա- 37
տասխանի ետ և ասէ ցնոսա. Դուք տուք դոցա
ուտել: Ասեն ցնա. Երթիցուք գնեսցուք երկերիւր
դահեկանի հաց, և տայցուք դոցա ուտել: Ասէ ցնոսա. 38
Քանի՞ նկանակ ունիք, երթայք տեսէք: Իբրև գի-
տացին, ասեն ցնա. Հինգ, և երկուս ձկունս: Եւ հրա- 39
մայեաց նոցա բազմել երախանս երախանս 'ի վե-
րայ դալար խոտոյ. և բազմեցան դասք դասք, ուր հա- 40
րիւր և ուր յիսուն: Եւ առեալ զհինգ նկանակն և 41
զերկուս ձկունսն' հայեցաւ յերկինս' օրհնեաց, ման-
րեաց զնկանակսն և ետ ցաշակերտսն զի արկցեն նո-
ցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն: Կե- 42
րան և յագեցան. և բարձին զնշխարսն երկոտասան 43
սակառի լի, և 'ի ձկանց անտի. և էին որք կերանն' 44
իբրև արք հինգ հազար:

ԵԲ. Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն մը- 45
տանել 'ի նաւ, և յառաջագոյն քան զնա երթալ
յայնկոյս 'ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն
արձակիցէ. և հրաժարեալ 'ի նոցանէ' ել 'ի լեառն 46
կալ յաղօթս: Եւ իբրև երեկոյ եղև' էր նաւն 'ի 47
մէջ ծովուն, և ինքն 'ի ցամաքի: Եւ ետես զնոսա 48
հողմակոծեալս 'ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նո-
ցա. և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնա-
լով 'ի վերայ ծովուն, և կամէր զանց առնել առ նո-
քօք: Նոքա իբրև տեսին զի գնայր 'ի վերայ ծովուն, 49
համարեցան թէ առաչօք ինչ լինիցի, և զաղաղակ
բարձին. քանզի ամենեքեան տեսին զնա' և խռովե- 50
ցան: Եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նո-
սա և ասէ. Քաջալերեցարուք, ես եմ' մի երկնչիք.

51 և ել 'ի նաւն առ նոսա, և դադարեաց հողմն: Եւ ա-
ռաւել ևս յիմարեալ էին 'ի միտս իւրեանց, և զար-
52 մանային յոյժ. քանզի և 'ի վերայ հացին ոչ իմա-
53 ցան, զի էր սիրտ նոցա թմբրեալ: Եւ իբրև անցին
54 յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարեթ: Եւ իբրև
ելին 'ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք
55 տեղւոյն այնորիկ, և ընթացեալ այսր անդր ընդ ա-
մենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս,
56 ուր լսէին թէ անդ իցէ: Եւ ուր և մտանէր' 'ի գեօղս
կամ 'ի քաղաքս կամ յագարակս, 'ի հրապարակս
դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա' զի գոնէ 'ի
քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որք
միանգամ մերձեցանն' փրկեցան:

ԳԼՈՒԽ Է

1 ԵԳ. Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն և ոմանք
2 'ի դպրացն որ եկեալ էին յԵրուսաղեմէ: Եւ տե-
սեալ զոմանս յաշակերտացն անտի' զի խառնակ ձե-
ռօք, այս ինքն է' անլուայ ուտէին հաց, բամբասե-
3 ցին: Զի փարիսեցիքն և ամենայն Հրեայք, եթէ
ոչ բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի
4 ունին զաւանդութիւն ծերոցն. և 'ի հրապարակէ
մտեալ' եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. և այլ
ինչ բազում է' զոր ընկալան ունել, մկրտութիւնս
բաժակաց և ստամանաց և պղնձեաց և մահճաց:
5 Ապա հարցանեն զնա փարիսեցիքն և դպիրք, թէ
ընդէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեան
6 ծերոցն, այլ խառնակ ձեռօք հաց ուտեն: Նա պա-
տասխանի ետ և ասէ ցնոսա, թէ բարւոք մար-
գարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս
ասաց. Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և
7 սիրտք նոցա հեռացեալ 'ի բացեայ են յինէն. զուր
պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս' ըղ-

մարդկան պատուիրեալս։ Թողեալ զպատուիրանն 8
Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւն (մկըր֊
տութիւնս ստամանաց և բաժակաց, և այլոց նմա֊
նեաց սոցին առնէք բազում)։ Եւ ասէ ցնոսա. 9
Բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ, զի զձեր
աւանդութիւնն հաստատիցէք։ Զի Մովսէս ասէ. 10
Պատուեա զհայր քո և զմայր. և որ չարախօ֊
սեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի։
Եւ դուք ասէք, եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝ 11
կորբան, որ է պատարագ, զոր յինէն օգտեսցիս.
և ոչ ևս տայք թոյլ նմա չառնել ինչ հօրն կամ 12
մօր. և անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդու֊ 13
թեամբն զոր աւանդեցէք. և բազում ինչ այլ՝ որ
այսմ նման է՝ առնէք։ Եւ կոչեալ առ ինքն զամե֊ 14
նայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարուք ինձ ամե֊
նեքեան և ՚ի միտ առէք. ոչինչ արտաքուստ ՚ի մարդ֊ 15
մտեալ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ՚ի
նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն. որ ունիցի ականջս 16
լսելոյ՝ լուիցէ։

ԵԴ. Եւ իբրև եմուտ ՚ի տուն յամբոխէ անտի, 17
հարցանէին զնա աշակերտքն վասն առակին։ Եւ ա֊ 18
սէ ցնոսա. Ա՞յդպէս և դուք անմիտք էք. ո՞չ իմա֊
նայք, եթէ ամենայն որ արտաքուստ ՚ի ներքս մը֊
տանէ ՚ի մարդ՝ ոչ կարէ զնա պղծել. զի ոչ եթէ 19
՚ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն, և արտաքս
ելանէ, և սրբէ զամենայն կերակուրսն։ Եւ ասէր, 20
թէ որ ինչ ՚ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ.
զի ՚ի ներքուստ ՚ի սրտէ մարդկան խորհուրդք չա֊ 21
րութեան ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք, գո֊ 22
ղութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարու֊
թիւնք, նենգութիւնք, գիջութիւն, չարակնու֊
թիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անըզ֊
գամութիւն։ Այս ամենայն չարիք ՚ի ներքուստ ե֊ 23
լանեն, և պղծեն զմարդ։ Եւ անտի յարուցեալ եկն 24
՚ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ ՚ի տուն՝

25 ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել։ Լը֊
ւաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր
26 յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա. և կինն էր
հեթանոս, փիւնիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝
27 զի զդևն հանցէ ՚ի դստերէ նորա։ Եւ Յիսուս ասէ
ցնա. Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է
բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։
28 Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, և շունք ՚ի փըշ֊
29 րանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Եւ ասէ ցնա.
Վասն այդր բանի՝ երթ, ել դևն ՚ի դստերէ քումմէ։
30 Գնաց ՚ի տուն իւր, և եգիտ ելեալ զդևն. և ըզ֊
դուստրն, զի անկեալ դնէր ՚ի մահիճս։
31 ԵԵ. Եւ ելեալ միւսանգամ ՚ի սահմանացն Տիւ֊
րոսի և Սիդոնի, և եկն ՚ի ծովեզրն գալիլեացւոց ՚ի
32 մէջ սահմանացն ՚ի Դեկապօլիս։ Եւ բերին առաջի
նորա խուլ մի և համր, և աղաչեցին՝ զի ձեռն դիցէ
33 ՚ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ
անտի՝ արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և ե֊
34 թուք անդր. և կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յեր֊
կինս՝ յոգոց եհան և ասէ. Եփփաթա, որ է՝ բա֊
35 ցիր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լու֊
36 ծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ. և պա֊
տուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն։ Եւ որչափ
նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին,
37 և ևս քան զևս զարմանային և ասէին. Զամենայն
ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ, և
համրց խօսել։

ԳԼՈՒԽ Ը

1 ԵԶ. Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ
բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զա֊
2 շակերտսն իւր և ասէ ցնոսա. Գթամ ես ՚ի վերայ
ժողովրդեանդ. զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ

խս են, և ոչ ունին զինչ ուտիցեն. և եթէ արձակեմ 3
զդոսա նօթիս 'ի տունս իւրեանց, նքթիցեն 'ի ճա-
նապարհի. զի ոմանք 'ի դոցանէ 'ի հեռաստանէ ե-
կեալ են: Պատասխանի ետուն նմա աշակերտքն նո- 4
րա. Ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա հացիւ
յանապատի աստ: Եւ հարցանէր զնոսա. Քանի՞ 5
նկանակ հաց ունիք: Եւ նոքա ասեն. Եօթն: Եւ 6
հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի վերայ երկրի.
և առեալ զեօթն նկանակն՝ գոհացաւ՝ եբեկ, և
տայր ցաշակերտսն զի արկցեն, և արկին առաջի ժո-
ղովրդեանն. և ձկունս սակաւ ունէին, և զայն ևս 7
օրհնեաց, և հրամայեաց արկանել: Կերան և յա- 8
գեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամ-
բիղ, Եւ էին որք կերանն՝ իբրև չորք հազարք, և 9
արձակեաց զնոսա:

ԵԷ. Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ հանդերձ ա- 10
շակերտօքն՝ եկն 'ի կողմանս Դաղմանունեայ: Ելին 11
փարիսեցիքն՝ և սկսան վիճել ընդ նմա, և խնդրէին
'ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա: Եւ զայրա- 12
ցաւ յոգի իւր և ասէ. Զի՞ է զի ազգս այս նշան խնդ-
րէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այս-
միկ: Եթող զնոսա. դարձեալ եմուտ 'ի նաւ, և գը- 13
նաց յայնկոյս: Եւ մոռացան հաց բառնալ, բայց միայն 14
մի նկանակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին: Եւ պա- 15
տուիրէր նոցա և ասէր. Զգոյշ եղերուք 'ի խմորոյ
անտի փարիսեցւոց և 'ի խմորոյ հերովդիանոսաց: Եւ 16
խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ
ունիմք: Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. Զի՞ խոր 17
հիք 'ի սիրտս ձեր, թերահաւատք, թէ հաց ոչ ու-
նիք. տակաւին ոչ իմանայք և ոչ յիշէք. ապշու-
թիւն ունի զսիրտս ձեր. աչք գոն՝ և ոչ տեսանէք, 18
ականջք են՝ և ոչ լսէք և ոչ իմանայք տակաւին. և 19
ոչ յիշէք, յորժամ զհինգ նկանակն 'ի հինգ հա-
զարսն, և քանի՞ սակառի բարձէք զկոտորոցն լի: Եւ
ասեն ցնա. Երկոտասան: Եւ յորժամ զեօթն նկա- 20
նակն 'ի չորս հազարսն, և քանի՞ զամբիղ լի՝ բարձէք

21 զկոտորոցն: Եւ նոքա ասեն. Եօթն: Եւ ասէ ցնո-
22 սա. Իսկ զիա՞րդ ոչ իմանայք: Գան 'ի Բեթսայի-
դա. և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝
23 զի մերձեսցի 'ի նա: Եւ առեալ զձեռանէ կուրին՝ ե-
հան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ
'ի վերայ նորա. և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞
24 ինչ: Բացաւ՝ և ասէր. Տեսանեմ զմարդիկս զի շըր-
25 ջին իբրև զծառս: Դարձեալ եդ ձեռս 'ի վերայ ա-
չաց նորա՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ և տեսանէր
26 համարձակ զամենայն: Արձակեաց զնա 'ի տուն իւր՝
և ասէ. Ի շէնդ մի մտանիցես, այլ երթ 'ի տուն քո.
և յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես 'ի
շինին:
27 ԶԿ. Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ 'ի
շէնս կեսարեայ փիլիպպեայ, և 'ի ճանապարհին
հարցանէր ցաշակերտսն և ասէր. Զո՞ ուստեք ասեն
28 զինէն մարդիկն՝ թէ իցեմ: Նոքա ետուն պատաս-
խանի և ասեն. զՅովհաննէս Մկրտիչ, և այլք
29 զԵղիա, և այլք զմի ոք 'ի մարգարէից անտի: Ասէ
ցնոսա. Իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ:
Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Դու ես
30 Քրիստոսն: Եւ սաստեաց 'ի նոսա՝ զի մի ումեք ա-
31 սիցեն զնմանէ: Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ
պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդու-
նել, և անարգել յերիցանց և 'ի քահանայապետից
և 'ի դպրաց, և մեռանել և յերիր աւուր յառնել.
32 և համարձակ զբանն խօսեցաւ: Եւ առեալ զնա մե-
33 կուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա: Եւ նա դար-
ձաւ ետես զաշակերտսն, սաստեաց Պետրոսի և ա-
սէ. Երթ յետս իմ, սատանայ, զի ոչ խորհիս դու
34 զաստուծոյն, այլ զմարդկանս: Եւ կոչեցեալ առ
ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ ասէ ցնո-
սա. Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի զանձն
35 իւր, և բարձցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ: Զի
որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր կորուսցէ զնա.

և որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, ապ-
րեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշ- 36
խարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի.
քանզի զի՞նչ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ։ 37
Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ 'ի 38
շնացող և 'ի մեղաւոր ազգիս յայսմիկ, և որդի մար-
դոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք
հօր իւրոյ և Հրեշտակաց սրբոց։ Եւ ասէ ցնոսա. 39
Ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ
կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զար-
քայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

ԳԼՈՒԽ Թ

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետ- 1
րոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և հանէ զնո-
սա 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս
եղև առաջի նոցա. և ձորձք նորա եղեն փայլուն սպի- 2
տակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս
սպիտակացուցանել։ Եւ երևեցաւ նոցա Եղիա Մով- 3
սիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի։ Պատաս- 4
խանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Ռաբբի, բար-
ւոք է մեզ աստ լինել. և արասցուք երիս տաղաւարս՝
մի քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի։ Քանզի 5
ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին։ Եւ 6
եղև ամպ մի հովանի 'ի վերայ նոցա, ձայն եղև յամ-
պոյ անտի՝ և ասէ. Դա է որդի իմ սիրելի, դմա
լուարուք։ Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր, 7
ոչ ևս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ
իւրեանս։ Եւ մինչ դեռ իջանէին 'ի լեռնէ անտի, 8
պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տե-
սինն, բայց յորժամ որդի մարդոյ 'ի մեռելոց յարի-
ցէ։ Եւ նոքա զբանն 'ի մտի ունէին. և խնդրէին 9
ընդ միմեանս՝ թէ զի՞նչ իցէ 'ի մեռելոցն յառնել։
Հարցին ցնա և ասեն. Զի՞նչ է այն զոր դպիրքն ա- 10

11 սեն, եթէ նախ Եղիայի պարտ է գալ։ Նա պատաս-
խանի ետ նոցա և ասէ. Եղիա նախ եկեալ յարդա-
րեսցէ զամենայն։ Իսկ զիա՞րդ գրեալ է զորդւոյ մար-
դոյ, զի բազում ինչ չարչարեսցի և անգոսնեսցի։
12 Այլ ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, և արարին
ընդ նմա զինչ և կամեցան, որպէս և գրեալ է վասն
նորա։
13 ԶԲ. Եւ՟ եկեալ առ աշակերտսն՝ տեսին ամբոխ
շուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։
14 Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրև տեսին
զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջոյն
15 տային նմա։ Եւ եհարց ցնոսա թէ զի՞նչ վիճէիք
16 ընդ նոսա։ Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդե-
նէն և ասէ. Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ,
17 զոր ունի այս համր, և ուր հասանէ՝ զարկուցանէ
զնա, և փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցամա-
քի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, և ոչ
18 կարացին հանել զնա։ Պատասխանի ետ նոցա և ա-
սէ. Ո՛վ ազգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ,
19 մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս։ Եւ
ածին զնա առ նա. իբրև ետես զնա այսն, վաղվա-
ղակի շարժլեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէր
20 և փրփրեայր։ Եհարց ցհայր նորա և ասէ. Քանի՞
21 ժամանակք են՝ յորմէ հետէ այդ եղև դմա։ Եւ նա
ասէ. Ի մանկութենէ. բազում անգամ 'ի հուր ար-
կանէ և 'ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ եթէ կարող
ինչ ես, օգնեա մեզ, Տէր, գթացեալ 'ի վերայ մեր։
22 Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝ եթէ կարող ես. ա-
23 մենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն։ Եւ
վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ.
24 Հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում։ Իբ-
րև ետես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն 'ի վե-
րայ. սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. Համրդ և խուլ
այս, ես տամ քեզ հրաման, ել 'ի դմանէ, և այլ ևս
25 մի՛ մտանիցես 'ի դա։ Եւ աղաղակեաց և յոյժ ըն-

կեաց զնա՝ և ել. և եղև պատանեակն իբրև զմե-
ռեալ, մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ։ Եւ 26
Յիսուս կալաւ զձեռանէ նորա յարոյց զնա, և կանգ-
նեցաւ։ Եւ իբրև եմուտ նա 'ի տուն, աշակերտքն 27
առանձինն հարցին ցնա. Մեք ընդէր ոչ կարացաք
հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ ոչ իւիք 28
ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։

ԶԳ. Եւ անտի ելեալ անցանէին առ գալիլեա- 29
ցւովք, և ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ Քանզի ու- 30
սուցանէր զաշակերտսն իւր և ասէր ցնոսա, թէ որ-
դի մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան, և սպան-
ցեն զնա. և իբրև սպանցի՝ յերիր աւուր յառնէ։ Եւ 31
նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին հարցանել ցնա։
Եկն 'ի կափառնաում. և իբրև եմուտ 'ի տուն, հար- 32
ցանէր զնոսա։ Զինչ վիճէիք զճանապարհայն ընդ
միմեանս։ Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս 33
վիճէին 'ի ճանապարհին թէ՝ ո՛վ մեծ իցէ։ Եւ իբ- 34
րև նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն, և ասէ ցնոսա.
Եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտ-
սեր և ամենեցուն պաշտօնեայ։ Եւ առեալ մանուկ 35
մի կացոյց 'ի մէջ նոցա, և ընկալեալ զնա 'ի գիրկս
իւր՝ ասէ ցնոսա. Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ 36
ընկալցի յանուն իմ, զիս ընդունի, և որ զիս ընդու-
նի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն որ առաքեացն զիս։
Պատասխանի ետ նմա Յովհաննէս և ասէ. Վար- 37
դապետ, տեսաք զոմն զի յանուն քո դևս հանէր՝
և զմեր կնի ոչ շրջէր, և արգելաք զնա։ Եւ նա 38
ասէ. Մի՛ արգելուք զնա. զի ոչ ոք է որ առնէ զօ-
րութիւնս յանունս իմ, և կարիցէ հայհոյել զիս. զի 39
որ ոչն է ընդ մեզ հակառակ, 'ի մեր կոյս է։ Եւ որ 40
ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս յայս, թէ
դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի՛ կորուսցէ
զվարձս իւր։ Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի 'ի փո- 41
քրկանցս որ հաւատան յիս, լաւ էր նմա առաւել՝
եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան իշոյ, և

42 ընկեցեալ 'ի ծով։ Եւ եթէ գայթագղեցուսցէ զքեզ
ձեռն քո, հատ՝ ընկեա 'ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ
'ի կեանսն յաւիտենից մտանել, քան երկուս ձեռս ու-
43 նել՝ և երթալ 'ի գեհեն 'ի հուրն անշէջ։ (Ուր որդն
44 նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի)։ Եւ եթէ
ոտն քո գայթագղեցուսցէ զքեզ, հատ ընկեա զնա 'ի
քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել 'ի կեանսն յաւիտե-
նից, քան երկուս ոտս ունել՝ և անկանել 'ի գեհեն
45 ('ի հուրն անշէջ։ Ուր որդն նոցա ոչ մեռանի և հուրն
46 ոչ շիջանի)։ Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ զքեզ,
հան զնա 'ի բաց. լաւ իցէ քեզ՝ միով ականբ մտանել
յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել՝ և
47 անկանել 'ի գեհեն։ Ուր որդն նոցա ոչ մեռանի և
48 հուրն ոչ շիջանի։ Զի ամենայն ինչ հրով յաղե-
49 ցի, (և ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի)։ Բարւոք
է աղ. և եթէ աղն անհամեսցի, իւ համեմեսցի.
արդ դուք կալարուք յանձինս ձեր զաղն, և խաղա-
ղութիւն արարէք ընդ միմեանս։

ԳԼՈՒԽ Ժ

1 ԶԳ. Եւ անտի յարուցեալ գայ 'ի սահմանս հր-
րեաստանի, յայնկոյս Յորդանանու, և երթայր
դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա, և որպէս
2 սովոր էր միւսանգամ ուսուցանէր զնոսա։ Իսկ փա-
րիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա
և ասէին, եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձա-
3 կել։ Նա պատասխանի ետ նոցա և ասէ. Զինչ
4 պատուիրեաց ձեզ Մովսէս։ Եւ նոքա ասեն։ Մով-
սէս հրաման ետ՝ գիր մեկնելոյ գրել և արձակել։
5 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Վասն խըս-
տասրտութեան ձերոյ գրեաց զպատուիրանն զայն.
6 այլ իսկզբանէ արարածոց՝ արու և էգ արար զնո-
7 սա Աստուած. և ասէ. Վասն այսորիկ թողցէ այր
8 զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և

եղիցին երկուքն 'ի մարմին մի։ Եւ այնուհետեւ ոչ
են երկու՝ այլ մարմին մի. արդ զոր Աստուած զու- 9
գեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։ Եւ 'ի տան դարձեալ ա- 10
շակերտքն զնոյն հարցին ցնա. և ասէ ցնոսա. Եթէ 11
այր արձակեսցէ զկին իւր և արասցէ այլ, շնայ. և 12
կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ և եղիցի առն այլում,
շնայ։

ԶԵ. Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն 13
դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ
մատուցանէինն։ Իբրև ետես Յիսուս, բարկացեալ 14
ցասեաց նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ
առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է
արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ, որ ոչ 15
ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ,
ոչ մտցէ 'ի նա։ Եւ առեալ զնոսա 'ի գիրկս՝ ձեռն եդ- 16
'ի վերայ և օրհնեաց զնոսա։ Եւ ընդ ելանելն նորա 17
անտի 'ի ճանապարհ՝ ահաւասիկ ոմն մեծատուն ըն-
թացեալ 'ի ծունր իջանէր, հարցանէր ցնա և ասէր.
Վարդապետ բարի, զի՞նչ արարից զի զկեանսն յաւի-
տենականս ժառանգեցից։ Եւ Յիսուս ասէ ցնա. 18
Զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի Աստուած.
զպատուիրանս գիտես, մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ 19
գողանար, մի՛ սուտ վկայեր, պատուեա զհայր քո և
զմայր։ Նա պատասխանի ետ և ասէ ցնա. Վարդա- 20
պետ, զայդ ամենայն արարի 'ի մանկութենէ իմմէ,
արդ զի՞նչ ևս պակաս իցեմ։ Եւ Յիսուս հայեցեալ 21
'ի նա՝ սիրեաց զնա և ասէ ցնա. Մի ինչ պակաս է
'ի քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ զոր ինչ
ունիս վաճառեա և տուր աղքատաց. և ունիցիս գանձս
յերկինս, և ա՛ռ զխաչն և եկ զկնի իմ։ Եւ նա խո- 22
ժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր ինչս
բազումս։ Եւ հայեցեալ յայս կոյս՝ յայն կոյս Յի- 23
սուս. ասէ ցաշակերտսն. Զիա՞րդ դժուարին է՛ որ
զինչս ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ։
Եւ աշակերտքն զարմացեալ էին 'ի վերայ բանիցն նո- 24

րա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա
և ասէ. Որդեակք, որչափ դժուարին է յուսացելոց
25 յինչս՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ. դիւրին
է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան
26 յարքայութիւն Աստուծոյ մտանել։ Եւ նոքա առա-
ւել ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. Իսկ ո՞վ
27 կարասցէ ապրել։ Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝
ասէ. Առ 'ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ
'ի յԱստուծոյ։

28 ԶԶ. Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք
29 թողաք զամենայն, և եկաք զկնի քո։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ. Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ ե-
թող զտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զ-
հայր, կամ զմայր, կամ զորդիս, կամ զագարակս՝
30 վասն իմ կամ վասն աւետարանի, եթէ ոչ առնու-
ցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս,
և եղբարս, և քորս, և մայրս, և որդիս, և ագարակս
հալածանօք հանդերձ. և յաշխարհին որ գալոց է՝
31 զկեանսն յաւիտենականս։ Զի բազումք եղիցին ա-
32 ռաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք։ Եւ էին 'ի
ճանապարհի մինչ դեռ ելանէին յԵրուսաղէմ. և
երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և զարմացեալ
էին որ զհետն երթային, և երկնչէին։

ԶԷ. Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն ա-
ռանձինն՝ սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց
33 իցեն ընդ նա. Թէ ահաւասիկ ելանեմք յԵրուսա-
ղէմ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն
և դպրաց, և դատեսցին զնա 'ի մահ, և մատնեսցեն զնա
34 հեթանոսաց, և կատակեսցեն զնովաւ, և հարկա-
նիցեն զնա, և թքանիցեն 'ի նա, և սպանցեն, և
35 յերիր աւուր յարիցէ։ Եւ երթային առ նովաւ Յա-
կովբոս և Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ, և ա-
սեն ցնա. Վարդապետ, կամիմք զի զոր ինչ խնդ-
36 րեսցուք 'ի քէն՝ արասցես մեզ։ Եւ նա ասէ ցնո-
սա. Զի՞նչ կամիք յինէն՝ զի արարից ձեզ։ Եւ նո-

քա ասեն ցնա. Տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ 37
քումմէ և մի յահեկէ՝ 'ի փառսն քում: Պատասխա- 38
նի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ոչ գիտէք զինչ խնդ-
րէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ,
կամ զմկրտութիւնն մկրտել՝ զոր ես մկրտելոցն եմ:
Եւ նոքա ասեն ցնա. կարեմք: Եւ Յիսուս ասէ 39
ցնոսա. Զբաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք,
և զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք.
այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է 40
իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ: Եւ լուեալ 41
զայն տասանցն, սկսան բարկանալ Յակովբայ և
Յովհաննու: Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, 42
և ասէ ցնոսա. Գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են
հեթանոսաց, տիրեն նոցա և մեծամեծք նոցա իշ-
խեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ և 'ի ձերում միջի. այլ 43
որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօ-
նեայ, և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի 44
ամենեցուն ծառայ: Քանզի և որդի մարդոյ ոչ եկն 45
առնուլ պաշտօն, այլ պաշտել, և տալ զանձն իւր
փրկանս փոխանակ բազմաց:
ԷԿ. Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵ- 46
րիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդովք, որդի
Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճա-
նապարհի: Իբրև լուաւ թէ Յիսուս նազովրեցի է, 47
սկսաւ աղաղակել և ասել. Որդի Դաւթի Յիսուս,
ողորմեաց ինձ: Եւ սաստէին նմա բազումք զի լռես- 48
ցէ. և նա առաւել ևս աղաղակէր. Որդի Դաւթի,
ողորմեաց ինձ: Զտեղի առ Յիսուս, և հրամայեաց 49
կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալե-
րեաց, արի՝ կոչէ զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս 50
իւր, յարեաւ եկն առ Յիսուս. Պատասխանի ետ 51
նմա Յիսուս և ասէ. Զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ:
Ասէ ցնա կոյր. Ռաբբունի, զի բացայց: Եւ Յի- 52
սուս ասէ ցնա. Երթ, հաւատք քո կեցուցին զքեզ:

Եւ վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա 'ի
ճանապարհին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ 'ի Բեթ-
փագէ և 'ի Բեթանիա մօտ 'ի լեառն ձիթենեաց,
2 առաքէ երկուս յաշակերտաց անտի, և ասէ ցնոսա.
Երթայք դուք 'ի գեղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն
ժամայն իբրև մտանէք 'ի նա գտանիցէք յաւանակ
մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք 'ի մարդկանէ նստաւ,
3 լուծէք զնա և ածէք: Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ թէ
զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք՝ թէ տեառն իւ-
րում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր:
4 Չոգան և գտին զյաւանակն կապեալ առ դուրս ար-
5 տաքոյ 'ի փողոցի անդ, և լուծին զնա: Եւ ոմանք
յորոց անդն կային, ասեն ցնոսա. Զի՞ գործէք՝ զի
6 լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն ցնոսա որ-
7 պէս ասաց Յիսուս. և թոյլ ետուն նոցա: Ածեն
զյաւանակն առ Յիսուս, և արկանեն 'ի վերայ նո-
8 րա հանդերձս, և նստաւ 'ի վերայ նորա: Եւ բա-
զումք զհանդերձս իւրեանց տարածանէին 'ի վերայ
ճանապարհին, և այլք ոստս 'ի ծառոց հատանէին և
9 արկանէին զճանապարհաւն: Եւ որ առաջին և զկնի
երթային՝ աղաղակէին և ասէին. Ովսաննա Բար-
10 ձրելոյն. օրհնեալ որ գայդ յանուն Տեառն. օրհնեալ
թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի, խա-
11 ղաղութիւն յերկինս և փառք 'ի բարձունս: Եւ ե-
մուտ Յիսուս յԵրուսաղէմ՝ 'ի տաճարն, և հայեցաւ
շուրջ զամենեքումբք. և զի էր երեկոյացեալ ժամն,
ել 'ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ:
12 ԷԲ. Եւ 'ի վաղիւ անդր մինչ դեռ ելանէին 'ի Բե-
13 թանիայ՝ քաղցեաւ. և ետես թզենի մի 'ի բացուստ
տերևալից, և եկն թէ գտանիցէ ինչ 'ի նմա. և իբ-

րև եկն 'ի նա, ոչ ինչ եգիտ՝ բայց միայն տերև.
զի ոչ իսկ էր ժամանակ թզոյ։ Պատասխանի ետ և 14
ասէ ցնա. Մի՛ ևս ոք յաւիտեան 'ի քէն պտուղ կե-
րիցէ։ Եւ լսէին աշակերտքն նորա։ Գան յԵրու- 15
սաղէմ. և մտեալ 'ի տաճարն՝ սկսաւ հանել զվա-
ճառականս և զգնօղս՝ որ էին 'ի տաճարին. և զսե-
ղանս հատավաճառացն ցրուեաց, և զաթոռս աղաւ-
նեվաճառացն կործանեաց. և ոչ թողոյր՝ եթէ ոք 16
անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։ Ուսուցանէր 17
զնոսա և ասէր. Գրեալ է, թէ տուն իմ տուն ա-
ղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց. և դուք ա-
րարէք զդա այրս աւազակաց։ Լուան քահանայա- 18
պետքն և դպիրք, և խնդրէին թէ որպէս կորուսցեն
զնա, բայց երկնչէին 'ի նմանէ. զի ամենայն ժողո-
վուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա։ Եւ իր- 19
րև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին։
Եւ մինչ դեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին 20
զթզենին ցամաքեալ յարմատոց. յիշեաց Պետրոս՝ 21
և ասէ ցնա. Ռաբբի, ահաւասիկ թզենին զոր անի-
ծեր՝ ցամաքեցաւ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ 22
ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատն Աստուծոյ, ամէն 23
ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և
անկիր 'ի ծով, և ոչ երկմտիցէ 'ի սրտի իւրում, այլ
հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ
և ասիցէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ. զամենայն ինչ 24
վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք և հաւատայ-
ցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։ Եւ յորժամ յա- 25
ղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումե-
քէ. զի և Հայրն ձեր որ յերկինս է, թողցէ ձեզ
զյանցանս ձեր։ (Զի եթէ դուք ոչ թողուցուք, և 26
ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր)։

ԷԳ. Գան միւսանգամ յԵրուսաղէմ. և մինչ դեռ 27
'ի տաճարի անդզգնայր, գան առ նա քահանայա-
պետքն և դպիրք և ծերք, և ասեն ցնա. Որո՞վ իշ- 28

խանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխա-
29 նութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ պա-
տասխանի, և ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ
30 առնեմ զայս։ Մկրտութիւնն Յովհաննու յերկնից
31 էր՝ թէ 'ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի։ Խոր-
հէին ընդ միմեանս, և ասէին. Եթէ ասեմք եթէ
յերկնից, ասէ ցմեզ՝ իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա.
32 այլ եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողո-
վրրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ
33 մարգարէ էր։ Պատասխանի ետուն և ասեն ցՅի-
սուս. Ոչ գիտեմք։ Եւ Յիսուս ետ նոցա պատասխա-
նի և ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանու-
թեամբ առնեմ զայս։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք և ասել.
Այր մի տնկեաց այգի, և ած շուրջ զնովաւ ցանգ,
և զուբ հնծան փորեաց և շինեաց աշտարակ, և ետ
2 զնա ցմշակս և գնաց 'ի տար աշխարհ։ Եւ առաքեաց
առ մշակսն 'ի ժամանակի ծառայ մի, զի 'ի մշակաց
3 անտի առցէ 'ի պտղոյ այգւոյն. և նոցա կալեալ՝ գան
4 հարին զնա, և արձակեցին ունայն։ Դարձեալ ա-
ռաքեաց այլ ծառայ, և զնա կառափնատեցին՝ և ար-
5 ձակեցին անարգեալ։ Եւ դարձեալ այլ առաքեաց,
և զնա սպանին. և զբազումս այլս, զոմանս՝ հարկա-
6 նէին, և զոմանս՝ սպանանէին։ Ապա որդի մի էր իւր
սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ.
7 Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մը-
շակքն իբրև տեսին զնա զի գայր, ասեն ցմիմեանս.
սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, և մեր լիցի
8 ժառանգութիւնն. և կալեալ զնա սպանին, և հա-
9 նին արտաքոյ այգւոյն։ Արդ զի՞նչ արասցէ տէր այ-

գոյն։ Եկեսցէ և կորուսցէ զմշակսն, և տացէ զայ֊
գին ՚ի ձեռս այլոց։ Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթեր֊ 10
ցեալ ձեր, թէ զվէմն զոր անարգեցին շինողքն, նա
եղև գլուխ անկեան, ՚ի Տեառնէ եղև այս, և է ըս֊ 11
քանչելի յաչս մեր։ Եւ խնդրէին զնա ունել, և եր֊ 12
կեան ՚ի ժողովրդենէ անտի. զի գիտացին՝ թէ առ֊
նոսա ասաց զառակն. և թողին զնա և գնացին։ Եւ 13
առաքեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց անտի և ՚ի
հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նո֊ 14
քա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին.
Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ
փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդ֊
կան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ
ուսուցանես. արդ ասա մեզ, արժա՞ն է հարկ տալ
կայսեր՝ եթէ ոչ. տացո՞ւք՝ թէ ոչ տացուք։ Եւ Յի֊ 15
սուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա.
Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք. բերէք ինձ դահեկան
մի զի տեսից։ Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞յր 16
է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. կայ֊
սեր։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եր֊ 17
թայք տուք զկայսեր՝ կայսեր, և զԱստուծոյ՝ Աստու֊
ծոյ։ Եւ զարմացան ընդ նա։

ԷԴ. Գան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք 18
յարութիւն. հարցանէին զնա և ասէին։ Վարդա֊ 19
պետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մե֊
ռանիցի, և թողուցու կին և որդի ոչ թողուցու, զի
առցէ եղբայր նորա զկինն նորա և յարուցէ զաւակ
եղբօր իւրում։ Արդ եղբարք եօթն էին առ մեզ. 20
առաջինն ա՛ռ կին և մեռաւ, և ոչ եթող զաւակ. և 21
երկրորդն ա՛ռ զնոյն, և մեռաւ, և ոչ նա եթող զա֊
ւակ. նոյնպէս և երրորդն ա՛ռ զնոյն, և եօթնեքեան 22
իսկ, և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ
և կինն։ Արդ ՚ի յարութեանն յորժամ յառնիցեն, 23
ո՞յր ՚ի նոցանէ լինիցի կինն, զի եօթնեքեան կալան
զնա կին։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. 24

Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք, զի ոչ գիտէք
25 զգիրս և ոչ զզօրութիւնն Աստուծոյ։ Զի յորժամ
՚ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, և ոչ կա֊
նայք արանց լինին. այլ իբրև զհրեշտակս իցեն՝ որ
26 յերկինս են։ Այլ վասն յարութեան մեռելոց զի
յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ՚ի գիրսն Մովսիսի՝
՚ի մորենւոյն որպէս ասաց ցնա Աստուած. Ես եմ, ա֊
սէ, Աստուած Աբրահամու և Աստուած իսահակայ
և Աստուած Յակովբայ. եւ ոչ է Աստուած մեռելոց՝
27 այլ կենդանեաց. և արդ դուք յոյժ մոլորեալ էք։
28 Եւ մատուցեալ մի ոմն ՚ի դպրացն՝ լսէր նոցա մինչ վի֊
ճէին. իբրև ետես թէ բարւոք ետ նոցա զպատաս֊
խանին, եհարց զնա և ասէ. Ո՞ր պատուիրան է ա֊
29 ռաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան զամե֊
նայն, լուր իսրայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է.
30 և սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քում֊
մէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց
քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առա֊
31 ջին պատուիրան։ Եւ երկրորդն նման սմին. սիրես֊
ցես զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ
32 պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն. Բարւոք
է վարդապետ. ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է
33 Աստուած, և ոչ գոյ այլ բաց ՚ի նմանէ, և սիրել
զնա յամենայն սրտէ, և յամենայն զօրութենէ, և
յամենայն մտաց, և սիրել զընկերն իբրև անձն,
34 առաւել է քան զողջակէզս և զպոհս։ Եւ տեսեալ
Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին՝
ասէ ցնա. Ոչ ես հեռի յարքայութենէն Աստուծոյ։
Եւ ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։
35 ԷԵ. Պատասխանի ետ Յիսուս և ասէ՝ մինչ ու֊
սուցանէր ՚ի տաճարին. Զիա՞րդ ասեն դպիրքն, թէ
36 Քրիստոսն որդի Դաւթի է. և ինքն Դաւիթ Հո֊
գւովն սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ
աջմէ իմմէ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան
37 ոտից քոց։ Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր

կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա։ Եւ բազում ժողո-
վուրդ լսէր նմա քաղցրութեամբ։ Եւ ասէր ուսու- 38
ցանելով 'ի վարդապետութեան իւրում. Զգոյշ
լերուք 'ի դպրաց անտի՝ որ կամին 'ի հանդերձս երևե-
լիս շրջել, զնախողջոյնս խնդրել 'ի հրապարակս, և 39
զնախաթոռս 'ի ժողովուրդս, և զգահագլուխս յընթ-
րիս. որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք 40
յերկարեալ զաղօթս, զի աւելի ևս դատաստանս
ընկալցին։ Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, 41
տեսանէր զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի
գանձանակն. և բազում մեծատունք արկին բա-
զում ինչ. եկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ 42
է նաքարակիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշա- 43
կերտսն իւր ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. զի այրին
այն տառապեալ՝ շատ արկ քան զամենեսեան որ ար-
կին 'ի գանձանակն. քանզի ամենեքին յաւելորդաց 44
իւրեանց արկին, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ զա-
մենայն ինչ զոր ունէր արկ, զկեանս իւր։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԷՋ· Եւ յելանելն նորա 'ի տաճարէ անտի, ասէ 1
ցնա մի յաշակերտաց նորա. Վարդապետ, տես որ-
պիսի են քարինքս, և որպիսի շինուածքս։ Պատաս- 2
խանի ետ նմա Յիսուս և ասէ. Տեսանե՞ս զայդ ա-
մենայն շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի
այդր քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչ 3
նստէր նա 'ի լերինն ձիթենեաց յանդիման տաճա-
րին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս և Յա-
կովբոս և Յովհաննէս և Անդրէաս. Ասա մեզ՝ ե՞րբ 4
լինիցի այդ, և զի՞նչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ
այդ ամենայն։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո- 5
սա. Զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ. զի բա- 6
զումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ

7 Քրիստոս, և զբազումս մոլորեցուսցեն։ Այլ յոր-
ժամ լսիցէք պատերազմունս, և համբաւս պատե-
րազմաց՝ մի խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չև
8 է կատարած։ Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և
թագաւորութիւն 'ի թագաւորութեան վերայ. և ե-
ղիցին շարժմունք 'ի տեղիս տեղիս, սովք և սրածու-
թիւնք և խռովութիւնք. այլ այն ամենայն սկիզբն
9 է երկանց։ Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և
'ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և
թագաւորաց կայցէք վասն իմ, 'ի վկայութիւն նոցա և
10 ամենայն հեթանոսաց, բայց նախ պարտ է աւետա
11 րանիս քարոզել։ Այլ յորժամ տանիցեն զձեզ մատ-
նել, մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք
թէ զինչ խօսիցիք, այլ որ ինչ տացի ձեզ 'ի ժամուն
յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն
12 այլ Հոգին սուրբ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի
մահ, և հայր՝ զորդի. և յարիցեն որդիք 'ի վերայ
13 հարց՝ և սպանանիցեն զնոսա. և եղիջիք ատեցեալք
յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերես-
14 ցէ՝ 'ի սպառ՝ նա կեցցէ։ Եւ յորժամ տեսանիցէք
զպղծութիւն աւերածին՝ զի կայցէ 'ի տեղւոջ՝ ուր
չիցէ արժան. որ ընթեռնու 'ի միտ առցէ։ Յայն-
ժամ որ 'ի հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս.
15 և որ 'ի վերայ տանեացն իցէ՝ մի իջցէ 'ի տուն, և
16 մի մտցէ բառնալ ինչ 'ի տանէ իւրմէ. և որ յա-
գարակին իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր։
17 Բայց վա՜յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայ-
18 նոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի ձմերանի լինիցի այն։
19 Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի ոչ
եղեն երբեք այնպիսիք իսկզբանէ արարածոց մինչև
20 ցայժմ, և մի այլ լիցին։ Եւ եթէ ոչ էր կարճեալ
Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ՝ վասն ընտրելոց իւ-
րոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրե-
լոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ։
21 Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ՝ եթէ աստ ասիկ է

Քրիստոսն կամ աւանիկ, մի՛ հաւատայցէք: Զի 22
յարիցեն սուտքրիստոսք և սուտ մարգարէք, և տա-
ցեն նշանս և արուեստս՝ առ 'ի մոլորեցուցանելոյ ե-
թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն: Բայց դուք ըզ- 23
գոյշ եղերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ
զամենայն: Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղու- 24
թեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին
ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թօթափես- 25
ցին, և զօրութիւնք յերկինս՝ շարժեսցին: Եւ յայն- 26
ժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք և զօ-
րութեամբ և փառօք բազմօք: Եւ յայնժամ առա- 27
քեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս
իւր 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկրի մինչև 'ի ծագս
երկնից: Բայց դուք 'ի թզենւոյ անտի ուսջիք զա- 28
ռակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն,
և տերև արձակիցի 'ի նմա, գիտէք թէ մերձ է ա-
մառն. Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս 29
ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս:
Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև 30
այս ամենայն եղիցի: Երկինք և երկիր անցցեն, և 31
բանք իմ ոչ անցանիցեն: Այլ վասն աւուրն այնորիկ 32
և ժամու ոչ ոք գիտէ, ոչ Հրեշտակք յերկինս և ոչ
Որդի, բայց միայն Հայր: Զգոյշ եղերուք, սկեցէք 33
և կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն ի-
ցէ: Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, թողու- 34
ցու զտուն իւր, և տացէ ծառայից իւրոց իշխանու-
թիւն, և իւրաքանչիւր զգործ իւր. և դռնապանին
պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցի: Արդ արթուն 35
կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յե-
րեկորեայ, եթէ 'ի մէջ գիշերի, եթէ 'ի հաւախօսի,
եթէ ընդ առաւօտս. գուցէ եկեալ յանկարծակի՝ 36
գտանիցէ զձեզ 'ի քուն: Բայց զոր ձեզդ ասեմ, ա- 37
մենեցուն ասեմ՝ արթուն կացէք:

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Էէ. Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց
աւուրց. խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ
2 զիա՛րդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն, բայց ա-
սէին թէ մի՛ 'ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն լինի-
3 ցի ժողովրդեանն: Եւ մինչ էր ի Բեթանիա 'ի տան
Սիմովնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշ
իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝
4 եհեղ 'ի վերայ գլխոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին
և ասէին. ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդորիկ.
5 մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեք հա-
րիւր դահեկանի, և տալ աղքատաց: Եւ զայրանային
6 նմա յոյժ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թո՛յլ տուք դմա.
զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա
7 յիս. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և
յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս. այլ
8 զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Դա զոր ու-
նէրդ՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ՝ 'ի
9 նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսցի
աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր ա-
10 րար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին: Եւ Յու-
դա սկարիովտացի մի յերկոտասանից անտի՝ գնաց
առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա:
11 Նոքա իբրև լուան՝ խնդացին, և խոստացան տալ
նմա արծաթ. և խնդրէր՝ թէ զիարդ պարապով
12 մատնեսցէ զնա: Եւ յառաջնում աւուր բաղարջա-
կերացն՝ յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա ա-
շակերտքն. Ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք՝
13 զի կերիցես զզատիկն: Եւ առաքէ երկուս յաշա-
կերտաց անտի՝ և ասէ ցնոսա. Երթա՛յք 'ի քաղաքն,
և իբրև մտանիցէք 'ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր
մի որ սափոր ջրոյ յուս ունիցի, երթա՛յք զհետ նորա.

և յոր տուն մտանիցէ, ասասջի՛ք ցտանուտէրն · վար- 14
դապետ ասէ՝ ո՞ւր են իջևանքն, ուր աշակերտօքս ու-
տեցից զզատիկն. և նա ցուսցէ ձեզ վերնատուն մի մեծ 15
զարդարեալ, անդ պատրաստեսջի՛ք մեզ։ Եւ գնացին 16
պատրաստել աշակերտքն նորա. եկին ’ի քաղաքն, և
գտին որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զզա-
տիկն։ Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկոտասանիւքն 17
հանդերձ։ Եւ իբրև բազմեցան և դեռ ուտէին, ասէ 18
Յիսուս. Ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ’ի ձէնջ մատ-
նելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս։ Եւ նոքա սկսան 19
տրտմել և ասել մի ըստ միոջէ. Մի թէ ես իցեմ,
և միւսն՝ մի թէ ես իցեմ։ Նա պատասխանի ետ և 20
ասէ ցնոսա. Մի յերկոտասանից այտի, որ մխեաց
ընդ իս ’ի սկաւառակ։ Այլ որդի մարդոյ երթայ՝ 21
որպէս և գրեալ է վասն նորա. բայց վա՜յ իցէ մար-
դոյն այնմիկ՝ յոյր ձեռս որդին մարդոյ մատնեսցի.
լաւ էր նմա՝ եթէ չէր իսկ ծնեալ մարդն այն։ Եւ 22
մինչ դեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց
և եբեկ ետ նոցա և ասէ. Առէք, այդ է մարմին իմ։
Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ ետ նոցա. և արբին ’ի 23
նմանէ ամենեքեան. և ասէ ցնոսա. Այս է արիւն 24
իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու։ Ամէն 25
ասեմ ձեզ, թէ ոչ ևս յաւելից ըմպել ’ի բերոյ որ-
թոյ, մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա նոր յար-
քայութեան Աստուծոյ։ Եւ գոհացեալ՝ ելին ’ի լեառն 26
ձիթենեաց։ (ՎԵՐՋ

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին գայթագ- 27
ղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ
հարից զհովիւն և ոչխարքն ցրուեսցին։ Այլ յետ 28
յարութեան իմոյ յառաջագոյն երթայց քան զձեզ ’ի
Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. 29
Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին, այլ ես ոչ։
Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ, թէ դու 30
իսկ յայսմ գիշերի՝ մինչ չև հաւու խօսեալ իցէ՝ ե-
րիցս ուրասցես զիս։ Իսկ Պետրոս առաւել ևս պըն- 31

դէր և ասէր. Եթէ մեռանել ևս հասանիցէ ընդ
քեզ՝ զքեզ ոչ ուրացայց։ Նոյնպէս և ամենեքեան ա-
32 սէին։ Գան ’ի դեօղն՝ որում անուն էր Գեթսեմա-
նի. և ասէ ցաշակերտսն. Նստարուք աստ՝ մինչև ես
33 յաղօթս կացից։ Եւ առնու ընդ իւր զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս, և սկսաւ տխրել և հո-
34 գալ։ Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է անձն իմ
35 մինչև ’ի մահ, մնացէք աստ և արթուն կացէք։ Եւ
մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ’ի վերայ ե-
րեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս, զի եթէ հը-
36 նար ինչ է՝ անցցէ ’ի նմանէ ժամն. և ասէ, Աբբա,
հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո զբա-
ժակս զայս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որ-
37 պէս դու կամիս։ Եւ գայ գտանէ զնոսա զի ննջէին,
և ասէ ցՊետրոս. Սիմոն, ննջե՞ս. ո՞չ կարացեր ժամ
38 մի արթուն կալ։ Արթուն կացէք և յաղօթս կացէք
զի մի մտջիք ’ի փորձութիւն. ոգիս յօժար է՝ բայց
39 մարմինս տկար։ Եւ դարձեալ չոգաւ եկաց յաղօթս,
40 և զնոյն բանս ասաց։ Դարձաւ միւսանգամ անդրէն՝
և եգիտ զնոսա ’ի քուն. քանզի էին աչք նոցա ծան-
րացեալ՝ և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի տայցեն
41 նմա։ Գայ երրորդ անգամ, և ասէ ցնոսա. Ննջե-
ցէք այսուհետև և հանգերուք, զի հասեալ է վախ-
ճան. եկն ժամ, և ահա մատնի որդի մարդոյ ’ի
42 ձեռս մեղաւորաց. ծն արէք գնասցուք, զի ահաւա-
43 սիկ մերձեցաւ որ մատնելոցն է զիս։ Եւ մինչ դեռ
նա զայն խօսէր, գայ Յուդա Իսկարիովտացի՝ մի յեր-
կոտասանից անտի, և ընդ նմա ամբոխ սուսերօք և
բրօք՝ ’ի քահանայապետից և ’ի դպրաց և ’ի ծերոց։
44 Տուեալ էր նշան մատնչին և ասէր. Ընդ որում ես
համբուրեցից՝ նա է, կալջիք զնա և տարջիք զգուշու-
45 թեամբ։ Եւ մատուցեալ վաղվաղակի ասէ ցնա.
46 Ռաբբի, ռաբբի. և համբուրեաց զնա։ Եւ նոքա
47 արկին ’ի նա ձեռս՝ և կալան զնա։ Եւ մի ոմն յայն-
ցանէ որ զնովաւ կային՝ ձգեաց սուր, և եհար ըզ-

ծառայ քահանայապետին, և 'ի բաց եհան զունկն
նորա: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա.
Իբրև 'ի վերայ աւազակի ելէք սուսերօք և բրօք՝ ու- 48
նել զիս. հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի 'ի 49
տաճարին, և ոչ կալարուք զիս. այլ զի լցցին գիրք
մարգարէից: Յայնժամ թողին զնա աշակերտքն 50
ամենեքին և փախեան: Եւ ոմն երիտասարդ զհետ 51
երթայ նորա՝ արկեալ զիւրև կտաւ մի 'ի մերկոց.
ունէին զնա երիտասարդքն, և նորա թողեալ զկը- 52
տաւն փախեաւ մերկ 'ի նոցանէ: Եւ տարան զՅի- 53
սուս առ քահանայապետն Կայիափա. և գային ընդ
նմա ամենայն քահանայապետքն և դպիրք և ծերք:
Եւ Պետրոս երթայր 'ի հեռաստանէ զհետ նորա՝ 54
մինչև 'ի ներքս իսկ 'ի գաւիթ քահանայապետին, և
նստէր ընդ սպասաւորսն և ջեռնոյր առ լուսովն: Իսկ 35
քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին
հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանի-
ցեն զնա, և ոչ գտանէին. զի բազում սուտ վկայ- 56
ութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին
վկայութիւնքն: Այլք յարուցեալ վկայէին սուտ 57
զնմանէ և ասէին, թէ մեք լուաք 'ի դմանէ զի ա- 58
սէր. ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և
զերիս աւուրս շինեցից այլ՝ առանց ձեռագործի:
Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա: 59
Ապա յարուցեալ քահանայապետն 'ի մէջ հարցա- 60
նէր զՅիսուս և ասէր. Ո՞չ ինչ տաս պատասխա-
նի, զի՞նչ դոքա զքէն վկայեն: Եւ նա լուռ եկեա 61
կայր և չտայր ինչ պատասխանի: Դարձեալ քահա-
նայապետն հարցանէր զնա կրկին անգամ և ասէր.
Դո՞ւ ես Քրիստոս որդի Աստուծոյ օրհնելոյն: Պա- 62
տասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Դու ասացեր
թէ ես եմ. բայց տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ
ընդ աջմէ զօրութեան, և եկեալ ընդ ամպս երկնից:
Եւ քահանայապետն պատառեաց վաղվաղակի զպատ- 63
մուճանս իւր և ասէ. Զի՞նչ ևս պիտոյ են մեզ վը-

64 կայք, ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն 'ի բե-
րանոյ դորա. զի՞արդ թուի ձեզ: Եւ ամենեքեան դա-
65 տապարտեցին զնա՝ թէ մահապարտ է: Եւ ոմանք
սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով ար-
կանել՝ կափել՝ և ասել. մարգարեաց մեզ, Քրիս-
տոսդ, ո՞վ է այն որ եհարն զքեզ: Եւ սպասաւորքն
66 ապտակս հանէին նմա: Եւ Պետրոս մինչդեռ էր
'ի խոնարհ 'ի գաւթին՝ գայ աղախին մի քահանայա-
67 պետին, և տեսանէ զնա զի ջեռնոյր. հայեցաւ ընդ
նա և ասէ: Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր:
68 Նա ուրացաւ և ասէ. Ոչ ճանաչեմ, և ոչ գիտեմ
զինչ դուդ ասես. և իբրև ել յարտաքին գաւիթն,
69 և հաւ խօսեցաւ: Դարձեալ ետես զնա աղախինն,
և սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն կային, թէ և
70 սա 'ի նոցանէ է. և նա դարձեալ ուրացաւ: Եւ յետ
սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային ասեն ցՊետ-
րոս. Արդարև և դու 'ի նոցանէ ես, քանզի գալիլեա-
71 ցի ես, և խօսքդ իսկ քո նման են: Եւ սկսաւ նզո-
վել՝ երդնուլ և ասել, թէ ոչ գիտեմ զայրն զորմէ
72 դուքդ ասէք. և նոյն ժամայն կրկին հաւ խօսեցաւ:
Եւ յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց ցնա Յիսուս,
թէ չև իցէ հաւու երկիցս խօսեալ՝ զի դու երիցս
ուրասցես զիս, և սկսաւ լալ:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արա-
րեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն և
դպրօք՝ և ամենայն ատեանն՝ կապեցին զՅիսուս և
2 տարան մատնեցին Պիղատոսի: Եւ հարց զնա Պի-
ղատոս և ասէ. Դո՞ւ ես թագաւորն Հրէից: Նա
3 պատասխանի ետ նմա և ասէ. Դու ասես: Եւ չա-
րախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ոչ
4 ինչ տայր պատասխանի: Իսկ Պիղատոս դարձեալ

հարցանէր զնա. Ո՞չ ինչ տաս պատասխանի, տես
քանի ամբաստանեն զքէն: Եւ Յիսուս այնուհետև 5
ոչ ինչ ետ պատասխանի, մինչև զարմանալ յոյժ
Պիղատոսի: Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք 6
զկապեալ, զոր ինքեանք խնդրէին: Եւ էր՝ որում 7
անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց
'ի խռովըն՝ այր մի սպանեալ էր: Ի ձայն բարձր ըս- 8
կըսաւ աղաղակել ամբոխն՝ և խնդրել որպէս սովոր
էր, զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն: Պատասխա- 9
նի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. կամի՞ք զի արձա-
կեցից ձեզ զարքայն Հրէից: Քանզի գիտէր՝ թէ առ 10
նախանձու մատնեցին զնա քահանայապետքն. որք և 11
զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա ըզ-
Բարաբբայն: Դարձեալ պատասխանի ետ Պիղա- 12
տոս և ասէ ցնոսա. իսկ զի՞նչ կամիք թէ արարից
զարքայն Հրէից: Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ 13
յուզեալք 'ի քահանայապետից. Ի խաչ հան զդա:
Ասէ ցնոսա Պիղատոս. Զի՞նչ ինչ չար արարեալ 14
իցէ դորա: Եւ նոքա առաւել ևս աղաղակէին և ա-
սէին. Ի խաչ հան զդա: Իսկ Պիղատոս իբրև ըզ- 15
միտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա
զԲարաբբայն, և զՅիսուս գան հարեալ ետ 'ի ձեռս
զի 'ի խաչ ելանիցէ: Եւ զինուորքն տարան զնա 'ի 16
ներքս 'ի գաւիթն՝ որ հրապարակն էր. և կոչեն
միանգամայն զամենայն զգունդն. և զգեցուցանեն 17
նմա քղամիդ կարմիր և ծիրանիս, և եդին 'ի գլուխ
նորա պսակ արարեալ 'ի փշոց. և սկսան ողջոյն տալ 18
նմա և ասել. Ողջ եր, արքայդ Հրէից: Եւ ծեծէին 19
զգլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և 'ի
ծունր իջեալ երկիրպագանէին նմա: Եւ իբրև կա- 20
տակեցին զնա, մերկացուցին զքղամիդն և զծիրա-
նիս, և զգեցուցին նմա զիւր հանդերձ. և ածին ար-
տաքս զի 'ի խաչ հանցեն զնա: Եւ ունէին պահակ 21
զՍիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր եկեալ
յագարակէ, զհայրն Աղէքսանդրի և Ռուփայ, զի

22 բարձցէ զխաչափայտն նորա: Եւ ածեն զնա 'ի Գող-
գոթա տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կառափելոյ:
23 Եւ տային նմա գինի զմռսեալ, և նա ոչ առ. և հա-
24 նին զնա 'ի խաչ: Եւ բաժանեցին զհանդերձս նո-
րա, արկեալ վիճակս 'ի վերայ՝ թէ ո՛ զինչ առնուցու:
25 Էր ժամ երրորդ, և հանին զնա 'ի խաչ: Եւ էր
26 գիր վնասու նորա գրեալ, թէ թագաւոր է Հրէից:
27 Եւ ընդ նմա հանին 'ի խաչ երկուս աւազակս, մի
28 ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նորա: Եւ լցաւ գիրն որ
29 ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ: Եւ որք անցա-
նէինն հայհոյէին զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց,
և ասէին. Վա՜հ, որ քակէիր զտաճարն՝ և զերիս
30 աւուրս շինէիր. ապրեցո զանձն քո և էջ 'ի խաչէդ:
31 Նոյնպէս և քահանայապետքն այպն արարեալ ընդ
միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին. Զայլս ապրե-
32 ցոյց զանձն ոչ կարէ ապրեցուցանել. Քրիստոսդ
արքայդ Իսրայելի, իջցէ այժմ 'ի խաչէ այտի, զի տեսա-
ցուք և հաւատասցուք դմա: Եւ որ ընդ նմա 'ի խաչն
33 ելեալ էին՝ նախատէին զնա: Եւ իբրև վեց ժամ ե-
ղև՝ խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցինն
34 ժամ: Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս
'ի ձայն մեծ և ասէ, Էլի, Էլի, լա՛մա սաբաքթա-
նի. որ թարգմանի, Աստուած իմ, Աստուած իմ,
35 ընդէ՞ր թողեր զիս: Եւ ոմանք 'ի նոցանէ որ շուրջն
կային զնովաւ՝ իբրև լուան, ասէին՝ թէ զԵղիա կար-
36 դայ: Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացա-
խով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և
ասէ. Թոյլ տուր, տեսցուք՝ գա՞յ Եղիա իջուցանել
37 զդա: Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ՝ և եհան
38 զոգի: Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յեր-
39 կուս՝ 'ի վերուստ մինչև 'ի խոնարհ: Եւ տեսեալ
հարիւրապետին որ կայր անդ՝ թէ աղաղակեաց և
եհան զոգի, ասէ. Արդարև այրս այս որդի Աստու-
40 ծոյ էր: Էին և կանայք որ հայէին 'ի հեռաստանէ.
յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ

Յակովբու փոքրկան և Յովսեայ մայրն, և Սողով-
մէ. որք յորժամ էրն 'ի Գալիլեա՝ զհետ շրջէին նո- 41
րա, և պաշտէին զնա. և այլ բազում կանայք՝ որ
ընդ նմա իսկ ելեալ էին յԵրուսաղէմ: Եւ իբրև 42
երեկոյ եղև, քանզի ուրբաթ էր՝ որ 'ի շաբաթն
մտանէր, եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր, 43
այր պարկեշտ, Նախարար, որ և ինքն իսկ ակն ու-
նէր արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ և-
մուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսու-
սի: Եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մե- 44
ռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց
զնա և ասէ, թէ արդարև այնչափ վա՞ղ մեռաւ. և 45
իբրև ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի, շնորհեաց
զմարմինն Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ, 46
և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ 'ի գե-
րեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ, և թաւալեցոյց
վէմ 'ի դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագ- 47
դաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տե-
սին զտեղին ուր եդաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ

Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ Մագդաղենա- 1
ցի և Մարիամ Յակովբայ և Սաղոմէ՝ չոգան պա-
րաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: Եւ ընդ 2
առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ ա-
րեգակն, և ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուսցէ 3
մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տե- 4
սին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն.
քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզ- 5
մանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ
կողմանէ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհու-
րեցան: Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք. զՅիսուս 6
խնդրէք զնազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ.

7 ահաւադիկ տեղին ուր եդին զնա: Այլ երթայք ա-
սացէք ցաշակերտս նորա և ցՊետրոս, եթէ ահա յա-
ռաջագոյն երթայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տե-
8 սանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ: Եւ իբրև լուան՝
ելին և փախեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հա-
րեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին:

9 Յարուցեալ Յիսուս, առաւօտուն առաջին միա-
շաբաթուն՝ երևեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ,
10 յորմէ հանեալ էր զեօթն դևն: Եւ նա երթեալ
պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչ դեռ լայ-
11 ին և սգային: Նոքա իբրև լուան թէ կենդանի է և
12 երևեցաւ նմա, ոչ հաւատացին: Յետոյ երևեցաւ
13 այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան: Նո-
քա չոգան պատմեցին այլոց, և ոչ նոքա հաւատա-
14 ցին: Յետոյ մինչ դեռ բազմեալ էին մետասանքն,
երևեցաւ նոցա, և թշնամանեաց զանհաւատութիւն
նոցա և զխստասրտութիւն. զի որ երևեցաւ նոցա
15 յարուցեալ 'ի մեռելոց, և նոքա ոչ հաւատացին: Եւ
ասէ ցնոսա. Երթայք յաշխարհ ամենայն, և քարո-
16 զեցէք զաւետարանն ամենայն արարածոց: Որ հա-
ւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դա-
17 տապարտեսցի: Նշանք՝ այնոցիկ որ հաւատանն եր-
թիցեն զհետ՝ այսոքիկ. յանուն իմ դևս հանցեն.
18 լեզուս խօսեսցին, 'ի ձեռս իւրեանց օձս բարձցեն,
և եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնա-
սեսցէ, 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկես-
19 ցեն: Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա
համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր:
20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր
Տեառն գործակցութեամբ, և զբանն հաստատէին
ամենայն նշանօք՝ որ երթայր զհետ նոցա:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է։ Նոյն ինքն Ղուկաս՝ աշակերտ էր Պետրոսի, և ձեռնադրելոց ընկերակից Պաւղոսի, և հնազանդեալ 'ի նմանէ. սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ 'ի ծննդենէն Յովհաննու, և զոր ըստ նմին. պատմէ և զմարմնանալ Փրկչին. աւետաբեր առնէ և ելանէ 'ի Յովսէփայ 'ի Դաւիթ, և 'ի Դաւթայ մինչև յԱդամ։ Պատմէ սա և զմկրտութիւնն Յովհաննու. և ընթերցեալ 'ի ժամանն զփորձելն 'ի սատանայէ, և զընտրութիւն աշակերտացն, և այլ եօթանասնիցն. եցոյց նշանս և արուեստս բազումս եղեալս. և զխորհուրդ մարմնութեան, և զհարուածն՝ որ մատնեցաւ Պիղատոսի դատաւորայ, և խաչեցաւ մարմնով. զինուորքն բաժանեցին ըզհանդերձս նորա. և որք խաչեցան յերկոցունց աւազակացն մին՝ ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ 'ի գերեզման, և յարեաւ յերրորդ աւուրն. և յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով Հրեշտակացն։

Ղուկաս՝ արուեստիւ բժիշկ գոլով, սա աշակերտեցաւ Փրկչին. և համարեալ կոչեցաւ 'ի թիւս եօթանասնիցն։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պաւղոսի. վասն որոյ ասէ՝ գովութիւն սորա յԱւետարանին։ Սա հրամանաւ Պաւղոսի գրեաց զաւետարանս իւր յԱնտիոք քաղաքի 'ի լեզու ասորի՝ զկնի եօթնուտասան ամի համբառնալոյ Փրկչին։

ԳԼՈՒԽՔ ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համր
Վասն աշխարհագրին.	Բ.	1
Վասն բացօթեայ հովուացն.	Բ.	8
Վասն Սիմէովնի.	Բ.	25
Վասն մարգարէին Աննայի.	Բ.	36
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս.	Գ.	2
Վասն որոց հարցանէին զՅովհաննէս.	Գ.	10
Վասն փորձութեանց Փրկչին.	Դ.	2
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական.	Դ.	33
Վասն զօքանչին Պետրոսի.	Դ.	38
Վասն որոց բժշկէին 'ի պէսպէս հիւանդութեանց	Դ.	40
Վասն որսոյ ձկանցն.	Ե.	4
Վասն բորոտին.	Ե.	12
Վասն անդամալուծին.	Ե.	15
Վասն Ղեւեայ մաքսաւորին.	Ե.	27
Վասն գօսացեալ ձեռինն.	Զ.	6
Վասն Առաքելոցն համարոյ.	Զ.	13
Վասն երանութեանցն.	Զ.	26
Վասն հարիւրապետին.	Է.	2
Վասն որդւոյ այրւոյն.	Է.	12
Վասն որոց առաքեցանն 'ի Յովհաննէ.	Է.	19
Վասն օծանելոյ զՏէրն մեռոնաւն.	Է.	38
Վասն առակի սերմնացանին.	Ը.	5
Վասն սաստելոյ ջրոյն.	Ը.	24
Վասն՝ որ ունէր զլէգէոնն.	Ը.	27
Վասն դստեր ժողովրդապետին.	Ը.	41
Վասն տեռատես կնոջն.	Ը.	43
Վասն առաքելոյ զերկոտասանսն.	Թ.	2
Վասն հնգից հացին եւ երկուց ձկանցն.	Թ.	13
Վասն զաշակերտսն հարցանելոյ.	Թ.	18
Վասն այլակերպութեանն Յիսուսի.	Թ.	29
Վասն լուսնահարին.	Թ.	39
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ մեծ իցէ.	Թ.	46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ.	Թ	57
Վասն երեւեցուցանելոյ զեօթանասունսն.	Ժ.	1
Վասն հարցանելոյ օրինականին.	Ժ.	25
Վասն անկելոյն 'ի հէնս աւազակաց.	Ժ.	30
Վասն Մարիամու եւ Մարթայի.	Ժ.	38
Վասն յաղօթս կալոյն.	ԺԱ.	1
Վասն խուլ դիւին.	ԺԱ.	14
Վասն՝ որ կինն ձայն եբարձ 'ի ժողովրդեանն.	ԺԱ.	27
Վասն նշան խնդրելոյն.	ԺԱ	29
Վասն՝ որ փարիսեցին կոչեաց զՏէրն.	ԺԱ..	37
Վասն վայ տալոյ օրինականացն.	ԺԱ.	46
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԲ.	1
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն.	ԺԲ.	13
Վասն պտղաբերելոյ անդոյ մեծատանն.	ԺԲ.	16
Վասն գալիլեացւոցն՝ եւ որոց 'ի Սելովամ եւ վասն թզենւոյն.	ԺԳ.	1
Վասն կարկամաւ կնոջն այսահարի.	ԺԳ.	11
Վասն առակացն.	ԺԳ.	19
Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն.	ԺԳ.	23
Վասն՝ որք ասացին յՅիսուս զՀերովդէ.	ԺԳ.	31
Վասն՝ որ ջրգողեալ էր.	ԺԴ.	2
Վասն՝ որք սիրէին զնախագահսն.	ԺԴ.	7
Վասն կոչելոյն յընթրիսն.	ԺԴ.	12
Վասն շինելոյ աշտարակին.	ԺԴ.	28
Վասն հարիւր ոչխարացն.	ԺԵ.	4
Վասն գնացելոյն յաշխարհ հեռի անառակին.	ԺԵ.	11
Վասն անիրաւ տնտեսին.	ԺԶ.	1
Վասն մեծատանն, եւ Ղազարու.	ԺԶ.	19
Վասն տասն բորոտացն.	ԺԷ.	12
Վասն անիրաւ դատաւորին.	ԺԸ.	2

Վասն փարիսեցւոյն և մաքսաւորին.	ԺԸ.	10
Վասն հարցանելոյ մեծատանն իշխանին.	ԺԸ.	18
Վասն կուրին.	ԺԸ.	35
Վասն Զաքքէոսի.	ԺԹ.	2
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ.	ԺԹ.	12
Վասն առնելոյ զտասն մնասն.	ԺԹ.	13
Վասն յաւանակին.	ԺԹ.	30
Վասն հարցանելոյ քահանայից զՏէր.	Ի.	1
Վասն առակի այգւոյն.	Ի.	9
Վասն դահեկանին.	Ի.	23
Վասն սադուկեցւոյն.	Ի.	27
Վասն՝ թէ զիա՞րդ է որդի Դաւթի Քրիստոս.	Ի.	41
Վասն երկու լումայի այրւոյն.	ԻԱ.	2
Վասն հարցման կատարածին.	ԻԱ.	7
Վասն զատկին.	ԻԲ.	2
Վասն վիճելոյն՝ թէ ո՞ մեծ իցէ.	ԻԲ.	24
Վասն խնդրելոյն սատանայի.	ԻԲ.	31
Վասն նախատանաց Հերովդի զՏէրն.	ԻԳ.	11
Վասն կոծելոյ կանանցն.	ԻԳ.	27
Վասն ապաշխարելոյ աւազակին.	ԻԳ.	40
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԻԳ.	52
Վասն Կղէոպեանցն.	ԻԴ.	13
Վասն համբառնալոյն Տեառն.	ԻԴ.	51



ՍԲ ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Քանզի բազումք յօժարեցին վերստին կարգել
զպատմութիւն վասն իրացն հաստատելոց 'ի մեզ,
2 որպէս աւանդեցին մեզ՝ որ իսկզբանէ ականատեսք
3 և սպասաւորք եղեն բանին, կամ եղև և ինձ որ
իսկզբանէ զհետ երթեալ էի ամենայնի ճշմարտու-
4 թեամբ, կարգաւ գրել քեզ, քաջդ Թէոփիլէ. զի
ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար՝ զճշմարտու-
5 թիւն: Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի Հրէաստա-
նի՝ քահանայ ոմն՝ անուն Զաքարիա 'ի դասակարգէ
Աբիայ, և կին նորա 'ի դստերաց Ահարոնի, և ա-
6 նուն նորա Եղիսաբեթ: Եւ էին արդարք երկոքին
առաջի Աստուծոյ, գնային յամենայն պատուիրանս
7 և յիրաւունս Տեառն անարատք: Եւ ոչ գոյր նոցա
որդեակ, քանզի Եղիսաբեթ ամուլ էր, և երկոքեան
8 անցեալ էին զաւուրբք իւրեանց: Եւ եղև 'ի քա-
հանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ
9 առաջի Աստուծոյ, ըստ օրինի քահանայութեանն՝
եհաս նմա խունկ արկանել՝ մտեալ 'ի տաճարն Տեառն.
10 և ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յա-
11 ղօթս արտաքոյ 'ի ժամու խնկոցն: Եւ երևեցաւ նը-

մա Հրեշտակ Տեառն, զի կայր ընդ աջմէ սեղանոյ
խնկոցն. և խռովեցաւ Զաքարիա՝ իբրև ետես, և 12
անկաւ ահ 'ի վերայ նորա: Ասէ ցնա Հրեշտակն 13
Տեառն. Մի երկնչիր, Զաքարիա, զի լուեալ եղեն
աղօթք քո, և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի,
և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս: Եւ եղիցի 14
քեզ ուրախութիւն և ցնծութիւն, և բազումք 'ի
ծննդեան նորա խնդասցեն. զի եղիցի մեծ առաջի 15
Տեառն. և գինի և օղի մի արբցէ, և Հոգւով սրբով
լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ, և զբազումս 16
յորդւոցն Իսրայելի դարձուսցէ 'ի տէր Աստուած
իւրեանց: Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով զօ- 17
րութեամբ Եղիայի՝ դարձուցանել զսիրտս հարց յոր-
դիս և զանհաւանս յիմաստութիւն արդարոց, պատ-
րաստել Տեառն ժողովուրդ կազմեալ: Եւ ասէ Զա- 18
քարիա ցՀրեշտակն. Եւ ես գիտացից զայդ. զի ես
ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրբք իւրովք: Պա- 19
տասխանի ետ Հրեշտակն և ասէ ցնա. Ես եմ Գաբ-
րիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ, և առաքեցայ խօ-
սել ընդ քեզ և աւետարանել քեզ զայդ, և ահա 20
եղիցես համր, և մի կարասցես խօսել մինչև ցօրն յո-
րում այդ լինիցի. փոխանակ զի ոչ հաւատացեր բա-
նից իմոց՝ որք լցցին 'ի ժամանակի իւրեանց: Եւ ժո- 21
ղովուրդն ակն ունէր Զաքարիայ, և զարմանային
ընդ յամելն նորա 'ի տաճարին. և իբրև ել՝ ոչ կա- 22
րէր խօսել ընդ նոսա, և իմացան՝ եթէ տեսիլ ետես
'ի տաճարին, և նա նշանացի խօսէր ընդ նոսա, և կայր
պապանձեալ: Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման 23
նորա, գնաց 'ի տուն իւր: Եւ յետ աւուրցն այնոցիկ 24
յղացաւ Եղիսաբեթ կինն նորա, և թաքուցանէր
զանձն ամիսս հինգ, և ասէր. Զինչ գործ գործեաց 25
ընդ իս Տէր, յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ
զնախատինս իմ 'ի մարդկանէ: Եւ յամսեանն վե- 26
ցերորդի առաքեցաւ Գաբրիէլ Հրեշտակ յԱստու-
ծոյ 'ի քաղաք մի գալիլեացւոց՝ որում անուն էր Նա-

27 զարեթ, առ կոյս խօսեցեալ առն՝ որում անուն էր
Յովսէփ՝ 'ի տանէ Դաւթի, և անուն կուսին Մա-
28 րիամ: Եւ եկեալ առ նա ասէ: Ուրախ լեր, բերկ-
29 րեալդ, Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովե-
ցաւ, և խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ող-
30 ջոյնս այս: Եւ ասէ ցնա Հրեշտակն. Մի երկնչիր,
31 Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ. և ահա յղա-
ջիր և ծնցես որդի, և կոչեսցես զանուն նորա Յի-
32 սուս: Նա եղիցի մեծ, և որդի Բարձրելոյ կոչես-
ցի. և տացէ նմա տէր Աստուած զաթոռ Դաւ-
թի հօրն նորա, և թագաւորեսցէ 'ի վերայ տանն
33 Յակովբայ 'ի յաւիտեանս, և թագաւորութեան
34 նորա վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցՀրեշ-
տակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ
35 գիտեմ: Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցնա.
Հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բարձ-
րելոյ հովանի լիցի 'ի վերայ քո. քանզի և որ ծնա-
նելոցն է 'ի քէն՝ սուրբ է, և որդի Աստուծոյ կոչես-
36 ցի: Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի
է 'ի ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս է
37 նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ
38 յԱստուծոյ ամենայն բան: Եւ ասէ Մարիամ. Ա-
հաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ
39 բանի քում: Եւ գնաց 'ի նմանէ Հրեշտակն: Յա-
րուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց 'ի լեռ-
40 նակողմն փութապէս 'ի քաղաքն Յուդայ, և եմուտ
'ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի:
41 Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսա-
բեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա: Եւ լցաւ
42 Եղիսաբեթ Հոգւով սրբով, և 'ի ձայն բարձր աղա-
ղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու 'ի կանայս, և
43 օրհնեալ է պտուղ որովայնի քո. և ուստի՞ է ինձ
44 այս՝ զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զի ա-
հաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ,
45 խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում. և երա-

նի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացե-
լոցս նմա 'ի Տեառնէ։ Եւ ասէ Մարիամ. Մեծա- 46
ցուսցէ անձն իմ զՏէր, և ցնծացաւ հոգի իմ յԱս- 47
տուած փրկիչ իմ. զի հայեցաւ 'ի խոնարհութիւն 48
աղախնոյ իւրոյ։ Զի ահա յայսմ հետէ երանեսցեն
ինձ ամենայն ազգք. զի արար ինձ մեծամեծս հզօրն 49
և սուրբ է անուն նորա, և ողորմութիւն նորա ազգաց 50
յազգս երկիւղածաց իւրոց։ Արար զօրութիւն բազ- 51
կաւ իւրով, ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից
իւրեանց. քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրա- 52
ցոյց զխոնարհս։ Զքաղցեալս լցոյց բարութեամբ, 53
և զմեծատունս արձակեաց ունայնս։ Պաշտպանեաց 54
իսրայէլի ծառայի իւրում, յիշել զողորմութիւնս,
որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զա- 55
ւակի նորա յաւիտեան։ Եկաց Մարիամ առ նմա 56
իբրև ամիսս երիս, և դարձաւ 'ի տուն իւր։ Եւ Ե- 57
ղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, և ծնաւ որ-
դի։ Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝ և ազգատոհմ 58
նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ
նմա, և խնդային ընդ նմա։ Եւ եղև յաւուրն ու- 59
թերորդի եկին թլփատել զմանուկն, և կոչէին զնա
յանուն հօր իւրոյ Զաքարիա։ Պատասխանի ետ 60
մայր նորա և ասէ. Ոչ, այլ կոչեսցի Յովհաննէս։ 61
Եւ ասեն ցնա. Թէ ոչ ոք է յազգի քում՝ որոյ
կոչի անուն Յովհաննէս։ Ակնարկէին հօրն նորա՝ 62
թէ զինչ կամիցի կոչել զնա։ Եւ խնդրեաց տախ- 63
տակ՝ գրեաց և ասէ. Յովհաննէս է անուն դորա։
Եւ զարմացան ամենեքին։ Եւ բացաւ բերան նորա 64
վաղվաղակի և լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱս-
տուած։ Եւ եղև ահ 'ի վերայ ամենեցուն որ լսէին 65
զայս, և որ շուրջ բնակեալն էին զնոքօք և ընդ ա-
մենայն լեռնակողմն հրէաստանի պատմէին ամենայն
բանքս այսոքիկ։ Եւ եդին ամենեքեան որ լսէին 'ի 66
սիրտս իւրեանց և ասեն. Զինչ լինիցի մանուկս այս։
Եւ ձեռն Տեառն էր ընդ նմա։ Եւ Զաքարիա հայր 67

նորա լցաւ Հոգւով սրբով, մարգարեացաւ և ասէ.
68 Օրհնեալ տէր Աստուած իսրայէլի, զի յայց ել
69 մեզ՝ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում։ Եւ
յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ Դաւթի
70 ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ
71 յաւիտենից մարգարէքն նորա էին։ փրկութիւն 'ի
թշնամեաց մերոց, և 'ի ձեռաց ամենայն ատելեաց
72 մերոց. առնել ողորմութիւն ընդ հարս մեր, և յի-
73 շել զուխտն իւր սուրբ։ Զերդումն զոր երդուաւ
74 Աբրահամու հօր մերում, տալ մեզ առանց երկիւ-
75 ղի, 'ի ձեռաց թշնամեաց փրկեալս, պաշտել զնա
սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա՝ զա-
76 մենայն աւուրս կենաց մերոց։ Եւ դու, մանուկ,
մարգարէ Բարձրելոյ կոչեսջիր. զի երթիցես առաջի
երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։
77 Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա,
78 'ի թողութիւն մեղաց նոցա։ Վասն գթութեանց
ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ
79 մեզ արեգակն 'ի բարձանց, երևել որոց 'ի խաւարի
և 'ի ստուերս մահու նստէին, ուղղել զոտս մեր 'ի
80 ճանապարհս խաղաղութեան։ Եւ մանուկն աճէր և
զօրանայր հոգւով, և էր յանապատս մինչև յօր ե-
րևելոյ նորա իսրայէլի։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման
յԱւգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ա-
2 մենայն տիեզերս. այս առաջին աշխարհագիր եղև
3 'ի դատաւորութեան ասորւոց կիւրենեայ։ Եւ եր-
թային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւ-
4 րաքանչիւր քաղաքի։ Ել և Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի
քաղաքէ Նազարեթէ 'ի հրէաստան, 'ի քաղաք
Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա

'ի տանէ և յազգէ Դաւթի, մտանել յաշխարհա֊ 5
գիր Մարեմաւ հանդերձ զոր խօսեալն էր նմա, և
էր յղի։ Եւ եղև 'ի հասանելն նոցա անդր, լցան ա֊ 6
ւուրք ծնանելոյ նորա, և ծնաւ զորդին իւր զանդրա֊ 7
նիկ, և պատեաց 'ի խանձարուրս, և եդ զնա 'ի մսուր.
զի ոչ գոյր նոցա տեղի յիջավանին։ Եւ հովիւք էին 8
'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որք պահէին ըզ֊
պահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ 9
Հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն
ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ մեծ։ Եւ ա֊ 10
սէ ցնոսա Հրեշտակն. Մի երկնչիք, զի ահաւասիկ
աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի
ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, 11
որ է օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի. և այս նշա֊ 12
նակ ձեզ, գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձա֊
րուրս, և եդեալ 'ի մսուր։ Եւ յանկարծակի եղև 13
ընդ Հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց
երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին.
փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղու֊ 14
թիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ Եւ եղև իբրև վե֊ 15
րացան 'ի նոցանէ Հրեշտակքն յերկինս, ասեն ցմի֊
մեանս հովիւքն. Եկայք երթիցուք մինչև ցԲեթ֊
ղեհէմ, և տեսցուք զինչ է բանս այս որ եղև, զոր Տէր
եցոյց մեզ։ Եւ եկին փութանակի, և գտին զՄա֊ 16
րիամ և զՅովսէփ, և զմանուկն եդեալ 'ի մսուր, և 17
ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։
Եւ ամենեքին որ լսէին՝ զարմանային վասն բանիցն 18
զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զա֊ 19
մենայն զբանս զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր
'ի սրտի իւրում։ Եւ դարձան հովիւքն՝ փառաւոր առ֊ 20
նէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի զոր
լուան և տեսին, որպէս պատմեցաւ նոցա։ Եւ իբրև 21
լցան աւուրք ութ թլփատել զնա, և կոչեցաւ անուն
նորա Յիսուս, որ կոչեցեալ էր 'ի Հրեշտակէն, մինչ
չև յղացեալ էր զնա յորովայնի։ Եւ իբրև լցան ա֊ 22

ւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի, ա֊
ծին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն.
23 որպէս և գրեալ է յօրէնս Տեառն, թէ ամենայն
արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի։
24 Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տեառն,
25 զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց։ Եւ
ահա էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սի֊
մէոն. և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն
ունէր մխիթարութեանն Իսրայելի, և Հոգի սուրբ
26 էր 'ի նմա։ Եւ էր նորա հրաման առեալ 'ի Հոգւոյն
սրբոյ՝ մի տեսանել զմահ, մինչև տեսցէ զօծեալն
27 Տեառն. և եկն Հոգւոն 'ի տաճարն։ Եւ իբրև ա֊
ծին ծնօղքն զմանուկն Յիսուս՝ առնել նոցա ըստ սո֊
28 վորութեան օրինացն 'ի վերայ նորա, և նա առ ընկա֊
լաւ զնա 'ի գիրկս իւր, օրհնեաց զԱստուած և ասէ.
29 Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում
30 'ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն
31 քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովըր֊
32 դոց։ Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս
33 ժողովրդեան քում Իսրայելի։ Եւ էին հայրն և
մայր նորա զարմացեալ 'ի վերայ բանիցն, որ խօսէին
34 զնմանէ։ Եւ օրհնեաց զնոսա Սիմէոն, և ասէ
ցՄարիամ մայրն նորա. Ահա սա կայ 'ի գլորումն և
'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայելի, և 'ի նշան
35 հակառակութեան. և ընդ քո իսկ անձն անցցէ սուր.
36 զի յայտնեսցին 'ի բազում սրտից խորհուրդք։ Եւ
անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուելի յազգէ
Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք,
կեցեալ ընդ առն ամս եօթն 'ի կուսութենէ իւրմէ.
37 և էր այրի ամաց իբրև ութսուն և չորից. որ ոչ
մեկնէր 'ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշ֊
38 տէր զցայգ և զցերեկ։ Եւ սա 'ի նմին ժամու յա֊
րուցեալ գոհանայր զՏեառնէ, և խօսէր զնմանէ
ընդ ամենեսին՝ որ ակն ունէին փրկութեանն Ե֊
39 րուսաղեմի։ Եւ իբրև կատարեցին զամենայն ըստ

օրինացն Տեառն, դարձան անդրէն 'ի Գալիլեա 'ի
քաղաքն իւրեանց Նազարեթ: Եւ մանուկն աճէր 40
և զօրանայր լի իմաստութեամբ, և շնորհք Աստու-
ծոյ էին 'ի վերայ նորա: Եւ երթային ծնօղքն նորա 41
ամի ամի յԵրուսաղէմ՝ 'ի տօն զատկին: Եւ իբրև 42
եղեն նորա ամք երկոտասան, յելանել նոցա յԵրու-
սաղէմ ըստ սովորութեան տօնին և կատարել զա- 43
ւուրսն՝ և դառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն
յԵրուսաղէմ. և ոչ գիտացին ծնօղքն նորա. կար- 44
ծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրև
աւուր միոյ ճանապարհ, և խնդրէին զնա ընդ դրա-
ցիս և ընդ ծանօթս. և իբրև ոչ գտին, դարձան անդ- 45
րէն յԵրուսաղէմ խնդրել զնա: Եւ եղև յետ ե- 46
րից աւուրց, գտին զնա 'ի տաճարին զի նստէր ընդ
վարդապետսն, լսէր 'ի նոցանէ և հարցանէր զնոսա:
Զարմանային ամենեքեան որ լսէին 'ի նմանէ՝ ընդ
իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա. և իբ- 47
րև տեսին զնա՝ սքանչացան: Եւ ասէ ցնա մայրն
իւր. Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ.
ահաւասիկ հայր քո և ես տառապեալք խնդրեաք ըզ-
քեզ: Եւ ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք զիս. ո՞չ գի- 48
տէիք եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել: Եւ 49
նոքա ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա: Եւ 50
էջ ընդ նոսա, և գնաց 'ի Նազարեթ, և էր նոցա
հնազանդ. և մայրն նորա պահէր զամենայն զբանն
'ի սրտի իւրում: Եւ Յիսուս զարգանայր իմաստու- 51
թեամբ և հասակաւ, և շնորհօք յԱստուծոյ և 'ի
մարդկանէ:

ԳԼՈՒԽ Գ

1 Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբե-
րեայ կայսեր, 'ի դատաւորութեան հրէաստանի Պի-
ղատոսի պոնտացւոյ, և 'ի չորրորդ պետութեան գալի-
լեացւոց Հերովդի, և 'ի փիլիպպոսի եղբօր նորա չոր-
րորդպետութեան իտուրացւոց և տրաքոնացւոց աշ-
խարհին, և 'ի չորրորդպետութեան Լիւսանեայ՝ ա-
2 բիլենացւոց, և 'ի քահանայապետութեան Աննայի և
կայիափայ, եղև բան Աստուծոյ 'ի վերայ Յովհաննու
3 որդւոյ Զաքարիայ յանապատի անդ: Եւ եկն յամե-
նայն կողմն Յորդանանու՝ քարոզել մկրտութիւն ա-
4 պաշխարութեան 'ի թողութիւն մեղաց: Որպէս և
գրեալ է 'ի գիրս պատգամաց Եսայայ մարգարէի.
Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք ըզ-
ճանապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա.
5 ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք
խոնարհեսցին, և եղիցին դժուարինքն 'ի դիւրինս
6 և առապարքն 'ի հարթ ճանապարհս. և տեսցէ ա-
7 մենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ: Եւ ասէր
ցժողովուրդսն ելեալս մկրտել 'ի նմանէ. Ծնունդք
իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ գա-
8 լոց է. արարէք այսուհետև պտուղս արժանիս ա-
պաշխարութեան: Եւ մի՛ սկսանիցիք ասել՝ եթէ ու-
նիմք հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ
կարող է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յարու-
9 ցանել որդիս Աբրահամու: Բայց ահաւասիկ տա-
պար առ արմին ծառոց կայ. ամենայն ծառ որ ոչ
առնէ զպտուղ բարւոք, հատանի և 'ի հուր արկա-
10 նի: Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. Իսկ
11 արդ զի՞նչ գործեսցուք: Պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Որ իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին
այնմ որ ոչ գուցէ, և որ կայցէ կերակուր՝ նոյնպէս

տրասցէ։ Եկին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա. 12
Վարդապետ, զի՞նչ գործեսցուք։ Եւ նա ասէ ցնո-
սա. Մի՛ ինչ աւելի քան զհրամայեալն ձեզ առնի- 13
ցէք։ Հարցանէին զնա և զինուորքն և ասէին. Եւ 14
մեք զի՞նչ գործեսցուք։ Ասէ ցնոսա. Մի՛ զոք խռի-
ցէք և մի՛ զոք զրպարտիցէք, շատ լիցին ձեզ թո-
շակքն ձեր։ Մինչ ակն ունէր ժողովուրդն, և խոր- 15
հէին ամենեքեան 'ի սիրտս իւրեանց վասն Յով-
հաննու՝ միթէ սա՞ իցէ Քրիստոսն. Պատասխանի 16
ետ ամենեցուն՝ և ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով.
բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական
բառնալ զկօշիկս. Նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով
և հրով։ Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում սրբել զկալ 17
իւր, և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր, և ըզ-
յարդն այրեսցէ անշէջ հրով։ Բազում և այլ ինչ մխի- 18
թարութեամբ աւետարանէր ժողովրդեանն։ Բայց 19
Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ
վասն Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ, և վասն ամենայն
չարեացն զոր գործեաց Հերովդէս, յաւել և զայն ևս
'ի վերայ ամենայնի, և եդ 'ի բանտի զՅովհաննէս։ 20
Եւ եղև 'ի մկրտել ամենայն ժողովրդեանն, և ընդ 21
Յիսուսի մկրտելն և կալ յաղօթս, բանալ երկնից,
և իջանել Հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբ- 22
րև զաղաւնի 'ի վերայ նորա, և գալ ձայն յերկնից՝
որ ասէր. Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հա-
ճեցայ։ Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից 23
սկսեալ, որպէս և կարծէր որդի Յովսեփայ, որ
Յակովբայն, որ Հեղեայն, որ Մատաթեայն, որ 24
Ղևեայն, որ Մեղքեայն, որ Յաննեայն, որ Յով-
սեփեայն, որ Մատթեայն, որ Ամովսեայն, որ Նա- 25
ւումայն, որ Եսղեայն, որ Նանգեայն, որ Մաա- 26
թեայն, որ Մատաթեայն, որ Սեմեայն, որ Յովսե-
քեայն, որ Յովդայն, որ Յոհանանայն, որ Ռեսայն, 27
որ Զօրաբաբելին, որ Սաղաթիելին, որ Ներեայն, 28
որ Մեղքեայն, որ Ադեայն, որ Կոսամայն, որ Ել-

29 մովդադայն, որ Երայն, որ Յեսուայն, որ Եղիա-
30 զարայն, որ Յովրամայն, որ Մատթայն, որ Ղևեայն,
որ Սիմէոնին, որ Յուդային, որ Յովսեփայն, որ
31 Յովնամայն, որ Եղիակիմայն, որ Մեղթեայն, որ
Մեննայն, որ Մատաթայն, որ Նաթանայն, որ
32 Դաւթին, որ Յեսսեայն, որ Ովբեդայն, որ Բօո-
33 սայն, որ Սաղմոնայն, որ Նաասոնին, որ Ամինա-
դաբայն, որ Արամայն, որ Ադմեայն, որ Առնեայն,
34 որ Եսրովմայն, որ Փարէսին, որ Յուդային, որ Յա-
կովբայն, որ Իսահակայն, որ Աբրահամու, որ Թա-
35 ռային, որ Նաքովրայն, որ Սերուքայն, որ Ռագա-
ւայն, որ Փաղեկայն, որ Եբերայն, որ Սաղային,
36 որ կայնանայն, որ Արփաքսադայն, որ Սեմայն, որ
37 Նոյին, որ Ղամէքայն, որ Մաթուսաղային, որ
Ենովքայն, որ Յարեդին, որ Մաղաղայելին, որ
38 կայնանայն, որ Ենովսայն, որ Սեթայն, որ Ադա-
մայն, որ Աստուծոյն։

ԳԼՈՒԽ Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով սրբով դարձաւ 'ի Յոր-
2 դանանէ. և վարէր հոգւովն յանապատ՝ աւուրս քա-
ռասուն փորձեալ 'ի սատանայէ. և ոչ եկեր, և ոչ
արբ յաւուրսն յայնոսիկ, և 'ի կատարելն նոցա՝ քաղ-
3 ցեաւ։ Եւ ասէ ցնա սատանայ. Եթէ որդի ես Աս-
4 տուծոյ, ասա քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս և ասէ. Գրեալ է՝ եթէ ոչ
հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աս-
5 տուծոյ։ Եւ հանեալ զնա 'ի լեառն մի բարձր՝ եցոյց
նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի 'ի վայր-
6 կեան ժամանակի. և ասէ ցնա սատանայ. Քեզ
տաց զայս ամենայն իշխանութիւն և զփառս սոցա,
7 զի ինձ տուեալ է, և ում կամիմ՝ տամ զսա. արդ
դու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ,

քեզ եղիցի ամենայն։ Պատասխանի ետ նմա Յի- 8
սուս և ասէ. Գրեալ է, երկիր պագցես տեառն Ա-
ստուծոյ քում, և զնա միայն պաշտեսցես։ Եւ ած զնա 9
յԵրուսաղէմ, և կացոյց 'ի վերայ աշտարակի տա-
ճարին, և ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ, արկ
զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է՝ եթէ Հրեշտակաց 10
իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ. զի 'ի 11
վերայ ձեռաց բարձցեն զքեզ, մի՛ երբեք հարցես ըզ-
քարի զոտն քո։ Պատասխանի ետ նմա Յիսուս և 12
ասէ. Ասացեալ է, թէ ոչ փորձեսցես զտէր Ա-
ստուած քո։ Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս 13
սատանայի, 'ի բաց եկաց 'ի նմանէ առ ժամանակ մի։
ԲԿ. Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն 14
'ի Գալիլեա, և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն
կողմանս գաւառին. և նա ուսուցանէր 'ի ժողովուրդս 15
նոցա փառաւորեալ յամենեցունց։ Եւ եկն 'ի Նա- 16
զարեթ՝ ուր սնեալն էր, և եմուտ ըստ սովորութեան
իւրում յաւուր շաբաթու 'ի ժողովուրդն։ Եւ ետուն 17
նմա գիրս զԵսայեայ մարգարէի, և յարեաւ ընթեռ-
նուլ. և իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում
գրեալն էր. Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ 18
և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց
զիս, բժշկել զբեկեալս սրտիւ, քարոզել գերեաց 19
զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրա-
ւորս 'ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն
ընդունելի։ Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն 20
և նստաւ. և ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք՝
'ի նա հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան 21
գիրքս այս յականջս ձեր։ Եւ ամենեքին վկայէին 22
նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին
'ի բերանոյ նորա, և ասէին. Ո՞չ սա է որդին Յով-
սեփայ։ Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ասիցէք առ իս 23
զառակս զայս, բժիշկ, բժշկեա զանձն քո. որչափ
լուաք՝ զոր արարեր 'ի Կափառնաում, արա և աստ 'ի
քում գաւառի։ Եւ ասէ. Ամէն. ասեմ ձեզ, թէ չէ 24

25 մարգարէ ընդունելի 'ի քաղաքի իւրում։ Արդարև
ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի
'ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցանն երկինք զերիս
ամս և զվեց ամիս, և եղև սով մեծ ընդ ամենայն
26 երկիր. և ոչ առ մի 'ի նոցանէ առաքեցաւ Եղիա,
բայց միայն 'ի Սարեփթա Սիդոնացւոց առ կին մի
27 այրի։ Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղի-
սէիւ մարգարէիւ. և ոչ ոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց
28 միայն Նէեման Ասորի։ Եւ լցան ամենեքին բարկու-
29 թեամբ 'ի ժողովրդեանն՝ իբրև լուեն զայս. և յա-
րուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին
զնա մինչև յարտևանն լերին՝ յորոյ վերայ քաղաքն
30 նոցա շինեալ էր, գահավէժ առնել զնա։ Եւ նա ան-
ցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր։
31 ԲԲ. Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գալի-
32 լեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթս։ Եւ
զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշ-
33 խանութեամբ էր բանն նորա։ Եւ էր 'ի ժողովըր-
դեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղա-
34 ղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Թուլացո, զի՞ կայ մեր
և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանե՞լ ըզ-
35 մեզ. գիտեմք զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ։ Սաս-
տեաց 'ի նա Յիսուս՝ և ասէ. Պապանձեաց և ել 'ի
դմանէ. Զգետնեաց զնա դևն 'ի միջի անդ, և ել
36 'ի նմանէ, և ոչ ինչ վնասեաց նմա։ Եւ եղեն զար-
մանալիք 'ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս
և ասէին. Զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ
և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ և ելանեն։
37 Եւ երթայր հռչակ զնմանէ յամենայն տեղիս շուր
38 զգաւառաւն։ Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի՝
39 եմուտ 'ի տուն Սիմովնի. զոքանչ Սիմովնի տագնա-
պէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա.
40 եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա.
41 և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ
արևուն մտանել՝ ամենեքին որոց էին հիւանդք 'ի

պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւ-
րաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս, և բժըշ-
կէր զնոսա։ Ելանէին և դևք 'ի բազմաց՝ աղաղա- 42
կէին և ասէին, եթէ դու ես Որդի Աստուծոյ. և
նա սաստէր և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գի-
տէին զնա թէ Քրիստոսն է։

ԲԴ. Եւ իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ տե- 43
ղի, և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչև առ
նա՝ և արգելուին զնա, զի մի գնասցէ 'ի նոցանէ։
Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց պարտ է 44
ինձ աւետարանել զարքայութիւնն Աստուծոյ, զի
յայն իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդսն 45
գալիլեացւոց։

ԳԼՈՒԽ Ե

Եւ եղև 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն և լսել 1
զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գեն-
նեսարեթայ. և ետես երկուս նաւս զի կային առ 2
ծովակին, և ձկնորսքն ելեալ 'ի նոցանէ՝ լուանային
զգործիսն։ Ել նա 'ի մի նաւուցն որ էր Սիմովնի, և 3
աղաչեաց զնա՝ սակաւիկ մի տանել 'ի ներքս 'ի ցամա-
քէն. Նստաւ և ուսուցանէր 'ի նաւէ անտի զժողո-
վուրդսն։ Եւ իբրև լռեաց 'ի խօսիցն, ասէ ցՍի- 4
մովն. Խաղացո 'ի խորն, և արկէք զգործիս ձեր
յորս։ Պատասխանի ետ Սիմովն և ասէ ցնա. վար- 5
դապետ, զամենայն գիշերս աշխատ եղեաք, և ոչ ինչ
կալաք. բայց վասն քո բանիդ՝ արկցուք զգործիսս։
Զայս իբրև արարին՝ փակեցին 'ի ներքս բազմու- 6
թիւն ձկանց յոյժ, մինչ պարպատէին ուռկանք նո-
ցա. և ակնարկէին որսակցացն 'ի միւս նաւն՝ գալ օգ- 7
նել նոցա. և եկին, և լցան երկոքին նաւքն՝ մինչև
մերձ յընկղմել նոցա։ Իբրև ետես Սիմովն Պետրոս՝ 8

անկաւ առ ծունկսն Յիսուսի և ասէ. Ի բաց գնա
9 յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես։ Քանզի ահ
պատեաց զնա, և զամենեսեան որ ընդ նմայն էին,
10 վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնեցին. Նոյնպէս և ըզ-
Յակովբոս և զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ
էին որսակիցք Սիմովնի։ Եւ ասէ ցՍիմովն Յիսուս.
Մի երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսայցես 'ի
11 կեանս։ Եւ հանեալ զնաւսն 'ի ցամաք՝ թողին զամե-
նայն, և գնացին զհետ նորա։
12 ԲԴ. Եւ եղև 'ի հասանելն նորա 'ի մի 'ի քաղա-
քացն, ահա այր մի լի բորոտութեամբ՝ իբրև ետես
զՅիսուս, անկեալ 'ի վերայ երեսաց աղաչեաց զնա
և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։
13 Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց 'ի նա և ասէ. կամիմ,
սրբեաց։ Եւ վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտու-
14 թիւնն։ Եւ նա պատուիրեաց նմա՝ մի ումեք ասել,
այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո
պատարագ վասն սրբութեան քոյ, որպէս և հրամա-
15 յեաց Մովսէս՝ 'ի վկայութիւն նոցա։ Եւ յորդէր ա-
ռաւել բանն զնմանէ, և ժողովէին ժողովուրդք բա-
զումք լսել և բժշկել 'ի հիւանդութենէ իւրեանց։
16 Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յա-
ղօթս։
17 ԲԵ. Եւ եղև 'ի միում աւուրց՝ և ինքն ուսուցա-
նէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նըս-
տէին. որք ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գա-
լիլեացւոց և Հրէաստանի և Երուսաղեմի. և զօրու-
18 թիւն Տեառն էր 'ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք
բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ. և
19 խնդրէին զնա մուծանել 'ի ներքս, և դնել առաջի
նորա. և իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն
զնա 'ի ներքս՝ վասն ամբոխին, ելին 'ի տանիս, և 'ի
ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հան-
20 դերձ 'ի մէջ առաջի Յիսուսի։ Եւ տեսեալ զհա-
ւատսն նոցա՝ ասէ ցնա. Այր դու, թողեալ լիցին

քեզ մեղք քո։ Սկսան խորհել դպիրքն և փարիսե- 21
ցիք և ասեն. Ո՞վ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս.
ո՞վ կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած։
Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատաս- 22
խանի ետ և ասէ ցնոսա. Զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր։
զի՞նչ դիւրագոյն է, ասե՞լ՝ թողեա՛լ լիցին քեզ մեղք 23
քո, եթէ ասել՝ արի և գնա։ Այլ զի գիտասջիք՝ 24
եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թո-
ղուլ զմեղս, — ասէ ցանդամալոյծն —, քեզ ասեմ՝
արի ա՛ռ զմահիճս քո. և երթ 'ի տուն քո։ Եւ ա- 25
ռժամայն յարուցեալ առաջի ամենեցուն, ա՛ռ զիւրև
յորոյ վերայ անկեալն դնէր, գնաց 'ի տուն իւր, և
փառաւոր առնէր զԱստուած։ Զարմանք կալան 26
զամենեսին, և փառաւոր առնէին զԱստուած. լի ե-
ղեն ահիւ և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան։

ԲԶ. Եւ յետ այնորիկ ել անտի, և ետես մաքսա- 27
ւոր մի՝ որում անուն էր Ղևի, զի նստէր 'ի մաքսա-
ւորութեան. և ասէ ցնա. Եկ զկնի իմ։ Եւ թո- 28
ղեալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա։ Եւ արար 29
ընդունելութիւն մեծ նմա Ղևի 'ի տան իւրում. և
էր ժողովուրդ բազում մաքսաւորաց, և այլոց որ էին
բազմեալ ընդ նոսա։ Եւ տրտնջէին փարիսեցիքն և 30
դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ և ա-
սէին. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ու-
տէք և ըմպէք։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ 31
ցնոսա. Ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւան-
դաց. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յա- 32
պաշխարութիւն։ Եւ նոքա ասեն ցնա. Ընդէ՞ր աշա- 33
կերտքն Յովհաննու պահեն ստէպ և խնդրուածս
առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն, և քոյքդ ուտեն և
ըմպեն։ Եւ նա ասէ ցնոսա. Միթէ կարող էք ման- 34
կանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրա-
ման տալ պահել. եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 35
'ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայ-
նոսիկ։ Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկա- 36

նէ 'ի նոր հանդերձէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. ա-
պա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չմիաբա-
37 նի կապերտն որ 'ի նորոյն։ Եւ ոչ ոք արկանէ գինի
նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին
նոր զտիկսն հինս. ինքն հեղու, և տիկքն կորնչին.
38 այլ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է, և երկոքին
39 պահին։ Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն.
քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է։

ԳԼՈՒԽ Զ

1 ԲԷ. Եւ եղև 'ի շաբաթու յերկրորդում առաջ-
նոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն
2 նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափ և ուտէին։ Եւ
ոմանք 'ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. Զի՞նչ գոր-
3 ծէք՝ զոր չէ օրէն 'ի շաբաթու։ Պատասխանի ետ
նոցա Յիսուս և ասէ. Զիցէ՞ ընթերցեալ ձեր զոր
արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն և որ ընդ
4 նմայն էին. զիա՞րդ եմուտ նա 'ի տունն Աստուծոյ,
և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ
որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել,
5 բայց միայն քահանայապետիցն։ Եւ ասէ ցնոսա. Տէր
6 է որդի մարդոյ և շաբաթու. Եւ եղև 'ի միւսում շա-
բաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն և ուսուցանել.
7 և էր անդ այր մի, և ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ
սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ 'ի շաբա-
թուն բժշկիցէ, զի գտանիցեն շարախօսութիւն զնմա-
8 նէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա։ ասէ ցայրն՝
որոյ ձեռնն գօսացեալ էր. Արի անց 'ի մէջ։ Եւ նա
9 յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից ինչ
զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ առ-
նել՝ եթէ չար գործել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ
10 կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք
զայրագին, ասէ ցնա. Ձգեա զձեռն քո։ Եւ նա ձը-
գեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։

Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ մի֊ 11
մեանս, թէ զինչ առնիցեն Յիսուսի։
Գ.Կ. Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի 12
լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն 'ի գլուխ
յաղօթսն Աստուծոյ։ Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց 13
զաշակերտսն իւր, և ընտրեաց 'ի նոցանէ երկոտա֊
սանս, զորս և Առաքեալս անուանեաց. զՍիմոն՝ զոր 14
և Պետրոսն անուանեաց, և զԱնդրէաս եղբայր նո֊
րին, և զՅակովբոս և զՅովհաննէս, և զՓիլիպպոս
և զԲարթողոմէոս և զՄատթէոս և զԹովմաս, և 15
զՅակովբոս Ալփեայ, և զՍիմոն՝ զկոչեցեալն նա֊
խանձայոյզ, և զՅուդա Յակովբայ, և զՅուդա սկա֊ 16
րիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ նոքօք 17
հանդերձ 'ի տեղի մի տափարակ, և ժողով աշակեր֊
տացն նորա, և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յա֊
մենայն հրէաստանէ և յԵրուսաղեմէ, և յայնմ
կողմանէ, և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի, որ 18
եկին լսել 'ի նմանէ, և բժշկել 'ի հիւանդութենէ
իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ 19
ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա, զի
զօրութիւն բազում ելանէր 'ի նմանէ և բժշկէր զա֊
մենեսին։ Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր 20
և ասէ. Երանի՜ աղքատացդ հոգւով, զի ձեր է ար֊ 21
քայութիւն Աստուծոյ։ Երանի՜ որ քաղցեալ են այ֊
ժըմ, զի յագեսցին։ Երանի՜ որ լան այժմ, զի ծիծա֊
ղեսցին։ Երանի է ձեզ՝ յորժամ ատիցեն զձեզ մար֊ 22
դիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և
հանիցեն անուն չար զձէնջ վասն որդւոյ մարդոյ։ Ու֊ 23
րախ լինիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ահա
վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին օրինակի
առնէին մարգարէիցն հարք իւրեանց։ Բայց վա՜յ ձեզ 24
մեծատանցդ, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։
Վա՜յ ձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վա՜յ 25
ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և լայցէք։
Վա՜յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն 26

մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք
27 նոցա։ Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. սիրեցէք զթշնա֊
28 միս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. օրհնեցէք
զանիծիչս ձեր, աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձե֊
29 րոց։ Որ հարկանէ զծնօտ քո՝ մատո նմա և զմիւսն,
և որ հանէ 'ի քէն զբաճկոն քո՝ մի՛ արգելուր 'ի նմա֊
30 նէ և զշապիկս. ամենայնի որ խնդրէ 'ի քէն՝ տուր,
31 և զոր ինչ հանէ ոք 'ի քէն՝ մի պահանջեր։ Եւ որ֊
պէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս ա֊
32 րասջիք և դուք նոցա։ Եւ եթէ սիրէք դուք զսիրե֊
լիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր. զի և մեղաւորք սիրեն
33 զսիրելիս իւրեանց. և եթէ բարի առնէք բարերա֊
րաց ձերոց, ո՞ր շնորհ է ձեր. զի և մեղաւորք զնոյն
34 գործեն։ Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն
ունիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր. քանզի և մեղաւորք
մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն։
35 Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ա֊
տելեաց ձերոց, և տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք
առնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք
որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր է 'ի վերայ չարաց
36 և ապաշնորհաց։ Եղերուք գթածք՝ որպէս և հայրն
37 ձեր գթած է։ Մի՛ դատիք՝ և ոչ դատիցիք, մի՛
պատժէք՝ և ոչ պատժիցիք, արձակէք՝ և արձա֊
38 կիցիք. տուք՝ և տացի ձեզ, չափ բարւոք թաթա֊
ղուն շարժուն զեղուն տացեն 'ի գոգս ձեր. նովին
39 չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ։ Ասաց և առակ
մի առ նոսա։ Միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնոր֊
դել, ո՞չ ապաքէն երկոքին 'ի խորխորատ անկանիցին։
40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր, ամենայն
41 կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր։ Զի՞
տեսանես զշիւղ յական եղբօր քոյ, և 'ի քում ական
42 զգերանդ՝ ոչ նշմարես։ կամ զիա՞րդ կարես ասել
ցեղբայր քո. եղբայր, թող հանից զշիւղդ յականէ
քումմէ, և դու 'ի քում ական զգերանդ ոչ տեսա֊
նես։ կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քում֊

մէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղ-
բօր քոյ։ Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, 43
և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի, զի 44
իւրաքանչիւր ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Զի ոչ
եթէ 'ի փշոց քաղեն թուզ, և ոչ 'ի մորենւոյ կթեն
խաղող։ Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւրոյ 45
բղխէ զբարի, և մարդ չար՝ 'ի չարէն բղխէ զչար.
քանզի 'ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա։
Զի՞ կոչէք զիս Տէր՝ Տէր, և զոր ասեմն ոչ առնէք։ 46
Ամենայն որ գայ առ իս և լսէ զբանս իմ և առնէ 47
զնոսա, ցուցից ձեզ ում նման է։ Նման է առն, որ 48
շինիցէ տուն. որ փորեաց և խորեաց, և եդ հիմն 'ի
վերայ վիմի. 'ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ ըզ-
տունն, և ոչ կարաց շարժել զնա, զի հաստատեալ էր
հիմն 'ի վերայ վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ 49
առնէ, նման է առն որ շինիցէ տուն 'ի վերայ հողոյ
առանց հիման. զոր բախեաց գետ, և վաղվաղակի
անկաւ, և եղև կործանումն տանն այնորիկ մեծ։

ԳԼՈՒԽ Է

ԳԲ. Եւ իբրև կատարեաց զամենայն բանս իւր 'ի 1
լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի կափառնաում։ Հա- 2
րիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ
մերձ էր 'ի վախճանել, որ էր նմա պատուական։ Իբ-
րև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից՝ 3
աղաչել զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա։
Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ և 4
ասէին, թէ արժանի է որում զշնորհս զայս առնես.
զի սիրէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շինեաց 5
մեզ։ Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչ ինչ կա- 6
րի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն
բարեկամս և ասէ ցնա. Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր,
զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես.

7 վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ
8 գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ. քան-
զի և ես այր մի եմ՝ կարգեալ ընդ իշխանութեամբ,
ունիմ ընդ ինև զինուորս. և ասեմ սմա՝ երթ, և
երթայ. և այլում՝ թէ եկ, և գայ, և ծառայի ի-
9 մում՝ թէ արա զայս, և առնէ։ Եւ իբրև լուաւ զայս
Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ եր-
թային զհետ նորա և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ
10 և ոչ յիսրայէլի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան
անդրէն պատգամաւորքն 'ի տուն, և գտին զծա-
ռայն հիւանդ՝ բժշկեալ։
11 ԳԳ. Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի,
որում անուն էր Նային. երթային ընդ նմա և ա-
12 շակերտքն նորա, և ժողովուրդ բազում։ Իբրև մերձ
եղև 'ի դուռն քաղաքին, և ահա հանէր մեռեալ
մի, որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի, և ժո-
13 ղովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրև ե-
տես զնա Տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ, Մի՛ լար։
14 Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն, և որ բար-
ձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ. Պատանի
15 դու, քեզ ասեմ, արի։ կանգնեցաւ և նստաւ մե-
16 ռեալն, և սկսաւ խօսել։ Եւ ետ զնա ցմայր իւր. և
ահ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին զԱս-
տուած՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարու-
ցեալ է 'ի միջի մերում, և թէ այց արար Աստուած
17 ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել զրոյցս
այս ընդ ամենայն հրէաստան վասն նորա, և ընդ ա-
18 մենայն կողմանս աշխարհին։ Եւ պատմեցին Յով-
հաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։
19 Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտաց իւ-
րոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. դո՞ւ ես
20 որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Եւ ե-
կեալ առ նա արքն՝ ասեն, Յովհաննէս Մկրտիչ ա-
ռաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ. դո՞ւ ես որ գալոցն
21 ես, եթէ այլում ակն կալցուք. Եւ 'ի նմին ժամու-

բժշկեաց զբազումս 'ի հիւանդութեանց և 'ի հա-
րուածոց և յայսոց չարաց, և կուրաց բազմաց շնոր-
հեաց տեսանել։ Պատասխանի ետ նոցա և ասէ. 22
Երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և
լուայք. զի կոյրք տեսանեն և կաղք գնան, բորոտք
սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք 23
աւետարանին. և երանի իցէ՝ որ ոչ գայթագղեսցէ
յիս։ Եւ իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, 24
սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու.
Զի՞նչ ելէք յանապատն տեսանել. եղէգն շարժուն
'ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. այր 'ի հան- 25
դերձս փափկութեան զգեցեալ. ահաւանիկ՝ որ 'ի
հանդերձս երևելիս և 'ի փափկութեան են՝ յարքու-
նիս են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ. այո, 26
ասեմ ձեզ՝ առաւել ևս քան զմարգարէ. զի սա է՝ 27
վասն որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ զհրեշտակ
իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհ քո ա-
ռաջի քո։ Ասեմ ձեզ, մեծ 'ի ծնունդս կանանց 28
մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է, բայց փոքրիկն
յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա։ Եւ ամե- 29
նայն ժողովուրդն իբրև լուաւ՝ և մաքսաւորքն, արդա-
րացուցին զԱստուած, զի մկրտեցան 'ի մկրտութիւնն
Յովհաննու։ Իսկ փարիսեցիքն և օրինականքն զխոր- 30
հուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի
ոչ մկրտեցան 'ի նմանէ։ Արդ ո՞ւմ նմանեցուցից ըզ- 31
մարդիկ ազգիս այսորիկ, և ո՞ւմ իցեն նմանօղք. Նը- 32
ման են մանկտւոյ որ 'ի հրապարակս նստիցին, կար-
դայցեն զմիմեանս և ասիցեն. փող հարաք ձեզ՝ և ոչ
կաքաւեցէք, ողբացաք՝ և ոչ լացէք։ Եկն Յովհան- 33
նէս Մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասէիք՝ դև գոյ
'ի նմա։ Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասէք. 34
ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւո-
րաց և մեղաւորաց։ Եւ արդարացաւ իմաստութիւն 35
յորդւոց իւրոց։

ԳԴ. Աղաչէր ոմն զնա 'ի փարիսեցւոցն՝ զի կերի- 36

ցէ ճաշ ընդ նմա. և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝
37 բազմեցաւ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր.
իբրև գիտաց թէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն,
38 բերեալ շիշ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ ոտս
նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նո-
րա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր. և համբուրէր զոտս
39 նորա, և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն
որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւր. Սա թէ մար-
գարէ ոք էր, ապա գիտէր թէ ով և որպիսի ոք կին
40 մերձենայ 'ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնա. Սիմովն, ունիմ ինչ ասել
քեզ։ Եւ նա ասէ. Ասա, վարդապետ։ Եւ ասէ.
41 Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մին
պարտէր հինգ հարիւր դահեկան, և միւսն յիսուն.
42 և իբրև ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունց շնոր-
43 հեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ
Սիմովն. Ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն
44 շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա. Ուղիղ դատեցար։ Եւ
դարձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. Տեսանես
զայս կին. մտի 'ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ե-
տուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ,
45 և հերով իւրով ջնջեաց. համբոյր մի դու ոչ ե-
տուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ
46 դադարեաց 'ի համբուրելոյ զոտս իմ. իւղով զգլուխ
47 իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ։ Վասն որոյ ա-
սեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք,
զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սի-
48 րէ, և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա. Թո-
49 ղեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան որ բազմեալն
էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝
50 որ զմեղս թողու։ Եւ նա ասէ ցկինն. Հաւատք քո
կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։

ԳԼՈՒԽ Ը

ԳԵ. Եւ եղեւ յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ քա- 1
ղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւետարանէր զար-
քայութիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ նմա, և 2
կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց և 'ի
հիւանդութեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենա-
ցի, յորմէ եօթն դեւ ելեալ էր. Յովհաննա կին Քու- 3
զայ՝ հազարապետին Հերովդի, և Շուշան, և այլք
բազումք որք պաշտէին զնա յընչից իւրեանց: Եւ 'ի 4
ժողովել բազում ժողովրդոց, և ըստ քաղաքաց քա-
ղաքաց եկելոցն առ նա, ասէ առակաւ. Ել սերմա- 5
նացան սերմանել զսերմանիս իւր. և 'ի սերմանելն
իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ և եղեւ կո-
խան, և թռչունք երկնից կերան զնա: Եւ այլն ան- 6
կաւ յապառաժի, և ընդ բուսանելն՝ չորացաւ առ 'ի
չգոյէ հիւթոյ: Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ընդ 7
նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա: Եւ այլն ան- 8
կաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ արար պտ-
ուղ հարիւրապատիկ: Զայս իբրև խօսեցաւ, ասէ.
Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Հարցանէին զնա 9
աշակերտքն՝ թէ զի՞նչ իցէ առակն: Եւ նա ասէ. 10
Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան
Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն՝ և մի
տեսցեն, և լուիցեն՝ և մի իմասցին: Բայց առակն 11
այս ինչ է. սերմն՝ բանն Աստուծոյ է. և որք առ ճա- 12
նապարհաւն, այնոքիկ են որ լսեն, և ապա գայ սա-
տանայ՝ հանէ զբան 'ի սրտից նոցա, զի մի հաւա-
տասցեն և ապրեսցին: Եւ որք յապառաժին, որք 13
յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, և
արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւա-

14 տան, և 'ի ժամանակի փորձութեան հեռանան: Իսկ
որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսեն ըզ-
բանն՝ և 'ի հոգս և 'ի մեծութիւն և 'ի ցանկութիւն
աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն և անպտուղ լինին:
15 Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուար-
թագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտ-
16 ուղ համբերութեամբ: Ոչ ոք լուցանէ ճրագ և
թաքուցանէ ընդ կարասեաւ, կամ դնէ ընդ մահճօք
այլ 'ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս
17 տեսցեն: Զի ոչ ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի, և ոչ
18 գաղտնի՝ որ ոչ ծանիցի և եկեսցէ 'ի յայտ: Տեսէք
այսուհետեւ զիարդ լսէքդ. զի որ ունիցի՝ տացի նմա,
և որ ոչն ունիցի՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի
19 'ի նմանէ: Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ
20 կարէին հասանել 'ի նա վասն բազմութեանն: Ազդ
եղեւ նմա և ասեն. Մայր քո և եղբարք քո կան ար-
21 տաքոյ՝ և կամին զքեզ տեսանել: Եւ ասէ ցնոսա.
Մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն Աս-
տուծոյ լսեն և առնեն:
22 ԳԶ. Եւ եղեւ 'ի միում յաւուրց՝ ինքն ել 'ի նաւ
և աշակերտքն նորա, և ասէ ցնոսա. Եկայք անց-
23 ցուք յայնկոյս ծովակիս: Եւ գնացին: Եւ մինչ դեռ
նաւէին՝ 'ի քուն եմուտ, և էջ մրրիկ հողմոյ 'ի ծո-
24 վակն՝ և ուռնոյր, և տագնապէին: Մատուցեալ զար-
թուցին զնա և ասեն. Վարդապետ վարդապետ, կո-
րընչիմք աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հող-
մոյն և խռովութեան ջրոցն, և հանդարտեցին և եղեւ
25 խաղաղութիւն: Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք ձեր:
Եւ զահի հարեալ զարմացան, և ասէին ցմիմեանս,
Ո՞վ արդեօք իցէ սա՝ զի և հողմոց և ջրոց հրաման տայ,
26 և հնազանդին սմա: Եւ նաւեցին իջին յաշխարհն
գերգեսացւոց, որ է յայն կոյս հանդէպ Գալիլեայ:
27 Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք՝ պատահեաց այր մի
'ի քաղաքէն, յորում էին դեւք, և բազում ժամա-
նակս չէր հանդերձ զգեցեալ և ոչ 'ի տան բնակեալ,

այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղա- 28
կեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն.
Զի՞ կայ իմ և քո, Յիսուս՝ որդի Աստուծոյ բարձ-
րելոյ, աղաչեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս։ Քանզի հը- 29
րաման տայր այսոյն պղծոյ՝ ելանել 'ի մարդոյ անտի.
զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և
կապէր 'ի շղթայս և պահէր յերկաթս, և խզէր ըզ-
կապանսն, և վարէր 'ի դիւէն յանապատ. Եհարց 30
ցնա Յիսուս և ասէ. Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա
ասէ. Լեգէոն։ Զի դևք բազումք մտեալ էին 'ի
նա. և աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա եր- 31
թալ յանդունդս։ Եւ էր անդ երամակ մի խոզից 32
բազմաց արօտական 'ի լերինն. և աղաչեցին զնա՝ զի
հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա. և հրամայեաց
նոցա։ Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն. 33
և դիմեաց երամակն 'ի գահէ անտի 'ի ծովակն՝
և հեղձաւ։ Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ ե- 34
ղեն՝ փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագա-
րակսն։ Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և եկին 35
առ Յիսուս, և գտին զայրն ուստի դևքն ելեալ էին,
զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի,
և երկեան։ Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ 36
զիա՛րդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա ամե- 37
նայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝
գնալ 'ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ տագ-
նապէին. և նա մտեալ 'ի նաւ, դարձաւ անդրէն։ Ա- 38
ղաչէր զնա այրն ուստի դևքն ելեալ էին՝ շրջել ընդ
նմա. արձակեաց զնա և ասէ. Դարձ 'ի տուն քո, և 39
պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած։ Գը-
նաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յի-
սուս։ Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ 40
զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին
նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և 41
նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսու-
սի, աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա. զի դուստր 42

միամօր էր նորա, ամաց իբրև երկոտասանից, և էր
մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նե-
43 ղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան
յամաց երկոտասանից, (որ 'ի բժիշկս ծախեալ էր
զամենայն ինչս իւր). որում ոչ էր լեալ հը-
44 նար յումեքէ բժշկել։ Մատուցեալ յետոյ մերձե-
ցաւ 'ի քղանցս հանդերձի նորա, և նոյն ժամայն ե-
45 կաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. Ո՞վ
է որ մերձեցաւն յիս։ Իբրև ամենեքեան ուրանային,
ասէ Պետրոս և որ ընդ նմա էին. Վարդապետ, ժո-
46 ղովուրդքդ պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս.
Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրու-
47 թիւն ել յինէն։ Իբրև ետես կինն՝ թէ ոչ ծածկե-
ցաւ 'ի նմանէ, եկն դողալով անկաւ առաջի նորա,
թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա՝ պատմեաց ա-
ռաջի ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս բժշկե-
48 ցաւ առժամայն, Եւ ասէ. Քաջալերեաց, դուստր,
հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։
49 Եւ մինչ դեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողո-
վրդապետին և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛
50 ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս իբրև լուաւ,
պատասխանի ետ նմա և ասէ. Մի՛ երկնչիր, միայն
51 հաւատա՝ և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն, ոչ զոք
եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս
և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։
52 Լային ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ. Մի՛
53 լայք՝ զի չէ մեռեալ, այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առ-
54 նէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ
55 զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա, բար-
56 բառեցաւ և ասէ. Արի կաց, մանուկ դու։ Եւ դար-
ձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի. և հրա-
57 մայեաց տալ նմա ուտել։ Եւ զարմացան ծնողքն նո-
րա. և նա պատուիրէր՝ մի՛ ումեք ասել որ ինչ եղեն։

ԳԼՈՒԽ Թ

Գէ. Եւ կոչեցեալ զերկոտասան Առաքեալսն՝ ետ 1
նոցա զօրութիւն և իշխանութիւն 'ի վերայ ամե-
նայն դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս: Եւ ա- 2
ռաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ
և բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. Մի ինչ 3
բառնայք 'ի ճանապարհ, մի գաւազան և մի մա-
խաղ, մի հաց և մի արծաթ, մի երկուս հանդերձս
ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք, և 4
անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յոր- 5
ժամ ելանիցէք 'ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից
ձերոց թօթափեսջիք 'ի վկայութիւն նոցա, Եւ ե- 6
լեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս, աւետարա-
նէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս: Լուաւ Հե- 7
րովդէս չորրորդապետ զգործսն ամենայն, և զարմա-
նայր վասն ասելոյն յոմանց, եթէ Յովհաննէս յա- 8
րեաւ 'ի մեռելոց, և յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ,
և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ:
Ասէ Հերովդէս. ԶՅովհաննէս՝ ես գլխատեցի. 9
իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայսպիսի իրս լսեմ: Եւ խըն-
դրէր տեսանել զնա: Դարձան Առաքեալքն, և պատ- 10
մեցին նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնո-
սա խուսեաց առանձինն 'ի տեղի անապատ քաղաքի
միոյ, որում անուն էր Բեթսայիդա: Եւ ժողո- 11
վուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նորա. և ըն-
կալեալ զնոսա խօսէր ընդ նոսա վասն արքայութեան
Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:
Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասանքն 12
և ասեն ցնա. Արձակեա զժողովուրդդ, զի երթեալ
շուրջ 'ի գեօղսն և յագարակս հանգիցեն, և գտցեն
կերակուր. զի աստ յանապատ տեղւոջ եմք: Ասէ 13

ցնոսա. Դուք տուք դոցա ուտել: Եւ նոքա ասեն.
Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս
ձկունս. բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական
14 ժողովրդեանդ կերակուր: Քանզի էին արք իբրև
հինգ հազար: Ասէ ցաշակերտսն. Բազմեցուցէք ըզ-
15 դոսա դասս դասս, յիսուն յիսուն: Եւ արարին այն-
16 պէս, և բազմեցուցին զամենեսեան: Եւ առեալ ըզ-
հինգ նկանակսն և զերկուս ձկունսն, հայեցաւ յեր-
կինս՝ օրհնեաց, և եբեկ և տայր ցաշակերտսն ար-
17 կանել ժողովրդեանն: Կերան և յագեցան ամենե-
քեան, և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան
սակառի:
18 Գկ. Եւ եղև 'ի կալն նորա յաղօթս առանձինն՝
էին ընդ նմա և աշակերտքն նորա. եհարց զնոսա և
ասէ. Զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ:
19 Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. ԶՅովհան-
նէս Մկրտիչ, և այլք՝ զԵղիա, իսկ այլք՝ թէ մար-
20 գարէ ոք յառաջնոցն յարեաւ: Ասէ ցնոսա. Դուք
զո՞վ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ
21 Պետրոս և ասէ. ԶՔրիստոսն Աստուծոյ: Նա սաս-
տեաց 'ի նոսա, և պատուիրեաց մի ումեք ասել զայն.
22 և ասէ, թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչա-
րել, և անարգել 'ի քահանայապետից և 'ի ծերոց և
23 'ի դպրաց, և սպանանել և յերիր աւուր յառնել: Եւ
ասէր առ ամենեսին. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ու-
րասցի զանձն, և առցէ զխաչ իւր հանապազ, և ե-
24 կեսցէ զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցու-
ցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն
25 իմ՝ կեցուսցէ զնա: Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ
զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ
26 տուժեսցի: Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս
իմ, զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ
գայցէ փառօք իւրովք և Հօր և Հրեշտակաց սրբոց:
27 Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք 'ի դոցա-
նէ որ այդր կան, որք մի ճաշակեսցեն զմահ, մինչև

տեսցեն զարքայութիւն Աստուծոյ ։ Եւ եղև յետ 28
այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել 'ի լեառն կալ յա-
ղօթս ։ Եւ 'ի կալն նմա յաղօթս՝ եղև տեսիլ երե- 29
սաց նորա այլակերպ, և փոխեցաւ հանդերձ նորա
և եղև սպիտակ փայլուն. և ահա արք երկու խօ- 30
սէին ընդ նմա, որ էին Մովսէս և Եղիա, երևեալ 31
փառօք. և ասէին զելիցն նորա զոր կատարելոց էր յե-
րուսաղէմ։ Իսկ Պետրոս և որ ընդ նմայն էին՝ ծան- 32
րացեալք 'ի քնոյ, զարթեան տեսին զփառսն նորա և
զերկուս արսն որ կային առ նմա ։ Եւ եղև 'ի մեկ- 33
նելն նոցա 'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. Վար-
դապետ, բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք ե-
րիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսիսի և մի Ե-
ղիայի ։ Եւ ոչ գիտէր զինչ խօսէր ։ Եւ իբրև զայս 34
ասաց, եկն ամպ և հովանի եղև 'ի վերայ նոցա. և
երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն ։ Ձայն եղև 35
յամպոյն և ասէ. Դա է որդի իմ ընտրեալ, դմա
լուարուք ։ Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս 36
միայն. և ինքեանք լռեցին, և ոչ ումեք պատմեցին
յաւուրսն յայնոսիկ և ոչ ինչ յորոց տեսինն ։
ԴԲ. Եւ եղև 'ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա 'ի 37
լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բա-
զում։ Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղա- 38
կեաց և ասէ. Վարդապետ, աղաչեմ զքեզ՝ հայեաց
յորդի իմ, զի միամօր է ինձ. և ահա այս հարկանի 39
'ի նմա, և յանկարծ գոչէ, և զարկուցանէ զնա և
թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ
մեկնի 'ի նմանէ՝ խորտակեալ զնա. և աղաչեցի զա- 40
շակերտսն քո զի հանցեն զնա, և ոչ կարացին ։ Պա- 41
տասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ
և թիւր, մինչև յերբ եղէց ընդ ձեզ և անսայցեմ
ձեզ. մատո այսր զորդին քո ։ Եւ մինչ դեռ մատչէր, 42
զարկոյց զնա դևն և շարժեաց ։ Սաստեաց Յիսուս 43
այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն, և ետ զնա ցհայր

44 իւր ։ Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծա-
մեծացն Աստուծոյ ։ Եւ 'ի զարմանալն ամենեցուն 'ի
վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր.
Դիք դուք 'ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի
45 մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան ։ Եւ նոքա ոչ
գիտէին զբանն, և էր ծածկեալ 'ի նոցանէ զի մի գի-
տասցեն. և երկնչէին հարցանել ցնա վասն բանի
46 այնորիկ ։ Եմուտ խորհուրդ 'ի նոսա, թէ ո՛ արդեօք
47 մեծ իցէ 'ի նոցանէ ։ Յիսուս իբրև ծանեաւ զխոր-
հուրդս սրտից նոցա, ա՛ռ մանուկ մի՝ կացոյց 'ի մէջ
48 նոցա առ իւր, և ասէ ցնոսա. Որ ոք ընկալցի զմա-
նուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի. և որ զիս ըն-
դունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է
յամենեսին 'ի ձեզ՝ նա եղիցի մեծ ։
49 ԴԳ. Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. Վար-
դապետ, տեսաք զոմն զի յանուն քո դևս հանէր՝ և
50 արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ։ Ասէ ցնոսա Յի-
սուս. Մի՛ արգելուք զնա, զի որ ոչն է ձեր թշնամի՝
51 'ի ձեր կողմն է ։ Եւ եղև 'ի կատարել աւուրց վերա-
նալոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ
52 յերուսաղէմ։ Եւ առաքեաց հրեշտակս առաջի երե-
սաց իւրոց. և իբրև չոգան, մտին 'ի գեօղ մի սամա-
53 րացւոց՝ պատրաստել ինչ նմա. և ոչ ընկալան զնա,
զի դէմ եդեալ էր նորա երթալ յերուսաղէմ։
54 Իբրև տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհան-
նէս՝ ասեն. Տէր, կամիս զի ասասցուք, և իջցէ հուր
55 յերկնից և սատակեսցէ զնոսա ։ Դարձաւ սաստեաց
'ի նոսա և ասէ. Ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք.
56 զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝
57 այլ կեցուցանել։ Եւ գնացին յայլ գեօղ։ Եւ մինչ
դեռ երթային նոքա 'ի ճանապարհի՝ ասէ ոմն ցնա.
58 Եկից զկնի քո՝ յոր վայր և երթիցես ։ Ասէ ցնա Յի-
սուս. Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից դա-
զարք, և որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ ։
59 Ասէ ցմիւս ևս. Եկ զկնի իմ։ Եւ նա ասէ. Տէր,

Հրաման տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ։
Ասէ ցնա Յիսուս. Թող զմեռեալսն թաղել զմե֊ 60
ռեալս իւրեանց, և դու երթ պատմեա զարքայու֊
թիւն Աստուծոյ։ Ասէ և այլ ոմն. Եկից զկնի քո, 61
Տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարել 'ի
տանէ իմմէ։ Ասէ ցնա Յիսուս. Ոչ ոք արկանէ ձեռն 62
զմաճով և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ ար֊
քայութեան Աստուծոյ։

ԳԼՈՒԽ Ժ

ԴԳ. Յետ այսորիկ երևեցոյց Տէր և այլ ևս եօթա֊ 1
նասուն և երկուս, և առաքեաց զնոսա երկուս երկուս
առաջի իւր յամենայն քաղաքս և 'ի տեղիս՝ ուր ինքն
երթալոց էր։ Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են 2
և մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր հնձոց, զի
հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Երթայք. ահա ա֊ 3
ռաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ գայլոց։ Մի 4
բառնայք քսակ, մի մախաղ, մի կօշիկս. և 'ի ճանա֊
պարհի ումեք ողջոյն մի տայցէք։ Յոր տուն մտա֊ 5
նիցէք նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. և֊ 6
թէ իցէ անդ որդի ողջունի՝ հանգիցէ 'ի վերայ նորա
ողջոյնն ձեր, ապա թէ ոչ՝ 'ի ձեզ դարձցի։ Եւ 'ի նո֊ 7
մին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք 'ի նոցանէ.
զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք տա֊
նէ 'ի տուն։ Յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին 8
զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր, և բժշկես֊ 9
ջիք որ 'ի նմա հիւանդք իցեն. և ասասջիք նոցա,
մերձեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ և ոչ ընդունիցին զձեզ, 10
իբրև ելանիցէք 'ի հրապարակս նորա՝ ասասջիք. և 11
զփոշին որ կառեալ է 'ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝
թօթափեսցուք 'ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի
մերձեալ է արքայութիւն Աստուծոյ։ Ասեմ ձեզ, զի 12

սոդոմայեցւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայն֊
13 միկ՝ քան քաղաքին այնմիկ։ Վայ քեզ, Քորազին, վայ
քեզ, Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոնս
եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն 'ի ձեզ, վաղուց ևս
արդեօք 'ի խորգ և 'ի մոխիր նստեալ ապաշխարեալ
14 էր։ Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձակագոյն լի֊
15 ցի 'ի դատաստանի՝ քան ձեզ։ Եւ դու, Կափառնա֊
ում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև 'ի
16 դժոխս իջցես։ Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ա֊
նարգէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն
իմ անարգէ. և որ ինձ լսէ, լսէ այնմիկ որ զիսն առա֊
17 քեաց։ Դարձան եօթանասուն և երկուքն խնդու֊
թեամբ և ասեն. Տէր, և դևք հնազանդին մեզ յա֊
18 նուն քո։ Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զսատանայ ան֊
19 կեալ յերկնից իբրև զփայլակն։ Ահա ետու ձեզ իշ֊
խանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամենայն
զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն։
20 Բայց ընդ այն մի խնդայք՝ թէ այսք հնազանդին ձեզ,
այլ խնդացէք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս։
21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն սրբով և ա֊
սէ. Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնից և երկրի,
զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտ֊
նեցեր զայս տղայոց. այո, Հայր, զի այսպէս հաճոյ
22 եղև առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ
իմմէ. և ոչ ոք գիտէ թէ ով է Որդի, եթէ ոչ Հայր,
և ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, և ում կամիցի Որդին
23 յայտնել։ Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն
ասէ. Երանի աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէքդ.
24 ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և թագաւորք
կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք՝ և ոչ տե֊
սին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան։
25 ԴԵ. Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր
զնա և ասէր. Վարդապետ, զինչ գործեցից՝ զի ըզ֊
26 կեանսն յաւիտենականս ժառանգեցից։ Եւ նա ա֊
սէ ցնա. Յօրէնս զինչ գրեալ է, ո՞րպէս ընթեռ֊

նուս: Նա պատասխանի ետ և ասէ. Սիրեսցես ըզ- 27
տէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յա-
մենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ
քումմէ, և յամենայն մտաց քոց, և զընկեր քո իբ- 28
րև զանձն քո: Եւ ասէ ցնա. Ուղիղ ետուր զպա- 29
տասխանիդ. զայդ արա և կեցցես: Նա իբրև կա-
մեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ 30
ո՞վ է իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս և ասէ.
Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ
'ի ձեռս աւազակաց, որք մերկացին զնա, և վէրս 'ի
վերայ եդին, թողին կիսամահ և գնացին: Դէպ ե- 31
ղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ,
և տեսեալ զնա՝ զանց արար. Նոյնպէս և ղևտացի 32
մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես և զանց արար:
Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ 33
նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ. և մատուցեալ 34
պատեաց զվէրս նորա՝ արկեալ 'ի վերայ ձէթ և գի
նի, և եդեալ 'ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա 'ի
պանդոկի մի, և դարմանեաց զնա: Եւ 'ի վաղիւ 35
անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկա-
պետն երկուս դահեկանս և ասէ. դարման տար
դմա, և զոր ինչ ծախեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ
գալստեան իմում հատուցից քեզ: Արդ ո՞ յերե- 36
ցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն
'ի ձեռս աւազակաց: Եւ նա ասէ. Որ արար զողոր- 37
մութիւնն 'ի վերայ նորա: Ասէ ցնա Յիսուս. Երթ
և դու արա նոյնպէս: Եւ եղև 'ի գնալն նոցա՝ և ինքն 38
եմուտ 'ի գեօղ մի, և կին ոմն անուն Մարթա՝ ըն-
կալաւ զնա 'ի տուն իւրում: Եւ նորա էր քոյր մի, ո- 39
րում անուն էր Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտսն
Տեառն, և լսէր զբանս նորա: Եւ Մարթա զբա- 40
ղեալ էր 'ի բազում սպասու. եկն եկաց առ նմա՝ և
ասէ. Տէր, ոչ ինչ փոյթ է քեզ, զի քոյրդ իմ միայն
եթող զիս 'ի սպասու. արդ ասա դմա զի օգնեսցէ
ինձ: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Մարթա 41

Մարթա, դու հոգաս՝ և զբաղում իւիք զբաղեալ
ես. բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն
բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 ԳՁ. Եւ եղև 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. և
իբրև դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն իւ-
րոց. Տէր, ուսո մեզ յաղօթս կալ, որպէս Յով-
2 հաննէս ուսոյց աշակերտացն իւրոց: Ասէ ցնոսա.
Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք. Հայր մեր.
սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո.
3 զհաց մեր հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն.
4 և թող մեզ զմեղս մեր, զի և մեք թողումք ամենայ-
նի՝ որ պարտիցի մեզ. և մի տանիր զմեզ 'ի փորձու-
5 թիւն: Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է 'ի ձէնջ որոյ իցէ բա-
րեկամ, և երթայցէ առ նա 'ի մէջ գիշերի, և ասի-
ցէ ցնա. բարեկամ, տուր ինձ փոխ երիս նկանակս.
6 զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, և ոչ ինչ ու-
7 նիմ դնել առաջի նորա: Եւ նա 'ի ներքուստ տայցէ
պատասխանի և ասիցէ. մի աշխատ առներ զիս. զ
դուռքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յան-
8 կողնի. ոչ կարեմ յառնել և տալ քեզ: Ասեմ ձեզ.
եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամու-
թեանն, սակայն վասն ժտութեանն յարուցեալ
9 տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ: Եւ ես ասեմ ձեզ.
խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բա-
10 խեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ ա-
նու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա,
11 Յո՞ դք 'ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, մի-
12 թէ փոխանակ ձկանն օձ տայցէ նմա. և կամ խընդ-

րիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա։ Իսկ եթէ դուք 13
որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձե-
րոց, ո՞րչափ ևս առաւել Հայր ձեր յերկնից տացէ բա-
րիս այնոցիկ՝ որ խնդրենն 'ի նմանէ։

Դէ. Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել 14
դևին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ամենայն ժո-
ղովուրդքն։ Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն. Բէեղզե- 15
բուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եւ այլք 16
փորձէին և նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ։ Իսկ 17
նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ա-
մենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւե-
րի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։ Ապա ե- 18
թէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայ-
ցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ
Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։
Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն 19
ձեր իւ՞ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին
ձեր դատաւորք։ Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հա- 20
նեմ զդևս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայու-
թիւն Աստուծոյ։ Յորժամ հզօր վառեալ պահիցէ 21
զտուն իւր, 'ի խաղաղութեան են ինչք նորա։ Բայց 22
եթէ հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ յաղթես-
ցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ յոր յու-
սացեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ։ Որ ոչ է 23
ընդ իս՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝
ցրուէ։ Յորժամ այսն պիղծ ելանիցէ 'ի մարդոյ, 24
շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև
ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն 'ի տուն իմ ուս-
տի ելին. և գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ 25
Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այս չար ևս 26
քան զինքն, և մտանէ բնակէ անդ, և լինի յետինն
մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչ- 27
դեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդե-
նէ անտի և ասէ։ Երանի է որովայնին՝ որ կրեացն
զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ա- 28

սէ. Նա՛ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստու-
29 ծոյ և պահիցեն։ Եւ 'ի դիզանել 'ի վերայ նորա ժո-
ղովրդոցն՝ սկսաւ ասել. Ազգս այս ազգ չար է. նշան
խնդրէ, և նշան յերկնից ոչ տացի սմա՝ բայց նշանն
30 Յովնանու։ Զի որպէս եղև Յովնան նշան Նինուէա-
ցւոց, նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ազգիս այսմիկ։
31 Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ արս
ազգիս այսորիկ, և դատապարտեսցէ զսա. զի եկն 'ի
ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և
32 ահա առաւել քան զՍողոմոն է աստ։ Արք Նինուէա-
ցիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ,
և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի քա-
րոզութեանն Յովնանու. և ահա առաւել քան ըզ-
Յովնան է աստ։

33 ԵԿ. Ոչ ոք լուցեալ ճրագ՝ դնէ 'ի թաքստեան
(և ոչ ընդ գրուանաւ), այլ 'ի վերայ աշտանակի, զի
34 որ մտանեն՝ լոյս տեսանիցեն։ Ճրագ մարմնոյ ակն
է. յորժամ ակնն առատ է, ամենայն մարմինն լու-
սաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն
35 խաւարին եղիցի. արդ զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ
36 'ի քեզ է՝ խաւար իցէ։ Եթէ մարմինդ քո ամե-
նայն լուսաւոր է, և չգուցէ մասն ինչ խաւարին, ե-
ղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագ նը-
37 շուլիւք լուսաւորիցէ զքեզ։ Եւ մինչ դեռ խօսէր զայս,
աղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա.
38 և նա մտեալ բազմեցաւ։ Իբրև ետես փարիսեցին՝
զարմացաւ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։
39 Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին
բաժակին և զպնակին սրբէք, և ներքինն ձեր լի է
40 յափշտակութեամբ և չարութեամբ. անմիտք, ո՞չ
ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն ա-
41 րար։ Բայց աղէ զորժանն իսկ տուք ողորմութիւն,
42 և ահա ամենայն սուրբ է ձեր։ Այլ վա՜յ ձեզ փարի-
սեցւոց, զի տասանորդէք զանանուխ և զփեգանա և
զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսի-

րովն Աստուծոյ· զայս արժան էր առնել՝ և զայնու ոչ
անցանել։ վա՜յ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձ֊ 43
րագահս 'ի ժողովուրդս, և զնախողջոյնս 'ի հրա֊
պարակս։ վա՜յ ձեզ, զի էք դուք իբրև զգերեզմանս 44
անյայտս, և մարդիկ գնան 'ի վերայ և ոչ գիտեն։
Պատասխանի ետ ոմն յօրինականացն և ասէ ցնա· 45
վարդապետ, զայդ բանս ասելով և զմեզ թշնամա֊
նես։ Եւ նա ասէ· Եւ ձեզ վա՜յ օրինականացդ, զի 46
բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք
մատամբ միով 'ի բեռինսն ոչ մերձենայք։ վա՜յ ձեզ, 47
զի շինէք զշիրիմս մարգարէիցն, և հարքն ձեր սպա֊
նին զնոսա· ապա ուրեմն վկայէք, եթէ կամակիցք 48
էք գործոց հարցն ձերոց· զի նոքա կոտորեցին զնո֊
սա, և դուք զգերեզմանս նոցա շինէք։ վասն այսո֊ 49
րիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց· առաքեցից 'ի
նոսա մարգարէս և Առաքեալս, և 'ի նոցանէ սպա֊
նանիցեն և հալածիցեն· զի խնդրեսցի արիւն ամե֊ 50
նայն մարգարէից հեղեալ ի սկզբանէ աշխարհի՝ յազ֊
գէ յայսմանէ, յարենէն Աբելի մինչև յարիւնն 51
Զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն·
այո ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայսմանէ։ վայ 52
ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք զփականս գի֊
տութեանն· դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝
արգելուք։ Եւ 'ի խօսելն զայս ամենայն առ նոսա 53
առաջի ամենայն ժողովրդեանն՝ զամօթի հարկա֊
նէին։ Եւ սկսան դպիրքն և փարիսեցիք չարել և
գրգռել ընդ նմա վասն բազում իրաց, և սպասել 54
որսալ ինչ բանս 'ի բերանոյ նորա, զի չարախօ֊
սեսցեն զնմանէ։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն
մինչև կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն
իւր· Նախ զգոյշ լերուք անձանց 'ի խմորոյ սադու֊
2 կեցւոցն, որ է կեղծաւորութիւն։ Զի ոչ ինչ է 'ի
ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանի֊
3 ցի։ վասն զի զոր ինչ ասիցէք 'ի խաւարի՝ լսելի
լիցի 'ի լոյս, և զոր յունկանէն խօսեցարուք 'ի շտեմա֊
4 րանս՝ քարոզեսցի 'ի վերայ տանեաց։ Բայց ձեզ ա֊
սեմ սիրելեաց իմոց· մի զարհուրիցիք յայնցանէ որ
սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ
5 ունիցին առնել։ Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցէք·
երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշ֊
խանութիւն արկանել 'ի գեհեն· այո ասեմ ձեզ,
6 յայնմանէ երկնչիջիք։ Ո՞չ ապաքէն հինգ ձագ եր֊
կուց դանգաց վաճառի, և մի 'ի նոցանէ ոչ է մոռա֊
7 ցեալ առաջի Աստուծոյ։ Այլ ձեր և ամենայն իսկ հեր
գլխոյ թուեալ է· մի երկնչիք, զի քան զբազում ձագս
8 լաւ էք դուք։ Ասեմ ձեզ, զի ամենայն որ խոստո֊
վանեսցի յիս առաջի մարդկան, և որդի մարդոյ խոս֊
տովանեսցի զնմանէ առաջի Հրեշտակաց Աստուծոյ։
9 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լի֊
10 ցի առաջի Հրեշտակաց Աստուծոյ։ Եւ ամենայն որ
ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀո֊
11 գին սուրբ հայհոյիցէ՝ մի թողցի նմա։ Այլ յորժամ
տանիցին զձեզ 'ի ժողովուրդս և 'ի պետութիւնս և
յիշխանութիւնս, մի հոգայցէք՝ որպէս թէ զինչ պա֊
12 տասխանի տայցէք կամ զի՞նչ ասիցէք· զի Հոգին
սուրբ ուսուսցէ ձեզ 'ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ
խօսել։
13 ԵԲ· Ասէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա· վարդա֊

պետ, ասա ցեղբայր իմ՝ բաժանել ընդ իս զժառան-
գութիւնն: Եւ նա ասէ ցնա. Այր դու, ո՛ կացոյց 14
զիս դատաւոր կամ բաժանարար 'ի վերայ ձեր: Եւ 15
ասէ ցնոսա. Տեսէք և զգոյշ լերուք յամենայն ա-
գահութենէ, զի ոչ եթէ 'ի մթերից ընչից ուրուք
իցեն կեանք նորա: Խօսեցաւ առ նոսա առակ մի և 16
ասէ. Առն ուրումն մեծատան եռուն անդք առհմա-
կանս. և խորհէր 'ի միտս իւր, և ասէր, զի՞ գործե- 17
ցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ:
Եւ ասէ. գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմա- 18
րանս իմ՝ և ևս մեծամեծս շինեցից, և անդր ժողո-
վեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ, և ա- 19
սացից ցանձն իմ. անձն, ունիս բազում բարութիւնս
համբարեալ ամաց բազմաց. հանգիր՝ կեր արբ և ու-
րախ լեր: Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գի- 20
շերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, իսկ զոր
պատրաստեցերն ում լինիցի: Նոյնպէս և որ գանձէ 21
անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ: Ասէ ցաշա- 22
կերտսն իւր. վասն այդորիկ ասեմ ձեզ. մի հո-
գայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք. և մի ընդ մարմնոյ՝
թէ զինչ զգենուցուք. զի ոգի առաւել է քան զկե- 23
րակուր, և մարմին քան զհանդերձ: Հայեցարուք 24
ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ
գոն շտեմարանք և ոչ համբարանոցք, և Աստուած
կերակրէ զնոսա. ո՞րչափ ևս առաւել զձեզ՝ որ լաւ
էք քան զթռչունս: Ո՞վ 'ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ 25
յաւելուլ 'ի հասակ իւր կանգուն մի. իսկ արդ եթէ 26
'ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք:
Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճէ, ոչ ջանայ և 27
ոչ նիւթէ. ասեմ ձեզ, և ոչ Սողոմոն յամենայն 'ի
փառսն իւր զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ: Իսկ եթէ 28
զխոտն որ այսօր 'ի բացի է և վաղիւ 'ի հնոց արկա-
նելի՝ Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ ևս ա-
ռաւել զձեզ, թերահաւատք: Եւ դուք մի խնդ- 29
րէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցեք, և մի զբաղ-

30 նուք. զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդ-
րեն. այլ ձեր հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն:
31 Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, և այն
յաւելցի ձեզ:
32 ԵԳ. Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր
33 ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս
ձեր, և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս
առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս, ուր ոչ
34 գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն
35 ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք
36 ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալք, և
դուք նմանօղք մարդկան որ ակն ունիցին տեառն իւ-
րեանց՝ թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց, զի յոր-
ժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա:
37 Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն
գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ
մէջ ածցէ, և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշ-
38 տիցէ զնոսա. և եթէ յերկրորդ կամ յերրորդ պա-
հու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն
39 այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանու-
տէրն յորում ժամու գող գայ, (հսկէր և) չտայր թոյլ
40 ական հատանել 'ի տան իւրում: Եւ դուք եղերուք
պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի
41 մարդոյ: Ասէ Պետրոս. Տէր, առ մե՞զ ասացեր զա-
42 ռակդ զայդ՝ թէ առ ամենեսեան: Եւ ասէ Տէր.
Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կա-
ցոյց տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ տալ 'ի
43 ժամու զկերակուրս: Երանի իցէ ծառային այնմիկ՝
44 զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Ար-
դարև ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամենայն ընչից իւրոց
45 կացուսցէ զնա: Ապա թէ ասիցէ ծառայն այն 'ի
սրտի իւրում, յամէ տէր իմ 'ի գալ և սկսանիցի
հարկանել զծառայսն և զաղախնայսն, ուտել և ըմ-
46 պել և արբենալ, եկեսցէ տէր ծառային այնորիկ յա-
ւուր յորում ակն ոչ ունիցի, և 'ի ժամուն յորում ոչ

գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ
անհաւատս դիցէ։ Եւ ծառայ որ գիտիցէ զկամս 47
տեառն իւրոյ և ոչ պատրաստիցէ ըստ կամաց նորա,
արբցէ գան բազում։ Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժա֊ 48
նի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամե֊
նայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի 'ի նմանէ,
և որում բազում աւանդեցաւ՝ առաւել ևս պահան֊
ջեսցեն 'ի նմանէ ։

ԵԴ. Հուր եկի արկանել յերկիր. և զինչ կա֊ 49
միմ՝ թէ արդէն իսկ բորբոքէր. և մկրտութիւն մի 50
ունիմ մկրտել, և զիա՞րդ փութամ՝ մինչև կատա֊
րեսցի։ Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ 51
յերկիր. ոչ, ասեմ ձեզ, այլ բաժինս։ Զի եղիցին 52
յայսմ հետէ հինգ 'ի տան միում բաժանեալք,
երեքն յերկուց և երկուքն յերից ։ Բաժանեսցի 53
հայր յորդւոյ, և որդի 'ի հօրէ. մայր 'ի դստերէ, և
դուստր 'ի մօրէ, սկեսուր 'ի հարսնէ, և հարսն 'ի
սկեսրէ իւրմէ։ Ասաց և ցժողովուրդսն. Յորժամ 54
տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից՝ իսկոյն ասէք
թէ անձրև գայ, և լինի այնպէս. և յորժամ հա֊ 55
րաւ շնչեալ, ասէք թէ խորշակ լինի, և լինի այնպէս։
Կեղծաւորք, զերեսս երկնի և երկրի գիտէք փոր֊ 56
ձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։ Ըն֊ 57
դէր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յոր֊ 58
ժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, 'ի ճա֊
նապարհի տուր զհաշիւն՝ զերծանել 'ի նմանէ. զի
դուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն
մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ 'ի բանտ։
Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանի֊ 59
ցես զյետին բնիոնն ։

ԳԼՈՒԽ ԺԳ

1 Եկին ոմանք 'ի նմին ժամանակի, և պատմեցին նը֊
մա վասն գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս
2 խառնեաց ընդ զոհս նոցա։ Պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Համարիք եթէ այն գալիլեացիք եղեն մե֊
ղաւորք քան զամենայն գալիլեացիս, զի զայնպիսի
3 անցս կրեցին. ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխա֊
4 րիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք։ Կամ նոքա
ութուտասանքն, յորոց վերայ աշտարակն անկաւ 'ի
Սիլովամ, և սպան զնոսա, համարիք թէ նոքա պար֊
տապա՞նք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ
5 են յերուսաղէմ. ոչ, ասեմ ձեզ, այլ թէ ոչ ապաշ֊
6 խարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք։ Ասաց
և զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ
յայգւոջ իւրում, և եկն խնդրել պտուղ 'ի նմանէ
7 և ոչ եգիտ։ Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝
յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզենւոջդ՝ և
ոչ գտանեմ, արդ կտրեա զդա, ընդէր և զերկիրդ խա֊
8 փանէ։ Նա պատասխանի ետ և ասէ. տէր, թող
զդա այս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և ար֊
9 կից աղբ, թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յա֊
մէ ևս հատցես զդա։

10 ԵԵ. Ուսուցանէր 'ի միում ժողովրդանոցացն
11 'ի շաբաթս. և ահա կին մի՝ զոր ունէր այս հիւան֊
դութեան ամս ութուտասն, և էր կարկամեալ, և ոչ
12 կարէր ամենևին 'ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա
Յիսուսի, կոչեաց առ ինքն և ասէ ցնա. կին դու,
13 արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի
վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և փա֊
14 ռաւոր առնէր զԱստուած։ Պատասխանի ետ ժողո֊
վրդապետն՝ ցասուցեալ թէ ընդէր 'ի շաբաթու
բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. Վեց օր է՝

յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք,
և մի յաւուր շաբաթու: Պատասխանի ետ նմա Տէր 15
և ասէ. կեղծաւորք, իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ 'ի շա-
բաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ, և
տանի տայ ջուր: Իսկ այս դուստր Աբրահամու էր 16
զոր կապեաց սատանայ՝ ահաւադիկ ութուտասն ամ,
ո՞չ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբա-
թու: Եւ զայս իբրև ասաց, յամօթ լինէին ամե- 17
նեքին որ հակառակն կային նմա. և ամենայն ժո-
ղովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւո-
րութեանցն՝ որ գործէին 'ի նմանէ: Եւ ասէր. Ո՞ւմ 18
նման է արքայութիւն Աստուծոյ, և որո՞ւմ նմանու-
թեան նմանեցուցից զնա: Նման է հատոյ մանան- 19
խոյ, զոր առեալ մարդոյ արկ 'ի պարտէզ իւր. ա-
ճեաց և եղև ծառ, և թռչունք երկնից բնակեալ
էին յոստս նորա. Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ նմանե- 20
ցուցից զարքայութիւն Աստուծոյ. Նման է խմորոյ, 21
զոր առեալ կնոջ թաքոյց յալեր երից գրուից՝ մինչև
խմորեցաւ ամենայն:

ԵԶ. Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս, ու- 22
սուցանէր. և ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ,
ասէ ոմն ցնա. Տէր, եթէ սակաւք իցեն՝ որ ապրելոց 23
իցեն: Եւ նա ասէ ցնոսա. Ջանացարուք մտանել 24
ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ, զի բազումք խնդրեսցեն
մտանել՝ և ոչ կարասցեն, յորմէ հետէ մտցէ տա- 25
նուտէրն, և փակեսցէ զդուռնն. և սկսանիք կալ
արտաքոյ՝ և բախել զդուռնն, և ասել. Տէր՝ Տէր,
բաց մեզ. և պատասխանի տուեալ ասիցէ ձեզ, ոչ
գիտեմ զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիջիք ա- 26
սել. կերաք առաջի քո և արբաք, և 'ի հրապա-
րակս մեր ուսուցեր: Եւ ասիցէ. ասեմ ձեզ, ոչ 27
գիտեմ զձեզ ուստի էք. 'ի բաց կացէք յինէն ամե-
նայն մշակքդ անիրաւութեան: Անդ եղիցի լալ և 28
կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ
և զԻսահակ և զՅակովբ և զամենայն մարգարէս

յարքայութեան Աստուծոյ, և զձեզ հանեալ ար-
29 տաքս: Եւ եկեսցեն յարևելից և յարևմտից և 'ի
հիւսիսոյ և 'ի հարաւոյ, և բազմեսցին յարքայու-
30 թեան Աստուծոյ: Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին
31 առաջինք, և իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք: Ի
նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք և ասեն ցնա.
Ել և գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել ըզ-
32 քեզ: Եւ ասէ ցնոսա, Երթայք ասացէք աղուեսուն
այնմիկ. ահաւասիկ հանեմ դևս, և բժշկութիւնս
կատարեմ այսօր և վաղիւ և յերիր աւուր կատարիմ:
33 Բայց պարտ է այսօր և վաղիւ և 'ի միւսում աւուր
գնալ. զի ոչ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան
34 զԵրուսաղէմ, Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտո-
րէիր զմարգարէս և քարկոծ առնէիր զառաքեալսն առ
քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո՝
որպէս հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցա-
35 րուք. ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր: Բայց ա-
սեմ ձեզ, եթէ ոչ ևս տեսանիցէք զիս, մինչև ասի-
ցէք՝ օրհնեալ եկեալն յանուն Տեառն:

ԳԼՈՒԽ ԺԴ

1 ԵԷ. Եւ եղև 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն
իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու՝ ուտել հաց, և
2 նոքա սպասէին նմա: Եւ ահա այր ոմն էր անդ ջրգո-
3 ղեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս և ա-
սէ ցօրինաւորն և ցփարիսեցիսն. Եթէ արժա՞ն ի-
4 ցէ 'ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուռ եղեն. և
բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց:
5 Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն ան-
կանիցի 'ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յա-
6 ւուր շաբաթու: Եւ ոչ կարացին տալ նմա պատաս-
7 խանի առ այն: Ասաց և առ կոչնականսն առակ մի,
հայեցեալ թէ զիա՞րդ բարձրնտիր լինէին. ասէ ցնո-
8 սա. Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի հարսանիս կամ

'ի կոչումս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ
պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ 'ի
նմանէ. և եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց, ասիցէ 9
ցքեզ՝ տուր սմա տեղի, և ապա սկսանիցիս ամօթով
զյետին տեղին ունել։ Այլ յորժամ կոչիցիս, եր- 10
թիցիր բազմիցիր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ
գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. բարեկամ,
'ի վեր մատիր. յայնժամ եղիցին քեզ փառք առաջի
բարձակցացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցա- 11
նէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ
զանձն՝ բարձրասցի։ Ասէ և ցկոչնատէրն. Յորժամ 12
առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս
քո, և մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգականս քո, և
մի՛ զդրացիս քո, և մի՛ զմեծամեծս. զի մի՛ և նոքա
փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատու-
ցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, 13
կոչեա զաղքատս և զխեղս, զկաղս և զկոյրս, և եր- 14
ջանիկ լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանե-
լոյ քեզ, և հատուսցի քեզ փոխարէն 'ի յարութեան
արդարոց։ Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝ 15
ասէ ցնա. Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան
Աստուծոյ։ Եւ նա ասէ. Այր ոմն գործեաց ընթ- 16
րիս, և հրաւիրեաց զբազումս։ Եւ առաքեաց ըզ- 17
ծառայ իւր 'ի ժամու ընթրեացն կոչել զհրաւի-
րեալսն, թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ա-
մենայն ինչ։ Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան 18
հրաժարել։ Առաջինն ասէ. ագարակ գնեցի, և հարկ
է ելանել տեսանել զնա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս
հրաժարեալ։ Եւ միւսն ասէ. լուծս հինգ եզանց գնե- 19
ցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս
հրաժարեալ։ Եւ միւսն ասէ. կին առի, և վասն 20
այնորիկ ոչ կարեմ գալ։ Եւ եկեալ ծառայն պատ- 21
մեաց զայն տեառն իւրում։ Յայնժամ բարկացեալ
տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. Ել վաղվաղակի 'ի
հրապարակս և 'ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս և

22 զխեղս և զկաղս և զկոյրս մոյծ այսր։ Եւ ասէ ծա-
23 ռայն. տէր, եղև զոր հրամայեցերն, և կայ ևս տե-
ղի։ Եւ ասէ տէրն ցծառայն. ել 'ի ճանապարհս և
'ի ցանկս, և արա այսր մտանել, զի լցցի տունս իմ։
24 Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ
յընթրեաց իմոց։
25 ԶԿ. Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք,
26 դարձաւ և ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս, և ոչ
ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս, և
զեղբարս և զքորս, նա՝ և զանձն ևս իւր, ոչ կարէ
27 իմ աշակերտ լինել։ Զի որ ոչ բառնայ զխաչ իւր և
28 գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Ո՞վ ոք 'ի
ձէնջ կամիցի շինել աշտարակ, և ոչ նախ նստեալ հա-
մարիցի զծախսն՝ եթէ ունիցի՞ բաւական 'ի կատա-
29 րումն։ Զի գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և ոչ կա-
րիցէ կատարել, ամենեքին որ տեսանիցեն՝ սկսանի-
30 ցին ծաղր առնել զնա և ասել, թէ այս այր սկսաւ
31 շինել՝ և ոչ կարաց կատարել։ Կամ ո՞ր թագաւոր եր-
թեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի,
և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարօղ իցէ տասն
հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ 'ի վերայ
32 նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ, մինչ դեռ հե-
ռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ՝ աղաչեսցէ
33 'ի խաղաղութիւն։ Արդ այսպէս ամենայն ոք 'ի ձէնջ,
որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ
34 իմ աշակերտ լինել։ Բարւոք է աղ. ապա թէ աղն
35 անհամեսցի, իւ համեմեսցի. ոչ յերկիր և ոչ յաղբ
է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս։ Որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼՈՒԽ ԺԵ

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մե- 1
ղաւորք՝ լսել 'ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն և 2
դպիրք և ասէին. ընդէր սա զմեղաւորս ընդունի
և ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս. 3
Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, 4
և կորուսանիցէ մի 'ի նոցանէ, ո՞չ թողուցու զինն-
սունն և զինն յանապատի, և երթիցէ զհետ կորու-
սելոյն՝ մինչև գտանիցէ զնա: Եւ իբրև գտանէ՝ դնէ 5
զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և երթայ 'ի 6
տուն. կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ ցնոսա.
ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկո-
րուսեալ: Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն 7
յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ,
քան վասն իննսուն և ինն արդարոյ՝ որոց չիցէ պի-
տոյ ապաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ ի- 8
ցեն դրամք տասն, և եթէ կորուսանիցէ դրամ
մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել 'ի տուն,
և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ. և իբրև գտա- 9
նէ, կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ. ուրախ լե-
րուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի:
Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի 10
հրեշտակաց Աստուծոյ 'ի վերայ միոյ մեղաւորի որ
ապաշխարիցէ: Եւ ասէ. Առն միոյ էին երկու որ- 11
դիք. ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. հայր, տուր 12
ինձ բաժին որ անկանի յընչիցդ. և նա բաժանեաց
նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց ժողո- 13
վեալ զամենայն կրսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հե-
ռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառա-
կութեամբ: Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև 14
սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն
չքաւորիլ: Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումն քաղա- 15
քացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագա-

16 րակ իւր՝ արածել խոզս. և ցանկայր լնուլ զորովայն
իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նը-
17 մա: Եւ եկեալ 'ի միտս իւր ասէ. քանի՛ վարձկանք
իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովա-
18 մահ կորնչիմ. յարուցեալ գնացից առ հայր իմ, և
19 ասացից ցնա. հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և
ոչ ես եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբրև
20 զմի 'ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր
իւր. և մինչ դեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն
և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, ան-
21 կաւ զպարանոցաւն նորա, և համբուրեաց զնա: Եւ
ասէ ցնա որդին. հայր, մեղայ յերկինս և առաջի
22 քո. ոչ ես եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն
ցծառայսն իւր. վաղվաղակի հանէք զպատմուճանն
առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն
23 նորա և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարա-
24 րակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. զի այս
որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և
25 գտաւ. և սկսան ուրախ լինել: Եւ էր երէց որդի նո-
րա յագարակի. և մինչ դեռ գայր և մերձ եղև 'ի
26 տունն, լուաւ զձայն երգոյ և զպարուց. և կոչեցեալ
առ ինքն զմի 'ի ծառայից՝ հարցանէր թէ զինչ իցէ
27 այն: Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ է, և
եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ
28 զնա: Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել. և հայրն ե-
29 լեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ և ա-
սէ ցհայրն. այսքանի ամք են՝ զի ծառայեմ քեզ, և
երբեք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք
ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ.
30 յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո
31 ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ: Եւ ասէ
ցնա. որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամե-
32 նայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել և խնդալ
պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց,
կորուսեալ՝ և գտաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ

ՁԲ. Եւ ասէ առ աշակերտսն . Այր մի էր մե- 1
ծատուն, որոյ էր տնտես . և եղև զնմանէ ամբաս-
տանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա : Կո- 2
չեաց և ասէ ցնա . զի՞նչ է այս զոր լսեմ զքէն . տուր
զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ ևս կարես լինել
տնտես : Ասէ ընդ միտս իւր տնտեսն . զի՞նչ գործե- 3
ցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս . գործել
ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ . գիտեմ զինչ արարից, 4
զի յորժամ 'ի բաց լինիցիմ 'ի տնտեսութենէս,
ընկալցին զիս 'ի տունս իւրեանց : Եւ կոչեցեալ առ 5
ինքն մի ըստ միոջէ 'ի պարտապանաց տեառն իւրոյ,
ասէ ցառաջինն . քանի՞ ինչ պարտիս տեառն իմում :
Եւ նա ասէ . Հարիւր մար ձիթոյ . ասէ ցնա . կա 6
զգիր քո՛ և նիստ գրեա վաղվաղակի յիսուն : Դար- 7
ձեալ ասէ ցմիւսն . դու քանի՞ ինչ պարտիս . և նա ա-
սէ . Հարիւր քոռ ցորենոյ . և ասէ ցնա . կա զգիր քո՛
և նիստ գրեա ութսուն : Եւ գովեաց տէրն զտնտեսն 8
անիրաւութեան, զի իմաստութեամբ արար . զի որ-
դիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զոր-
դիս լուսոյ յազգս իւրեանց : Եւ ես ձեզ ասեմ, արա- 9
րէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան .
զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ 'ի
յարկսն յաւիտենականս : Որ 'ի փոքուն հաւատա- 10
րիմ է, և 'ի բազմին հաւատարիմ է . և որ 'ի փոքուն 11
անիրաւ է, և 'ի բազմին անիրաւ է : Իսկ արդ եթէ
յանիրաւ Մամոնային չեղէք հաւատարիմք, զճշմա-
րիտն ձեզ ո՞ հաւատասցէ : Եւ եթէ յօտարին չեղէք 12
հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ : Ոչ ոք ծառայ 13
կարէ երկուց տերանց ծառայել . զի եթէ զմին ատի-
ցէ, զմիւսն սիրէ . կամ զմին մեծարիցէ, և զմիւսն
արհամարհիցէ . ոչ կարէք Աստուծոյ ծառայել և Մա-
մոնայի : Իբրև լսէին զայս ամենայն՝ փարիսեցիքն, 14

15 քանզի արծաթասէրք էին, անգոսնէին զնա : Եւ
ասէ ցնոսա . Դուք էք որ արդարացուցանէք զան-
ձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ ըզ-
սիրտս ձեր . զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ
16 է առաջի Աստուծոյ : Օրէնքն և մարգարէք մին-
չև ցՅովհաննէս . յայնմ հետէ արքայութիւն Աս-
տուծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա բռնաբա-
17 րէ : Դիւրին իցէ երկնից և երկրի անցանել, քան
18 յօրինացն միոյ նշանախեցի անկանել : Ամենայն որ
արձակէ զկին իւր և առնէ այլ՝ շնայ, և որ զար-
19 ձակեալն առնէ՝ շնայ : Այր ոմն էր մեծատուն, և
ագանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հա-
20 նապազ առատապէս : Եւ աղքատ ոմն անուն Ղա-
զարոս, անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ.
21 և ցանկայր լնուլ զորովայն իւր 'ի փշրանացն՝ որ ան-
կանէին 'ի սեղանոյ մեծատանն . այլ և շունք ևս գայ-
22 ին և լիզուին զվէրս նորա : Եղև մեռանել աղքա-
տին, և տանել հրեշտակացն զնա 'ի գոգն Աբրա-
23 համու . մեռաւ և մեծատունն և թաղեցաւ . և 'ի
դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր, ե-
տես զԱբրահամ 'ի հեռաստանէ, և զՂազարոս 'ի
24 գոգ նորա հանգուցեալ : Եւ նա աղաղակեաց և ասէ .
հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂա-
զարոս . զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր, և զո-
վացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ 'ի տապոյ աստի :
25 Եւ ասէ ցնա Աբրահամ . որդեակ, յիշեա զի ընկա-
լար անդէն զբարիս քո 'ի կեանս քում, և Ղազա-
րոս նոյնպէս զչարչարանս . արդ սա աստ մխիթարի,
26 և դու այդր պապակիս . և 'ի վերայ այսր ամենայնի՝
վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ . եթէ կամիցին աս-
տի առ ձեզ անցանել, ոչ կարեն, և ոչ այտի ոք առ
27 մեզ անցանել : Եւ ասէ . արդ աղաչեմ զքեզ, հայր,
28 զի արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ . են իմ անդ
եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն,
29 զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց : Եւ

ասէ Աբրահամ. ունին զՄովսէս և զմարգարէսն,
նոցա լուիցեն։ Եւ նա ասէ. ոչ, հայր Աբրահամ, 30
բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ա-
պաշխարիցեն։ Եւ ասէ ցնա. եթէ Մովսիսի և 31
մարգարէիցն ոչ լսեն, և ոչ եթէ 'ի մեռելոց ոք յառ-
ցէ՝ հաւանեսցին։

ԳԼՈՒԽ ԺԷ

ՁԳ. Ասաց և առ աշակերտսն իւր. Ոչ է մարթ 1
չգալ գայթագղութեան, բայց վայ այնմիկ է՝ յոյր
ձեռն գայցէ։ Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար 2
կախէր զպարանոցէ նորա, և անկանէր 'ի ծով, քան
թէ գայթագղեցուցանիցէ զմի ոք 'ի փոքրկանցս
յայսցանէ։ Զգոյշ կացէք անձանց. եթէ մեղիցէ 3
եղբայր քո, սաստեա նմա. և եթէ ապաշխարիցէ,
թող նմա. և եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, և 4
եօթն անգամ դարձցի 'ի քեզ և ասիցէ՝ ապաշխա-
րեմ, թողցես նմա։ Եւ ասեն Առաքեալքն ցՏէր. 5
Յաւել մեզ հաւատս։ Եւ ասէ Տէր. Եթէ ու- 6
նիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, և ասի-
ցէք թթենւոյս այսմիկ, խլեաց և տնկեաց 'ի ծո-
վու, և հնազանդեսցի ձեզ։ Իսկ ո՞վ ոք 'ի ձէնջ որ 7
ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրև մտա-
նիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց
բազմեաց. այլ ո՞չ ասիցէ ցնա, թէ պատրաստեա 8
զինչ ընթրելոց իցեմ, և գօտի ածեալ պաշտեա զիս՝
մինչև կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես
դու։ Միթէ շնո՞րհ ունիցի ծառային այնմիկ, զի ա- 9
րար զամենայն հրամանսն։ Նոյնպէս և դուք՝ յոր- 10
ժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասաս-
ջիք՝ թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն
առնել՝ արարաք։ Եւ եղև մինչ երթայր նա յե- 11
րուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարեայ և
գալիլեացւոց։ Եւ մինչ դեռ մտանէր 'ի գեօղ ու- 12

րեմն, պատահեցան նմա տասն այր բորոտ, որք կա-
13 ցին 'ի հեռաստանէ, բարձին զձայնս և ասեն. Յի-
14 սուս վարդապետ, ողորմեաց մեզ։ Եւ իբրև ետես
զնոսա, ասէ ցնոսա. Երթայք ցուցէք զանձինս քա-
հանայիցն։ Եւ եղև իբրև գնային, առ ժամայն սըր-
15 բեցան։ Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես՝ թէ բժշկե-
ցաւ, դարձաւ անդրէն՝ 'ի ձայն մեծ փառաւոր առ-
16 նէր զԱստուած. անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առ
ոտս նորա՝ և գոհանայր զնմանէ, և ինքն էր սամա-
17 րացի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ոչ տասն
18 սոքա սրբեցան, իսկ արդ իննունքն ո՞ւր են. զի ոչ գը-
տան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այ-
19 լազգիս այս։ Եւ ասէ ցնա. Արի՛ գնա, զի հաւատք
քո կեցուցին զքեզ։
20 ՁԴ. Իբրև հարցաւ 'ի փարիսեցւոցն՝ թէ երբ
գայցէ արքայութիւնն Աստուծոյ. պատասխանի ետ
նոցա և ասէ. Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրա-
21 նօք. և չասիցեն թէ ահաւասիկ աստ է կամ անդ,
զի ահա արքայութիւն Աստուծոյ 'ի ներքս 'ի ձեզ է։
22 Ասաց և առ աշակերտսն. Եկեսցեն աւուրք ցանկա-
նալոյ ձեզ մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել, և
23 ոչ տեսանիցէք։ Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահա-
24 ւասիկ է կամ անդ, մի՛ երթայցէք զհետ։ Զի որ-
պէս փայլակն փայլատակեալ 'ի ներքոյ երկնից՝ ընդ
երկնիւք ծագիցէ, նոյնպէս և որդի մարդոյ յաւուրն
25 իւրում։ Բայց նախ պարտ է նմա բազում չարչարել՝
26 և խոտել յազգէս յայսմանէ։ Եւ որպէս եղև յա-
ւուրսն Նոյի. նոյնպէս եղիցի և յաւուրս որդւոյ մար-
27 դոյ. ուտէին՝ ըմպէին՝ կանայս առնէին և արանց լի-
նէին, մինչև յօրն յորում եմուտ Նոյ 'ի տապանն,
28 և եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսին։ Նոյնպէս և
որպէս յաւուրսն Ղովտայ եղև, ուտէին ըմպէին,
29 գնէին վաճառէին, տնկէին շինէին. և յորում աւուր
ել Ղովտ 'ի Սոդոմայ, տեղաց հուր և ծծումբ յերկ-
30 նից և կորոյս զամենեսին. ըստ նմին օրինակի եղիցի

և յաւուրն՝ յորում որդի մարդոյ յայտնելոց է։ Յայնմ 31
յաւուր որ կայցէ 'ի տանիս՝ և կարասի իւր 'ի տան,
մի իջցէ առնուլ զայն. և որ յանդի իցէ, նոյնպէս մի
դարձցի յետս։ Յիշեցէք զկինն Ղովտայ։ Որ խնդ- 32
րիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. և 33
որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա։ Ասեմ ձեզ. յայնմ 34
գիշերի՝ թէ եղիցին երկու 'ի մի մահիճս, մին առցի
և միւսն թողցի. և եթէ եղիցին երկու՝ աղալ 'ի 35
միասին, մին առցի և միւսն թողցի. և եթէ լիցեն
երկու յանդի, մին առցի և միւսն թողցի։ Պատաս- 36
խանի ետուն և ասեն ցնա, Յո՞, Տէր։ Եւ նա ասէ 37
ցնոսա. Ուր մարմին է, անդր և արծուիք ժողո-
վեսցին։

ԳԼՈՒԽ ԺԸ

ՁԵ. Ասաց և առակ մի նոցա, առ այն՝ թէ պարտ 1
է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի ձանձրա-
նալ. ասէ. Դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն, 2
յԱստուծոյ ոչ երկնչէր և 'ի մարդկանէ ոչ ամաչէր։
Եւ այրի մի էր 'ի նմին քաղաքի, գայր առ նա և ա- 3
սէր. դատ արա ինձ յոսոխէ իմմէ։ Եւ ոչ կամէր 'ի 4
բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ 'ի միտ իւ-
րում. թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ, և 'ի մարդկա-
նէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այ- 5
րւոյն՝ արարից նմա դատ, զի մի 'ի սպառ եկեալ
թախանձիցէ զիս։ Եւ ասէ Տէր. Լուարո՛ւք զինչ 6
դատաւորն անիրաւութեան ասէր. իսկ Աստուած 7
ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ
աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի, և երկայ-
նամիտ միայն լինիցի առ նոսա. այո՛ ասեմ ձեզ, զի 8
արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ
որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս
յերկրի։ Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս 9
թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զբազումս, զառակս

10 զայս. Արք երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս,
11 մին փարիսեցի և միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր
մեկուսի, և զայս առանձինն աղօթս մատուցանէր.
Աստուած իմ, գոհանամ զքէն. զի ոչ եմ իբրև զայլս
'ի մարդկանէ, զյափշտակօղս և զանիրաւս և զշունս
12 կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս 'ի
շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուա-
13 ծոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կա-
մէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր
զկուրծս իւր և ասէր. Աստուած, քաւեա զիս զմե-
14 ղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի տուն իւր
քան զնա։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն
իւր՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի։
15 ՁԶ. Մատուցանէին առ նա և մանկտի՝ զի մեր-
ձենայցէ 'ի նոսա. իբրև տեսին աշակերտքն՝ սաս-
16 տէին նոցա։ Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն.
ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի ար-
գելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աս-
17 տուծոյ։ Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունիցի զարքայ-
ութիւն Աստուծոյ իբրև զմանուկ, ոչ մտցէ 'ի նա։
18 Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. Վարդապետ բա-
րի, զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժա-
19 ռանգեցից։ Ասէ ցնա Յիսուս. Զի՞ ասես զիս բա-
20 րի. չիք ոք բարի, բայց մի Աստուած։ Զպատուի-
րանս գիտես. մի շնար, մի սպանաներ, մի գողանար,
21 մի սուտ վկայեր, պատուեա զհայր քո և զմայր։ Եւ
նա ասէ. Զայդ ամենայն պահեցի 'ի մանկութենէ
22 իմմէ։ Իբրև լուաւ զայն Յիսուս, ասէ ցնա. Միւս
ևս պակաս է քեզ, զամենայն ինչ զոր ունիս վաճա-
ռեա և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս,
23 և եկ զկնի իմ։ Նա իբրև լուաւ զայս, տրտմեցաւ.
24 քանզի էր մեծատուն յոյժ։ Իբրև ետես զնա Յի-
սուս տրտմեալ, ասէ. Որպէս դժուարաւ որ ինչս ու-
25 նիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ։ Դիւ-

րագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան
մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ 26
որ լուանն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ապրել: Եւ նա ա- 27
սէ. Անհնարինք առ 'ի մարդկանէ՝ հնարաւորք են
յԱստուծոյ: Եւ ասէ Պետրոս. Ահաւասիկ մեք 28
թողաք զամենայն ինչ զմեր, և եկաք զկնի քո, Եւ 29
նա ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք է՝ որ
եթող զտուն, կամ զծնօղս կամ զեղբարս, կամ
զկին, կամ զորդիս՝ վասն արքայութեան Աստուծոյ,
եթէ ոչ առնուցու բազմապատիկ 'ի ժամանակի 30
յայսմիկ. և յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յա-
ւիտենականս ժառանգեսցէ, Եւ առեալ զերկոտա- 31
սանսն առանձինն՝ ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք
յԵրուսաղէմ, և կատարեսցին ամենայն գրեալքն
մարգարէիւք վասն որդւոյ մարդոյ. զի մատնեսցի հե- 32
թանոսաց և կատակեսցի, և հարկանիցեն և սպա- 33
նանիցեն զնա, և յերիր աւուր յարիցէ: Եւ նոքա
ոչ ինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ 34
'ի նոցանէ, և ոչ գիտէին զասացեալսն:

Ձէ. Եւ եղև 'ի մօտելն նորա յԵրիքով՝ կոյր ոմն 35
նստէր առ ճանապարհաւն մուրացիկ. իբրև լուաւ 36
զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զինչ իցէ
այն: Եւ պատմեցին նմա՝ թէ Յիսուս Նազովրեցի 37
անցանէ: Աղաղակեաց և ասէ. Յիսուս, որդի Դաւ- 38
թի, ողորմեաց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաս- 39
տէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր.
Որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Զտեղի առ Յի- 40
սուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև,
մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ. Զի՞նչ կա- 41
միս դու՝ զի արարից քեզ: Եւ նա ասէ. Տէր, զի
բացցին աչք իմ և տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. 42
Հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ առժա- 43
մայն ետես, և երթայր զհետ նորա և փառաւոր
առնէր զԱստուած. և ամենայն ժողովրդեանն տե-
սեալ՝ տային օրհնութիւն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով. և ահա այր մի
2 անուն կոչեցեալ Զակքէոս. և նա էր մաքսապետ,
3 և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ
իցէ Յիսուս, և ոչ կարէր 'ի բազմութենէն, զի
4 կարճ էր հասակաւ: Եւ ընթացեալ յառաջս՝ ել 'ի
ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն
5 իսկ անցանելոց էր: Իբրև եկն 'ի տեղին, հայեցաւ
'ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. Զակքէ, փութա՝ էջ
այտի, զի այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել.
6 փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ:
7 Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ
8 առն մեղաւորի եմուտ լուծանել: Եկն եկաց Զակ-
քէոս և ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից տաց
աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին:
9 Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղև փրկութիւն տանս
10 այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու է: Զի եկն
որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն:
11 Եւ մինչ դեռ նոքա զայնս լսէին, յաւել առակ մի և
ասէ, վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ, և հա-
մարելոյ նոցա թէ առժամայն յայտնելոց է արքայու-
12 թիւն Աստուծոյ. ասէ. Այր ոմն ազնուական գնաց
յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն, և
13 դառնալ: Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն
մնաս, և ասէ ցնոսա. յարդեցէք զայդ՝ մինչև եկից:
14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա, առաքեցին հրեշ-
տակս զկնի նորա՝ և ասեն, թէ ոչ կամիմք թագաւո-
15 րել դմա 'ի վերայ մեր: Եւ եղև դառնալ նմա՝ ա-
ռեալ զթագաւորութիւնն. և կոչեալ զծառայսն՝ ո-
րոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո՞ զինչ
16 շահեցաւ, եկն առաջինն և ասէ. Տէր, մնասն քո
17 տասն մնաս արար: Եւ ասէ ցնա. Ազնիւ ծառայ և
բարի՝ զի 'ի փոքուդ հաւատարիմ եղեր, լինիջիր իշ-

իշխանութիւն ունել 'ի վերայ տասն քաղաքի: Եկն 18
երկրորդն և ասէ. Մնասն քո արար հինգ մնաս:
Ասէ ցնա. Եւ դու լիջիր 'ի վերայ հինգ քաղաքաց: 19
Եկն միւսն և ասէ. Տէր, ահա մնասն քո զոր ունէի, 20
ծրարեալ 'ի վարշամակի. երկնչէի 'ի քէն, զի այր 21
ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, և հնձես՝ զոր ոչ
սերմանեցեր: Եւ ասէ ցնա. Ի բերանոյ քումմէ դա- 22
տեցայց զքեզ, ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ եդի, և հըն-
ձեմ՝ ուր ոչ սերմանեցի, և ընդէր ոչ ետուր զար- 23
ծաթն իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք
պահանջէի: Եւ ասէ ցսպասաւորսն. Առէք 'ի դմա- 24
նէ զմնասն, և տարայք տուք այնմ՝ որ ունիցի ըզ-
տասն մնասն: Եւ ասեն ցնա. Տէր, ունի տասն 25
մնաս: Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի՝ տա- 26
ցի, և յայնմանէ որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին բարձցի
'ի նմանէ: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն 27
կամէին զիս թագաւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր
և սպանէք առաջի իմ: Եւ իբրև զայս ասաց, գնաց 28
յառաջ՝ ելանել յԵրուսաղէմ:

ԷԿ. Եւ եղև իբրև մերձեցաւ 'ի Բեթփագէ և 29
'ի Բեթանիա մօտ 'ի լեառնն որ կոչի Ձիթենեաց,
առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց և ասէ. Եր- 30
թայք դուք 'ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբ-
րև մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում
ոք 'ի մարդկանէ երբեք ոչ նստաւ. լուծէք զնա և ա-
ծէք: Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ եթէ ընդէր 31
լուծանէք, այսպէս ասասջիք ցնա, թէ տեառն իւ-
րում պիտոյ է: Իբրև չոգան որ առաքեցանն, գտին 32
որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն: Եւ մինչ 33
դեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա
ցնոսա. զի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն. 34
տեառն իւրում պիտոյ է. և ածին զնա առ Յիսուս, 35
և արկին զնովաւ հանդերձս, և հեծուցին զՅիսուս:
Եւ մինչ դեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարա- 36

37 ծանէին զճանապարհաւն: Եւ իբրև այն ինչ մերձ
եղև 'ի զառ 'ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամե-
նայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ
օրհնել զԱստուած 'ի ձայն մեծ՝ վասն ամենայն ե-
38 ղելոց զօրութեանցն զոր տեսին, և ասէին. Օրհ-
նեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն. խաղա-
39 ղութիւն յերկինս, և փառք 'ի բարձունս: Եւ ո-
մանք 'ի փարիսեցւոցն յամբոխէ անտի ասեն ցնա.
40 Վարդապետ, սաստեա աշակերտացդ քոց: Պատաս-
խանի ետ և ասէ. Ասեմ ձեզ, զի և թէ դոքա լռես-
41 ցեն՝ քարինքդ աղաղակեսցեն: Եւ իբրև մերձեցաւ,
42 տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վերայ նորա, և ասէ. Ե-
թէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղու-
թիւնն քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց:
43 Զի եկեսցեն աւուրք 'ի վերայ քո, և պատեսցեն
զքև թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ,
44 և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց. և յատա-
կեսցեն զքեզ, և զորդիս քո 'ի քեզ և ոչ թողու-
ցուն քար 'ի քարի վերայ յամենայնի՝ 'ի քեզ. փոխա-
նակ զի ոչ ծաներ զժամանակ այցելութեան քոյ:
45 Եւ մտեալ 'ի տաճարն սկսաւ հանել զաղանէվա-
ճառսն և զգնօղս, և զսեղանս հատավաճառացն ցը-
46 րուեաց. և ասէ ցնոսա. Գրեալ է, և եղիցի տուն իմ
47 տուն աղօթից. և դուք արարէք զդա այրս աւազակաց:
Եւ ուսուցանէր զնոսա հանապազ 'ի տաճարին. իսկ
48 քահանայապետքն և դպիրք և գլխաւորք ժողովըր-
դեանն խնդրէին զնա կորուսանել, և ոչ գտանէին
թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամենայն կա-
խեալ կային զնմանէ 'ի լսել:

ԳԼՈՒԽ Ի

ԷԲ. Եւ եղեւ 'ի միում աւուրցն յայնցանէ, մինչ 1
դեռ ուսուցանէր զժողովուրդն 'ի տաճարի անդ և
աւետարանէր, հասին 'ի վերայ քահանայապետքն
և դպիրք ծերովքն հանդերձ, և ասեն ցնա. Ասա 2
մեզ՝ որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ, կամ
ո՞վ է որ ետ քեզ զայդ իշխանութիւն: Պատասխա- 3
նի ետ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի,
և ասացէք ինձ. մկրտութիւնն Յովհաննու յերկ- 4
նի՞ց էր՝ եթէ 'ի մարդկանէ: Եւ նոքա խորհեցան 'ի 5
միտս իւրեանց և ասեն. եթէ ասեմք յերկնից, ա- 6
սէ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք
'ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն
զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս զՅովհաննէ թէ
մարգարէ է: Եւ պատասխանի ետուն՝ չգիտել թէ 7
ուստի իցէ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Եւ ոչ ես ա- 8
սեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս:
ԷԳ. Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. 9
այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն
գնաց ճանապարհ ժամանակս բազումս: Եւ 'ի ժա- 10
մու առաքեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այ-
գւոյն տացեն նմա. և մշակքն գան հարին զնա՝ և
արձակեցին ունայն: Եւ յաւել միւս ևս ծառայ 11
յղել. Նոքա և զնա ևս գան հարին, անարգեցին և
առաքեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել. 12
Նոքա և զնա վիրաւորեցին, և հանին արտաքս. Ա- 13
սէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքեցից զորդի
իմ սիրելի, թերևս 'ի սմանէ պատկառեսցեն: Իբ- 14
րև տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս
և ասեն. սա է ժառանգն. սպանցուք զսա, զի մեր
լինիցի ժառանգութիւնն. և հանին զնա արտաքս 15
քան զայգին և սպանին: Արդ զի՞նչ արասցէ ընդ նո-
սա տէր այգւոյն. ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ 16

զմշակսն զայնոսիկ, և տայցէ զայգին այլոց: Իբրև
17 լուան՝ ասեն. քաւ, մի՛ լիցի: Եւ նա հայեցեալ
ընդ նոսա ասէ. իսկ զի՞նչ իցէ այն որ գրեալ է՝ ե-
թէ վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ
18 անկեան: Ամենայն որ ընդ հարցի ընդ վէմս ընդ այս՝
խորտակեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա:
19 Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք արկանել
'ի նա ձեռս 'ի նմին ժամու, և երկեան 'ի ժողովրդե-
նէն. զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն:
20 ԷԴ. Եւ ապա սպասեցին, և առաքեցին դաւա-
ճանս կեղծաւորեալս՝ զանձինս առ արդարս ունել,
զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ 'ի մատնել զնա
21 պետութեան և իշխանութեան դատաւորին: Հար-
ցին ցնա և ասեն. Վարդապետ, գիտեմք եթէ ու-
ղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն. այլ
ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցա-
22 նես. արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ:
23 Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ
24 ցնոսա. Ցուցէք ինձ զդահեկանն: Եւ նոքա ցուցին:
Եւ ասէ. Զո՞յր պատկեր և զգիր ունի: Պատասխա-
25 նի ետուն և ասեն. Զկայսեր: Եւ նա ասէ ցնոսա.
Արդ երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստու-
26 ծոյն՝ Աստուծոյ: Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բա-
նիւք առաջի ժողովրդեանն, և զարմացեալ ընդ պա-
տասխանին նորա՝ լռեցին:
27 ԷԵ. Մատուցեալ ոմանք 'ի սադուկեցւոցն, որք
հակառակէին չլինել յարութեան, հարցին ցնա և
28 ասեն. Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ. եթէ
ուրուք եղբայր մեռանիցի՝ որոյ իցէ կին, և նա ան-
որդի իցէ, զի առնուցու եղբայր նորա զկինն, և յա-
29 րուսցէ զաւակ եղբօր իւրում: Արդ եօթն եղբարք
30 էին. և առաջինն առեալ կին, մեռաւ անորդի. առ
զնա և երկրորդն, մեռաւ և նա անորդի. առ զնա
31 և երրորդն, նոյնպէս և եօթանեքին, և ոչ թո-
32 ղին որդիս. մեռաւ և կինն. արդ 'ի յարութեանն

ծում 'ի նոյանէ լինիցի կին. զի եօթանեքին կալան 33
զնա կին: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. 34
Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն և արանց
լինին, իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հա- 35
սանել և յարութեանն որ 'ի մեռելոց, ոչ կանայս առ-
նեն և ոչ արանց լինին: Քանզի և ոչ մեռանել ևս 36
կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Աս-
տուծոյ. քանզի յարութեան որդիք են: Այլ զի 37
յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց 'ի մորե-
նւոջն, որպէս ասէ զտեառնէ Աստուծոյ Աբրահա-
մու, և զԱստուծոյ Սահակայ, և զԱստուծոյ Յա-
կոբայ: Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց, 38
զի ամենեքին նմա կենդանի են: Պատասխանի ե- 39
տուն նմա ոմանք 'ի դպրացն՝ և ասեն. Վարդապետ,
բարւոք ասացեր: Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել 40
զնա և ոչ ինչ:

ԷԶ. Ասէ և առ նոսա. Զիա՞րդ ասեն զՔրիս- 41
տոսէ՝ թէ որդի է Դաւթի. զի ինքն Դաւիթ ասէ 42
'ի գիրս Սաղմոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ
աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան 43
ոտից քոց: Իսկ անդ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, 44
զիա՞րդ որդի նորա իցէ: Եւ լու 'ի լու ամենայն ժո- 45
ղովրդեանն ասէ ցաշակերտսն. Զգոյշ լերուք 'ի 46
դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, և սիրեն
ողջոյնս 'ի հրապարակս, և զնախաթոռս 'ի ժողո-
վուրդս, և զբարձերէցս յընթրիս: Որ ուտեն ըղ- 47
տունս այրեաց, և պատճառանօք յերկարեն զաղօթս.
նոքա ընկալցին աւելի դատաստանս:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Եւ հայեցեալ ետես զմեծատունսն որ արկանէին 1
զտուրս իւրեանց 'ի գանձանակն: Ետես և զկին ոմն 2
այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս. Եւ ա- 3
սէ. Արդարև ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ ա-

4 ւելի արկ քան զամենեսին: Ամենեքին նոքա 'ի մը-
թերից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ, բայց
նա 'ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր
զոր ունէր՝ արկ:

5 ԷԷ. Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ
6 վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ. Զայդ
ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ
թողցի այդր քար 'ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի:
7 Հարցին ցնա և ասեն. Վարդապետ, Երբ լինիցի
այդ, և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ:
8 Եւ նա ասէ. Զգոյշ կացէք, մի՛ խաբիցիք. զի բա-
զումք գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ, և
9 մերձեցաւ ժամանակ. մի՛ երթայցէք զկնի նոցա: Եւ
յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի՛
զարհուրիցիք, զի պարտ է նախ այնմ լինել, այլ ոչ
10 առժամայնն կատարած: Յայնժամ ասէ ցնոսա. Յա-
րիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն 'ի
11 թագաւորութեան վերայ. և շարժմունք մեծամեծք,
և 'ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք եղիցին,
12 արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից: Բայց յա-
ռաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց
'ի ձեզ և հալածեսցեն. մատնեսցեն 'ի ժողովուրդս
և 'ի բանտս, և տանիցին առաջի դատաւորաց և
13 թագաւորաց վասն անուան իմոյ. և լինիցի ձեզ այն
14 'ի վկայութիւն: Արդ դիք 'ի սիրտս ձեր, մի՛ յառա-
15 ջագոյն կրթել տալոյ պատասխանի. զի ես տաց ձեզ
բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հա-
կառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառա-
16 կորդքն ձեր: Մատնեսջիք և 'ի ծնողաց և յեղբարց
և յազգականաց և 'ի բարեկամաց, և սպանանիցեն
17 'ի ձէնջ. և եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն
18 անուան իմոյ. և մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ.
19 և համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր:
20 Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զԵ-
րուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր

նորա։ Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 21
'ի լերինս, և որ 'ի մէջ նորա իցեն՝ խուսեսցեն, և
որ 'ի գաւառս իցեն՝ մի մտցեն 'ի նա. զի աւուրք 22
վրէժխնդրութեան են այնոքիկ, առ 'ի կատարելոյ
ամենայն գրելոց։ Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց 23
յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ 'ի վե-
րայ երկրի, և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ։
Եւ անկցին 'ի սուր սուսերի, և գերեսցին յամենայն 24
հեթանոսաց. և Երուսաղէմ եղիցի կոխան յազ-
գաց, մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց։
Եւ եղիցին նշանք յարեգակն և 'ի լուսին և յաս- 25
տեղս, և յերկրի տագնապ հեթանոսաց՝ 'ի յահեղ
բարբառոյ իբրև ծովու և խռովութեան, յելանելոյ 26
ոգւոց մարդկան յերկիւղէ՝ և 'ի կարծեաց եկելոց 'ի
վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շար-
ժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ ե- 27
կեալ ամպովք զօրութեամբ և փառօք բազմօք։
Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք և 28
բարձրացուսջիք զգլուխս ձեր, զի մերձ է փրկութիւն
ձեր։ Եւ ասաց առակ մի նոցա. Տեսէք զթզենին և 29
զամենայն ծառ. յորժամ ցուցանիցեն զպտուղ իւ- 30
րեանց, տեսանէք՝ և 'ի նոցանէ ճանաչէք եթէ
մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսա- 31
նիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է
արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ 32
անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն լինիցի։ Եր- 33
կինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։
Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք 34
ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգովք
աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ 'ի վե-
րայ ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի 35
վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն ե-
րեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետև, յամե- 36
նայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք
զերծանել յայնմ ամենայնէ որ լինելոց է, և կալ

37 առաջի որդւոյ մարդոյ։ Եւ 'ի տուէ 'ի տաճարին ու-
սուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ
38 կոչէր Ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կան-
խէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն՝ լսել 'ի
նմանէ։
ՎՆՐՋ)

ԳԼՈՒԽ ԻԲ

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր պաս-
2 քա։ Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ
3 որպէս սպանանիցեն զնա, բայց երկնչէին 'ի ժողո-
վրդենէ անտի։ Ապա եմուտ սատանայ 'ի Յուդա
'ի կոչեցեալն իսկարիովտացի, որ էր 'ի թուոյ երկո-
4 տասանիցն։ Զօգաւ եդ բանս ընդ քահանայապետսն
և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատ-
5 նեսցէ զնա նոցա։ Եւ խնդացին, և խոստացան տալ
6 նմա արծաթ. և յանձն առ, և խնդրէր պարապ
7 մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն։ Եկն օր
բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն.
8 և առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս և ասէ. Եր-
թայք պատրաստեցէք մեզ զպասեքն զի կերիցուք։
9 Եւ նոքա ասեն. Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։
10 Եւ ասէ ցնոսա. Ահա իբրև մտանիցէք 'ի քաղաքն,
պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. եր-
11 թիջիք զհետ նորա 'ի տունն յոր մտանիցէ, և ասա-
ջիք ցտանուտէր տանն. վարդապետ ասէ քեզ, ո՞ւր
են վանքն իմ՝ յորում զպասեքն ուտիցեմ աշակեր-
12 տօքս հանդերձ. և նա ցուցցէ ձեզ վերնատուն մի
13 մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք։ Եւ գնա-
ցեալ գտին որպէս և ասացն նոցա և պատրաստեցին
14 զպասեքն։ Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և եր-
15 կոտասան Առաքեալքն ընդ նմա։ Եւ ասէ ցնոսա.
Ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝
մինչ չև չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ, թէ ոչ
16 ևս կերայց 'ի սմանէ, մինչև լցցի յարքայութեան Աս-

տուծոյ։ Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ. 17
Առէք զայդ և բաժանեցէք 'ի ձեզ։ Ասեմ ձեզ, 18
թէ յայսմ հետէ ոչ արբից 'ի բերոյ որթոյ, մինչև
եկեսցէ արքայութիւն Աստուծոյ։ Եւ առեալ հաց՝ 19
գոհացաւ, եբեկ և ետ նոցա և ասէ. Այս է մար-
մին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ
իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ըն- 20
թրեացն ած և ասէ. Այս բաժակ է նոր ուխտ ի-
մով արեամբ վասն ձեր հեղեալ։ Բայց ահաւասիկ 21
ձեռն մատնչի իմոյ ընդ իս 'ի սեղանս, և որդի մար- 22
դոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց վայ մարդոյն
այնմիկ յոյր ձեռն մատնիցի։ Եւ նոքա սկսան խըն- 23
դրել ընդ միմեանս, թէ ո՞վ է 'ի նոցանէ որ զայն
գործելոց իցէ։ Եղև և հակառակութիւն 'ի մէջ նո- 24
ցա, թէ ո՞վ 'ի նոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ 25
ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշ-
խեն նոցա՝ բարերարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. 26
այլ որ մեծն է 'ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և ա-
ռաջնորդն իբրև զսպասաւորն։ Ո՞վ է մեծ, բազ- 27
մեա՞լն՝ եթէ սպասաւորն. ո՞չ ապաքէն բազմեալն.
բայց ես եմ 'ի միջի ձերում իբրև զսպասաւոր։ Եւ 28
դուք էք՝ որ ցանդ կայիք ընդ իս 'ի փորձութիւնս
իմ. և ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխ- 29
տեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք 30
'ի սեղան իմ՝ յարքայութեանն իմում, և նստիցիք
յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իս-
րայելի։ Եւ ասէ Տէր. Սիմո՛ն՝ Սիմո՛ն, ահա սա- 31
տանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան.
այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցեն հա- 32
ւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատես-
ցես զեղբարս քո։ Եւ նա ասէ ցնա. Տէր, ընդ քեզ 33
պատրաստ եմ և 'ի բանտ և 'ի մահ երթալ։ Եւ նա 34
ասէ ցնա. Ասեմ քեզ, Պետրէ, չիցէ այսօր հաւու
խօսել, մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել։ Եւ ա- 35
սէ ցնոսա. Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի

36 և մախաղ և կօշկաց, միթէ կարօտացա՞յք իմիք։ Եւ
նոքա ասեն. Եւ ոչ իմիք։ Ապա ասէ. Այլ այժմ որ
ունի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ. և որ ոչն
ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր և գնեսցէ իւր սու-
37 սեր։ Բայց ասեմ ձեզ. զի այս ես որ գրեալ է՝
պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս հա-
38 մարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։ Եւ
նոքա ասեն. Տէր, ահաւասիկ են աստ երկու սուրք։
39 Եւ նա ասէ ցնոսա. Բաւական են։ Եւ ելեալ գնաց
ըստ սովորութեանն 'ի լեառն Ձիթենեաց, գնացին
40 զհետ նորա և աշակերտքն։ Իբրև եհաս 'ի տեղին՝
ասէ ցնոսա. Յաղօթս կացէք չմտանել 'ի փորձու-
41 թիւն։ Եւ ինքն մեկնեցաւ 'ի նոցանէ իբրև քարըն-
42 կէց մի, եդ ծունր՝ կայր յաղօթս և ասէր. Հայր,
եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ
43 իմ կամք՝ այլ քոյդ լիցին։ Եւ երևեցաւ նմա Հրեշ-
տակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր 'ի տագ-
44 նապի, և մտադիւրութեամբ ես կայր յաղօթս. և
հոսէին 'ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝
45 ոլոռն ոլոռն հեղեալ 'ի յերկիր։ Եւ յարուցեալ յա-
ղօթիցն, եկն առ աշակերտսն՝ եգիտ զնոսա 'ի քուն
46 'ի տրտմութենէն. և ասէ ցնոսա. Զի՞ ննջէք, ա-
րիք կացէք յաղօթս՝ զի մի՛ մտանիցէք 'ի փորձու-
47 թիւն։ Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ, և
որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր
նոցա։ Իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց
զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ
48 որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ Ասէ
ցնա Յիսուս. Յուդա, համբուրելո՞վ մատնես զորդի
49 մարդոյ։ Իբրև տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ եղևն,
50 ասեն ցնա. Տէր, հարցուք զնոսա սրով։ Եւ եհար
մի ոմն 'ի նոցանէ զքահանայապետին ծառայ, և 'ի
51 բաց եհան զաջոյ ունկն նորա։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ. Թոյլ տուք մինչև ցայդ վայր։ Եւ մա-
52 տուցեալ յունկն՝ բժշկեաց զնա։ Եւ ասէ ցեկեալսն

'ի վերայ նորա ցքահանայապետսն, և ցիշխանս տա-
ճարին և ցծերսն. Իբրև 'ի վերայ աւազակի՞ ելէք
սուսերօք և բրօք. հանապազ ընդ ձեզ էի 'ի տա- 53
ճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր
ժամ և իշխանութիւն խաւարի: Եւ կալեալ զնա 54
ածին և մուծին 'ի տուն քահանայապետին. և Պե-
տրոս երթայր զկնի նորա հեռագոյն: Իբրև լուցին 55
կրակ 'ի մէջ գաւթին և նստան շուրջ, նստաւ և
Պետրոս 'ի մէջ նոցա: Ետես զնա աղախին ոմն՝ զի 56
նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա և ասէ. Եւ սա
ընդ նոսա էր որ ընդ նմայն էին: Իսկ Պետրոս ու- 57
րացաւ և ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու: Եւ յետ 58
սակաւ միոյ՝ այլ ոմն ետես զնա և ասէ. Եւ դու 'ի
նոցանէ ես: Եւ Պետրոս ասէ. Այր դու, չեմ 'ի
նոցանէ: Եւ իբրև ժամ մի անց 'ի վերայ, այլ ոմն 59
վիճէր և ասէր. Ստոյգ և սա ընդ նմա էր, քանզի
գալիլեացի է: Ասէ Պետրոս. Այր դու, չգիտեմ 60
զինչ խօսիդ: Եւ առժամայն մինչդեռ նա զայն ա-
սէր, խօսեցաւ հաւ: Դարձաւ Տէր և հայեցաւ 'ի 61
Պետրոս. և յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր
ասաց ցնա. մինչ չև հաւու խօսեալ իցէ, երիցս ու-
րացցիս՝ չգիտել զիս. և ելեալ արտաքս՝ ելաց դառ- 62
նապէս: Եւ արքն, որ պահէին զնա, այպն առնէին 63
զնովաւ և հարկանէին. ծածկէին զերեսս նորա և 64
տանջէին, և հարցանէին ցնա և ասէին. Մարգա-
րեաց՝ ո՞վ է որ եհարն զքեզ: Եւ այլ բազում ինչ 65
հայհոյութեամբ խօսէին 'ի նա: Եւ իբրև այգ ե- 66
ղև, ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քահանա-
յապետքն և դպիրք, և հանին ածին զնա յատեանն
իւրեանց՝ և ասեն. Եթէ դու ես Քրիստոսն, ասա
մեզ: Ասէ ցնոսա. թէ ասացից ձեզ, սակայն ոչ հա- 67
ւատայք. և եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք ինձ պա- 68
տասխանի կամ արձակիցէք: Բայց յայսմ հետէ 69
նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստու-
ծոյ: Եւ ասեն ամենեքեան. Ուրեմն դու ես որդին 70

Աստուծոյ: Եւ նա ասէ ցնոսա. Դուք ասէք թէ
71 ես եմ: Եւ նոքա ասեն. Զի՞նչ ևս պիտոյ է մեզ
վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք 'ի բերանոյ դորա:

ԳԼՈՒԽ ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա՝ ա-
2 ծին զնա առ Պիղատոս: Եւ սկսան չարախօս լինել
զնմանէ և ասել. Գտաք զսա զի թիւրէր զազգս մեր,
և արգելոյր 'ի տալոյ հարկս կայսեր, եւ ասէր զանձ-
3 նէ՝ թէ Քրիստոսն իցէ թագաւոր: Իսկ Պիղատոս
եհարց զնա և ասէ. Դո՞ւ ես թագաւորն Հրէից:
Նա պատասխանի ետ նմա եւ ասէ. Դու ասացեր:
4 Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդսն.
5 Չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ: Եւ նոքա պըն-
դէին, և ասէին, թէ խռովէ զժողովուրդս, ուսու-
ցանէ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ 'ի Գալիլեէ
6 մինչև ցայսր: Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլէէ,
7 եհարց եթէ գալիլեացի իցէ այրն. և իբրև գիտաց
թէ յիշխանութենէ Հերովդի է, ետ տանել զնա
առ Հերովդէս. քանզի և նա յերուսաղէմ էր յա-
8 ւուրսն յայնոսիկ: Եւ Հերովդէս իբրև ետես զՅի-
սուս, ուրախ եղև յոյժ. զի ցանկայր 'ի բազում ժա-
մանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում ան-
գամ զնմանէ, և ակն ունէր նշան ինչ լինեալ տեսա-
9 նել 'ի նմանէ: Հարցանէր զնա բանիւք բազմօք և
10 նա ոչ ինչ ետ նմա պատասխանի: Կային քահանայա-
պետքն և դպիրք՝ և պնդագոյնս չարախօսէին զնը-
11 մանէ: Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ
իւրովք զօրականօքն, և այպն արարեալ՝ արկ զնովաւ
հանդերձս սպիտակս, և ետ տանել անդրէն առ Պի-
12 ղատոս: Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերով-
դէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին
13 միմեանց: Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և
14 զիշխանս և զժողովուրդն, և ասէ ցնոսա. Ածէք մա-

տուցէք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողո-
վրրդեանն, և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և
վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չա-
րախօսէքդ զդմանէ: Այլ և ոչ Հերովդէս, քանզի 15
ետու տանել զդա առ նա. և արդ ոչ ինչ մահու ար-
ժանի է գործեալ դորա. խրատեցից զդա և արձա-
կեցից: Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նո- 16
ցա: Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն 17
և ասէին. Բարձ զդա, և արձակեա մեզ զԲարաբ- 18
բա, որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քա- 19
ղաքին և սպանութեան մտեալ 'ի բանտ: Դարձեալ 20
Պիղատոս սկսաւ խօսել, քանզի կամէր արձակել
զՅիսուս: Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. 21
Ի խաչ հան զդա: Եւ նա երիցս ասէ ցնոսա. Զի՞նչ 22
չար արար սա. ոչ ինչ վնաս մահու գտի 'ի սմա. խը-
րատեցից զսա և արձակեցից: Եւ նոքա ստիպէին 23
մեծաձայն՝ և խնդրէին զնա 'ի խաչ հանել. և զօ-
րանային բարբառքն նոցա և քահանայապետիցն:
Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նո- 24
ցա: Արձակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վասն խռո- 25
վութեան և սպանութեան արկեալ էր 'ի բանտ,
զոր և խնդրէին իսկ, և զՅիսուս մատնեաց կամացն
նոցա: Իբրև տարին գնացին զնա, ըմբռնեցին զոմն 26
Սիմովն կիւրենացի՝ որ գայր յանդէ, եդին 'ի վերայ
նորա զխաչն՝ բերել զկնի Յիսուսի: Եւ երթայր 27
զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, և կա-
նանց՝ որ կոծէին և աշխարէին զնա: Դարձաւ 28
Յիսուս և ասէ ցնոսա. Դստերք Երուսաղեմի,
մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ ան-
ձանց և 'ի վերայ որդւոց ձերոց. զի եկեսցեն ա- 29
ւուրք յորս ասիցեն, թէ երանի ամլոց և որո-
վայնից՝ որ ոչ ծնան, և ստեանց՝ որ ոչ դիեցուցին:
Յայնժամ սկսանիցեն ասել լերանց՝ թէ անկերուք 30
'ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ: Զի 31
եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ

32 լինիցի: Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանանել
23 ընդ նմա: Իբրև չոգան 'ի տեղին կոչեցեալ Գա-
գաթն, անդ հանին զնա 'ի խաչ, և զչարագործսն՝
34 զոմն ընդ աջմէ և զոմն ընդ ձախմէ խաչեցին: Եւ
Յիսուս ասէ. Հայր, թող դոցա՝ զի ոչ գիտեն զինչ
գործեն: Եւ 'ի բաժանել զհանդերձս նորա, արկին
35 վիճակս. և կայր ժողովուրդն հայեցեալ: Անգոս-
նէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. Զայլս
ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիս-
86 տոս որդի Աստուծոյ ընտրեալն: Այպն առնէին զնա
և զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քա-
37 ցախ, և ասէին. Եթէ դու ես թագաւորն Հրէից՝
38 փրկեա զանձն քո: Եւ էր գիր գրեալ 'ի վերայ նո-
րա, յունարէն և դաղմատերէն և եբրայեցերէն
39 գրով, թէ սա է արքայն Հրէից: Իսկ մի ոմն 'ի կա-
խելոց չարագործացն հայհոյէր զնա՝ և ասէր. Ո՛չ
40 դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո և զմեզ: Պա-
տասխանի ետ ընկերն սաստելով նմա՝ և ասէ. Ոչ եր-
41 կնչիս դու յԱստուծոյ՝ զի 'ի նմին պատժի կաս. և
մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք
42 զհատուցումն, և սա ապիրատ ինչ ոչ գործեաց: Եւ
ասէ ցՅիսուս. Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես
43 արքայութեամբ քով: Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն
44 ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես 'ի դրախտին: Եւ էր
իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև 'ի վերայ ամե-
նայն երկրի մինչև ցիններորդ ժամն. խաւարեցաւ
45 արեգակն: Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ
46 մէջ: Եւ կարդաց Յիսուս 'ի ձայն մեծ՝ և ասէ.
Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Զայս իբ-
47 րև ասաց՝ եհան զոգի: Եւ տեսեալ հարիւրապետին
զոր ինչ եղեն, փառաւոր արար զԱստուած և ասէ.
48 Արդարև այրս այս արդար էր: Եւ ամենայն ժողո-
վուրդքն որ եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն
49 և զգործ, բախէին զկուրծս՝ և դառնային: Կային և
ամենայն ծանօթքն նորա 'ի հեռաստանէ, և կա-

նայք որ եկեալ էին զհետ նորա 'ի Գալիլեէ՝ տեսա֊
նէին զայն։ Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր 50
նախարար՝ այր բարեգործ և արդար, սա չէր միա֊ 51
բանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, յԱրի֊
մաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ու֊
նէր արքայութեան Աստուծոյ. սա մատուցեալ առ 52
Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. և իջու֊ 53
ցեալ զնա պատեաց պատանաւ, և եդ 'ի
կառածոյ գերեզմանի, ուր չէր ոք բնաւ եդեալ։ Եւ 54
օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր. և երթային 55
զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա 'ի Գա֊
լիլեէ, տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմինն
նորա։ Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս, 56
և 'ի շաբաթուն հանգստեցին վասն պատուիրա֊
նին։

ԳԼՈՒԽ ԻԴ

Բայց 'ի միաշաբաթուն վաղ ընդ առաւօտն՝ 1
եկին 'ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաս֊
տեցին, և այլ կանայք ընդ նոսա։ Եւ գտին զվէմն 2
թաւալեցուցեալ 'ի գերեզմանէ անտի, և մտեալ 'ի 3
ներքս՝ ոչ գտին զմարմինն տեառն Յիսուսի։ Եւ 4
եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք
երկու հասին առ նոսա 'ի հանդերձս լուսաւորս։ Եւ 5
իբրև զահի հարան՝ և խոնարհեցուցին զերեսս իւ֊
րեանց յերկիր, ասեն ցնոսա. Զի՞ խնդրէք զկեն֊
դանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ։ Յի֊ 6
շեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գալի֊
լեա, և ասէր՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել 7
'ի ձեռս մարդոց մեղաւորաց, և 'ի խաչ ելանել, և
յերրորդ աւուր յառնել։ Եւ յիշեցին զբանսն նորա։ 8
Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, 9
և այլոցն ամենեցուն, Եւ էին Մարիամ Մագդաղե֊ 10
նացի և Յովհաննա և Մարիամ Յակոբեայ և այլք

11 ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն. և երևե֊
ցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանքն նոցա՝ և
12 չհաւատային նոցա։ Բայց Պետրոս յարուցեալ ըն֊
թացաւ 'ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկը֊
տաւսն լոկ՝ զի կային. և գնաց ընդ միտս զարմացեալ
13 թէ զինչ եղև։ Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթա֊
յին 'ի նմին աւուր 'ի գեօղ մի, որ հեռի էր յԵրու֊
սաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ, և էր ա֊
14 նուն նորա՝ Էմմաւուս. և նոքա խօսէին ընդ միմեանս
15 վասն ամենայն անցիցն անցելոց։ Եւ եղև ընդ խօ֊
սելն նոցա և ընդ վիճելն՝ և ինքն իսկ Յիսուս մերձե֊
16 ցաւ և երթայր ընդ նոսա. և նոցա աչք կալեալ էին
17 առ 'ի չճանաչելոյ զնա։ Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ են
բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս մինչդեռ
18 գնայքդ, և տրտմեալ էք։ Պատասխանի ետ մի ոմն
'ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա.
Դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ
19 գործեցաւ 'ի նմա յաւուրս յայսոսիկ։ Եւ ասէ ցնո֊
սա. Զի՞նչ։ Եւ նոքա ասեն. զՅիսուսէ Նազովրա֊
ցւոյ, որ եղև այր մարգարէ, հզօր արդեամբք և բա֊
նիւք առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն.
20 որպէս մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն
մեր 'ի դատաստան մահու, և հանին զնա 'ի խաչ։
21 Մեք ակն ունէաք թէ նա է որ փրկելոցն է զԻսրա֊
յէլ. այլ և հանդերձ այսու ամենայնիւ, այս երրորդ
22 օր է յորմէ հետէ այն գործեցաւ։ Այլ և կանայք
ոմանք 'ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ
23 ընդ առաւօտս չոգան 'ի գերեզմանն, և ոչ գտին ըզ֊
մարմին նորա. եկին և ասեն, թէ և տեսիլ ևս
հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ թէ կենդա֊
24 նի է։ Եւ գնացին ոմանք 'ի մէնջ 'ի գերեզմանն, և
գտին նոյնպէս՝ որպէս կանայքն ասացին, բայց զնա ոչ
25 տեսին։ Եւ նա ասէ ցնոսա. Ո՜վ անմիտք և հեղգա֊
սիրտք 'ի հաւատալ յամենայնի՝ զոր խօսեցան մար֊
26 գարէքն. ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստո֊

սի, և մտանել 'ի փառս իւր։ Եւ սկսեալ 'ի Մովսի-
սէ և յամենայն մարգարէիցն՝ մեկնէր նոցա որ ինչ 27
յամենայն գիրս գրեալ է զնմանէ։ Իբրև մերձեցան 28
'ի գեօղն յոր երթային, և նա պատճառէր հեռա-
գոյն ևս ուրեք երթալ։ Եւ բռնադատեցին զնա և ա- 29
սեն. Ա՛ռ մեզ ագիր, զի ընդ երեկս է, և տարաժա-
մեալ է օրս։ Եւ եմուտ ագանել անդ ընդ նոսա։
Եւ եղև 'ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ 30
օրհնեաց, եբեկ և ետ նոցա, և նոցա բացան աչք 31
և ծանեան զնա, և նա եղև 'ի նոցանէ աներևոյթ։
Եւ ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին 32
'ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն, և որ-
պէս բանայր մեզ զգիրս։ Եւ յարուցեալ նոյնժամայն 33
դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զմետա-
սանսն և զորս ընդ նոսայն էին, և ասեն՝ թէ արդա- 34
րև յարեաւ Տէր և երևեցաւ Սիմովնի։ Եւ նոքա 35
պատմէին զայն որ զճանապարհայնն, և թէ զիարդ
ետ ծանօթս նոցա 'ի բեկանել հացին։ Մինչ դեռ 36
զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց 'ի մէջ նոցա՝
և ասէ ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ՝ մի՛
երկնչիք. և զահի հարեալ երկնչէին, և համարէին 37
ոգի ինչ տեսանել։ Եւ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ 38
էք, և ընդէր խորհուրդք ելանեն 'ի սիրտս ձեր. տե- 39
սէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք
զիս և տեսէք. զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի,
որպէս զիս տեսանէք զի ունիմ։ Եւ զայս ասացեալ՝ 40
եցոյց նոցա զձեռսն, և զոտս։ Եւ մինչդեռ տակաւին 41
չհաւատային 'ի խնդութենէն, և զարմացեալ էին,
ասէ ցնոսա. Ունի՞ք ինչ կերակուր աստ։ Եւ նոքա 42
ետուն նմա ձկան խորովելոյ մասն և խորիսխ մեղու։
Եւ ա՛ռ եկեր առաջի նոցա, և զմնացորդն ետ ցնո- 43
սա. Եւ ասէ ցնոսա. Այս բանք են զոր խօսեցայ 44
ընդ ձեզ՝ մինչ առ ձեզն էի. թէ պարտ է լնուլ ա-
մենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի և 'ի մարգարէս
և 'ի սաղմոսն վասն իմ։ Յայնժամ եբաց զմիտս նո- 45

46 ցա՝ իմանալ զգիրս։ Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս
47 պարտ էր չարչարել Քրիստոսի, և յառնել 'ի մեռե-
լոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ա-
պաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն
ազգս՝ սկսեալ յԵրուսաղէմէ. և դուք էք վկայք այ-
48 սոցիկ։ Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի
49 ձեզ և դուք նստարուք 'ի քաղաքիս յԵրուսաղէմ,
50 մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց։ Եհան
զնոսա մինչև 'ի Բեթանիա, և ամբարձեալ զձեռս
51 իւր օրհնեաց զնոսա։ Եւ եղև յօրհնելն նորա զնո-
52 սա՝ մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս։ Եւ
նոքա երկիր պագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ու-
53 րախութեամբ մեծաւ։ Եւ էին հանապազ 'ի տա-
ճարին, գովէին և օրհնէին զԱստուած։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու Աւետարանն գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակոբայ Զեբեդեայ. որ անկեալ 'ի վերայ լանջացն Տեառն, նոյն ևս գրեաց զաւետարանս զայս։ Եւ սկիզբն առնէ յաստուածային Բանէն. և զբուն մարմնոյ ծննդեան յեղանակէ յաւելն, և Բանն մարմին եղև։ Եւ յեղանակէ զմկրտութիւնն Յովհաննու, և զընտրութիւն աշակերտացն. այլ և զնշանս և զարուեստս զոր եղեն. և զհարուածն՝ որ մատնեցաւ պոնտացւոյ Պիղատոսի, և խաչեցաւ. յորում և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և 'ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին. և մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի. և յարեաւ յերրորդ աւուր, երեւեցաւ աշակերտացն ինքն։

Յովհաննէս՝ որ և որդի որոտման, զվերինն որոտալով պատմեաց մեզ։ Սա զկնի յետոյ և երեք ամ համբառնալոյ Փրկչին գրեաց զԱւետարանս իւր յԵփեսոս քաղաքի, 'ի խնդրելոյ եկեղեցւոյն Ասիոյ՝ 'ի լեզու յոյն։

ԳԼՈՒԽՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	հմր
Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած.	ա.	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ.	ա.	15
Վասն գալոյն առ նա գառինն Աստուծոյ.	ա.	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյն.	ա.	39
Վասն գտանելոյն զՄեսիա.	ա.	41
Վասն 'ի Կանայ հարսանեացն.	բ.	1
Վասն արտաքս հանելոյն 'ի տաճարէն.	բ.	15
Վասն Նիկոդիմոսի.	գ.	1
Վասն 'ի Յայենոն մկրտելոյն.	գ.	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան.	գ.	25
Վասն կնոջն սամարացւոյ.	դ.	7
Վասն թագաւորազինն.	դ.	46
Վասն երեսուն և ութամեայ հիւանդին.	ե.	5
Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի.	ե.	20
Վասն հինգ հացին, և երկու ձկանն.	զ.	9
Վասն գնալոյն 'ի վերայ ծովուն.	զ.	19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից.	զ.	41
Վասն շրջելոյն Յիսուսի 'ի Գալիլէ, և խրատու եղբարցն.	է.	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս.	է.	30
Վասն 'ի ծնէկուրէն.	թ.	1
Վասն դնելոյն Յիսուսի զանձն 'ի վերայ ոչխարացն.	ժ.	15
Վասն նաւակատեացն յԵրուսաղէմ.	ժ.	22
Վասն Ղազարու յարութեանն.	ժա.	1
Վասն օծանելոյն զՏէրն.	ժբ.	3
Վասն՝ որ ասաց Յուդա զիւղոյն.	ժբ.	5
Վասն յովանակին.	ժբ.	14
Վասն մատչելոյ հեթանոսացն առ Տէր.	ժբ.	21

Վասն հօտին ցրւելոյ. ԺԶ.
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ. ԺԶ.
Վասն ընթրեացն՝ և լուանալոյ զոտս աշակերտացն. ԺԷ. 11
Վասն չարչարանացն Յիսուսի, և սփոփելոյ զաշակերտան. ԺԷ. 15
Վասն գալոյ Հոգւոյն և մխիթարելոյ զաշակերտան. ԺԷ. 26
Վասն մատնութեանն Յիսուսի. ԺԸ. 5
Վասն ուրացութեանն Պետրոսի, և հաւուն խօսելոյ. ԺԸ. 25
Վասն ածելոյն զՅիսուս 'ի վանացն Կայիափայ. ԺԸ. 28
Վասն տանելոյն զՅիսուս 'ի Գողգոթա. ԺԹ. 17
Վասն աւանդելոյ զհոգին. ԺԹ. 30
Վասն խնդրելոյն զտէրունական մարմինն. ԺԹ. 38
Վասն բերելոյն Նիկոդեմոսի զմուռս. ԺԹ. 39
Վասն գալոյ կանանցն 'ի գերեզմանն. Ի. 1
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յիսուսի առ աշակերտան. Ի. 19
Վասն զԹովմաս հաւատալոյ Տեառն. Ի. 27
Վասն ուտելոյն ընդ նոսա, և հարցմանն ընդ Պետրոսի. ԻԱ. 15
Վասն սիրելոյ աշակերտին, և գրելոյ զաւետարանն. ԻԱ. 24

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Բկ. ԻՍԿԶԲԱՆԷ էր բանն, և բանն էր առ Ա-
2 տուած, և Աստուած էր բանն. Նա էր 'ի սկզբանէ
3 առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց
4 նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղեն: Նովաւ կեանք
5 էր, և կեանքն էր լոյս մարդկան, և լոյսն 'ի խաւարի
անդ լուսաւոր է, և խաւար նմա ոչ եղև հասու:
6 Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա
7 Յովհաննէս. սա եկն 'ի վկայութիւն զի վկայեսցէ
վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ.
8 ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր
9 լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝
10 որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, և աշխարհ
11 նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն
12 եկն, և իւրքն զնա ոչ ընկալան. իսկ որք ընկալան
զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լի-
13 նել, որոց հաւատասցեն յանուն նորա. որք ոչ յա-
րենէ, և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կամաց առն,
14 այլ յԱստուծոյ ծնան: Եւ բանն մարմին եղև, և
բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նորա զփառս իբ-
րև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտու-

Թեամբ։ Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղա֊ 15
կեաց և ասէ. Սա է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գա֊
լոցն էր, առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր։ Զի 16
'ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս
փոխանակ շնորհաց։ Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի 17
տուան, շնորհքն և ճշմարտութիւնն 'ի ձեռն Յիսու֊
սի Քրիստոսի եղեն։
ԲԲ. Զաստուած ոչ ոք ետես երբեք, բայց միա֊ 18
ծինն Որդի որ է 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց։ Եւ այս 19
է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին
առ նա Հրեայքն յԵրուսաղեմէ քահանայս և ղե֊
տացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞ ես։ Եւ խոս֊ 20
տովան եղև և ոչ ուրացաւ, խոստովան եղև եթէ ես
ոչ եմ Քրիստոսն։ Եւ հարցին զնա. իսկ ո՞վ ես 21
դու, Եղիա՞ ես։ Եւ ասէ. Ոչ եմ։ իսկ մարգարէ՞ն
ես դու։ Պատասխանի ետ, թէ ոչ։ Իսկ ասա մեզ, 22
դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք որոց առաքե֊
ցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։ Ասէ. Ես ձայն բար֊ 23
բառոյ յանապատի, ուղիղ արարէք զճանապարհն
Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ։ Եւ որք ա֊ 24
ռաքեցանն՝ 'ի փարիսեցւոց անտի էին. հարցին ցնա՝
և ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, 25
և ոչ Եղիա, և ոչ մարգարէն։ Պատասխանի ետ 26
նոցա Յովհաննէս և ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով.
'ի միջի ձերում կայ զոր դուքն ոչ գիտէք, որ զկնի 27
իմ գալոցն է, որում չեմ արժանի՝ եթէ լուծից ըզ֊
խրացս կօշկաց նորա։ Այս 'ի Բեթաբրա եղև յայն 28
կոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս և մկրտէր։
ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր 29
առ նա, և ասէ. Ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ
բառնայ զմեղս աշխարհի։ Սա է՝ վասն որոյ ես ա֊ 30
սէի, զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև, զի յա֊
ռաջ իսկ էր քան զիս։ Եւ ես ոչ գիտէի զնա, այլ 31
զի յայտնի լինիցի Իսրայելի՝ վասն այնորիկ եկի ես
ջրով մկրտել։ Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ 32

տեսանէի զհոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յեր֊
33 կնից, և հանգչէր 'ի վերայ նորա։ Եւ ես ոչ գիտէի
զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ա֊
սաց ցիս. յոյր վերայ տեսանիցես զհոգին, զի իջա֊
նիցէ և հանգչիցի 'ի վերայ նորա, նա է որ մկրտէ
34 հոգւովն սրբով։ Եւ ես տեսի, և վկայեցի եթէ
սա է որդին Աստուծոյ։
35 ԲԴ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշա֊
36 կերտաց անտի նորա երկու. և հայեցեալ ընդ Յի֊
սուսի՝ զի զգնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս գառն
37 Աստուծոյ։ Լուան 'ի նմանէ երկու աշակերտքն՝ զի
38 խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։ Իբրև դարձաւ
Յիսուս, և ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա,
ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք։ Նոքա ասեն ցնա.
Ռաբբի, — որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ, —
39 ո՞ւր են օթեվանք քո։ Ասէ ցնոսա. Եկայք և տե֊
սէք։ Եկին և տեսին՝ ուր էին օթեվանք նորա. և
առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրև տասնե֊
40 րորդ։ Էր Անդրէաս՝ եղբայր Սիմովնի Վիմի՝ մի
յերկուց անտի, որ լուանն 'ի Յովհաննէ և գնա֊
41 ցին զկնի նորա։ Գտանէ սա նախ զեղբայր իւր
զՍիմովն, և ասէ ցնա. Գտաք զՄեսիա՝ որ թարգ֊
մանի Քրիստոս. սա ած զնա առ Յիսուս։ Հայե֊
42 ցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես Սիմովն որ֊
դի Յովնանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգ֊
մանի Պետրոս։
43 ԲԵ. Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի Գալի֊
լեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս.
44 Եկ զկնի իմ։ Եւ էր Փիլիպպոս 'ի Բեթսայիդա,
45 'ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի։ Գտանէ Փիլիպ֊
պոս զՆաթանայէլ, և ասէ ցնա. Զորմէ գրեաց
Մովսէս յօրէնսն և մարգարէքն՝ գտաք զՅիսուս
46 զորդի Յովսեփայ 'ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նա֊
թանայէլ. Իսկ 'ի Նազարեթէ մարթ ինչ իցէ բա֊
րւոյ իմիք լինել։ Ասէ ցնա Փիլիպպոս. Եկ և տես։

Իբրև ետես Յիսուս զՆաթանայէլ զի գայր առ նա, 47
ասէ վասն նորա. Ահա արդարև իսրայելացի, յորում
նենգութիւն ոչ գոյ։ Ասէ ցնա Նաթանայէլ. Ուս- 48
տի ճանաչես զիս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա. Մինչև էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր
'ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատասխանի ետ 49
նմա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու ես որդի
Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայելի։ Պատաս- 50
խանի ետ նմա Յիսուս և ասէ. փոխանակ զի ասա-
ցի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզենւոյն՝ հաւատաս,
մեծամեծս ևս քան զայս տեսցես։ Եւ ասէ ցնա. 51
Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բա-
ցեալ, և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջա-
նիցեն 'ի վերայ որդւոյ մարդոյ։

ԳԼՈՒԽ Բ

ԲԶ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կա- 1
նա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի. կոչե- 2
ցաւ և Յիսուս և աշակերտքն նորա 'ի հարսանիսն։
Եւ 'ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցՅիսուս. Գի- 3
նի ոչ ունին։ Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ իմ և 4
քո, կին դու. չև է հասեալ ժամանակ իմ։ Ասէ 5
մայրն նորա ցպաշտաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ ա-
րասջիք։ Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սըր- 6
բութեանն Հրէից. տանէին մի մի'ի նոցանէ մարս եր-
կուս կամ երիս։ Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զթա- 7
կոյկս ջրով։ Եւ լցին զնոսա մինչև 'ի վեր։ Եւ ասէ 8
ցնոսա. Արդ առէք և բերէք տաճարապետին։ Եւ
նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն 9
զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ, բայց
սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն, խօսի ընդ 10
փեսային տաճարապետն և ասէ. Ամենայն մարդ զա-
նոյշ գինի յառաջագոյն պաշտէ, և յորժամ արբե-
նան՝ յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ

11 մինչև ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս
'ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. և
հաւատացին 'ի նա աշակերտքն նորա։
12 ԲԷ. Յետ այսորիկ էջ Յիսուս 'ի Կափառնաում,
ինքն և մայր իւր և եղբարք իւր, և անդ լինէր ոչ
13 բազում ինչ աւուրս։ Եւ էր մերձ զատիկն Հրէից,
14 և ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ եգիտ 'ի տաճա-
րին՝ զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւ-
15 նիս. և զլումայափոխսն որ նստէին։ Եւ արար խա-
րազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն,
զոչխարսն և զարջառս՝ և զպղինձս հատավաճառացն
16 ցրուեաց, և զսեղանսն կործանեաց. և որ զաղաւ-
նիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, և
17 մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի։ Ապա
յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է. Նախանձ
18 տան քո կերիցէ զիս։ Պատասխանի ետուն Հրեայքն
և ասեն ցնա. Զինչ նշան ցուցանես դու մեզ՝ զի
19 զայդ առնես։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս
20 կանգնեցից զդա։ Ասեն ցնա Հրեայքն. Զքառա-
սուն և զվեց ամ շինեցաւ տաճարս այս, և դու զե-
21 րիս աւուրս կանգնես զսա։ Բայց նա ասէր վասն
22 տաճարի մարմնոյ իւրոյ։ Իսկ յորժամ յարեաւ 'ի
մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է զոր
ասացն. և հաւատացին գրոյն և բանին զոր ասաց
Յիսուս։
23 ԳԿ. Եւ իբրև էր յԵրուսաղէմ 'ի զատկին 'ի տօ-
նի, բազումք հաւատացին յանուն նորա, զի տեսա-
24 նէին զնշանսն զոր առնէր։ Բայց ինքն Յիսուս ոչ
հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամե-
25 նայն. և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն
մարդոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր 'ի մարդն։

Իբրև ետես Յիսուս զՆաթանայէլ զի գայր առ նա, 47
ասէ վասն նորա. Ահա արդարև Իսրայելացի, յորում
նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանայէլ. Ուս- 48
տի՞ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա. Մինչև էր Փիլիպպոսի կոչեալ զքեզ՝ զի էիր
'ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ: Պատասխանի ետ 49
նմա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու ես որդի
Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայելի: Պատաս- 50
խանի ետ նմա Յիսուս և ասէ. փոխանակ զի ասա-
ցի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզենւոյն՝ հաւատաս,
մեծամեծս ևս քան զայս տեսցես: Եւ ասէ ցնա. 51
Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բա-
ցեալ, և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջա-
նիցեն 'ի վերայ որդւոյ մարդոյ:

ԳԼՈՒԽ Բ

ԲԶ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կա- 1
նա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի. կոչե- 2
ցաւ և Յիսուս և աշակերտքն նորա 'ի հարսանիսն:
Եւ 'ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցՅիսուս. Գի- 3
նի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ իմ և 4
քո, կին դու. չև է հասեալ ժամանակ իմ: Ասէ 5
մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ ա-
րասջիք: Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սըր- 6
բութեանն Հրէից. տանէին մի մի 'ի նոցանէ մարս եր-
կուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զթա- 7
կոյկսդ ջրով: Եւ լցին զնոսա մինչև 'ի վեր: Եւ ասէ 8
ցնոսա. Արդ առէք և բերէք տաճարապետիդ: Եւ
նոքա բերին: Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն 9
զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ, բայց
սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն, խօսի ընդ 10
փեսային տաճարապետն և ասէ. Ամենայն մարդ զա-
նոյշ գինի յառաջագոյն պաշտէ, և յորժամ արբե-
նան՝ յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ

11 մինչև ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս
'ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. և
հաւատացին 'ի նա աշակերտքն նորա:
12 ԲԷ. Յետ այսորիկ էջ Յիսուս 'ի Կափառնաում,
ինքն և մայր իւր և եղբարք իւր, և անդ լինէր ոչ
13 բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից,
14 և ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ 'ի տաճա-
րին՝ զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւ-
15 նիս. և զլումայափոխսն որ նստէին: Եւ արար խա-
րազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն,
զոչխարսն և զարջառս՝ և զպղինձս հատավաճառացն
16 ցրուեաց, և զսեղանսն կործանեաց. և որ զաղաւ-
նիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, և
17 մի՛ առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի: Ապա
յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է. Նախանձ
18 տան քո կերիցէ զիս: Պատասխանի ետուն Հրեայքն
և ասեն ցնա. Զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի
19 զայդ առնես: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս
20 կանգնեցից զդա: Ասեն ցնա Հրեայքն. Զքառա-
սուն և զվեց ամ շինեցաւ տաճարս այս, և դու զե-
21 րիս աւուրս կանգնես զսա: Բայց նա ասէր վասն
22 տաճարի մարմնոյ իւրոյ: Իսկ յորժամ յարեաւ 'ի
մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է զոր
ասացն. և հաւատացին գրոյն և բանին զոր ասաց
Յիսուս:
23 ԳԿ. Եւ իբրև էր յԵրուսաղէմ 'ի զատկին 'ի տօ-
նի, բազումք հաւատացին յանուն նորա, զի տեսա-
24 նէին զնշանսն զոր առնէր: Բայց ինքն Յիսուս ոչ
հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամե-
25 նայն. և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն
մարդոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր 'ի մարդն:

ԳԼՈՒԽ Գ

Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անուն Նիկոդեմոս 1
անուն նորա, իշխան Հրէից. սա եկն առ նա գիշերի 2
և ասէ ցնա. Ռաբբի, գիտեմք թէ յԱստուծոյ ե֊
կեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս
առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ
նմա: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Ամէն 3
ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կա֊
րէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ: Ասէ ցնա 4
Նիկոդեմոս. Զիա՞րդ կարէ մարդ ծնանել որ ծերն
իցէ. միթէ մա՞րթ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ
կրկին մտանել և ծնանել: Պատասխանի ետ Յի֊ 5
սուս և ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք
ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայ֊
ութիւն Աստուծոյ: Զի ծնեալն 'ի մարմնոյ մար֊ 6
մին է, և ծնեալն 'ի Հոգւոյ՝ հոգի է: Դու մի զար֊ 7
մանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել վերս֊
տին. զի հողմ՝ ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես, 8
այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո երթայ. սոյնպէս և
ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն: Պատասխանի ետ Նի֊ 9
կոդեմոս և ասէ ցնա. Զիա՞րդ մարթի այդմ լինել:
Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Դու ես վար֊ 10
դապետ Իսրայելի՝ և զայդ ո՞չ գիտես: Ամէն ամէն 11
ասեմ քեզ, զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տե֊
սաք՝ վկայեմք, և զվկայութիւնն մեր ոչ ընդունիք:
Իսկ արդ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ հա֊ 12
ւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հա֊
ւատայցէք:
ԳԲ. Եւ ոչ ոք յերկինս ել, եթէ ոչ որ էջն յեր֊ 13
կնից որդին մարդոյ՝ որ էն յերկինս: Եւ որպէս Մով֊ 14
սէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձ֊
րանալ պարտ է որդւոյ մարդոյ. զի ամենայն որ հաւա֊ 15
տայ 'ի նա՝ (մի կորիցէ, այլ) ընկալցի զկեանսն յաւի֊

16 տենականս: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ,
մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հա֊
ւատայ 'ի նա՝ մի կորիցէ. այլ ընկալցի զկեանսն յա֊
17 ւիտենականս: Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի
իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փըր֊
18 կեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ 'ի նա՝ ոչ դա֊
տապարտեսցի, և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ
դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի
19 Որդւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաստան, զի
լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար ա֊
ռաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարու֊
20 թեան: Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս,
և ոչ գայ առ լոյսն՝ զի մի յանդիմանեսցին գործք նո֊
21 րա. իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի
յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործե֊
ցան:
22 ԳԳ. Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նո֊
րա յերկիրն Հրէաստանի, և անդ շրջէր նոքօք հան֊
23 դերձ և մկրտէր: Մկրտէր և Յովհաննէս ի Յայե֊
նոն, մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ,
24 և գային և մկրտէին: Զի չև ևս էր արկեալ ըզ֊
25 Յովհաննէս 'ի բանտ: Եւ եղև խնդիր յաշակեր֊
տացն Յովհաննու ընդ Հրէի՝ վասն սրբութեան.
26 եկին առ Յովհաննէս և ասեն ցնա. Ռաբբի, որ
էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն
վկայեցեր, ահաւանիկ նա մկրտէ և ամենեքին գան
27 առ նա: Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. Ոչ
կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ
28 տուեալ նմա յերկնից 'ի վերուստ: Դուք ձեզէն վը֊
կայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն,
29 այլ թէ առաքեալ եմ առաջի նորա: Որ ունի հարսն՝
նա է փեսայ, իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ
նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փե֊
սային. արդ այս ուրախութիւն որ իմս է՝ լցեալ է:
30 Նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ: Որ 'ի վե֊

րուստն գայ՝ 'ի վերոյ է քան զամենայն, որ յերկրէ 31
ատի է՝ յերկրէ է և յերկրէ խօսի։ Որ յերկնիցն 32
գայ, զոր ինչ ետես և զոր լուաւ՝ վկայէ, և զվկայու-
թիւն նորա ոչ ոք ընդունի։ Որ ընդունի զվկայու- 33
թիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է. զի 34
զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի,
զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին։ Հայր սի- 35
րէ զՈրդի, և զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա։ Որ 36
հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանսն յաւիտենականս,
և որ ոչ հնազանդի Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս, այլ
բարկութիւն Աստուծոյ մնայ 'ի վերայ նորա։

ԳԼՈՒԽ Դ

ԳԴ. Իբրև գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսե- 1
ցիքն, եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ. և 2
մկրտէ քան զՅովհաննէս, — քանզի ոչ եթէ Յիսուս
ինքնին մկրտէր, այլ աշակերտքն նորա —, եթող ըզ- 3
հրէաստան երկիր, և եկն միւսանգամ 'ի Գալիլեա։
Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա։ Գայ նա 'ի 4
քաղաք մի սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, 5
մերձ 'ի գեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում՝ Յով-
սեփայ. և անդ էր աղբիւր մի Յակովբայ։ Եւ Յի- 6
սուս վաստակեալ 'ի ճանապարհէն՝ նստէր 'ի վերայ
աղբերն, և էր ժամ իբրև վեցերորդ։ Գայ կին մի 7
'ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր
ինձ ըմպել։ Զի աշակերտքն նորա երթեալ էին 'ի 8
քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցեն։ Ասէ ցնա 9
կինն սամարացի. Դու որ հրեայդ ես, զիա՞րդ յինէն
ըմպել խնդրես 'ի կնոջէ սամարացւոյ։ Զի ոչ եր-
թեք խառնակին Հրեայք ընդ սամարացիս։ Պատաս- 10
խանի ետ նմա Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու
զպարգևսն Աստուծոյ, և ով է որ ասէրդ ցքեզ՝ թէ
տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և
տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ ցնա կինն. Տէր, 11

դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է,
12 իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի։ Միթէ
դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ
զայս ջրհոր ետ մեզ, և ինքն աստի արբ՝ և որդիք
13 նորա և խաշինք նորա։ Պատասխանի ետ նմա Յի-
սուս և ասէ. Ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ,
միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես
տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան. այլ ջուրն
14 զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխե-
15 լոյ 'ի կեանսն յաւիտենականս։ Ասէ ցնա կինն.
Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի ծարաւեցից՝ և
16 մի՛ եկից այսր հանել ջուր։ Ասէ ցնա Յիսուս. Երթ
կոչեա զայր քո՝ և եկ այսր։ Պատասխանի ետ նմա
17 կինն և ասէ. Ձիք իմ այր։ Ասէ ցնա Յիսուս. Բա-
18 րւոք ասացեր՝ թէ չիք իմ այր. զի հինգ այր փոխեալ
է քո, և զոր այժմն ունիս՝ չէ քո այր. զայդ արդար
19 ասացեր։ Ասէ ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ մար-
20 գարէ իցես դու. Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ եր-
կիր պագին, և դուք ասէք՝ թէ յԵրուսաղէմ եեթ
21 է տեղի ուր արժան իցէ երկիր պագանել։ Ասէ ցնա
Յիսուս. Կին դու, հաւատա ինձ, զի եկեսցէ ժա-
մանակ՝ յորժամ ոչ 'ի լերինս յայսմիկ, և ոչ յԵրու-
22 սաղէմ երկիր պագանիցեն Հօր։ Դուք երկիր պա-
գանէք՝ որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք
23 որում գիտեմքն. զի փրկութիւն 'ի Հրէից է։ Այլ
եկեսցէ ժամանակ, և այժմ իսկ է. յորժամ ճշմա-
րիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր՝ հո-
գւով և ճշմարտութեամբ. քանզի և Հայր այնպիսի
երկրպագուս իւր խնդրէ.
24 ԳԵ. Հոգի է Աստուած, և երկրպագուացն նորա՝
հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագա-
25 նել։ Ասէ ցնա կինն. Գիտեմ զի Մեսիա գայ՝ ա-
նուանեալն Քրիստոս, յորժամ եկեսցէ, նա պատ-
26 մեսցէ մեզ զամենայն։ Ասէ ցնա Յիսուս. Ես եմ,
27 որ խօսիմս ընդ քեզ։ Եւ յայն բան եկին աշակերտ-

քըն նորա, և զարմանային զի ընդ կնոջն խօսէր.
բայց ոչ ոք ասաց 'ի նոցանէ թէ զինչ խնդրես, կամ
զինչ խօսիս ընդ դմա։ Եթող կինն զսափորն իւր և 28
չոգաւ 'ի քաղաքն. և ասէ ցմարդիկն. Եկայք տե- 29
սէք զայր մի որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գոր-
ծեալ է. միթէ նա իցէ Քրիստոսն։ Ելին 'ի քաղա- 30
քէն և գային առ նա։ Եւ մինչ չև եկեալ էին նո- 31
քա, աղաչէին զնա աշակերտքն և ասէին. Ռաբբի,
հաց կեր։ Նա ասէ ցնոսա. Ես կերակուր ունիմ ու- 32
տել, զոր դուքն ոչ գիտէք։ Ասէին աշակերտքն ընդ 33
միմեանս. Միթէ երեր ինչ ոք դմա ուտել։ Ասէ 34
ցնոսա Յիսուս. Իմ կերակուր այն է՝ զի արարից
զկամս այնորիկ որ առաքեաց զիս, և կատարեցից
զգործն նորա։ Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ ևս չորք ա- 35
միսք են՝ և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ.
ամբարձէք զաչս ձեր և տեսէք զարտորայն, զի սպի-
տակացեալ են և 'ի հունձս հասեալ։ Եւ որ հնձէն՝ 36
վարձս առնու, և ժողովէ զպտուղ 'ի կեանսն յաւի-
տենականս. զի որ սերմանէն և որ հնձէ, հասարակ
ցնծասցեն։ Յայսմ իսկ է բանն ճշմարիտ, զի այլ է 37
որ սերմանէ, և այլ է որ հնձէ։ Ես առաքեցի զձեզ 38
հնձել՝ զոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակե-
ցին, և դուք 'ի վաստակս նոցա մտէք։ Եւ 'ի քա- 39
ղաքէն յայնմանէ սամարացւոց բազումք հաւատացին
'ի նա՝ վասն բանի կնոջն վկայելոյ եթէ ասաց ինձ
զամենայն որ ինչ իմ գործեալ էր։ Իսկ իբրև եկին 40
առ նա սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա.
և եղև անդ աւուրս երկուս։ Եւ ևս բազումք հա- 41
ւատացին 'ի նա վասն բանին նորա, և ասէին ցկինն 42
թէ ոչ այսուհետև վասն քո խօսիցդ հաւատամք, զի
մեզէն իսկ լուաք 'ի դմանէ, և գիտեմք եթէ դա է
ճշմարտիւ փրկիչ աշխարհաց։

ԳՋ. Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց 43
'ի Գալիլեա։ Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ 44
մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ 45

յորժամ եկն նա 'ի Գալիլեա, ընկալան զնա գալի-
լեացիքն. զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն զոր
արար յԵրուսաղէմ 'ի տօնին. քանզի և նոքա ե-
46 կեալ էին 'ի տօնն։ Եկն դարձեալ 'ի կանա գալի-
լեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդէր թագա-
ւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր 'ի կափառ-
47 նաում։ Նա իբրև լուաւ, եթէ Յիսուս եկեալ է 'ի
հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ նա և աղաչէր
զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր
48 'ի մեռանել։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ նշանս ինչ
49 և արուեստս տեսանէք, ոչ հաւատայք։ Ասէ ցնա
թագաւորազնն. Տէր, էջ մինչ չև մեռեալ իցէ մա-
50 նուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կեն-
դանի է։ Եւ հաւատաց այրն բանին զոր ասաց նմա
51 Յիսուս, և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ
եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն և ասեն,
52 թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա
վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա.
53 Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն։ Գի-
տաց հայրն նորա թէ յայնմ ժամու, յորում ասացն
ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւա-
54 տաց ինքն և ամենայն տուն իւր։ Զայս դարձեալ
երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ 'ի հրէաստանէ
'ի Գալիլեա։

ԳԼՈՒԽ Ե

1 ԳԷ. Յետ այսորիկ տօն էր Հրէից, և ել Յիսուս
2 յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրուսաղէմ 'ի Պրոբատիկէ
աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա,
3 հինգ սրահ. յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ
հիւանդաց, կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ու-
4 նէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն ըստ
ժամանակի իջանէր յաւազանն՝ և յուզէր զջուրսն.
և որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ոչ

ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի՝ 5
որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւ-
րում. զնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, և 6
գիտաց թէ բազում ժամանակք են այնուհետև, ա-
սէ ցնա. կամի՞ս՝ ողջ լինել։ Պատասխանի ետ նմա 7
հիւանդն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն
յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես գան-
գաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ա-
սէ ցնա Յիսուս. Արի առ զմահիճս քո և գնա։ Եւ 8
ողջացաւ այրն. և յարեաւ, առ զմահիճս իւր և շըր- 9
ջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրեայ- 10
քըն ցբժշկեալն. Շաբաթ է, և ոչ էր արժան առ-
նուլ քեզ զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա և
ասէ. Որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս՝ առ զմա- 11
հիճս քո և գնա։ Հարցին ցնա և ասեն. Ո՞վ է այրն 12
որ ասացն քեզ՝ առ զմահիճս քո և շրջեաց։ Եւ 13
բժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ. քանզի Յիսուս
խոյս ետ վասն ամբոխին 'ի տեղւոջէ անտի։ Յետ 14
այնորիկ գտանէ զնա Յիսուս 'ի տաճարին, և ասէ
ցնա. Ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մեղանչեր, զի մի՛
չար ևս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն և պատմեաց 15
Հրէից, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զիս։ Եւ 16
վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայք, զի զայն
առնէր 'ի շաբաթու։ Եւ Յիսուս պատասխանի ետ 17
նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։
վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայքն սպա- 13
նանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ
և հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէր
զանձն Աստուծոյ։

Գկ. Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. 19
Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առ-
նել յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն
զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին
նման գործէ։ Զի Հայր սիրէ զորդի, և զամենայն 20
ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս

քան զայնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուքդ
21 զարմանայք։ Զի որպէս Հայր յարուցանէ զմե-
ռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս կա-
22 մի կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք,
23 այլ զամենայն դատաստանն ետ Որդւոյ իւրոյ. զի
ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն
զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ ըզ-
24 Հայր զառաքիչն նորա։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի
որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն
զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և 'ի դա-
տաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի
25 կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ՝
և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի
26 Որդւոյն Աստուծոյ, և որք լսիցենն՝ կեցցեն։ Զի
որպէս հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս
27 ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ Եւ իշ-
խանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի որ-
28 դի մարդոյ է, ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ
ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայ-
29 ցեն, լսիցեն ձայնի նորա, և ելեսցեն արտաքս. ո-
րոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, և
որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց։
30 Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ. այլ որպէս
լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ
խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առա-
քեացն զիս։

31 Գբ. Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ
32 չէ ճշմարիտ. այլ է որ վկայէ վասն իմ. և դուք գի-
տէք եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց
33 վասն իմ։ Դուք առաքեցէք առ Յովհաննէս, և վը-
34 կայեաց ճշմարտութեանն. այլ ես ոչ եթէ 'ի մարդ-
կանէ առնում վկայութիւն. այլ զայս ասեմ զի դուք
35 ապրեսջիք։ Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր և ծա-
գէր, և դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի
36 'ի լոյս նորա։ Այլ ես ունիմ վկայութիւն մեծ ևս

քան զՅովհաննու, զգործսն՝ զոր ետ ցիս Հայր զի
կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ՝
վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս. և որ 37
առաքեացն զիս Հայր, նա վկայեաց վասն իմ։ Դուք
ոչ զձայն նորա երբէք լուարուք, և ոչ զտեսիլ նորա
տեսէք։ Եւ ոչ զբան նորա ունիք 'ի ձեզ բնակեալ, 38
զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։
Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել 39
զկեանսն յաւիտենականս, և նոքին իսկ են որ վկայեն
վասն իմ, որովք համարիքն ունել կեանս. և դուք ոչ 40
կամիք գալ առ իս, զի զկեանսն ունիցիք։ Ես փառս 41
'ի մարդկանէ ոչ առնում. այլ գիտեմ զձեզ՝ զի ըզ- 42
սէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։ Ես եկի յանուն 43
Հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ
յիւր անուն. զնա ընդունիցիք։ Զիա՞րդ կարէք 44
դուք հաւատալ, զի փառս 'ի միմեանց առնուք, և
զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։ Մի՛ հա- 45
մարիք եթէ ես չարախօս լինիցիմ զձէնջ առ Հօր.
գոյ որ չարախօս կայ զձէնջ, Մովսէս՝ յոր դուքն յու-
սացեալ էք. զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, 46
հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ՛ իսկ
գրեաց։ Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք զիա՞րդ 47
իմոց բանիցս հաւատայցէք։

ԳԼՈՒԽ Զ

ԴԳ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծո- 1
վուն գալիլեացւոց Տիբերեայ, և զհետ երթայր նո- 2
րա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր
առնէր 'ի վերայ հիւանդաց։ Ել 'ի լեառն Յիսուս, 3
և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ 4
զատիկ տօնն Հրէից։ Բարձ 'ի վեր զաչս իւր Յի- 5
սուս, և ետես զի ժողովուրդ բազում գայր առ նա.
ասէ ցՓիլիպպոս. Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն
դոքա։ Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր 6

7 զինչ առնելոց էր։ Պատասխանի ետ նմա Փիլիպ-
պոս. Երկերիւր դահեկանի հաց՝ չէ դոցա բաւա-
կան, թէպէտ և իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առ-
8 նուցու։ Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Ան-
9 դրէաս՝ եղբայր Սիմոնի Վիմի. Է աստ պատա-
նեակ մի որ ունի հինգ նկանակ գարեղէն և երկուս
10 ձկունս, այլ այն զինչ է առ այդչափ մարդիկդ. Ասէ
Յիսուս. Բազմեցուցէք զմարդիկդ։ Եւ էր խոտ
յոյժ 'ի տեղւոջն. և բազմեցան մարդիկն թուով
11 իբրև հինգ հազար։ Եւ ա՛ռ զհացն Յիսուս, և գո-
հացաւ, և բաշխեաց բազմականացն. նոյնպէս և
12 'ի ձկանցն որչափ և կամեցան։ Եւ իբրև յագե-
ցան, ասէ ցաշակերտսն. Ժողովեցէք զնշխարեալ կո-
13 տորսդ, զի մի՛ ինչ կորիցէ։ Ժողովեցին և լցին եր-
կոտասան սակառի զկոտորոցն՝ 'ի հինգ գարեղէն նը-
14 կանակէ անտի, որ յաւելաւ 'ի կերողացն։ Իսկ մար-
դիկն իբրև տեսին զնշանսն զոր արար՝ ասէին, թէ
սա է ճշմարիտ մարգարէն՝ որ գալոց էր յաշխարհ։
15 ԴԴ. Յիսուս իբրև գիտաց եթէ գալոց են յա-
փըշտակել զնա, զի արասցեն զնա թագաւոր, գնաց
16 դարձեալ 'ի լեառնն միայն։ Եւ իբրև երեկոյ եղև,
17 իջին աշակերտքն նորա 'ի ծովեզրն։ Եւ մտեալ 'ի
նաւ՝ գային յայնկոյս ծովուն 'ի Կափառնաում. և
իբրև նսեմացաւ, և չև ևս եկեալ էր առ նոսա Յի-
18 սուս, և ծովն 'ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։ Եւ
19 վարեալ իբրև ասպարէսս քսան և հինգ կամ երե-
սուն, տեսանէին զՅիսուս՝ զի գայր 'ի վերայ ծովուն
20 և մերձ էր 'ի նաւն, և զարհուրեցան յոյժ. և նա
21 ասէ ցնոսա. Ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ կամէին ըն-
դունել զնա 'ի նաւն, և վաղվաղակի եհաս նաւն
յերկիրն յոր երթային։
22 ԴԵ. Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր յայն-
կոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ
բայց միայն 'ի միոյն՝ յոր մտին աշակերտքն Յիսուսի.
և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր 'ի

նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին. իբրև 23
այլ նաւք գային 'ի Տիբերեայ մօտ յայն տեղի ուր 24
զհացն կերան: Իսկ իբրև ետես ժողովուրդն եթէ
Յիսուս ոչ է անդ՝ և ոչ աշակերտքն նորա, առին նո-
քա զնաւսն, և եկին 'ի Կափառնաում խնդրել զՅի-
սուս: Եւ իբրև գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն 25
ցնա. Ռաբբի, երբ եկիր այսր: Պատասխանի ետ 26
նոցա Յիսուս և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. խըն-
դրէք դուք զիս, իբրև ոչ եթէ զի նշանս ինչ տե-
սէք, այլ զի կերայք 'ի հացէ անտի և յագեցարուք:
Երթայք գործեցէք՝ մի զկորստական կերակուրն, 27
այլ զկերակուրն որ մնայ 'ի կեանսն յաւիտենականս,
զոր որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կըն-
քեաց Աստուած: Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք 28
զի զգործսն Աստուծոյ գործեսցուք: Պատասխանի 29
ետ Յիսուս և ասէ ցնոսա. Այս է գործն Աստու-
ծոյ, զի հաւատասջիք յայն՝ զոր առաքեացն նա: Ա- 30
սեն ցնա. Զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք և
հաւատասցուք, զի՞նչ գործիցես: Հարքն մեր կերան 31
զմանանայն յանապատի անդ, որպէս և գրեալ է.
Հաց յերկնից ետ նոցա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. 32
Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ ոչ Մովսէս ետ ձեզ ըզ-
հացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յեր-
կնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է, որ իջա- 33
նէն յերկնից և կեանս տայ աշխարհի: Ասեն ցնա. 34
Տէր, յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն: Ասէ 35
ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ
իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծա-
րաւեսցի: Այլ ասացի ձեզ՝ եթէ տեսէք զիս, և ոչ 36
հաւատայք: Զամենայն զոր տայ ինձ Հայր՝ առ իս 37
եկեսցէ, և որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս: Զի 38
իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս
այնորիկ որ առաքեացն զիս:

ԴՁ. Այս են կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս, 39
զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից 'ի նմա-

40 նէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում: Այս են
կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զորդի և
հաւատայցէ 'ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենա-
41 կանս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում: Տըր-
տընջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց՝ թէ ես եմ
42 հացն իջեալ յերկնից, և ասէին. Ո՞չ սա է որդին
Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն և զմայր. իսկ
43 արդ զիա՞րդ ասէ՝ եթէ ես յերկնից իջի: Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք
ընդ միմեանս. ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ
44 Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. և ես յա-
45 րուցից զնա յաւուրն յետնում: Գրեալ է 'ի մար-
գարէս. Եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստու-
ծոյ. ամենայն որ լսէ 'ի Հօրէ և ուսանի՝ գայ առ
46 իս. իբրև ոչ եթէ զՀայր՝ ուրուք տեսեալ իցէ, ե-
47 թէ ոչ որ էն յԱստուծոյ՝ նա ետես զՀայր: Ամէն
ամէն ասեմ ձեզ, զի որ հաւատայ՝ ընդունի զկեանսն
48 յաւիտենականս: Ես եմ հացն կենաց: Հարքն ձեր
49 կերան զմանանայն յանապատին՝ և մեռան: Այս է
50 հացն՝ որ յերկնիցն իջեալ է, զի որ ուտիցէ ոք 'ի
նմանէ՝ մի մեռանիցի. ես եմ հացն կենդանի, որ
51 յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմա-
52 նէ՝ կեցցէ 'ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մար-
մին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի:
53 Մարտնչէին ընդ միմեանս Հրեայքն և ասէին.
Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել:
54 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ եթէ
ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զա-
55 րիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ
զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւի-
տենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում:
56 Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն
57 իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ և ըմ-
58 պէ զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես 'ի նմա: Որ-
պէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի

եմ վասն Հօր. և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն
իմ: Այս է հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կե֊ 59
րան հարքն ձեր զմանանայն և մեռան. որ ուտէ ըզ֊
հացս զայս՝ կեցցէ յաւիտեան: Զայս ասաց 'ի ժո֊ 60
ղովրդեանն յուսուցանելն 'ի կափառնաում: Եւ բա֊ 61
զումք յաշակերտացն իբրև լուան՝ ասեն. Խիստ է
բանդ այդ, ո՞վ կարէ լսել դմա: Իբրև գիտաց Յի֊ 62
սուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշա֊
կերտքն նորա, ասէ ցնոսա. Այդ գայթագղեցուցա֊
նէ զձեզ: Իսկ արդ եթէ տեսանիցէք զՈրդի մար֊ 63
դոյ՝ զի ելանիցէ ուր էր զառաջինն: Հոգին է կեն֊ 64
դանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօ֊
սեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք. այլ են ոմանք 'ի 65
ձէնջ՝ որ ոչ հաւատան: Քանզի գիտէր Յիսուս
իսկզբանէ՝ ո՞վ են այնոքիկ որ ոչն հաւատան, և ո՞վ
այն է որ մատնելոցն է զնա: Եւ ասէր. Վասն այնո֊ 66
րիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ 67
ոչ իցէ տուեալ 'ի Հօրէ իմմէ: Յայսմանէ բազումք
յաշակերտացն նորա չոգան յետս, և ոչ ևս շրջէին
ընդ նմա: Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն. 68
Միթէ և դուք կամիք երթալ: Պատասխանի ետ 69
նմա Սիմոն Պետրոս. Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս
կենաց յաւիտենականաց ունիս. և մեք հաւատացաք 70
և ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Աստու֊
ծոյ: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ ես զձեզ 71
զերկոտասանսդ ընտրեցի, և մի 'ի ձէնջ սատանայ
է: Եւ ասէր զսիմովնեան Յուդայէ սկարիովտացւոյ. 72
զի նա իսկ մատնելոց էր զնա, և մի էր յերկոտասա֊
նիցն:

ԳԼՈՒԽ Է

Դէ. Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս 'ի Գալի֊ 1
լեա, քանզի ոչ կամէր 'ի Հրէաստանի, շրջել զի
խնդրէին զնա Հրեայքն սպանանել: Եւ էր մերձ 2

3 տօնն Հրէից տաղաւարահարաց: Ասեն ցնա եղ֊
բարքն նորա. Գնա աստի և երթ 'ի Հրէաստան, զի
և աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո զոր գործես.
4 զի ոչ ոք է որ 'ի ծածուկ ինչ գործէ, և խնդրէ ինքն
համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա
5 զանձն քո աշխարհի: Քանզի և եղբարքն իսկ չէին
6 հաւատացեալ 'ի նա: Ասէ ցնոսա Յիսուս. Ժամա֊
նակ իմ չև է հասեալ. բայց ձեր ժամանակ յամե֊
7 նայն ժամու պատրաստ է: Ոչ կարէ աշխարհ ատել
զձեզ, բայց զիս ատեայ. զի ես վկայեմ վասն նորա՝
8 եթէ գործքն իւր չարութեան են: Դուք երթայք
'ի տօնն յայն, ես ոչ երթամ 'ի տօնն յայն. զի իմ
9 ժամանակ չև է լցեալ: Զայս իբրև ասաց, ինքն
10 մնաց անդէն 'ի Գալիլեա. Իբրև ելին եղբարքն նո֊
րա, ապա և ինքն ել 'ի տօնն՝ ոչ յայտնի: այլ իբրև
11 'ի ծածուկ: Եւ Հրեայքն խնդրէին զնա 'ի տօնի անդ
12 և ասէին. Ո՞ւր իցէ նա: Եւ քրթմնջիւն էր զնմանէ
'ի ժողովուրդն. կէսքն ասէին՝ թէ բարւոք է, այլք
13 ասէին՝ ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն: Եւ ոչ
ոք համարձակ խօսէր զնմանէ վասն երկիւղին Հրէից:
14 Եկ. Իբրև տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս 'ի տա֊
15 ճարն և ուսուցանէր: Զարմանային Հրեայքն և
ասէին. Զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ ընաւ
16 չիք: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Իմ
վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ որ առա֊
17 քեացն զիս. եթէ ոք կամի զկամս նորա առնել, գի֊
տասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծո՞յ իցէ
18 արդեօք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձ֊
նէ իւրմէ խօսի, փառս անձին իւրում խնդրէ. իսկ
որ խնդրէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա
19 ճշմարիտ է, և անիրաւութիւն ոչ գոյ 'ի նմա: Ո՞չ
Մովսէս ետ ձեզ զօրէնս, և ոչ ոք 'ի ձէնջ առնէ
20 զօրէնս. զի՞ խնդրէք զիս սպանանել: Պատասխանի
ետ ժողովուրդն և ասէ. Դև գոյ 'ի քեզ. ո՞վ խնդրէ
21 զքեզ սպանանել: Պատասխանի ետ նոցա Յիսուս և

ասէ. Գործ մի գործեցի, և ամենեքին զարմացեալ 22
էք. վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն.
զի ոչ եթէ 'ի Մովսիսէ էր, այլ 'ի հարց անտի. և 'ի 23
շաբաթու թլփատէք զմարդ: իսկ արդ եթէ թլփա-
տութիւն առնու մարդ 'ի շաբաթու, զի մի օրէնքն
Մովսիսի լուծցին, ընդ իս ցասուցեա՞լ էք՝ զի ողջոյն
իսկ մարդ բժշկեցի 'ի շաբաթու:

ԻԲ. Մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաս- 24
տան արարէք: Ասէին ոմանք յԵրուսաղեմացւոց ան- 25
տի. Ո՞չ նա է սա զոր խնդրէինն սպանանել. և ա- 26
ւասիկ յայտնապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա.
գուցէ արդեօք և իշխանքն գիտացին՝ թէ սա իցէ
Քրիստոսն: Այլ զսա գիտեմք ուստի է, իսկ Քրիս- 27
տոսն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է: Աղա- 28
ղակեաց Յիսուս 'ի տաճարին, ուսուցանէր և ասէր.
Եւ զիս գիտէք, և ուստի եմն գիտէք. և յանձնէ
իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն
զիս. զոր դուքն ոչ գիտէք, ես գիտեմ զնա, զի 'ի 29
նմանէ իսկ եմ, և նա առաքեաց զիս: Խնդրէին զնա 30
ունել, և ել 'ի ձեռաց նոցա. և ոչ ոք արկ 'ի նա
ձեռն, զի չև էր հասեալ ժամ նորա: Եւ բազումք 31
'ի ժողովրդենէն հաւատացին 'ի նա և ասէին.
Քրիստոսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ նշանս
առնիցէ քան զոր սայս առնէ: Եւ լուան փարիսե- 32
ցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին
քահանայապետքն և փարիսեցիքն սպասաւորս՝ զի
կալցին զնա: Ասէ Յիսուս. փոքր մի ևս ժամանակ 33
ընդ ձեզ եմ, և երթամ առ այն՝ որ առաքեացն զիս:
Խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր եմն երթամ՝ 34
դուք ոչ կարէք գալ: Ասեն Հրեայքն ընդ միմեանս. 35
Իսկ յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա.
միթէ 'ի սփիւռս հեթանոսաց երթիցէ՝ և ուսուցանի-
ցէ զհեթանոսս. զի՞նչ է բանն այն զոր ասաց. խնդ- 36
րիցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր եմն երթամ՝
դուք ոչ կարիցէք գալ:

37 ԻԳ. Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յի-
սուս աղաղակէր և ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ,
38 եկեսցէ առ իս և արբցէ. որ հաւատայ յիս՝ որպէս
և ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջը-
39 րոց կենդանութեան: Զայս ասէր վասն Հոգւոյն
զոր ընդունելոց էին որ հաւատային 'ի նա. զի չև էր
40 Հոգի, քանզի Յիսուս չև էր փառաւորեալ: Ոմանք
'ի ժողովրդենէն իբրև լսէին զբանս զայս՝ ասէին.
Սա է ճշմարիտ մարգարէն. այլքն ասէին, Սա է
41 Քրիստոսն: Իսկ կէսքն ասէին. Միթէ 'ի Գալի-
լեէ՞ գալոց իցէ Քրիստոս. ո՞չ գիրք ասեն՝ եթէ 'ի
42 զաւակէ Դաւթի, և 'ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դա-
43 ւիթն էր, գալոց է Քրիստոս: Եւ եղև հերձուած
44 'ի մէջ ժողովրդեանն վասն նորա: Եւ ոմանք 'ի նո-
ցանէ կամէին ունել զնա, այլ ոչ ոք մխեաց 'ի նա
45 ձեռն: Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահա-
նայապետսն և փարիսեցիս, և ասեն ցնոսա.
46 Ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր: Պատասխանի ետուն
սպասաւորքն և ասեն. Ոչ երբեք այնպէս խօսեցաւ
47 մարդ, որպէս այրն այն: Պատասխանի ետուն փա-
րիսեցիքն և ասեն. Միթէ և դո՞ւք մոլորեցարուք.
48 միթէ ոք յիշխանացն հաւատա՞ց 'ի նա կամ 'ի փա-
49 րիսեցւոցն, այլ այն խաժամուժ ամբոխ՝ որ ոչ գիտէ
50 զօրէնս, և նզովեալք են: Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝
որ եկեալն էր առ նա 'ի գիշերին յառաջագոյն՝ և մի
51 էր 'ի նոցանէ. Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝
եթէ ոչ լսեն ինչ նախ 'ի նմանէ, կամ գիտեն զինչ
52 գործէ: Պատասխանի ետուն նմա և ասեն. Միթէ
և դո՞ւ ես 'ի Գալիլեէ իցես. քննեա և տես, զի
մարգարէ 'ի Գալիլեէ ոչ յառնէ:

ԳԼՈՒԽ Ը

1 Գնացին իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր: Իսկ Յի-
սուս գնաց 'ի լեառն Ձիթենեաց. և ընդ առաւօտն

դարձեալ եկն 'ի տաճարն, և գայր առ նա ամենայն 2
ժողովուրդն, և ուսուցանէր զնոսա։ Ածին քահա- 3
նայապետքն և փարիսեցիք կին մի ըմբռնեալ 'ի շնու-
թեան, և կացուցեալ զնա առաջի, ասեն. կինս 4
այս ըմբռնեալ ինքն յայտնապէս շնացեալ է. և յօ- 5
րէնսն Մովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս քար-
կոծել. արդ դու զի՞նչ ասես վասն դորա. Զայս ա- 6
սէին փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն
զնմանէ. իսկ Յիսուս 'ի խոնարհ հայելով՝ գրէր մա-
տամբն յերկրի։ Իսկ իբրև ստիպեցին հարցանելով 7
զնա, հայեցեալ 'ի վեր՝ ասէ ցնոսա. Անմեղն 'ի
ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար 'ի վերայ դորա։ Եւ դար- 8
ձեալ 'ի խոնարհ հայելով գրէր յերկրի։ Եւ լուեալ՝ 9
ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոցն մինչև 'ի
վերջինսն. և մնաց միայն Յիսուս, և կինն կայր առա-
ջի նորա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. 10
կին դու, ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատապարտեաց։ Եւ 11
ասէ. Ոչ, Տէր։ Եւ ասէ Յիսուս. Եւ ոչ ես դա-
տապարտեմ զքեզ. երթ, յայսմ հետէ մի մեղանչեր։
ԵԴ. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և 12
ասէ. Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ
խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց։ Ա- 13
սեն ցնա փարիսեցիքն. Դու վասն անձին քո վկայես,
և վկայութիւն քո չէ ճշմարիտ։ Պատասխանի ետ 14
Յիսուս և ասէ ցնոսա. Թէպէտ և ես վկայեմ վասն
անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է. զի գիտեմ
ուստի եկի և յո երթամ. բայց դուք ոչ գիտէք ուս-
տի գամ կամ յո երթամ։ Դուք ըստ մարմնոյ դա- 15
տիք, ես ոչ դատիմ և ոչ զոք. Թէպէտ և դատիմ 16
ես զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն,
այլ ես՝ և որ առաքեացն զիս Հայր։ Եւ յօրէնսն 17
իսկ ձեր գրեալ է, թէ երկուց մարդոց վկայութիւն
ճշմարիտ է. ես եմ որ վկայեմ վասն իմ, և վկայէ 18
վասն իմ որ առաքեացն զիս Հայր։ Ասէին ցնա. Ո՞ւր 19
է հայր քո։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-

սա. Ոչ զիս գիտէք և ոչ զՀայրն իմ. եթէ զիս գի-
20 տէիք՝ և զՀայրն իմ թերևս գիտէիք։ Զայս բանս
խօսեցաւ Յիսուս 'ի տան գանձին, յորժամ ուսու-
ցանէր 'ի տաճարի անդ. և ոչ ոք կալաւ զնա, զի չև
ևս հասեալ էր ժամ նորա։
21 ԵԵ. Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես երթամ,
և խնդրիցէք զիս. և 'ի մեղս ձեր մեռանիջիք. զի
22 ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ։ Ասէին
Հրեայքն. Միթէ զիւրովի՞ն երթայցէ, զի ասէ՝
23 թէ ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ։ Եւ ասէ
ցնոսա. Դուք 'ի ներքուստ աստի էք, և ես 'ի վե-
24 րուստ անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ
յայսմ աշխարհէ։ Բայց ասացի ձեզ՝ թէ 'ի մեղս
ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ ես եմ,
25 մեռանիցիք 'ի մեղս ձեր։ Ասեն ցնա. Դու ո՞վ ես։
26 Ասէ ցնոսա Յիսուս. Նախ՝ զի և խօսիմս իսկ ընդ
ձեզ. բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել և դատել.
այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. և ես զոր լուայն
27 'ի նմանէ՝ զայն խօսիմ յաշխարհի։ Եւ ոչ գիտացին՝
28 թէ զՀօրէ ասէր ցնոսա։ Ասէ ցնոսա Յիսուս. Յոր-
ժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ
գիտասջիք՝ թէ ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ոչ առ-
նեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ.
29 և որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս միայն
30 զի ես զհաճոյս նորա առնեմ հանապազ։ Իբրև զայս
խօսեցաւ, բազումք հաւատացին 'ի նա։
31 ԵԶ. Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն հաւատա-
ցեալս. Եթէ դուք կայջիք 'ի բանի իմում, ճշմարիտ
32 աշակերտք իմ էք. և ծանիջիք զճշմարտութիւնն, և
33 ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պատասխանի ե-
տուն նմա և ասեն. Զաւակ Աբրահամու եմք, և ոչ
ումեք երբեք ծառայեցաք. զիա՞րդ ասես եթէ ազատք
34 լինիջիք։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ա-
մէն ասեմ ձեզ, թէ ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ
35 է մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ 'ի տան, իսկ

որդին 'ի յաւիտեան կայ. իսկ արդ եթէ որդին զձեզ 36
ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։ Գիտեմ 37
զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել
զիս, զի բանին իմոյ չէք տեղի 'ի ձեզ։ Ես զոր տեսի 38
առ Հօր իմում՝ խօսիմ, և դուք զոր լուարուք 'ի հօ-
րէն ձերմէ՝ առնէք։ Պատասխանի ետուն նմա և ա- 39
սեն. Հայր մեր Աբրահամ է։ Ասէ ցնոսա Յիսուս.
Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործս Աբրահա-
մու գործէիք. այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս, 40
զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւնն խօսեցայ զոր լուայ
'ի Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար. դուք առ- 41
նէք զգործս հօրն ձերոյ։ Ասեն ցնա. Մեք 'ի պոռն-
կութենէ չեմք ծնեալ. մի է հայր մեր, Աստուած։ 42
Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Աստուած էր հայր ձեր,
սիրէիք արդեօք զիս, զի ես յԱստուծոյ ելի և եկի.
և ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց զիս։
Ընդէր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն զի ոչ կա- 43
րէք լսել զբանն իմ։ Դուք 'ի հօրէ 'ի սատանայէ էք, 44
և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա
մարդասպան էր իսկզբանէ, և 'ի ճշմարտութեան ոչ
եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա. յորժամ խօ-
սիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր
նորա։ Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հա- 45
ւատայք ինձ։ Ո՞ 'ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մե- 46
ղաց. եթէ զճշմարիտն ասեմ, ընդէր ոչ հաւատայք
ինձ։ Որ էն յԱստուծոյ, զբանս Աստուծոյ լսէ. և 47
դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ։ Պա- 48
տասխանի ետուն Հրեայքն և ասեն ցնա. Ո՞չ բար-
ւոք ասեմք մեք՝ եթէ սամարացի ես դու, և դև գոյ
'ի քեզ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Յիս դև 49
ոչ գոյ. այլ պատուեմ զՀայր իմ, և դուք անարգէք
զիս. ես ոչ խնդրեմ զփառս իմ, է որ խնդրէն և դա- 50
տի։ Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ պա- 51
հեսցէ, զմահ մի՛ տեսցէ 'ի յաւիտեան։ Ասեն ցնա 52
Հրեայքն. Արդ գիտացաք թէ դև գոյ 'ի քեզ. Աբ-

րահամ մեռաւ և մարգարէքն, և դու ասես՝ եթէ ոք
զբանն իմ պահեսցէ, մի՛ ճաշակեսցէ զմահ 'ի յաւի-
53 տեան։ Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր
Աբրահամ որ մեռաւ, և մարգարէքն մեռան. արդ դու
54 զո՞վ առնես զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս. Եթէ
ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչ ինչ են. է
Հայր որ փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք՝ թէ
55 Աստուած մեր է, և ոչ ճանաչէք զնա։ Բայց ես գի-
տեմ զնա. և թէ ասեմ, թէ ոչ գիտեմ զնա, ձեզ
նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա. և զբան նորա պա-
56 հեմ։ Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր
57 իմ, ետես և ուրախ եղև։ Ասեն ցնա Հրեայքն. Յիսուն
58 ամ չև ևս է քո, և զԱբրահամ տեսեր։ Ասէ ցնոսա
Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, յառաջ քան զլինելն
59 Աբրահամու եմ ես։ Վէմս առին՝ զի արկցեն 'ի վերայ
նորա, և Յիսուս խոյս ետ և ելգնաց 'ի տաճարէ անտի։

ԳԼՈՒԽ Թ

1 Եւ. Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր 'ի
2 ծնէ. և հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն. Ռաբ-
բի, ո՞յր մեղաւ է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր
3 ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դորա մեղաւ է
և ոչ հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի լիցին գործքն
4 Աստուծոյ 'ի դմա։ Եւ ինձ պարտ է գործել զգործս
5 այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ գի-
շեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել. մինչդեռ յաշխարհի
6 եմ, լոյս եմ աշխարհի։ Զայս իբրև ասաց՝ եթուք 'ի
գետին և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի
7 վերայ աչաց կուրին, և ասէ ցնա. Երթ լուա յաւա-
զանին Սիլովամայ, որ թարգմանի առաքեալ. չոգաւ
8 լուացաւ, եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տե-
սեալն էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ա-
9 սէին. Ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր։ Կէսքն ա-
սէին, նա է. այլքն ասէին, ոչ. այլ նման է նմա. և

ինքն ասէր, թէ ես եմ։ Ասեն ցնա. իսկ զիա՞րդ բա֊ 10
ցան աչք քո։ Նա ետ պատասխանի. Այր մի որում 11
Յիսուս ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ա֊
սէ ցիս. երթ 'ի Սիլովամ և լուա, չոգայ լուացայ և
տեսանեմ։ Ասեն ցնա. Ո՞ւր է նա. Ասէ ցնոսա. Ոչ 12
գիտեմ։ Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն 13
էր. և էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս և 14
եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա և 15
փարիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ ցնո֊
սա. կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց, և լուացայ և տե֊
սանեմ։ Ասեն ոմանք 'ի փարիսեցւոցն. Ոչ է այրն այն 16
յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ։ Կէսքն ասէին.
իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առ֊
նել։ Եւ էին հերձուածք 'ի մէջ նոցա։ Ասեն դար֊ 17
ձեալ ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց
զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հա֊ 18
ւատային Հրեայքն զնմանէ՝ թէ կոյր էր և բացաւ,
մինչև կոչեցին զծնօղս բացելոյն, հարցին ցնոսա և ա֊
սեն. Սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ 19
կոյր ծնաւ. արդ զիա՞րդ տեսանէ։ Պատասխանի ե֊ 20
տուն ծնօղքն նորա և ասեն. Գիտեմք զի սա է որդին
մեր, և զի կոյր ծնաւ. բայց զիարդ այժմ տեսանէ, 21
ոչ գիտեմք. կամ թէ ո՞վ եբաց զաչս դորա, մեք ոչ
գիտեմք. ցդա իսկ հարցէք, ինքնին 'ի չափ հասեալ է,
ինքն իսկ խօսեսցի վասն իւր։ Զայս ասացին ծնօղքն 22
նորա, զի երկնչէին 'ի Հրէից, քանզի ուխտ եդեալ
էր Հրէից, եթէ որ խոստովանեսցէ զնա Քրիստոս՝
'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն. վասն այնորիկ ասա֊ 23
ցին ծնօղքն նորա, թէ ինքնին 'ի չափ հասեալ է՝
ցնա իսկ հարցէք։ Դարձեալ կրկին անգամ կոչեցին 24
զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա. Տուր փառս Ա֊
ստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է։ Եւ 25
նա ասէ. Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս
գիտեմ, զի կոյր էի և արդ տեսանեմ։ Դարձեալ ա֊ 26
սեն ցնա. Զի՞նչ արար քեզ, զիա՞րդ եբաց զաչս

27 քո։ Պատասխանի ետ նոցա. Այժմ ասացի ձեզ՝ և
28 ոչ լուարուք, զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ և
դո՞ւք կամիք աշակերտել նմա։ Նոքա հայհոյէին զնա
և ասէին. Դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի
29 աշակերտք եմք. մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի խօ֊
30 սեցաւ Աստուած, զսա ոչ գիտեմք ուստի է։ Պատաս֊
խանի ետ այրն և ասէ ցնոսա։ Այդ իսկ են սքանչե֊
լիք, զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ զաչս ե֊
31 բաց։ Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց
թէ աստուածապաշտ ոք իցէ, և զկամս նորա առնի֊
32 ցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ ե֊
33 բաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ. եթէ ոչ յԱս֊
34 տուծոյ էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ։ Պատաս֊
խանի ետուն և ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես ա֊
մենևին, և դու վարդապետ լինիս մեր։ Եւ հանին
35 զնա արտաքս։ Լուաւ Յիսուս եթէ հանին զնա ար֊
տաքս, և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու հաւա֊
36 տա՞ս յՈրդի Աստուծոյ։ Նա պատասխանի ետ և ասէ.
37 Տէր, ո՞վ է՝ զի հաւատացից 'ի նա։ Ասէ ցնա Յիսուս.
38 Եւ տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։ Եւ
նա ասէ. Հաւատամ Տէր։ Եւ երկիր եպագ նմա։
39 ԶԿ. Եւ ասէ Յիսուս. Ի դատաստանս եկի յաշ֊
խարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք
40 տեսանենն՝ կուրասցին։ Լուան ոմանք 'ի փարիսե֊
ցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. Միթէ և
41 մեք կո՞յրք իցեմք։ Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք
էիք՝ ոչ էր ձեր մեղ, բայց արդ ասէք՝ թէ տեսա֊
նեմք, և մեղքն ձեր 'ի ձեզ հաստատեալ են։

ԳԼՈՒԽ Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն
'ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ, նա գող է
2 և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչ֊
3 խարաց. նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայնի

նորա լսեն, և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ
զնոսա։ Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, ա- 4
ռաջի նոցա երթայ, և ոչխարքն զհետ նորա երթան,
զի ճանաչեն զձայն նորա. զօտարի զհետ ոչ երթի- 5
ցեն, այլ փախիցեն 'ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն
օտարաց։ Զայս առակ ասաց նոցա Յիսուս, և նոքա 6
ոչ գիտէին՝ թէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսա։ Դար- 7
ձեալ ասէ ցնոսա Յիսուս։ Ամէն ամէն ասեմ ձեզ,
զի ես եմ դուռն ոչխարաց։ Ամենեքեան որ յառաջ 8
քան զիս եկին, գողք էին և աւազակք, այլ ոչ լուան
նոցա ոչխարքն։ Ես եմ դուռն, ընդ իս թէ ոք մտա- 9
նիցէ, կեցցէ. մտցէ և ելցէ, և ճարակ գտցէ։ Գող 10
ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի և սպանցէ և կորուսցէ.
ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին։

ԶԲ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր 11
դնէ 'ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն որ ոչ է հո- 12
վիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն
զի գայ, թողու զոչխարսն և փախչի. և գայլն յափշ-
տակէ զնոսա և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ 13
փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ. և 14
ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ 15
զիս Հայր, գիտեմ և ես զՀայրն. և զանձն իմ դը-
նեմ 'ի վերայ ոչխարաց։ Նա և այլ ևս ոչխարք են 16
իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. և զայնս ևս պարտ է
ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն, և եղիցին 17
մի հօտ և մի հովիւ։ Վասն այնորիկ սիրէ զիս Հայր
իմ, զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից
զնա։ Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա ան- 18
ձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշ-
խանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս
պատուէր առի 'ի Հօրէ իմմէ։ Դարձեալ հերձուած 19
լինէր 'ի մէջ Հրէից վասն բանիցս այսոցիկ։ Եւ ա- 20
սէին բազումք 'ի նոցանէ. Դև գոյ 'ի նմա և մոլեգնի,
զի՞ բնաւ լսէք նմա։ Կէսքն ասէին. Այսպիսի բանք ոչ 21
դիւահարի են. միթէ դև կարէ զաչս կուրի բանալ։

22 ԶԳ. Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ,
23 և ձմեռն էր. և շրջէր Յիսուս 'ի տաճարին՝ 'ի սրա-
24 հին Սողոմոնի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և
ասեն. Մինչև յերբ թափես զոգիս մեր, եթէ դու
25 ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ։ Պատասխա-
նի ետ նոցա Յիսուս և ասէ. Ասացի ձեզ՝ և ոչ հա-
ւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր
26 իմոյ՝ նոքին վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հաւա-
27 տայք, զի չէք յոչխարաց անտի իմոց։ Ոչխարք իմ
ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ
28 գան. և ես տամ նոսա զկեանսն յաւիտենականս, և
մի կորիցեն 'ի յաւիտեան, և մի ոք յափշտակեսցէ
29 զնոսա 'ի ձեռաց իմոց։ Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝
մեծ է քան զամենայն, և ոչ ոք կարէ յափշտակել
30 'ի ձեռաց Հօր իմոյ. ես և Հայր իմ մի եմք։ Վէմս
31 առին Հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա։ Պատաս-
32 խանի ետ նոցա Յիսուս. Բազում գործս բարիս ցու-
ցի ձեզ 'ի Հօրէ իմմէ, վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ
33 քարկոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն նմա
Հրեայքն. Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ
քարկոծ, այլ վասն հայհոյութեան. և զի դու մարդ
34 ես, և զանձն քո Աստուած առնես։ Պատասխանի
ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. Ես
35 ասացի թէ աստուածք իցէք. իսկ եթէ զնոսա աս-
տուածս ասէ՝ առ որս բանն Աստուծոյ եղև, և չէ
36 մարթ եղծանել գրոյն, իսկ զոր Հայր օրհնեաց և ա-
ռաքեաց յաշխարհ, դուք ասէք՝ թէ հայհոյես, զի
37 ասացի թէ Որդի Աստուծոյ եմ։ Եթէ ոչ գործեմ
38 զգործս Հօր իմոյ, մի հաւատայք ինձ. ապա թէ գոր-
ծեմ, թէ և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հա-
ւատացէք. զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ Հայր յիս
39 և ես 'ի Հայր։ Դարձեալ խնդրէին զնա ունել, և
40 ել 'ի ձեռաց նոցա։ Եւ գնաց միւսանգամ յայն կոյս
Յորդանանու, 'ի տեղին ուր էր Յովհաննէս զառա-
41 ջինն և մկրտէր, և անդ լինէր։ Եկին բազումք առ

նա և ասեն. Զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար.
բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ 42
ճշմարիտ էր, և բազումք հաւատացին 'ի նա անդ։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԶԳ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս 'ի Բեթա- 1
նիայ, 'ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռ նորա։
Այս այն Մարիամ էր՝ որ օծ զՏէրն իւղով, և ջըն- 2
ջեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղա-
զարոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նորա 3
և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հի-
ւանդացեալ է։ Իբրև լուաւ Յիսուս, ասէ. Այն 4
հիւանդութիւն չէ 'ի մահ, այլ վասն փառացն Աս-
տուծոյ. զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուիկ։
Եւ սիրէր Յիսուս զՄարիամ և զՄարթա զքոյր 5
նորա և զՂազար։ Իբրև լուաւ թէ հիւանդացեալ 6
է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։
Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք 7
միւսանգամ 'ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. 8
Ռաբբի, այժմ ևս խնդրէին զքեզ Հրեայքն քար-
կոծ առնել, և դարձեալ երթաս անդրէն։ Պատաս- 9
խանի ետ Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է յաւուր.
եթէ ոք գնայ 'ի տուընջեան՝ ոչ գայթագղի, զի
զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գը-
նայ գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ 10
Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղա- 11
զարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զար-
թուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն. Տէր եթէ 12
ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յիսուս վասն մահուն 13
նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն նըն-
ջելոյ քնոյ ասէ։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտ- 14
նապէս. Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ վասն 15
ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ.
բայց արդ եկայք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս՝ 16

անուանեալն երկուորեակ՝ ցաշակերտակիցսն. Օ՛ն
17 եկայք՝ և մեք զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յիսուս՝
18 եգիտ զնա չորեքօրեայ 'ի գերեզմանի։ Եւ էր Բե-
թանիա մերձ յԵրուսաղէմ իբրև ասպարիսօք հնգե-
19 տասան. բազումք 'ի Հրէից անտի եկեալ էին առ
Մարթա և Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա
վասն եղբօրն։ Մարթա իբրև լուաւ՝ թէ Յիսուս
20 գայ, ընդ առաջ գնաց նոցա. բայց Մարիամ նստէր
21 անդէն 'ի տան. Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր, ե-
22 թէ աստ լինեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ
և արդ գիտեմ, թէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝
23 տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ
24 եղբայրն քո։ Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի յարի-
25 ցէ 'ի յարութեան՝ յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յի-
սուս. Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւա-
26 տայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ. և ամենայն որ
կենդանի է և հաւատայ յիս, մի՛ մեռցի 'ի յաւի-
27 տեան. հաւատա՞ս այսմիկ։ Ասէ ցնա. Այո, Տէր,
ես հաւատացի՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Ա-
28 տուծոյ, որ յաշխարհ գալոց էիր։ Եւ զայս իբրև ա-
սաց, գնաց կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն և
29 ասէ. Վարդապետն եկեալ է՝ և կոչէ զքեզ։ Նա
իբրև լուաւ, յարեաւ վաղվաղակի, եկն առ նա։
30 Ջև ևս էր եկեալ Յիսուս 'ի գեօղն, այլ էր անդէն
31 'ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղև նմա Մարթա։ Իսկ
Հրեայքն որ էին ընդ նմա 'ի տան անդ և մխիթա-
րէին զնա. իբրև տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ
վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նորա.
համարէին թէ 'ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ։
32 Իսկ Մարիամ իբրև եկն ուր էրն Յիսուս՝ և ետես
զնա, անկաւ առ ոտս նորա և ասէ. Տէր, եթէ աստ
33 էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ։ Յիսուս
իբրև ետես զնա զի լայր, և որ ընդ նմայն էին Հը-
րեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ,
34 և ասէ. Ո՞ւր եդիք զնա։ Ասեն ցնա. Տէր, եկ և

տես։ Եւ արտասուեաց Յիսուս։ Ասէին Հրեայքն. 35
Տեսէք որչափ սիրէր զնա։ Կէսքն 'ի նոցանէ ասէին. 36
Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել զի և 37
սա մի մեռցի։ Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս 38
իւր, գայ 'ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի ե-
դեալ 'ի վերայ նորա։ Եւ ասէ Յիսուս. Ի բաց արա- 39
րէք զվէմդ։ Ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն. Տէր,
արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։ Ասէ ցնա 40
Յիսուս. Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տես-
ցես զփառս Աստուծոյ։ Եւ իբրև 'ի վեր առին զվէմն, 41
Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր, և ասէ. Հայր, գո-
հանամ զքէն զի լուար ինձ, և ես գիտէի՝ զի յամե- 42
նայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս որ շուրջ
կան առնեմ՝ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր
զիս։ Զայս իբրև ասաց, 'ի ձայն մեծ աղաղակեաց և 43
ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս։ Եւ ել մեռեալն 44
ոտիւք կապեալովք և ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն
վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս։ Լուծէք
զդա և թողէք երթալ։ Բազումք 'ի Հրէիցն որ ե- 45
կեալ էին առ Մարեմանս, իբրև տեսին զոր արարն՝
հաւատացին 'ի նա։ Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ 46
փարիսեցիս, և պատմեցին նոցա զոր արարն Յիսուս։
ՁԶ. Ժողովեցին քահանայապետքն և փարիսե- 47
ցիքն ատեան, և ասեն. Զի՞նչ արասցուք, զի այրն
այն բազում նշանս առնէ. եթէ թողումք զնա այն- 48
պէս, ամենեքին հաւատան 'ի նա. և գայցեն Հո-
ռոմք՝ և բառնայցեն զազգս մեր և զտեղի։ Մի ոմն 49
'ի նոցանէ, անուն Կայիափա, որ քահանայապետ էր
տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. Դուք ոչ ինչ գի- 50
տէք և ոչ բնաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ՝ զի
այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի ա-
մենայն ազգս կորիցէ։ Զայս ոչ յանձնէ ինչ ասաց, 51
այլ քանզի քահանայապետ էր տարւոյն այնորիկ,
մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յիսուս 'ի վե-
րայ ազգին. և ոչ 'ի վերայ ազգին միայն, այլ զի և 52

53 զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ 'ի մի։ Ա-
պա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա։
54 Եւ Յիսուս այնուհետև ոչ եթէ համարձակ շրջէր
'ի մէջ Հրէիցն, այլ գնաց անտի յերկիր մի՝ որ
մերձ էր յանապատ. 'ի քաղաք մի՝ որում անուն էր
Եփրայիմ, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։
55 ՁԷ. Եւ էր մերձ զատիկն Հրէից. և բազումք
ելին յԵրուսաղէմ 'ի գաւառէ անտի յառաջագոյն
քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց։
56 Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս մինչ
կային 'ի տաճարին. Զի՞նչ թուի ձեզ, եթէ ո՞չ
գայցէ 'ի տօն այսր։ Պատուէր տուեալ էր քահա-
նայապետիցն և փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ
թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ, զի կալցին զնա։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն՝
եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր
2 յարոյց 'ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթրիս,
և 'ի սպասու կայր Մարթա, և Ղազար մի էր 'ի
3 բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարեմայ առեալ լիտր մի
իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յի-
սուսի, և հերովք իւրովք մաքրէր զոտս նորա. և տունն
4 լի եղև 'ի հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց ան-
տի, Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոց էր զնա.
5 Ընդէր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեքհարիւր դենա-
6 րի, և տուաւ աղքատաց։ Զայս ասաց՝ ոչ զի զաղքա-
տաց ինչ փոյթ էր նմա, այլ զի գող էր. և զարկղն
ինքն ունէր, և որ ինչ անկանէրն՝ նա կրէր։ Ասէ Յի-
7 սուս. Թոյլ տուք դմա, զի յօրն պատանաց իմոց պա-
8 հեսցէ զայդ։ Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ
ունիք, զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Իբրև գի-
9 տաց ժողովուրդ բազում Հրէիցն թէ անդ է՝ եկին,
ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի և զՂազար տես-

ցեն՝ զոր յարոյց 'ի մեռելոց: Խորհուրդ արարին 10
քահանայապետքն՝ զի և զՂազար սպանցեն. քանզի 11
բազումք 'ի Հրէից երթային և հաւատային 'ի Յիսուս:
ԷԿ. Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ 12
էր 'ի տօնն, իբրև լուան եթէ գայ Յիսուս յԵրու-
սաղէմ, առին ոստս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ 13
նորա. աղաղակէին և ասէին. Ովսաննա, օրհնեալ
որ գաս յանուն Տեառն՝ թագաւորդ Իսրայէլի: Եւ 14
գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ 'ի վերայ նորա. որ- 15
պէս և գրեալ է. Մի՛ երկնչիր, դուստր Սիովնի, ահա-
ւասիկ թագաւոր քո գայ նստեալ 'ի վերայ յաւանակի
իշոյ: Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զա- 16
ռաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայն-
ժամ յիշեցին եթէ այն էր որ գրեալն էր վասն նորա,
և զայն արարին նմա: Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր 17
ընդ նմա, եթէ զՂազար կոչեաց ևեթ 'ի գերեզմա-
նէն և յարոյց զնա 'ի մեռելոց. և վասն այնորիկ ընդ 18
առաջ եղև նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նը-
շանս արարեալ էր նորա: Իսկ փարիսեցիքն ասէին ընդ 19
միմեանս. Տեսանէք՝ զի ոչ ինչ օգտիք, ահաւասիկ
աշխարհ ամենայն զկնի նորա գնաց: Էին անդ ոմանք 20
և հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր պագանիցեն
'ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ 'ի Բեթ- 21
սայիդայ Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին.
Տէր, կամիմք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս
և ասէ ցԱնդրէաս: Անդրէաս և Փիլիպպոս ասեն 22
ցՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ա- 23
սէ. Եհաս ժամ՝ զի փառաւորեսցի որդի մարդոյ:
ԷԲ. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցո- 24
րենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ.
ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ 25
սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, և որ ատեայ զանձն
իւր յաշխարհիս յայսմիկ՝ 'ի կեանս յաւիտենականս
պահեսցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ ե- 26
կեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղի-

ցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն
իմ:
27 ԷԳ. Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ
ասացից՝ եթէ Հայր ապրեցո զիս 'ի ժամանակէ աս-
տի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի 'ի ժամս յայս:
28 Հայր, փառաւորեա զանուն քո: Եկն բարբառ յեր-
կնից, Եւ փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր
29 արարից: Եւ ժողովուրդն որ կայր և լսէր, ասէին՝
որոտումն լինել. կէսքն ասէին, Հրեշտակ խօսեցաւ
30 ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ոչ
վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր:
31 Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժ-
32 միկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցցի արտաքս. և
ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգե-
33 ցից առ իս: Զայս ասէր, նշանակեալ թէ որով
34 մահու մեռանելոց իցէ: Պատասխանի ետ նմա ժո-
ղովուրդն. Մեք լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն
յաւիտեան կայ. և դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է
բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մար-
35 դոյ: Ասէ ցնոսա Յիսուս. փոքր միւս ևս ժամանակ
լոյս ընդ ձեզ է. գնացէք մինչդեռ զլոյսն ունիք, զի
մի՛ խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ 'ի խաւարի, ոչ
36 գիտէ յո՛ երթայ. մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք,
հաւատացէք 'ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք:
Զայս խօսեցաւ Յիսուս, և չոգաւ թաքեաւ 'ի նո-
37 ցանէ: Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նո-
38 ցա, և նոքա ոչ հաւատային 'ի նա. զի լցցի բանն
Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. Տէր, ո՞ հաւատաց
'ի լուր մեր, և բազուկ Տեառն ու՞մ յայտնեցաւ:
39 վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսան-
40 գամ ասէ Եսայի, Թէ կուրացոյց զաչս նոցա, և ափ-
շեցոյց զսիրտս նոցա. զի մի՛ տեսցեն աչօք, և իմա-
41 ցին սրտիւք, և դարձցին և բժշկեցից զնոսա: Զայս
ասաց Եսայի, զի ետես զփառսն նորա, և խօսեցաւ
42 վասն նորա: Բայց սակայն և յիշխանաց անտի բա-

զումք հաւատացին 'ի նա. այլ վասն փարիսեցւոցն
ոչ յայտնէին. զի մի 'ի ժողովրդենէն ելանիցեն։ 43
Քանզի սիրեցին զփառս մարդկան՝ առաւել քան
զփառսն Աստուծոյ։
ԷԴ. Եւ Յիսուս աղաղակէր և ասէր. Որ հա- 44
ւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն որ առա-
քեացն զիս. և որ տեսանէ զիս, զայն տեսանէ որ ա- 45
ռաքեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն 46
որ հաւատայ յիս՝ 'ի խաւարի մի մնասցէ։ Եւ եթէ 47
ոք լուիցէ բանից և ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ
զնա. քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ
զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, և ոչ ըն- 48
դունի զբանս իմ, գոյ որ դատի զնա. բանն զոր ես
խօսեցայ՝ նա դատի զնա յաւուրն յետնում. զի ես 49
յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս
Հայր՝ նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ
խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք 50
են յաւիտենականք. արդ զոր ես խօսիմ, որպէս ա-
սաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԷԵ. Յառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց Յի- 1
սուս՝ թէ հասեալ է ժամ նորա զի փոխեսցի յաշխար-
հէ աստի առ Հայր. սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի
աստ են, 'ի սպառ սիրեաց զնոսա։ Եւ 'ի լինել ընթ- 2
րեացն՝ սատանայի իսկ արկեալ էր 'ի սիրտ՝ զի մատ-
նեսցէ զնա՝ Յուդայ Սիմոնի Իսկարիովտացւոյ։ Գի- 3
տաց Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր 'ի ձեռս
նորա, և թէ յԱստուծոյ ել՝ և առ Աստուած եր-
թայ. յառնէ յընթրեաց անտի և դնէ զհանդերձն, 4
և առեալ ղենջակ մի՝ սփածաւ. և ապա առեալ ջուր՝ 5
արկ 'ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն,
և սրբէր ղենջակաւն զոր սփածեալ էր։ Գայ առ Սի- 6
մոն Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր, դու զիմ զոտս

7 լուանաս։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.
Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց
8 ապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս. Ոչ լուասցես
զոտս իմ յաւիտեան։ Պատասխանի ետ Յիսուս.
9 Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն։ Ա-
սէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր, մի միայն զոտս իմ,
10 այլ և զձեռս և զգլուխ։ Ասէ ցնա Յիսուս. Լուա-
ցելոյն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լուանայցէ.
քանզի ամենեւին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ոչ
11 ամենեքեան։ Զի գիտէր զայն որ մատնելոցն էր
զնա, վասն այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքեան սուրբ
12 էք։ Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձն
իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. Գի-
13 տէք զինչ արարի ձեզ։ Դուք կոչէք զիս վարդա-
պետ և Տէր, և բարւոք ասէք. քանզի եմ իսկ։
14 Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և վար-
դապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ.
15 զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի,
և դուք առնիջիք։
16 ԷԶ. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ
քան զտէր իւր, և ոչ առաքեալ մեծ քան զայն որ
17 առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի ես
18 էք՝ եթէ առնիցէք զայս։ Ոչ վասն ամենեցուն ձեր
ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցի. այլ զի լցցի
գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա-
19 բէութիւն։ Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչչև
եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես
20 եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ընդունի զոր ոք ես
առաքեցից՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդու-
21 նի զայն որ առաքեացն զիս։ Զայս իբրև ասաց
Յիսուս, խռովեցաւ յոգի իւր, վկայեաց և ասէ.
Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնե-
22 լոց է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տա-
23 րակուսեալք թէ զումէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յա-
շակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն

Յիսուս. ակնարկէ նմա Սիմովն Պետրոս հարցանել 24
ո՞ իցէ վասն որոյ ասէն։ Եւ նա անկեալ զլանջօքն 25
Յիսուսի, ասէ ցնա. Տէր, ո՞վ է։ Պատասխանի ետ 26
Յիսուս և ասէ. Այն է՝ որում ես թացից զպատառն
և տաց։ Եւ թացեալ զպատառն՝ տայ Յուդայի իսկարիովտացւոյ. և յետ պատառոյն՝ ապա եմուտ 'ի 27
նա սատանայ։ Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ որ զինչ
առնելոցն ես՝ արա վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք ի 28
մացաւ 'ի բազմականաց անտի՝ թէ առ ինչ ասաց
ցնա. զի ոմանք համարէին թէ զի զարկղն ունէր 29
Յուդա, ասաց նմա Յիսուս, գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ 'ի տօնիս, և կամ զի աղքատաց ինչ տացէ։
Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղա 30
կի, և էր գիշեր։

ԼԷ. Եւ իբրև ել, ասէ Յիսուս. Այժմ փառա 31
ւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ 'ի
նմա։ Զի եթէ Աստուած փառաւորեցաւ 'ի նմա, 32
և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ Որդեակք իմ, փոքր 33
ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրեցէք զիս. և որպէս ասացի ցՀրեայսն, եթէ ուր ես երթամ՝ դուք
ոչ կարէք գալ, և արդ ձեզ ասեմ։ Պատուիրան նոր 34
տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես
զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գի 35
տասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ
սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր, 36
յո՞վ երթաս։ Պատասխանի ետ Յիսուս. Ուր ես
երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս. Տէր, ըն 37
դէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն
իմ իսկ եդից 'ի վերայ քո։ Պատասխանի ետ Յի 38
սուս. Զանձն քո դիցես 'ի վերայ իմ. ամէն ամէն
ասեմ քեզ. չև իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս
ուրասցիս զիս։

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք
2 յԱստուած, և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ
օթեվանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր
իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տե
3 ղի։ Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի,
դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր ես
4 իցեմ, և դուք անդ իցէք. և ուր երթամ՝ գիտի
5 ցէք, և զճանապարհն գիտիցէք։ Ասէ ցնա Թովմաս. Տէր. ոչ գիտեմք յո՞վ երթաս, և զիա՞րդ ըզ
6 ճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս.
Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք.
7 ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև։ Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք, և այսուհետև
8 գիտասջիք զնա, և տեսէ՛ք զնա։ Ասէ ցնա Փիլիպ
9 պոս. Տէր, ցոյց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։ Ասէ
ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ,
և ո՞չ ծանեար զիս, Փիլիպպէ. որ ետես զիս՝ ետես
զՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր։
10 Ո՞չ հաւատաս եթէ ես 'ի Հայր և Հայր յիս է.
բանն զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ
11 խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է նա գործէ
12 զգործսն։ Հաւատայի՛ք ինձ՝ եթէ ես 'ի Հայր և Հայր
յիս. ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք
ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն
յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և
մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ
13 Հայր երթամ։ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ,
14 արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յորդի։ ՎԵՐՋ)
15 ԸԿ. Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահես
16 ջիք. և ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ
տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան.
17 զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ

ընդունել, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա.
բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և
ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս, գամ առ 18
ձեզ. փոքր միւս ևս, և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. 19
բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և
դուք կենդանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք 20
դուք, զի ես 'ի Հօր իմում, և դուք յիս, և ես 'ի
ձեզ. որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա 21
է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ
իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։
Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէր, զի՞ եղև՝ 22
զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պա- 23
տասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Եթէ ոք սիրէ
զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա.
և առ նա եկեսցուք, և օթեվանս առ նմա արասցուք։
Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. և բանն 24
իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։
Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ. իսկ 25
մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յա- 26
նուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցու-
ցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ։ Խաղաղու- 27
թիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ.
ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովես-
ցին սիրտք ձեր, և մի՛ զանգիտեսցեն։ Լուայք զի ա- 28
սացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ
սիրէիք զիս՝ ապա ուրախ լինել էր ձեր՝ եթէ ես առ
Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ 29
այժմ ասացի ձեզ մինչ չև եղեալ զի յորժամ լինի-
ցի՝ հաւատասջիք։ Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ 30
ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ
գտանէ. այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ ըզ- 31
Հայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս
առնեմ. Օ՛ն արիք գնասցուք աստի։

ԳԼՈՒԽ ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է. ա-
2 մենայն ուռ որ յիս է և ոչ բերէ պտուղ, կտրէ զնա.
և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել
3 ևս պտղաբեր լիցի։ Դուք արդէն իսկ սուրբ էք
4 վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կացէք յիս՝ և
ես 'ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յան-
ձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյն-
5 պէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք։ Ես
եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի
նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչ ինչ կա-
6 րէք առնել։ Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել
նա արտաքս իբրև զուռն, և ցամաքեցաւ. և ժողո-
7 վեն զնա, և 'ի հուր արկանեն և այրի։ Եթէ կայ-
ցէք յիս, և բանքն իմ 'ի ձեզ կայցեն. զոր ինչ կա-
8 միցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ։ Յայսմիկ փառա-
ւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, և եղի-
9 ջիք իմ աշակերտք։ Որպէս սիրեաց զիս Հայրն իմ,
և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք 'ի սէր իմ.
10 եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր
իմ. որպէս ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և
11 կամ 'ի սէր նորա։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ու-
րախութիւնն իմ 'ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւնն
12 լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք
13 զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ։ Մեծ ևս քան
զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վե-
14 րայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, ե-
15 թէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ. ոչ ևս կո-
չեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գոր-
ծէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի
զամենայն զոր լուայ 'ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։
16 Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի ըզ-
ձեզ. և եդի զձեզ՝ զի դուք երթայցէք և պտղաբերք

րիցիք, և պտուղն ձեր կացցէ։ Եւ զոր ինչ խնդ-
րիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս 17
պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ 18
զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ 19
յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր ար-
դեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի ըզ-
ձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշ-
խարհ։ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է 20
ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին,
ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահե-
ցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս արաս- 21
ցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն՝
որ առաքեացն զիս։ Իմ եթէ չէր եկեալ և խօսե- 22
ցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ
չիք ինչ պատճառք վասն մեղաց իւրեանց։ Որ զիս 23
ատեայ, և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր 24
գործեալ 'ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ
ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին և ատեցին՝ և զիս և
զՀայր իմ. այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ 25
է, թէ ատեցին զիս տարապարտուց։ Բայց յորժամ 26
եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ 'ի Հօ-
րէ, զՀոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ,
նա վկայեսցէ վասն իմ. և դուք վկայէք, զի իսկզբան- 27
նէ ընդ իս էք։

ԳԼՈՒԽ ԺԶ

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք. 1
'ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ։ Այլ եկես- 2
ցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ հա-
մարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն 3
արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր և ոչ
զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ 4
եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք թէ ես ասացի ձեզ։
Զայս իսկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ 5

էի։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ
6 ոք 'ի ձէնջ հարցանէ ցիս՝ թէ յո՛ երթաս. այլ զի
զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս
7 ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ ե-
թէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթա-
րիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առա-
8 քեցից զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ
զաշխարհ վասն մեղաց, և վասն արդարութեան, և
9 վասն դատաստանի։ Վասն մեղաց, զի ոչ հաւա-
10 տան յիս. վասն արդարութեան, զի առ Հայր իմ
11 երթամ, և ոչ ևս տեսանէք զիս. վասն դատաստա-
նի, զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ
12 է։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կա-
13 րէք հանդարտել այժմիկ. յորժամ եկեսցէ նա Հո-
գին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն
ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի,
այլ զոր լուիցէ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ
14 ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի
15 առնուցու և պատմեսցէ ձեզ։ Զամենայն ինչ
զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ,
16 թէ յիմմէ անտի առնու և պատմէ ձեզ։ Փոքր մի՛
և ոչ ևս տեսանիցէք զիս, և ապա սակաւիկ մի՛ և
17 տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր։ Ասէին
ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. Զինչ է
այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՛ և ոչ տեսանէք
զիս, և դարձեալ սակաւիկ մի՛ և տեսանիցէք զիս.
18 և եթէ՝ ես առ Հայր իմ երթամ։ Եւ ասէին.
Զինչ իցէ այն փոքր միւս ևս, չգիտեմք զինչ խօ-
19 սի։ Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա հարցանել, և
ասէ ցնոսա. Վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս
զի ասացի՝ թէ փոքր մի՛ և ոչ տեսանէք զիս և դար-
20 ձեալ սակաւիկ միւս ևս՝ և տեսանիցէք զիս։ Ամէն
ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և
աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմու-
21 թիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ

ծնանիցի՝ տրտմութիւն է նմա զի հասեալ է ժամ
նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնե-
ղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշ-
խարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ 22
դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր,
և զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ։ Եւ 23
յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։ Ամէն ամէն
ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յա-
նուն իմ, տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրե- 24
ցէք յանուն իմ. խնդրեցէք՝ և առնուցուք. զի ուրա-
խութիւնն ձեր լցեալ եղիցի։ Զայս առակօք խօսե- 25
ցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ եւս ա-
ռակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ
պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն 26
իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն
ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սի- 27
րեցէք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի։
Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ, դարձեալ թողում 28
զաշխարհ, և երթամ առ Հայր։ Ասեն ցնա աշա- 29
կերտքն. Ահա արդ յայտնութեամբ խօսիս, և ա-
ռակ և ոչ մի ինչ ասես. այժմիկ գիտեմք՝ եթէ գի- 30
տես զամենայն, և ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցա-
նիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք եթէ յԱստուծոյ ե-
լեր։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Այժմ 31
հաւատայք. ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի 32
ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թո-
ղուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է։ Զայս 33
խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունի-
ցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քա-
ջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի։

ԳԼՈՒԽ ԺԷ

1 Զայս իբրև խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր
յերկինս և ասէ. Հայր, հասեալ է ժամ, փառաւո-
րեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ.
2 որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ,
զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ զկեանս յաւի-
3 տենականս։ Այս են յաւիտենական կեանք, զի ծա-
նիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առա-
4 քեցեր զՅիսուս Քրիստոս։ Ես զքեզ փառաւորե-
ցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր ետուր ցիս զի
5 արարից. և այժմ փառաւորեա զիս, Հայր, առ 'ի
քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշ-
6 խարհի առ 'ի քէն։ Յայտնեցի զանուն քո մարդ-
կան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ
7 ետուր զնոսա, և զբանն քո պահեցին։ Արդ գիտա-
ցին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, ետու նո-
8 ցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝
թէ առ 'ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դու ա-
9 ռաքեցեր զիս։ Արդ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ
վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա զորս ե-
10 տուրն ինձ, զի քո են. և որ ինչ իմ է, ամենայն քո
է. և որ ինչ քո է, այն իմ է, և փառաւորեալ եմ
11 'ի նոսա։ Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, և նոքա
յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հայր սուրբ,
պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ. զի
12 եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք։ Մինչ էի յաշ-
խարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ ո-
րով ետուրն ինձ. և պահեցի. և ոչ ոք 'ի նոցանէ կո-
13 րեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։ Բայց
արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշխարհի, զի
ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւ-
14 րեանց։ Ես ետու նոցա զբանն քո, և աշխարհս ա-

տեաց զնա. զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ
յաշխարհէ: Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա 15
յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա 'ի չարէ: Յաշ- 16
խարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ:
Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո 17
բանդ ճշմարտութիւն է. Որպէս զիս առաքեցեր 18
յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ. և 'ի 19
վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին
և նոքա սրբեալք ճշմարտութեամբ: Այլ ոչ վասն 20
նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւա-
տացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, 21
որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի
մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու ա-
ռաքեցեր զիս: Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ե- 22
տու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք. ես 'ի 23
նոսա, և դու յիս զի եղիցին կատարեալք 'ի մի: Եւ
գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, և սի-
րեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր: Հայր, զորս 24
ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն
ընդ իս. զի տեսանիցեն զփառսն զիմ, զոր ետուրն
ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխար-
հի: Հայր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. 25
այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու
առաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա զանուն քո և 26
ծանուցից, զի սէրն զոր սիրեցեր զիս՝ 'ի նոսա իցէ,
և ես 'ի նոսա:

ԳԼՈՒԽ ԺԸ

Զայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն հան- 1
դերձ յայն կոյս ձորոյն կեդրոնի՝ ուր էր պարտէզ,
յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր:
Գիտէր և Յուդա՝ որ զնայն մատնելոց էր՝ զտե- 2
ղին. զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսու- 3
սի աշակերտօքն հանդերձ: Յուդայի առեալ ընդ

իւր զգունդն, 'ի քահանայապետիցն և 'ի փարի-
սեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք
4 և զինուք: Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն
եկեալ 'ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա. Զո՞ խնդ-
5 րէք: Պատասխանի ետուն նմա. ԶՅիսուս Նազով-
րեցի: Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ: Կայր ընդ նո-
6 սա և Յուդա որ մատնէրն զնա: Իբրև ասաց՝ թէ
7 ես եմ, յետս յետս չոգան՝ և զարկան զգետնի: Դար-
ձեալ եհարց զնոսա. Զո՞ խնդրէք: Եւ նոքա ա-
8 սեն. ԶՅիսուս Նազովրեցի: Պատասխանի ետ նոցա
Յիսուս. Ասացի ձեզ թէ ես եմ. արդ եթէ զիս
9 խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ: Զի լցցի բանն՝
զոր ասաց, թէ զորս ետուրն ցիս՝ ոչ կորուսի 'ի նո-
10 ցանէ և ոչ զոք: Իսկ Սիմոն Պետրոս՝ քանզի ու-
նէր սուր, ձգեաց զնա և եհար զքահանայապետին
ծառայ, և 'ի բաց առ զունկն նորա զաջոյ. և էր ա-
11 նուն ծառային Մաղքոս: Ասէ Յիսուս ցՊետրոս.
Արկ զսուրդ անդրէն 'ի պատեանս իւր. զբաժակն
12 զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա: Իսկ գունդն և
հազարապետն և սպասաւորք Հրէից կալան զՅի-
13 սուս և կապեցին: Եւ ածին զնա նախ առ Աննա,
որ էր աներ Կայիափայի, որ քահանայապետն էր
14 տարւոյն այնորիկ: Այս այն Կայիափա էր՝ որ խրատ
ետ Հրէից, թէ լաւ է առն միում մեռանել 'ի վե-
15 րայ ժողովրդեանն: Եւ երթային զհետ Յիսուսի
Սիմոն Պետրոս և միւս աշակերտն: Եւ աշակերտն
այն քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ
16 ընդ Յիսուսի 'ի գաւիթ քահանայապետին: Եւ
Պետրոս կայր առ դրանն արտաքոյ. ել միւս աշա-
կերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց
17 ցդռնապանն և եմոյծ 'ի ներքս զՊետրոս: Ասէ աղ-
ջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. Միթէ և դու
յաշակերտաց առնն այնորիկ իցես: Եւ նա ասէ.
18 Ոչ եմ: Կային անդ ծառայքն և սպասաւորք, խա-
րոյկ արկեալ՝ քանզի ցուրտ էր, և ջեռնուին. կայր

ընդ նոսա և Պետրոս և ջեռնոյր: Եւ քահանայա- 19
պետն եհարց զՅիսուս վասն աշակերտացն և վասն
վարդապետութեան նորա: Պատասխանի ետ նմա 20
Յիսուս. Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի, ես
յամենայն ժամ ուսուցի 'ի ժողովրդեանն և 'ի տա-
ճարի անդ՝ ուր ամենայն Հրեայք ժողովեալ էին,
և 'ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ: Զի՞ հարցանես զիս, 21
հարց զայնոսիկ՝ որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ
նոսա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ ասացի: Իբ- 22
րև նա զայն ասաց, մի ոմն 'ի սպասաւորացն որ անդ
կայր, ած ապտակ Յիսուսի և ասէ. Ա՞յդպէս պա-
տասխանի տաս քահանայապետիդ: Եւ Յիսուս ա- 23
սէ ցնա. Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չա-
րին. իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս: Եւ ա- 24
ռաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա քահա-
նայապետ: Եւ Սիմոն Պետրոս կայր անդ և ջեռ- 25
նոյր. ասեն ցնա. Միթէ և դո՞ւ յաշակերտաց անտի
նորա իցես: Նա ուրացաւ և ասէ, թէ չեմ: Եւ ա- 26
սէ մի ոմն 'ի ծառայից քահանայապետին՝ ազգական
այնորիկ զորոյ զունկն եհատ Պետրոս. Ո՞չ ես իսկ
տեսի զքեզ 'ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ 27
ուրացաւ Պետրոս, և վաղվաղակի հաւ խօսեցաւ:
Եւ ածեն զՅիսուս 'ի վանացն Կայիափայ յապա- 28
րանս դատաւորին, և էր այգուց: Եւ նոքա ոչ մտին
յապարանսն, զի մի՛ պղծիցին, այլ զի ուտիցեն զզա-
տիկն: Ել առ նոսա Պիղատոս արտաքս և ասէ. 26
Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայն-
մանէ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. Եթէ չէր 30
չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:
Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զնա դուք, և ըստ ձե- 31
րոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Հրեայքն.
Մեզ ոչ է արժան սպանանել զոք: Զի լցցի բանն 32
Յիսուսի զոր ասաց, նշանակեալ թէ որով մահու
մեռանելոց իցէ: Եմուտ միւսանգամ յապարանսն 33
Պիղատոս, կոչեաց զՅիսուս, և ասէ ցնա. Դո՞ւ ես

34 թագաւորն Հրէից: Պատասխանի ետ Յիսուս. Ի
քէ՞ն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն:
35 Պատասխանի ետ Պիղատոս. Միթէ և ես հրեա՞յ
իցեմ. ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ
36 ինձ. զի՞նչ գործ գործեալ է քո: Պատասխանի ետ
Յիսուս. Իմ արքայութիւն չէ յայսմ՝ աշխարհէ. ե-
թէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպա-
սաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի՛ մատնեցայց
Հրէից. բայց արդ թագաւորութիւն իմ չէ աստի:
37 Ասէ ցնա Պիղատոս. Ապա թէ այդպէս իցէ, թա-
գաւոր ոմն ես դու: Պատասխանի ետ Յիսուս.
Դու ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ
ծնեալ եմ, և 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ. զի
վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ 'ի ճշմար-
38 տութենէ է, լսէ բարբառոյ իմոյ. Ասէ ցնա Պիղա-
տոս. Զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իբրև ա-
սաց, դարձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա. Ես
39 և ոչ մի ինչ պատճառս գտանեմ 'ի նմա: Բայց է
ձեր սովորութիւն՝ զի զմի ոք արձակեցից ձեզ 'ի
զատկիս. արդ կամի՞ք զի արձակեցից ձեզ զթագա-
40 ւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան և ասէին.
Մի՛ զդա, այլ զԲարաբբա. և էր Բարաբբայն այն
աւազակ:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս, և գան եհար:
2 Եւ զինուորացն արարեալ պսակ 'ի փշոց՝ եդին 'ի
գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի.
3 և գային առ նա և ասէին. Ողջ եր, արքայ Հրէից:
4 Եւ հանէին նմա ապտակս: Ել դարձեալ Պիղա-
տոս արտաքս և ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա ար-
տաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես և ոչ ինչ 'ի
5 նմա ոչ գտանեմ: Ել Յիսուս արտաքս, և ունէր
պսակ 'ի փշոց և հանդերձ ծիրանի: Եւ ասէ ցնոսա.

Ահա այրդ ցձեզ։ Իբրև տեսին զնա քահանայա- 6
պետքն և սպասաւորքն, աղաղակ բարձին և ասեն.
Ի խաչ հան՝ 'ի խաչ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղա-
տոս. Առէք զդա 'ի ձեզ, և ձեզէն հանէք 'ի խաչ.
զի ես 'ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ։ Պատասխանի 7
ետուն նմա Հրեայքն. Մեք օրէնս ունիմք, և ըստ
օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր որդի
Աստուծոյ արար։ Իբրև լուաւ զբանս զայսոսիկ Պի- 8
ղատոս, առաւել ևս երկեաւ. եմուտ դարձեալ անդ- 9
րէն յապարանսն, և ասէ ցՅիսուս. Ուստի՞ ես դու։
Եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխանի։ Ասէ ցնա Պի- 10
ղատոս. Ընդ իս ո՞չ խօսիս. ո՞չ գիտես եթէ իշխա-
նութիւն ունիմ հանել զքեզ 'ի խաչ, և իշխանու-
թիւն ունիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ Յի- 11
սուս. Ոչ ունէիր դու իշխանութիւն 'ի վերայ իմ և
ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ 'ի վերուստ. վասն
այնորիկ որ մատնեաց զիս քեզ՝ նորա մեծ մեղք են։
Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և 12
Հրեայքն աղաղակէին և ասէին. Եթէ զդա արձա-
կես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագա-
ւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր։ Իսկ Պի- 13
ղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս
արտաքս՝ և նստաւ 'ի վերայ բեմին 'ի տեղւոջն որ կո-
չէր Քարայատակ, և Եբրայեցերէն Կապպաթա։ Էր 14
ուրբաթն զատկի, և էր ժամ իբրև վեցերորդ, և ա-
սէ ցՀրեայսն. Ահա թագաւորդ ձեր ցձեզ։ Եւ նոքա 15
աղաղակէին. Բարձ 'ի մէնջ, բարձ 'ի մէնջ, և հան
զդա 'ի խաչ։ Ասէ ցնոսա Պիղատոս. Ես զթագաւորդ
ձեր 'ի խա՞չ հանիցեմ։ Պատասխանի ետուն քահա-
նայապետքն. Չիք մեր թագաւոր՝ բայց 'ի կայսերէ։
Յայնժամ՝ ետ զնա 'ի ձեռս նոցա, զի 'ի խաչ ելանի- 16
ցէ։ Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր 17
ինքնին զխաչափայտն, և ելանէր 'ի տեղին՝ որ ա-
նուանէր գագաթան, և կոչէր Եբրայեցերէն Գող-
գոթա. ուր և 'ի խաչն իսկ հանին զնա, և ընդ նմա 18

երկուս ևս այլս աստի և անտի, և 'ի միջի զՅիսուս։
19 Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ 'ի վերայ
խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի թագաւոր
20 Հրէից։ Զայն տախտակ ընթերցան բազումք 'ի
Հրէից, զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին ուր խա-
չեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն՝ Դաղ-
21 մատարէն և յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահա-
նայապետքն Հրէից. Մի՛ գրեր թագաւոր Հրէից,
22 այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից։ Պատաս-
23 խանի ետ Պիղատոս. Զոր ինչ գրեցի՝ գրեցի։ Իսկ
զինուորքն իբրև հանին 'ի խաչ զՅիսուս, առին ըզ-
հանդերձս նորա և արարին չորս մասունս, իւրաքան-
չիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն քանզի էր
առանց կարանի 'ի վերուստ փորանկեալ ամենևին,
24 ասեն ցմիմեանս. Մի՛ պատառեսցուք զայդ, այլ
արկցուք վիճակս 'ի վերայ դորա ում և ելցէ։ Զի
լցցի գիրն որ ասէ. Բաժանեցան զհանդերձս իմ
յիւրեանս, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ
25 արկին։ Զինուորքն զայս ինչ գործեցին։ Եւ կային
առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա
Մարիամ Կղէովպայ, և Մարիամ Մագդաղենացի։
26 Յիսուս իբրև ետես զմայրն և զաշակերտն զոր սի-
րէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կին դու, ահա որ-
27 դի քո։ Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո։ Եւ
28 յայնմ ժամանակէ ա՛ռ աշակերտն զնա առ իւր։ Յետ
այսորիկ իբրև գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն
ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն՝ ասէ. Ծա-
29 րաւի եմ։ Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. և
նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ ե-
դեալ զմշտկաւ զոպայի, մատուցին 'ի բերան նորա։
30 Իբրև ա՛ռ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ա-
սէ. Ամենայն ինչ կատարեալ է։ Եւ խոնարհեցու-
31 ցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին։ Իսկ Հրեայքն՝
քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն 'ի խաչին ագա-
նիցին մարմինք մինչև ցշաբաթն, զի էր օր մեծ շա-

բաթուն այնորիկ, աղաչեցին զՊիղատոս զի խորտա-
կեսցեն զբարձս նոցա, և բարձցին։ Եկին զինուորքն, 32
և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և ըզ-
միւսոյն որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էր։ Բայց իբրև 33
եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր,
ոչ խորտակեցին զբարձս նորա։ այլ մի ոմն 'ի զինուո-
րացն տիգաւ խոցեաց զկողս նորա, և վաղվաղակի 34
ել արիւն և ջուր։ Եւ որ եսեսն՝ վկայեաց, և ճըշ- 35
մարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ՝ թէ ճշմա-
րիտ ասէ, զի և դուք հաւատասջիք։ Այս եղև, զի 36
լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի փշրեսցի. և դար-
ձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին 'ի նա՝ յոր խո-
ցեցինն։ Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յով- 38
սէփ որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յիսուսի 'ի ծա-
ծուկ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմին Յի-
սուսի. և հրամայեաց Պիղատոս. եկին և բարձին
զնա։ Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս՝ 39
'ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ
հալուէս՝ իբրև լտերս հարիւր։ Առին զմարմինն Յի- 40
սուսի, և պատեցին կտաւովք խնկովքն հանդերձ,
որպէս օրէն էր Հրէից պատել։ Եւ էր 'ի տեղւոջն 41
յորում խաչեցաւ՝ պարտէզ, և 'ի պարտիզի անդ գե-
րեզման նոր, յորում ոչ ոք երբեք էր եդեալ։ Անդ 42
վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն.
եդին զՅիսուս։

ԳԼՈՒԽ Ի

Եւ 'ի միաշաբաթւոջն Մարիամ մագդաղենացի 1
գայ առաւօտուն ընդ աշալուշն 'ի գերեզման անդր,
և տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրաց գերեզմանին։
Ապա ընթանայ և գայ առ Սիմոն Պետրոս և առ 2
միւս աշակերտն զոր սիրէր Յիսուս. և ասէ ցնոսա.
Բարձին զՏէր 'ի գերեզմանէ անտի. և ոչ գիտեմք
ուր եդին զնա։ Ել Պետրոս և միւս աշակերտն՝ և

գային 'ի գերեզմանն. ընթանային երկոքին 'ի միա-
4 սին։ Եւ միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վա-
ղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն.
5 և խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց
6 'ի ներքս ոչ եմուտ։ Եկն և Սիմոն Պետրոս՝ որ
գայրն զկնի նորա, և եմուտ 'ի գերեզմանն. և տե-
7 սանէ զկտաւսն զի կային անդ. և վարշամակն որ էր
'ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն
8 ծալեալ 'ի մի կողմն։ Յայնժամ եմուտ և միւս ա-
շակերտն, որ եկեալ էր յառաջագոյն 'ի գերեզմանն,
9 ետես և հաւատաց. զի չև ևս գիտէին զգիրս՝ թէ
10 պարտ է նմա 'ի մեռելոց յառնել։ Զոգան դարձեալ
11 առ միմեանս աշակերտքն։ Բայց Մարիամ կայր ար-
տաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խո-
12 նարհեցաւ 'ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշ-
տակս 'ի սպիտակս, զի նստէին՝ մի 'ի սնարից և մի
13 յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ նոքա
ասեն ցնա. կին դու, զի՞ լաս։ Ասէ ցնոսա. Զի
բարձին զՏէրն իմ 'ի գերեզմանէ աստի՝ և ոչ գի-
14 տեմ ուր եդին զնա։ Զայս իբրև ասաց, դարձաւ
'ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր, և
15 ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։ Ասէ ցնա Յիսուս. կին
դու, զի՞ լաս, զո՞ խնդրես։ Նմա այսպէս թուեցաւ՝
թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. Տէր. եթէ դու
բարձեր զնա. ասա ինձ ուր եդիր զնա։ զի ես առից
16 զնա։ Ասէ ցնա Յիսուս. Մարիամ։ Եւ նա դար-
ձաւ և ասէ ցնա եբրայեցերէն. Րաբբունի. — որ
17 թարգմանի՝ վարդապետ։ Ասէ ցնա Յիսուս. Մի
մերձենար յիս, զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ.
այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնոսա. ելա-
նեմ ես առ Հայրն իմ և առ հայր ձեր, և Աս-
18 տուածն իմ և Աստուած ձեր։ Գայ Մարիամ մագ-
դաղենացի՝ և պատմէ աշակերտացն եթէ ետես նա
19 զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։ Եւ էր երեկոյ 'ի
միաշաբաթւոջ աւուրն, և դրօք փակելովք՝ ուր էին

աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից, եկն
Յիսուս և եկաց ՚ի մէջ նոցա, և ասէ ցնոսա. Ող- 20
ջոյն ընդ ձեզ: Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռս
և զկողն իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին
զՏէր: Ասէ ցնոսա դարձեալ. Ողջոյն ընդ ձեզ. որ- 21
պէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ:
Եւ զայս իբրև ասաց, փչեաց ՚ի նոսա և ասէ. Ա- 22
ռէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, 23
թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ
լիցի: Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն 24
երկուորեակ, ոչ էր ընդ նոսա յորժամ եկն Յիսուս:
Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք զՏէր, և 25
նա ասէ ցնոսա. Եթէ ոչ տեսից ՚ի ձեռս նորա զնը-
շան բևեռացն, և արկից զմատունս իմ ՚ի տեղիս
բևեռացն, և մխեցից զձեռս իմ ՚ի կողս նորա,
ոչ հաւատամ: Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 26
՚ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ
Յիսուս դրօքն փակելովք, և եկաց ՚ի մէջ և ասէ.
Ողջոյն ընդ ձեզ: Ապա ասէ ցԹովմաս. Բեր զմա- 27
տունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ. և բեր ըզ-
ձեռն քո, մխեա ՚ի կողս իմ. և մի լինիր անհա-
ւատ՝ այլ հաւատացեալ: Պատասխանի ետ Թովմաս 28
և ասէ ցնա. Տէր իմ և Աստուած իմ: Ասէ ցնա Յի- 29
սուս. Այդ զի տեսերդ զիս և հաւատացեր, երանի
որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն: Բազում և 30
այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտացն իւ-
րոց՝ որ ոչ է գրեալ ՚ի գիրս յայսմիկ. այլ այս այն- 31
չափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս
Քրիստոսէ որդի Աստուծոյ. և զի հաւատայցէք, և
զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր 1
Յիսուս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերբն Տիբե-

2 րեայ, և յայտնեաց այսպէս: Էին ՚ի միասին Սիմովն
Պետրոս, և Թովմաս՝ անուանեալն երկուորեակ, և
Նաթանայէլ որ ՚ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն
Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու:
3 Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս. Երթամ ձուկն որ-
սալ: Ասեն ցնա. Գամք և մեք ընդ քեզ: Գնա-
ցին և մտին ՚ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչ
4 ինչ: Իբրև այգ եղև կայր Յիսուս յեզր ծովուն,
5 բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ա-
սէ ցնոսա Յիսուս. Մանկունք, միթէ ունիք ինչ
6 ուտելոյ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. Ոչ:
Ասէ ցնոսա. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ,
և գտանիցէք: Արկին՝ և ոչ կարէին ձգել ՚ի բազ-
7 մութենէ անտի ձկանցն: Ասէ աշակերտն այն զոր
սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն: Սիմովն
Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրև
8 զլափածանելին քանզի մերկ էր, և ընկէց զինքն ՚ի
ծովն. և այլ աշակերտքն նաւաւն իսկ գային. քան-
զի չէին հեռի ՚ի ցամաքէն, այլ իբրև երկերիւր կանգ-
9 նաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն: Իբրև
ելին ՚ի ցամաք, տեսանեն կրակետղ կայծականց,
10 և ձուկն մի ՚ի վերայ, և հաց: Ասէ ցնոսա Յիսուս.
Բերէք ՚ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալարուք այժ-
11 միկ: Եմուտ Սիմովն Պետրոս, և ձգէր զգործին ՚ի
ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարիւր յիսուն և ե-
րիւք. և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ գոր-
12 ծին: Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք: Եւ
ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ով
13 ես, զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յիսուս և առ-
14 նու զհացն՝ և տայ նոցա, նոյնպէս և զձուկնն: Զայս
երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն՝ յա-
15 րուցեալ ՚ի մեռելոց: Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍի-
մովն Պետրոս՝ Յիսուս. Սիմովն Յովնանու, սիրես
զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. Այո, Տէր, և
դու գիտես զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա

զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա. Սիմոն Յովհա- 16
նու, սիրես զիս։ Ասէ ցնա. Այո, Տէր, և դու գի-
տես զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա. Արածեա զոչխարս
իմ։ Ասէ ցնա երիցս անգամ. Սիմոն Յովհաննու, 17
սիրես զիս։ Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա ե-
րիցս՝ թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր, դու զամե-
նայն գիտես, և դու իսկ զամենայն ճանաչես, և ե-
թէ սիրեմ զքեզ։ Ասէ ցնա Յիսուս. Արածեա զոչ-
խարս իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն 18
էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր, և երթայիր յո և
կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս 'ի վեր կալցես՝
և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին ուր ոչն կամի-
ցիս։ Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փա- 19
ռաւոր առնիցէ զԱստուած. և զայս իբրև ասաց՝ ա-
սէ ցնա. Եկ զկնի իմ։ Դարձաւ Պետրոս՝ և տեսա- 20
նէ զաշակերտն զոր սիրէր Յիսուս՝ զի երթայր զկնի.
որ և անկաւ զլանջօքն նորա և ասէ. Տէր, ով է որ
մատնելոցն է զքեզ։ Զնա տեսեալ Պետրոսի՝ ասէ 21
ցՅիսուս. Տէր, իսկ սա զի՞։ Ասէ ցնա Յիսուս. Ե- 22
թէ կամիմ զի կացցէ դա՝ մինչև ես գամ, քեզ զի՞
փոյթ է, դու եկ զկնի իմ։ Ել բանս այս յեղ- 23
բարս, և համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռա-
նիցի, և ոչ ասաց նմա Յիսուս, եթէ ոչ մեռանիցի.
այլ թէ կամիմ ես թէ կացցէ դա մինչև ես գամ։
Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսորիկ, որ և 24
գրեաց իսկ զայսոսիկ. և գիտեմք եթէ ճշմարիտ է
վկայութիւն նորա։ Բայց է և այլ ինչ բազում զոր 25
արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ,
կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն՝ որ թէ գրեալ էին։

ՑՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Հանգստեան, Տաճարի, Իւղաբերից, Բժշկութեան և Անդաստանի. որ ընթերցեալ լինին 'ի կարգաւորութեան հասարակաց աղօթից՝ ըստ ձայնին։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

գլ. ժա. 25. Յայնմ ժամանակի։ վ. 30. իմ թեթեւ է։
գլ. ժգ. 36. Յայնժամ թողեալ։ վ. 52. զնոր եւ զհին։
գլ. իա. 18. Եւ այգուցն էր։ վ. 32. հաւատալ նմա։
գլ. իե. 31. Եւ յորժամ եկեսցէ։ վ. 46. յաւիտենականն։

Ի ՄԱՐԿՈՍ

գլ. դ. 1. Դարձեալ սկսաւ։ վ. 9. լսելիս՝ լուիցէ։
գլ. դ. 26. Եւ ասէր՝ այսպէս։ վ. 34. մեկնէր աշա-
կերտացն։
գլ. ժգ. 24. Այլ յաւուրսն յայս։ վ. 31. անցանիցեն։
գլ. ժգ. 32. Այլ վասն աւուրն։ վ. 37. արթուն կացէք։

Ի ՂՈՒԿԱՍ

գլ. թ. 10. Դարձան առաքեալքն։ վ. 17. սակառի։
գլ. ժբ. 32. Մի՛ երկնչիր։ վ. 48. պահանջեսցեն 'ի նմանէ։
գլ. ժէ. 3. Զգոյշ կացէք։ վ. 10. առնել՝ արարաք։
գլ. իա. 27. Եւ յայնժամ տեսցեն։ վ. 38. լսել 'ի նմանէ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Բ. 13. Եւ էր մերձ զա։ մ. 22. զոր ասաց Յի-սուս։
Գլ. Ե. 19. Պատասխանի ետ։ մ. 23. զպատուէին նորա։
Գլ. Ե. 24. Ամէն ամէն ասեմ։ մ. 30. առաքեացն զիս։
Գլ. ԺԲ. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ։ մ. 26. հայրն իմ։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԴ. 1. Եւ ելեալ ար։ մ. 51. կրճել ատամանց։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԳ. 1. Եւ յելանելն նորա։ մ. 37. արթուն կացէք։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. ԻԱ. 5. Եւ յասել ոմանց։ մ. 38. լսել ՚ի նմանէ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. ԺԳ. 16. Ամէն ամէն։ մ. ԺԴ. 13. հայր յորդի։

կամ

Գլ. Ժ. 22. Եղեն յայնժամ նաւա։ մ. 42. ՚ի նա անդ։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԸ. 1. Եւ յերեկոյի շա։ մ. 20. կատարած աշ-խարհի։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԵ. 42. Եւ իբրև երեկ։ մ. ԺԶ. 8. զի երկնչէին։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. ԻԳ. 50. Եւ ահա այր մ։ մ. ԻԴ. 12. զեղեալսն։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. ԺԹ. 38. Յետ այսորիկ։ մ. Ի. 18. ինչ ասաց նմա։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. Դ. 23. Եւ շրջէր Յիսուս. մ. 25. և բժշկեաց զնոսա։
Գլ. Ը. 1. Այլ իբրև էջ ՚ի լեռ։ մ. 17. զեր եբարձ։
Գլ. Ը. 28. Եւ իբրև անց։ մ. 34. սահմանաց նոցա։
Գլ. Թ. 1. Եւ մտեալ ՚ի նաւ՝ ան։ մ. 8. մարդկան։
Գլ. Թ. 18. Մինչդեռ նա։ մ. 26. երկիրն ընդ այն։
Գլ. Թ. 27. Եւ մինչդեռ։ մ. 34. հանէ դա զդևս։
Գլ. Թ. 35. Եւ շրջէր Յիսուս։ մ. Ժ. 1. հիւանդ-ութեանս։

Գլ. ԺԲ. 9. Եւ գնացեալ անտի։ մ. 14. կորուսցեն զնա։
Գլ. ԺԲ. 22. Յայնժամ մա։ մ. 37. պարտաւորեսցիս։
Գլ. ԺԴ. 22. Եւ ստիպեաց վաղվաղ։ մ. 36. փրկեցան։
Գլ. ԺԵ. 21. Եւ ելեալ անտի։ մ. 31. առնէին զԱստուած Իսրայելի։
Գլ. ԺԷ. 14. Եւ եկեալ։ մ. 20. աղօթիւք եւ պահօք։
Գլ. Ի. 29. Եւ ելանելոյ նոցա։ մ. 34. զհետ նորա։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. Ա. 21. Եւ մտանեն 'ի կափ։ մ. 34. զնա թէ Քրիստոսն է։
Գլ. Ա. 35. Եւ ընդ այգն ընդ։ մ. 45. յամենայն կողմանց։
Գլ. Բ. 1. Եւ մտեալ դար։ մ. 12. երբեք ոչ տեսաք։
Գլ. Գ. 1. Եւ եմուտ միւսանգամ։ մ. 5. ձեռն նորա։
Գլ. Գ. 7. Իսկ Յիսուս աշակեր։ մ. 12. առնիցեն զնա։
Գլ. Ե. 1. Եւ եկն յայնկոյս։ մ. 20. զարմանային։
Գլ. Ե. 21. Եւ եկեալ անց Յիսուս։ մ. 43. նմա ուտել։
Գլ. Զ. 53. Եւ եկեալ ան։ մ. 56. մերձեցանն՝ փրկեցան։
Գլ. Է. 24. Եւ անտի յար։ մ. 30. դնէր 'ի մահիճս։
Գլ. Է. 31. Եւ ելեալ միւս։ մ. 37. եւ համերց խօսել։
Գլ. Ը. 22. Գան 'ի Բեթս։ մ. 26. ասիցես 'ի շինին։
Գլ. Թ. 13. Եւ եկեալ առ ա։ մ. 28. եւ աղօթիւք։
Գլ. Ժ. 46. Եւ գան յերիք։ մ. 52. 'ի ճանապարհին։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. Դ. 31. Եւ էջ 'ի կափառնա։ մ. 42. թէ Քրիստոսն է։
Գլ. Ե. 12. Եւ եղեւ 'ի հա։ մ. 16. կայր յաղօթս։
Գլ. Ե. 17. Եւ եղեւ 'ի միում։ մ. 26. նոր նշան։
Գլ. Զ. 1. Եւ եղեւ 'ի շա։ մ. 11. առնիցեն Յիսուսի։

Գլ. Է. 1. Եւ եկեալ կա։ մ. 10. հիւանդ բժշկեալ։
Գլ. Է. 11. Եւ եղեւ 'ի։ մ. 23. գայթագղեսցի յիս։
Գլ. Ը. 22. Եւ եղեւ 'ի միում։ մ. 39. արար նմա Յիսուս։
Գլ. Ը. 40. Եւ եկեալ դար։ մ. 57. որ ինչ եղեն։
Գլ. Թ. 37. Եւ եղեւ 'ի վա։ մ. 44. մեծամեծայն Աստուծոյ։
Գլ. ԺԱ. 14. Եւ հանէր դեւ մի։ մ. 23. ընդ իս՝ ցրուէ։
Գլ. ԺԳ. 10. Եւ ուսուց։ մ. 17. գործէին 'ի նմանէ։
Գլ. ԺԴ. 1. Եւ եղեւ 'ի մտա։ մ. 6. պատասխանի առ այն։
Գլ. ԺԷ. 11. Եւ եղեւ մինչ։ մ. 19. կեցուցին զքեզ։
Գլ. ԺԸ. 35. Եւ եղեւ 'ի մօ։ մ. 43. օրհնութիւն Աստուծոյ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Դ. 46. Եկն դարձեալ 'ի կա։ մ. 54. 'ի Գալիլեա։
Գլ. Ե. 1. Յետ այսորիկ։ մ. 18. առնէր զանձն Աստուծոյ։
Գլ. Թ. 1. Եւ մինչդեռ ան։ մ. 38. եպագ նմա։
Գլ. ԺԱ. 1. Եւ էր ոմն հիւ։ մ. 46. զոր արարն Յիսուս։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԴ. 27. Զի որպէս փայ։ մ. 35. իմ մի անցցեն։
Գլ. ԻԷ. 35. Եւ հանեալ։ մ. 50. արձակեաց զոգին։
Գլ. ԻԷ. 50. Եւ Յիսուս դարձեալ։ մ. 61. գերեզմանին։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԵ. 22. Եւ ածեն զնա ։ մ. 37. Եւ եհան զոգի ։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. ԻԳ. 32. Ածէին և այլ երկ ։ մ. 46. եհան զոգի ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Գ. 13. Եւ ուր ու էլ յերէ ։ մ. 21. գործեցան ։
Գլ. ԺԹ. 16. Եւ Յայնժամ ետ ։ մ. 22. գրեցի՝ գրեցի ։
Գլ. ԺԹ. 25. Եւ կային ։ մ. 30. աւանդեաց զոգին ։

Հ.Հ. Ազգային գրադարան
NL2059083 III
Հ.Հ. Ազգային գրադարան
NL2059082 II
Հ.Հ. Ազգային գրադարան
NL2059081 I

II
21848

II
21849

II
21850